* Սուրբ Գրոց մէջ յիշուած Սոպհը. ևս. Carbunculo. տէ. Սէէան՝ մուխ կարմիր, ազնիւ և

12. Ի՞նչ պատճառներով կը ցուցուի թէ Երասխն է Գեհոն գետը։

Դրախտին չորք գետերը գտնելէն ետև, հարկաւ կը հետևի որ չորրորդն ալ անոնց մօտերը ըլլայ, և այս է մեր Երասխ գետը՝ որ կը բխի Կարնոյ լեռներէն Եփրատ գետուն բաւած տեղւոյն մօտ։ Երասխ գետոյն Յոյները կ'ըսեն Ա.րաքսէս։

Ոմանք Օ.քսոս գետը՝ որուն Ա.րաքսիք Ծահռեն կամ Ծէյհռեն կ'ըսեն, նոյն կարծեցին Գեհոնին հետ, արաքսի անուան նմանութեանը նայելով*. բայց սխալ է այս կարծիքը. վասն զի — ա. այս գետը Կասպից ծովուն անդիի կողմը կ'բյնի, և կը բղխի Թուրքաստանի մէջ Սմրղանդ քաղքին մօտ։ — բ. այս գետը հին ատեն միշտ Օ.քսոս կը կոչուէր, և ետքը Ա.րաքսիք Ծահռեն կոչեցին։

13. Ի՞նչպէս կը մեկնուի տուրբ Գրքին Թախանցիկ քար մի է, որուն կ'ըսեն նաև Կոչհան և կայծ։ Իսկ Դահանակը. յտ. Malachitta. այս. և տճ. Տէհնէճ, կանաչագոյն գիմահար քար մի է։ Այս քարերը Թէպէտ և գտանուին հիմնայն կողմերը, սակայն կրնայ ըլլալ որ հին ատենը կային. և հիմա չէ ճնացեր կամ հողոյն տակը ծածկուած կեցեր են. ինչպէս որ Կիպրոս կղզւոյն մէջ ալ հին ատեն այլևայլ գոհարներ կան եղեր, բայց հիմա չեն գտնուիր։

* Այս կարծիքիս հետևող է նաև մեր Մատթէոս ուռհայեցի պատմիչը որ կ'ըսէ. "Անցեալ ընդ մեծ գետան Ծահռունից որ կոչի Գեհոն"։

այս վկայութիւնը որ կ'ըսէ Գեհան զեռոյն համար. « Նա պատէ զամենայն երկիրն Եթովպացւոց »:

Նախ պէտք է գիտնալ թէ եօթանասնից թարգմանութիւնը ուր որ Եթովպիա կ'անուանէ, եբրայականը շատ հնդ Քուշ կը դնէ. և Յովսեպոս, Հարսուին, Պօշար և Կելլարիոս կ'ըսեն թէ, Քուշ կամ Եթովպացի ազգը թէ Աֆրիկէի մէջ կը գտնուի, որ է հիմակուան Հապէշները, և թէ Ասիոյ մէջ, որ են Հնդկաստանի և Արաբիայի բնակիչները: Դարձեալ, պէտք է գիտնալ որ եբրայեցւոց քուշ կամ քուշանսանը Քաղդէացիք քոթ կ'ըսէին. այս բանիս համար կալմէտ Գոթք կամ Սկիւթացիք ըսած ազգը, որ հին ատեն Երասխայ մօտ կը բնակէին, նոյն կը դնէ սուրբ Գրոց Եթովպիա ըսուած աշխարհին հետ: Բայց ստոյգը մեզի այս կ'երևի թէ Մովսէսին Եթովպիա ըսած երկիրը ըլլայ Հայաստանի Արցախ և Ուտի նահանգները, որոց պրէթէ չորս բոլորը կը պատէ մէկ կողմէն Երասխ գետը, մէկալ կողմէն Կուր գետը, որ Երասխայ պէս մեծ է: Թող որ հինները Եթովպացի կ'անուանէին ամէն սևամորթ ազգերը, այս պատճառաւ Եթովպացւոց անունը Հնդկաց ալ կու տային. ինչպէս Եւեմիայի մէջ ալ կայ. « Մինէ փոխիցէ Եթովպացին զմորթ իւր », ուր մեր թարգմանութիւնը կը դնէ Հնդիկ. Եթովպացի և Հնդիկը մի և նոյն բան նշանակելուն համար:

Կայ նաև Հայաստանի Ոստէ նահանգին մէջ ժողովուրդ մը որ իրենց Սև կամ Սևոզկ նախահաւուն անունովը Սևորդիք կոչուած են, ինչպէս կ'ըսէ Յովհաննէս Կաթողիկոս *։

14. Սուրբ Գիրքը ինչ նշաններ կու տայ պրախային տեղւոյն վրայ։

ա. Ինչպէս որ ըսինք, պղխատր նշանն է պրախային չորս պետերը, որոնց բնաւ տեղերը չափաւորեալ միջոցի մէջ պէտք է որ ըլլան։

բ. Արևելեան կողմը պիտի ըլլայ։

գ. Արաբիայէն ու Հրէաստանէն հեռու։

դ. Չափաւոր մեծութիւն պիտի ունենայ, ու տեղն ալ Ջրարբի ըլլայ։ Եւ ահա այս ամէն նշաններն Հայաստանի մէջ ամբողջ կը գտնենք։

15. Ի՞նչպէս կը մեկնես սուրբ Գրքին այս վկայութիւնը. «Եւ անկեաց Աստուած պրախան յԵդեմ ընդ արևելս». արդեօք Հայաստան նոյն դիրքը ունի՞։

Սուրբ Գիրքը արևելեան կողմ կ'ըսէ, կամ Արաբիոյ անապատին դրիցը նայելով՝ ուր կը գրէր Մովսէս իր Հնգամատեանը, և կամ

* Թերևս Սև կամ Սևոզկ անունը կը տրուի ենթ Գամայ կամ անոր Գուշ որդւոյն, ուսկից եղած է Սև կամ Սևորդի+ անունը. վասն զի Գամ կ'ըսուի պարսկերէն ու նաև հնդկերէն ալ։ Եւ աւանդութիւն ի Թէ Գամայ դէմքը սև էր։

Հրէաստանի դրքին նայելով, ուր սխտէ բնակէին Իսրայելացիք. և Հայաստան այս երկու դրքին ալ նայելով արևելեան կողմը կ'ինայ. վասն զի Ծննդոց դրքին մէջ կ'ըսէ Մովսէս ջրհեղեղէն ետքը մարդկանց ցրուելուն համար. «Եւ'ի լատալն նոցա յԱրևելից» . ամէնքը կը վկայեն թէ Մովսէս հատեղը Արարատայ լեռները Արևելք անուանով կոչած է: Արդ Հայաստանի մէջ դնելով դրախտը, գ. նշանն ալ կը տուզուի Արաբիայէն կամ Հրէաստանէն հեռու ըլլալը:

16. Եդեմ կամ Ադեն դրախտը Հայաստանի մէջ որ կողմը կ'ինայ:

Շատ հաւանական կ'երևի թէ դրախտը կամ Եդեմը՝ բարձր Հայոց մէջ կարնոյ դաշտին կողմերը կ'ըլլի *, որոյ մօտ են Բիւրակնեան լեռները, որ կ'ըսուին նաև կարնոյ լեռներ, ասկից կը բղխին այս լրեք գետերը Եփրատ, Երասխ, (որ է ըստ սորբ Գրոց Գե-

* Եդեմը կամ դրախտը մեր բազմահմուտ Ինճիճեան Հ. Ղուկաս վարդապետը կը դնէ Ծորդորդ Հայոց Հաշտեանք գաւառին մէջ, և կը ձգէ ինչուան Բիւրակնեան լեռներուն գօտիները: Գաւառին անունը մօտիկ է հնչուին, հնչեայ բառերուն, որ ըսել է փոխուին. վասն զի Եդեմ բառը, որ շատերը յատուկ անուան տեղ կ'առնուն, ամանք ալ վստիկութեան նշանակութեամբ: Հաշտեանք գաւառը շատակուր, զուարճալի ու բերքեր ըլլալուն համար, մեր Թագաւորներուն որդոցը բնակարան եղած էր:

հոն), Ծորախ՝ (որ է փխառն). և կը ծնայ մինչ անդին Տիգրիս գետը որ Զորրորդ Հայոց Հաշտեանք գաւառին մէջ կը բղխի, և շատ հեռու չէ մէկալ գետերուն բղխած տեղէն: Ասոր հետևանքն կ'երևի թէ դրախտը կարնոյ կողմերը կ'ըլլի, որոյ երկրին պտղաբերութիւնը գովելով Խորենացին կ'ըսէ իր պատմութեանը մէջ. արգաւանդ հող, շատաջուր և բերրի:

17. Կարնոյ կողմերը ինչպէս են հիմա:

Դրախտին այս յատկութիւնները, այսինքն շատաջուր ըլլալը, երկրին պտղաբերութիւնը, օդոյն զեղեցկութիւնը, ինչուան հիմա յայտնի կ'երևի Պինկէօլ ըստած գօտւոյ լեռներուն կողմերը, որ ըսել է հազար յիձ կամ թիւրակն և կ'ըլլի բարձր Հայոց մէջ որոյ համար կ'ըսէ Խորենացի. «Ըստ անուանդ բարձր է քան զամենայն երկիր, և ընդ չորս կողմանս արձակէ գետս»: Այս գօտւոյ լեռները որ մինչև Զորրորդ Հայոց կողմերը կը ձգուին, իրենց ստորոտէն կը բխեն անթիւ աղբիւրներ, որ տեղ տեղ լճեր ու գետակներ կը ձևացընեն, և այս աղբիւրներուն շատութիւնը ցուցընելու համար տաճկերէն Պինկէօլ ըստած է: Այս աղբիւրներուն կրնայ յարմարիլ սուրբ Գրոց ըսածը. «Եւ աղբիւր ելանէր յերկրէ և ոռոգանէր զամենայն երեսս երկրի», և կամ «Գետ ելանէր յեդեմայ ոռոգանել զդրախտան». վասն զի ամէնն ալ միևնոյն լեռնէն և իրարու մօտ կը բխէին:

Ա.յս պետականները կամ աղբիւրները որ ե՛ պակի կը յիշուին, պրահատը առոպանելէն ե՛ ան անկէ դուրս կ՚ելլեն, և չորս առաջք բաժնուելով կը ձևացընեն պրահատին չորս պեռերը:

Ա.յս ամէն պատճառներով հատանական կը տեսնուի թէ պրահատը Հայաստանի մէջ եղած է, և այնչափ աւելի հատանական, որչափ որ կը տեսնենք ուրիշ օտար կարծեաց սխալ ու անհիմն ըլլալը: Ա.յս բանս քիչ պարծանք չէ մեր հայրենի երկրին որ երբեմն երանութեան բնակարան ու մարդկութեան խանձարուրք եղած է. բայց աւա՛զ որ հիմա թշուառութեան և ոդորմելութեան մէջ կը տեսնուի:

## ԳԼՈՒԽ Բ.

### Նոյի տապանին Հայաստան իջնելուն վրայ:

18. Ե՞րբ եղաւ Ջրհեղեղը:

Ըստ եօթանասնից Հաշուին եղաւ աշխարհիս 2262 թուականին, իսկ ըստ Եբրայեցւոց կամ ժամանակագրաց Հաշուին 1656ին. քառասուն օր գիշեր յորեկ անձրև գալով, ու երկնքի սահանքները և երկրիս աղբիւրները բացուելով, բոլոր երկիրս ջուրը կոխեց, ու ամենայն կենդանիք և մարդիկ ջնջուեցան բաց ՚ի Նոյէն ու իրեն հետ եղած մարդիկներէն և կենդանիներէն:

19. Ջրհեղեղէն եաև մարդիկ նախ ո՛ւր տեղ չատցան:

Ինչպէս մարդուս առջի բնակութիւնը Հայաստանի մէջ եղաւ, և հոն նախ մարդիկ սկսան չատնալ, նոյնպէս և երկրորդ բնակութիւնը ջրհեղեղէն ետքը հոն եղաւ. վասն զի Նոյ և իրեն տղաքը տապանէն ելլելէն վերջը՝ Մասիս լերան կողմերը բնակեցան:

20. Ո՞ւր իջաւ Նոյի տապանը:

Գրեթէ ամէն ազգ կը վկայէ թէ Հայաստանի լեռներուն վրայ իջաւ տապանը, մանաւանդ Բերոսոս որ կ՚ըսէ. «Եւ նաեւ տապանն յեօթներորդում ամեան՝ի 27 ամսոյն՝ի վերայ լերանց Արարատայ». այսպէս կը դնէ նաև եբրայականը և սամարացին. իսկ Վուլկատան և աստրոց թարգմանութիւնը կը դնէ Արմենիա, նոյն սեպելով Արարատն ու Արմենիա: Իսկ Արաբացոց թարգմանութիւնը կը դնէ Ջարտուխ լերանց վրայ՝ որ է Հայաստանի Կորդուաց լեռները, զատնք Արարատեան լեռներուն հետ միացած կարծելով:

21. Արաբին պատմիչներէն ոմն կը վկայէ տապանին Հայաստան իջնելուն վրայ:

Կը վկայեն տապանին Հայաստանի լերանց վրայ իջնելուն նաև արաբին պատմիչներէն Աղեքսանդր Բազմավէպը՝ի քրոնիկոնին եւսեբեայ, ըսելով. «Եւ տեղին յորում վայրէք եկեալ կային (մարդիկ՝ի

նաւէ) Հայոց աշխարհն էր », և դարձեալ. « Եւ ի նաւէն ուր չորս դաշտաւ դաշտարեաց, և ցայժմ տակաւ ինչ մնան ի Կորդուացւոց լերինն ի Հայոց աշխարհին մնալ ասեն »: — Աբիւդենոս առ Եւսեբեայ. « Եւ նաւն երթեալ յաշխարհ Հայոց դաշտարէր, և ի վայրէն ղեղ օդնականութեան բնակչաց աշխարհին պարզևէր »: Ներսես քաղդէացին առ Եւսեբեայ. « Վխտպրեաց և վասն արքայական տապանին՝ որով Նոյքոս (Նոյ) նախանին մերոյ ազգիս ապրեցաւ, և երթեալ դաշտարէ ի գլուխ լերանց Հայաստան աշխարհին »: Նոյնպէս նաև կը վկայեն թէ Հայոց լերանց վրայ իջաւ տապանը՝ Խախդորա, սուրբն Հերոնիմոս, Ոսկեբերան որ կ'ըսէ. « Հաւատայցէք արդեօք եթէ եղև ջրհեղեղ, եթէ առանցելոց ինչ բանք թուին ձեզ, ուր և լերինքն յորս տապանն դադարեաց՝ վկայեն, ղՀայոց լերանցն ասեմ »: Դարձեալ ուրիշ տեղ կ'ըսէ. « Ասքէն և զարդիս լերինք Հայաստանեայց վկայեն (վասն Ջրհեղեղին), ուր եկաց տապանն, ոչ ապաքէն և այժմ անդանօր պահեալ կան նշխարք նորա ի մեր խրատ »: Ոստի աւելորդ է խօսիլ մէկ քանի աննշան մարդկանց կարծեացը վրայ, որք Ս. բարատլեռը Պարսկաստան, Մէլազեռք, Թաթարըստան, Զինու երկիրը դրին. վասն զի ուրիշ օտարազգի հեղինակներն ալ մերժած են անոնց կարծիքը:

22. Նոյի տապանը Հայաստան իջնելուն

կը վկայեն տապանին Հայաստան ինքնեւ
լուն նաև ինչուան հիմա կեցած տեղոյ ա-
նուանները: Վասն զի՝ ինչպէս որ կը կար-
ծուի՝ այն տեղը ուսկից որ երեցան լեռ-
ներու գլուխները՝ Երևան կոչեցին նոյն ա-
տենուան մարդիկը: Ուր որ Նոյ տապանէն
եկաւէն եւրքը իջաւ և բնակեցաւ՝ նախ ձա-
շան կամ նախ իջևան դրին: Ուր որ մեռաւ
և թաղուեցաւ Նոյ և անոր մօտ եղած գա-
ւառը կոչեցին Ախուրեան: Ուր որ Նոյ այդի
տնկեց, դրին Արկուռի որ վերջը սամիօրէն
ըսուեցաւ Արտ*: Ուր որ Նոյեմ
գարկինը** թաղուեցաւ՝ Մարանդ (իբր մայր
անդ): Այս բառերուն նշանակութեանցը
վրայ դարձեալ կը խօսինք:

23. Ասարկոչիան. Նոյի սերունդը որ կը
բնակէին Արարատայ լերանց կողմերը, ա-
բելքի կողմէն եկան և եկան Սենաար գաշ-
տը (Ծն. ժա. 2). և հոն Բաբելոն քաղաքը
հիմնեցին. արդ Հայաստան Սենաարին ա-
բելեան կողմը չըլլիր, հապա հիւսիսա-
կողմը:

Սուրբ Գիրքը կը խօսի, ինչպէս կ'ը-

* Այս գեղը 1840ին Մաահաց հրաբուխին տակ
ծածկուեցաւ: Մեր նախնեաց գրքերուն մէջ գե-
ղին անունը միշտ Անոթ ըսուած է, Արկուռի
չկայ:

** "Եւ Նոյ լեալ ամաց հինգհարիւրից ծնանի
զՅեմ, զՔամ և զՅաբեթ 'ի Նոյեմզարայ կինոջէ
իւրմէ ,,. Սահ-էլ էրէց:

ակ Պօշար, Ա.որեատանեայց սովորութեանը համեմատ, որոց սէրութեանը մէջ էն անցնելով Տիգրիսը, պրեթէ երկու հաւասար մաս կը բաժնէ: Ա.րդ այն մասը որ Տիգրիսի անդիի կողմը կ'ըլնի կ'ըսեն Ա.րևելեան, իսկ այն որ սադիի կողմը կ'ըլնի՝ Ա.րևմտեան: Որովհետև Ա.րարատեան լեռները ուսկից մարդիկ ցրուեցան, կ'ըլնին Տիգրիսի անդիի կողմը անոր համար ալ սուրբ Գիրքը կ'ըսէ. «ի խաղալն նոցա յարևելից»: Բայց թէ ինչպէս անցան Տիգրիսի սադիի կողմը, պէտք չէ զարմանալ, վասն զի գիտէին այն ատեն նաւակ չինելու կերպը: բաց ասկէ կրնային առանց նաւակի ալ Տիգրիսին ծանծաղ տեղերէն անցնիլ, ինչպէս որ անցան մեծին Ա.ղեքսանդրի զօրքերը Նինուէի մօտ:

24. Տապանին այլ և այլ կտորներուն վրայ ինչ գիտեմք կայ:

Բազմաւէպն Ա.ղեքսանդր * և Բերոսոս Բելայ քուրմը կը գրուցեն, թէ Հայաստանի կորդուաց լեռներուն վրայ մնացած էր տապանին մէկ մասը, որու վրայէն քերուած նաւթը բժժանաց ու հիւանդութիւններէ

* Ա.ղեքսանդր Բազմավէպ ի քրոնիկոնի Եւսեբեայ. "Եւ ցայժմ ասկաւ ինչ մնան ի կորդուացւոց լերին ի Հայոց աշխարհին մնալ նշխարս (տապանին) տաճն, և ոմանց քերել բերել ի ձեփածոյ նաւին նաւթոյ ի բժշկութիւն ի ընկղց ցաւոց ինչ բժժանաց":

*առողջանալու համար կը զործածէին մար-*
*գիկ: Կը զրուցեն նաև Յովսեպոս և տուրքն*
*Եպիփան թէ տապանին այլևայլ կտորները*
*կը գտնուին Կորդուաց լեռներուն վրայ:*
*Ասկէ կ'երևի որ տուրքն Յակոբ Մծբնայ*
*հայրապետէն շատ առաջ կային տապանին*
*այլևայլ կտորները: Իսկ Կորդուաց լեռնե-*
*րուն վրայօք աւելի ինչ որ վերը ըսինք (20):*

## ԳԼՈՒԽ Գ.

*Այլևայլ գիտելիք Նոյի ոչ աւետ Սեմ, Քամ,*
*Յաբէթ որդւոցը և. աւետց ազերդոցը վրայ:*

25. *Չրհեղեղէն ետև ինչուան մարդ-*
*կանց Հայաստանէն դուրս ցրուիլը մրջա-*
*տաեն անցաւ:*

*Չրհեղեղէն ետև ինչուան Ժողովրդեան*
*Սենաար դաշտը երթալը Փաղէկ նահա-*
*պետին աւեն, եօթանասնից ու Սամա-*
*րացւոց ճիշդ հաշուին նայելով, որ աւե-*
*լի կը համաձայնի տուրք Գրքին և ար-*
*տաքին պատմութեանց, է 430 տարի *:*

* *Հոս եօթանասնիցը նահապետաց կարգին մէջ*
*Արփաքսադէն ետև ու Սալային առաջ՝ որ Սե-*
*մայ ջրլրորդն է՝ կը յիշէ կայնանը, որոյ 130ե-*
*րորդ (ըստ Խոր. 120երորդ) տարին ծնաւ կ'ըսէ*
*Սաղան, տասվեցնակ 432 տարի ըլլալու 562*
*տարի կ'ըլլայ ինչուան Փաղէկ: Բայց կ'երևի թէ*
*եօթանասնից մէջ սխալմամբ մտած է կայնանին*

*Ա.յս միջոցին մէջ նոյ նահապետ քանի որ ողջ էր հօր պէս կ'առաջնորդէր ամենուն, և ամէնքը հանդիսատ և խաղաղ կեանք կ'անցընէին երկրագործութեան և հովուութեան եանէ ըլլալով, որով այս միջոցը բաւեցաւ Ոսկեդար: Ոմանք կրհեղեղէն ինչուան ժողովրդեան ցրուիլը ըստ Եբրայեցւոց հաշուին 100 տարի կը դնեն *:*

*անունը, վասն զի ոչ Եբրայեցւոց, և ոչ իսկ Սամարացւոց թարգմանութեան մէջ կայ, որոյ հետեւմանութիւնքը ինչուան փալեկայ առեն համաձայն կ'երթայ՝ բաց այս սխալմունքէն: Դարձեալ եօթանասնից թարգմանութեան հին օրինակները ուն մէջ կայնանին անունը չկայ, և եաքերը մնաած է: Այս բանիս ամենեւին արգելք մը չընեը Ղուկասու աւետարանչին մէջ կայնանին անունը չիշուիլը, վասն զի կ'երեւի թէ մէկը Ղուկաս աւետարանչին լուսանցքին մէջ դնելով կայնանին անունը, եաքը բնագրին մէջ մտեր է և այնպէս միացեր կ'ըսեն իմաստուն:*

*Ընձիւեան բազմարդիւն վարդապետը ըստ Եբրայեցւոց հաշուին 100 տարի կը դնէ ինչուան փալեկ նահապետին առեն (Հնախօս. Ա. էջ 282, 283, 305: Հ.յ. պատ. Ջամչեան. հտ. Ա. 155, 156), կալմէթը երեն առաջնորդ առնելով, և անկէց այլ և այլ հետեւանքներ հանելէն ետեւ՝ կը հետեւցընէ նաև թէ Հայկ Սենաար դաշտէն դառնալէն եաքը դեռ ողջ էր Նոյ նահապետը: Այս հաշիւը մեզի սոյգ չերեւիր, հապա ճշմարիտ է եօթանասնից ու Սամարացւոց հաշիւը որ կը դնեն ինչուան փալեկայ առեն 432 տարի, ուր եբրայեանը կը դնէ 102 տարի. վասն զի՝ ա. անկարելի է*

**26. Ի՞նչ պատճառաւ ուղեցին մարդիկ Հայաստանէն ելլել երթալ:**

Պատճառը սուրբ Գիրքը որոշ չգներ, բայց յայտնի կ'երևի թէ մարդկանց չատնալն որ 100 տարուան մէջ այն աստիճան չատնայ ժողովուրդը, որ երկիրը իրենց չբաւելով, ելլեն երթան Սենաար դաշտը՝ ու հոնկէ ապին անդին ցրուին, ուր երկրորդ դարուն սկիզբը 7,000 կամ 8.000 հազիւ չատցած կ'ըլլայ ժողովուրդը. իսկ հինգերորդ դարուն փալեկայ առեն ինչուան 4,000,000 կամ 5,000,000: Ը. Վուլկատային հաշուին նայելով Աբրահամու ծնունդը կ'ընկնի ջրհեղեղէն 292 տարի ետքը, այսինքն 58 տարի նոյի մահուանէն առաջ, և 218 տարի Սեմայ մահուանէն առաջ: Արդ թէ որ Աբրահամ առած ըլլար նոյ և Սեմ նահապետները, անկարելի կ'երևնայ որ Մովսէս Աբրահամու վարքը պատմելու առեն, չիշէր առանկ երևելի դիպուած մը. վասն զի Մովսէս այն ամէն բաները որ պարծանք մը կը բերեն Աբրահամ նահապետին՝ բոլորը կը չիշէ, ոչ միայ առանկ մեծ պարծանք մը այս երկու նահապետները առած ըլլալուն և անոնց հետ խօսած ըլլալուն համար: Ուրեմն Մովսէսի լռութենէն ալ կ'երևի թէ Աբրահամ նահապետ ոչ նոյ առաջը է և ոչ Սեմը: Զ. Սուրբ Գրքին նայելով Աբրահամու կոչման ժամանակ ժողովուրդը չատցած էր, և ապին անդին մանր տէրութիւններ կային, որոնք իրարու հետ սկսեր էին պատերազմիլ, որոյմէ ոմանք քիչ առենէն եռքը մեծամեծ ինքնակալութիւններ եղան. այս ամէն բաները եղած չէր կրնար ըլլալ թէ որ ըստ Վուլկատային հաշուին չհեղեղէն եռև 367 տարի անցած ըլլար ինչուան Աբրահամու կոչումը. վասն զի անկարե-

էր, որով երկիրը չէր բաւեր իրենց. մանաւանդ ունեցած ոչխարներուն, կովերուն պատճառաւ, որ խիստ բազմաթիւ էին, վասն զի այն տեղն ամէնքն ալ հովուութեան և երկրագործութեան եռանդ կ'ըլլային: Ուստի շատ հոգի ելան Հայաստանէն ու գնացին Սենաար դաշտը, և հոն լեռնին խառնակելով, տղին անդին ցրուեցան: Ասանդութիւն մը կայ թէ Նոյ պեղ

լի է որ այնչափ քիչ ժամանակի մէջ երկրիս վրայ այնչափ այլևայլ փոփոխութիւններ, պզտիկ, ու մեծագործութիւններ ըլլան, որոնք բաւական ծանրած էին. ուր որպէս զի սահմանք փոփոխութիւններ եղած ըլլան երկրիս վրայ, պէտք է դէմ ուելը ինը դար աւելցընել անոնց վրայ. անոր համար շատ յարմար և տոյժ կ'երևնայ եօթանասանից ժամանակագրութիւնը, որ ինչուան Աբրահամու կոչումը 1247 տարի կը դնէ, և արտաքին պատմութեանց ալ հակառակ չէլլար, այլ կը միաբանի անոնց հետ:

Եօթանասանից ժամանակագրութիւնը քան զԵբրայականը աւելի ընտրելուս մէկ պատճառն ալ այս է, որ մեր նախնիքը սկզբանէ՝ ի վեր միշտ եօթանասնիցը գործածած են, ինչպէս նաև Յոյնեը, նաև Լատինացիք ինչուան արբոյն Հերոնիմոսի աեն: Այս Հնախօսութեանս մէջ Թուականները եօթանասանից ժամանակագրութեանը համեմատ գրինք. ուստի Հայկազանց տէրութեան տևեը վտանակ գնելու ըստ ժամանակագրաց հաշուին 1779 տարի, սկսելով 2107 տարի առաջ Քրիստոսէ ծննդենէն, գրինք 2018 տարի, այսպէս իմա և ուրիշ Թուականներն ալ:

*չամեռած բաժներ է աշխարհիս իրեք մասը իրեն Սեմ, Քամ, Յաբեթ որդուցը ժառանգելու համար. ինչպէս որ կը յիշէ այս բանս սուրբն Եպիփան, և ուրիշներն ալ: Այս բանիս յիշատակութիւն կայ հեթանոսաց պրուածոց մէջ ալ, որ կ'ըսեն թէ Զրուան, Տիտան և Յապետոսթէ, կամ Դիոս, Պոսիդոն և Պղուտոն՝ իրենց մէջ երկիրս բաժնեցին, որ են Նոյի իրեք որդիքը՝ Սեմ, Քամ Յաբեթ:*

27. *Հեթանոսները Նոյին ինչ անուն կու տային:*

*Հեթանոսները Նոյին Սատուռնոս անուն կու տային, որ ըստ Յունաց կ'ըսուէր նաև Կռոնոս. և իրեն Սեմ, Քամ, Յաբեթ որդիքը՝ կը կոչէին Դիոս, Պոսիդոն և Պղուտոն: Իսկ Ասորեստանեայք կոչեցին զՆոյ Քսուտրոս իրենց թագաւորներուն մէկուն անուամբը: Նոյնպէս և ուրիշ արևելեան ազգերը, ինչպէս վերը ըսինք, Նոյին կ'ըսէին Քսիսութրոս, և իրեն որդուցը՝ Զրուան, Տիտան, և Յապետոսէ: Դիցաբանութեան մեկնիչները կ'ըսեն թէ հեթանոսներէն ոմանք Քամին՝ Դիոս, կամ ըստ լատ. Եօվիս կամ Եուպիտեռ կ'ըսէին, և Եգիպտացիք Ամմոն. Յաբեթին՝ Պոսիդոն կամ Նեպտուն, որ էր ծովու աստուած, վասն զի իրեն բաժին ինկան կղզիներն ու թերակղզիները, իսկ Սեմայ Պղուտոն անունը կու տային, որ կը նշանակէ մեծատուն:*

28. *Ո՞ւր էր Սեմայ բնակութեան տեղը:*

Սեմ՝ որ է Զրուան կամ Զրադաշտ՝ ո-
րուն Յոյնք և Հռոմայեցիք կ'ըսեն Զօրօաստր,
նախ Հայաստանի Սիմ լեռը բնակեցաւ,
որ իր անունովը կոչուած է. եւթը Պարս-
կահայք նահանգին Զարուանդ գաւառը, որ
նոյնպէս իրեն անունովը կոչուեցաւ (Խոր.
Ա. զ.):

29. Տարբանին վրայ ինչ պիտենիք կայ:
Խորենացին Ալամպիոդոր փիլիսոփայէն
առնով կը գրուցէ, թէ Սեմայ պզտիկ տը-
ղոցմէ մէկը Տարբան անուամբ երեսուն
մանչ զաւակով ու տասնըհինգ աղջիկ զա-
ւակով և ուրիշ մարդիկներով՝ բաժնուեցաւ
իր հօրմէն, և գնաց Տարօնայ կողմերը բնա-
կեցաւ, զոր իր անունովը կոչեց. իսկ այն
տեղը ուսկից որ իր զաւկները իրմէ բաժ-
նուեցան Ցրօնք անուանեց: Այս Տարբանը
եղբերը գնաց Բակտրիոյ կողմերը, բայց
քիչ մը աւեն կենալէն եղբը ինքը դար-
ձաւ, սակայն իր տղոցմէ մէկը հոն ձնաց,
որ եղաւ բակտրիացի Զօրօաստրը, որոյ
վրայ ուրիշ տեղ կը խօսինք:

30. Աստղիկ և Որսիրայ վրայ ինչ պի-
տելիք կան:

Աստղիկ և Որսիր, ըստ աւանդութեան,
Սեմայ քոյրն և եղբայրն էին. Աստղիկ բնա-
կեցաւ Տարօնոյ մէջ, ուր կայ Աստղընբերդ
կամ Աստղեբերդ, իր անունովը կոչուած:
Որսիր ալ բնակեցաւ Կորճայք նահանգին
մէջ, ուր իրեն անունովը կոչուած կայ Որ-
սիրանք գաւառը:

31. Եմուելին վրայ ինչ գիտենք կան։
Եմուելն Աբրամայ որդին Սեմայ թոռն էր (Ծն. ժ. 23). որ ըստ Եբրայեցւոց է Հռոյ։ Յովսեպոս Հուլը կը կոչէ նաև Ողրոս, և ի֊ րեն բնակութիւնը Հայաստանի մէջ կը դը֊ նէ։ Պօշար Հաւանական կը կարծէ թէ Ո֊ ղրոսէն եղած ըլլայ Ողինի անունը, որ է Ուտի, Հայաստանի տասնըհինգ նահանգ֊ ներէն մէկը։

32. Ցեկտան ուր բնակեցաւ։
Ցեկտան Եբերայ որդին Սեմայ ցեղէն, բնակեցաւ Հայաստանի մէջ Մասիսին մօ֊ տիկ։ Պէտք չէ շփոթել այս Ցեկտանը մէ֊ կալ Ցեկտանին հետ՝ որ Աբրահամու և Քե֊ տուրայ որդին էր, և որ Արաբիային մէջ բնակեցաւ, ինչպէս որ կալմէթ ալ կը հաս֊ տատէ։ Եբերայ որդին Ցեկտանը տասուե֊ րեք որդի ունէր, որոնք Մասիսէն սկսեալ ինչուան Սուվիեր կամ Սպեր բնակեցան (§. 11)։

33. Ո՞ւր էր Ցաբէթին բնակութեան տեղը։
Ցաբէթ կամ Ցապետոսթէ և կամ Պռոմ֊ թոն յայտնի է թէ առջի բերան Հայաստան բնակեցաւ, բայց որոշ չգիտցուիր թէ ուր էր իր բնակութեան տեղը, իսկ իրեն սե֊ րունդները ցրուեցան Ասիա, Միջեր֊ կրական ծովուն կղզիները, Եւրոպա և Ա֊ սիոյ կողմերը։

34. Գամերայ վրայ ինչ գիտենք կան։
Գամերայ կամ Գոմերայ Ցաբէթի որ֊

պոյն համար, կ'ըսէ Յովսեպոս թէ Գաղատիայի մէջ բնակեցաւ, և որ առաջուց Գոմարտք կ'ըսուէր։ Բայց աւելի ստոյգ է թէ բնակեցաւ Գամիրք ըսուած երկիրը՝ որ է Կապադովկիա, ինչպէս որ կը վկայէ նաև մեր Յովհաննէս Կաթողիկոս։

35. Մագոգին վրայ ինչ գիտելիք կան։

Մագոգ Յաբեթի երկրորդ որդին՝ բնակեցաւ, կ'ըսէ Պօչար, Ստրաբոնէն ու Պլինեոսէն յիշուած Կոկարենի գաւառին մէջ. վասն զի կ'ըսէ թէ Գոգ նոյն է Մագոգին հետ։ Ա.րդ այս կոկարիճի ըսուած գաւառը մեր Գուգարք նահանգն է, որ իբր թէ ըլլար Գոգ հարք, այսինքն տեղի ուր բնակեցան Գոգայ կամ Մագոգայ հայրերը։ Բայց եւթը Մագոգին սերունդները ցրուեցան Կովկասու լեռներուն վրայ, անկէց անցան Ռուսաստան և Թաթարստանին վարի կողմերը, ուր են Մանչուք և Մողոլ ըսուած ազգերը, որ Մագոգ անունէն կոչած են։ Յովհաննէս Կաթողիկոս Մագոգին սերունդներէն ելած է կ'ըսէ կեղտաց, գաղտացւոց և Մարաց ազգերը։

36. Մոսոքին վրայ ինչ գիտելիք կան։

Մոսոք Յաբեթին եօթներորդ որդին, բնակեցաւ Մոսքիքեան լերանց վրայ, որոնք Հայաստանը Վրաստանէն կը բաժնեն, և կ'երթան ինչուան Պոնտոսի և Կապադովկիոյ կողմերը։ Ա.յս գօտւոր լեռները կոչեցան Մոսոքին անունովը, որոյ սերունդները կ'ապրէին նաև Մոսկովատան։ Ասոնք

Մոակովք անունը ելած կը կարծուի Մոաք
կամ Մոաբիք անուննէն, որ Մոաբիքեան լեռ-
ներուն վրայ բնակող ազգ մ'էր, և հոնկէ
զաղթական գնացին Ռուսաստան կամ Մոս-
կովատան. իսկ Ռոշաք անուան համար ո-
մանք կը զրուցեն թէ ելած է Ռոս կամ Ռաս
անունէն, որ Երասխ կամ ըստ յն. Ս.րաս
գետոյն անուան աւրուածն էր, որ կը
տրուէր նոյն գետոյն քով բնակող ազգի
մը: Ա.յս ազգէն զաղթական երթալով Մոս-
կովատանի կողմերը Ռուսք կոչեցան: Եզե-
կիէլի մէջ կը յիշուի Գոգ և Մագոգ Ռուս-
մեսովքայ իշխանը, որ Ռոսք և Մեսովք
բառերէն միացած է, որ երկու զանազան
ժողովրդոց անուններ էին: Յովհաննէս
Կաթողիկոս Եսաբիոսէն առնելով՝ Լիւրի-
կեցիներն ալ Մոսոքէն ելած կը համարի:

37. Աբգանապին վրայ ինչ պիտելիք կան:

Աբգանապ որ Գամերայ որդին էր* բը-
նակեցաւ նախ'ի Հայաստան, և իրեն ա-
նունով մեր ազգն ալ Աբգանազեան բառե-
ցաւ, ինչպէս որ կը վկայէ Յովհաննէս
Կթ. որուն կը համաձայնի Ս. Գիրքն ալ Եր-
միա մարգարէին բերնովը որ կ'ըսէ. «Պա-

* Յովհ. Կթ. զԱբգանազ կը դնէ Թիւաւայ որ-
դի, ըսելով. "Թիւաս որ երրորդ էր'ի Յաբեթէ
ծնաւ զերիս որդիս, զԱբգանազ, զԼիփաս և
Թորգոմ,,. ուր սուրբ Գիրքը կ'ըսէ. "Որդիք Գո-
մերայ Աբգանազ ու Լիփաթ և Թորգոմ,,:

տուէր տուք յինէն այրարատեան թագաւորութեանցն և Ագբանազեան գեղիւն » ուր երկուքն ալ մէկ թագաւորութեան համար ըսուած են : Եղբերը Ագբանազին ցեղէն զաղթական գնացին Փռիւգիա և Բիւթանիա , և հոն այլ և այլ քաղաքներ և գետեր իրենց անունովը կոչեցին :

38 . Թորգոմին վրայ ինչ գիտելիք կան :

Թորգոմին համար՝ որ Գամերայ երրորդ որդին էր , զոր Խորենացի և Յովհ . Կթ . Թիրասայ որդի կը դնեն , կ'ըսեն արտաքին պատմիչներէն Եւսեբիոս , Թէոդորետոս և սուրբ Իսիդորոս՝ թէ Հայոց ազգին նախահան էր . իսկ Յովսեպոս , Հերոնիմոս և Պօչար՝ թէ Փռիւգացւոց ազգին էր . և հիմակուան մատենագիրներէն շատերը կ'ըսեն թէ Թորգոմացւոց աշխարհը Թորգոմահանգ երկիրն էր , որ կ'ըլնի Թաթարստանի և Սկիւթիայի մէջ : Բայց մենք ստոյգ ազգային պատմութեամբ գիտենք թէ Թորգոմ էր Հայկին հայրը , և ինչպէս Հայկին անունովը , նոյնպէս նաև Թորգոմին անունովը կոչեցաւ մեր ազգն ու աշխարհը , որ առաջ Ագբանազին անունովը կը կոչէր : Այս բանս կ'ընդունին նաև Կալմէթ և ուրիշները , և սուրբ Գիրքն ալ կը վկայէ կոչելով . « Տունն Թորգոմայ 'ի ծագացն հիւսիսոյ » . (Եզեկ . Բ . 60 .) ուր կ'ըլնի Հայաստան : Տարակոյս չկայ թէ եղբերը Թորգոմին սերունդներէն գնացին Թաթարստանի կողմերն ալ , ուր կ'երևի թէ Թոր-

քուռանք և թուրք ըսուած ազգերը Թուրգմին անունէն ելած են։

39. Ո՞ւր է Գամայ բնակութեան տեղը։

Գամ, ինչպէս ուրիշ տեղ ըսած ենք (§. 13), բնակած կ՚երևի նախ Ուտի նահանգին մէջ, որոյ բնակիչները իրեն անունը Սևորդիք կոչուեցան. և իրեն Գուշպին բնակած կ՚երևի Աղուանից նահանգին Գուսատի գաւառին մէջ. ուսկից ելան գնացին իրեն յաջորդները նաև Սկիւթիա, Գուշանաց և Գթաց երկիրները, և Մագքութք որ կ՚ըսուի նաև Մեծ Գոթք։

## ԳԼՈՒԽ Դ.

*Հայկ, ոչ մեր տէրունական ակզբնաւորութիւն, և տէրունական ընդարձակող բազաւորները* *։

40. Թորգոմ մեր առաջին նախահայրը քանի՞ զաւակ ունէր։

Թորգոմ՝ ինչպէս կ՚ըսէ Մա. Օռափէլեանը,

* Այս հնախօսութեան մէջ մտքերնիս այն չէ որ ազգային պատմութիւն գրենք, հապա մեր Թագաւորներուն մէջ որոնք որ երևելի եղան քաջութեամբ և աշխարհաշէն գործքերով զանոնք միայն յիշատակել, Թողլով ուրիշ մանրամասն պատմութիւնները ազգային պատմութենէ առնելու։ Յետ նախապատմութեանս վրայ կ՚ուզենք ընդարձակ խօսիլ, գաւառաց համար գրուած ազգային պատմութեանց մէջ տեղն ի տեղը իրարու յաջորդած ջրհեղեղն պատմուած։

ութը զաւակ ունէր ահաւոր և հսկայ մարդիկ, որոց առջինը ու մեծն էր Հայկ, եաթքը Քարթլաւս կամ Քարթլօս, Բարդաւս, Մովկան, Լեկան, Հերաւս, Կովկաս և Տուբեերտղը ընդէս: Թորգոմ ասոնց վրայ բաժնելով իր ժառանգութիւնը, Հայկին տուաւ Հայաստանը բոլոր իր սահմանովը մէկտեղ. իսկ Վրաստանը և ուրիշ սահմանակից երկիրները Քարթլաւսին և մէկալ որդուցը:

41. Հայկին վրայ ինչ գիտելիք կան:

Հայկ՝ Թորգոմայ որդին՝ նոյէն առնելով հինգերորդ էր. վասն զի նոյին որդին Յաբեթ, Յաբեթի որդին Գամեր, Գամերայ որդին Թորգոմ, Թորգոմի որդին Հայկ: Հայկ Բաբելոնի աշտարակը չինողներուն մէկն էր. բայց երբոր ուրիշներուն հետ իր լեզուն ալ խառնակեցաւ, ու իմացաւ Աստուծոյ բարկութիւնը, չուզելով Ներոմրթայ հնազանդիլ, որ կ'ուզէր ինքզինքը Աստուծոյ պէս պաշտել տալ, և ուզելով Հայկ աստուածապաշտութեան մէջ հաստատ մնալ, դարձաւ Հայաստան իբր 140 տարիէն ետքը, ուր որ կային այլևայլ ժողովուրդներ տպիտանդին Հայաստանի զանազան կողմերը, որոց լեզուն անչփոթ մնացեր էր. և Հայկ իր կորանցուցած լեզուն նորէն սովրեցաւ, որ էր հայերէն լեզուն, մէկդի թողլով իր վերջէն իբրև պատիժ ունեցած լեզուն: Հայկ երբոր Սեննաար դաշտը գնաց 130 տարուան էր, և հոն ծնաւ զԱրմենակ, զՄաշտոց, զԽոռ, և այլն:

42. Ի՞նչ պատճառաւ Սենաար գաշտին
ՄԷՋ մարդկանց լեզուն խառնակեցաւ։

Մարդիկ բազմութեամբ Հայաստանէն
ելլելէն ետև երբոր հասան Սենաար գաշտը
որ Ասորեստանի ՄԷՋ է, հոն դեռ իրարմէ
չբաժնուած ուզեցին ամբարտաւանութեան
խորհուրդով բարձր աշտարակ մը շինել, և
անով իրենց անունը անմահ թողուլ*։ Ասիա
բանս մեծ չարութեան գործ կը համարին
Ոսկեբերան և սուրբն Օգոստինոս։ Բայց
ինչպէս որ ստոյգ կ'երևի, աշտարակաշի-
նութեան գործոյն ՄԷՋ մտաւ նաև կռապաշ-
տութեան խորհուրդ, որով ուզեցին աշտա-
րակը դից մեհեան ընել. անոր համար՝ ինչ-
պէս որ կ'ըսէ մեր Ս. Լուսաւորիչը, լեզուաց
խառնակութեան պատիժն առին։ Այս բա-
նիս ապացոյց է նաև աս ալ՝ որ Բաբելոնի
աշտարակին Ճնացորդը Բելայ տաճար ե-
ղաւ, ուր կը պաշտէին գինքը. և թէ Բէլ
եղաւ կռապաշտութեան առջի հնարողը,
ինքգինքը Աստուծոյ պէս պաշտել տալով։
Բէլ՝ սուրբ Գրքին ՄԷՋ կ'ըսուի Ներբուդ,
որ էր աշտարակը շինողներուն գլուխը։

43. Հայկ Սենաար գաշտէն Հայաստան
դառնալէն ետև նախ ո՛ւր բնակեցաւ։

Հայկ երբոր դարձաւ Սենաար գաշտէն իր
տնով տեղովն, զաւկըներովն ու թոռներո-

* Սիւնկելլոս, Կեդրենոս և ուրիշները կը դնեն
թէ ինչուան 40 տարին չափ աշխատեցան աշտա-
րակին շինութեանը վրայ։

վը որ 300 հոգիէն աւելի էին, և ուրիշ ծառաներով և օտար մարդերով որ իրեն յարեր էին, բնակեցաւ նախ Ասորեստանի կողմերը, որոնք եռքերը ըսուեցան Մոկք և Կորճայք, ուր ճնացեր էին այլևայլ մարդիկ որ չէին գնացեր Սենասար դաշտը, և հնազանդեցընելով զանոնք, հոն լերան մը ոտքը դաշտի մը մէջ իրեն բնակութեան տեղ ու կալուածներ չինեց. բայց եռքէն թողլով զանոնք իր կապտոս Թոռին՝ որ Սամենակայ որդին էր, ինքը ելաւ գնաց Տուբերանի Հարք գաւառը՝ որոյ անունը ինքը գրաւ իր նախահարցը յիշատակը պահելու և ցուցընելու համար թէ հոն բնակեցան իրեն հայրերը. և հոն չինեց իր անունով Հայկաշէն աւանը:

44. Հայկ ինչպէս իշխեց Հայաստանին:

Հայկ ճեղայ յաղթելէն եռև Հայոց ճոր ըսուած դաշտին մէջ, որ կ'ըսնի Ճգնունեաց ծովուն մօտերը, աւելի ընդարձակեց իր տէրմանը, ու եղաւ առաջին տիրապետող ու Հայաստանը ընդարձակող: Բայց տակէ եղաւ մեր առաջին նախահայրը, որոյ անունով կոչեցաւ մեր ազգը հայ, երկիրը Հայքկամ Հայոց աշխարհ, որ անկէ առաջ կ'ըսուէր Ազբանազեան աշխարհ, և եռքը ըսուեր էր Թորգոմեական աշխարհ: Իսկ ինքն Հայկ՝ ճեղայ մահուընէն եռև իր զաւկընեըրովը մէկտեղ խաղաղութեամբ կառավարեց Հայաստանը տանուտէրական իշխանութեամբ, ինչուան որ մեռաւ: Եւ իր որ-

դին Ա.րամենակ բնակեցաւ Ա.յրարատ նահանգին մէջ Ա.րագած լերան մօտիկ որ իր անունովը կոչուած է. Ա.րմայիս Ա.րամենակին որդին բնակեցաւ Ա.րմաւիրի մէջ, Շապրայ Ա.րմայիսին որդին Շիրակ գաւառին մէջ: Նոյնպէս Ա.րամենակին երկու եղբայրները Մանաւազ և Խոտ բնակեցան Հարք և Խոռխոռունիք գաւառներուն մէջ. Բազ Մանաւազայ որդին Բզնունեաց մէջ. Գեղամ Ա.րմայիսին թոռը Գեղարքունի գաւառին մէջ և, Գեղամայ որդին Սիսակ՝ Սիւնեաց երկրին կամ Սիսականին մէջ, և այլն:

45. Հայկէն ետև ոմ եղաւ Հայաստանի տահմանը ընդարձակող:

Հայաստանը ընդարձակողներուն մէջ առջինը կը սեպուի Ա.րամ, որ իր թշնամիները Հայաստանէն հալածելու պատճառաւ, տիրեց նաև օտար երկիրներու: Ա.րեւելեան կողմէն ընդարձակեց ինչուան Զապրատ լեռը՝ որ կ'ըլլի Ա.տրպատականի սահմանին մէջ, հալածելով Մեդացիները՝ որոնք Նինուէին առաջնորդութեամբը կ'ապստամբէին Հայաստանի արեւելեան կողմերը: Ա.յս կողմը յանձնեց Սիսական ցեղին, և երկիրը իրեն հարկատու ըրաւ ինչուան Նինոսի թագաւորութեան սահմանը:

Հարաւային կողմէն Բարչամը հալածելով՝ տիրեց Ա.տրեւատանի մէկ մասին, այսինքն կորճայք, Մոկք և Պարսկահայք նահանգներուն՝ որ Ա.տրեւատանի կողմ կը համա-

բուին. նոյնպէս տիրեց Միջագետաց մեծ մասին: Եւ Ասորեստանի այս կողմերուն վրայ առաջնորդ դրաւ Կադմոսի ցեղը:

Ասլամեան կողմէն տիրեց մասին Փոքր Ասիոյ, հալածելով Պայապիսը Ասրխապեզագոսի կղզիներուն մէկուն մէջ, որ բըռնացած կը տիրէր Սև ու Միջերկրական ծովերուն միջոցը եղած երկիրներուն վրայ. և հոն Մշակ անունով մէկը 10,000 զօրքով կողմնապահ դրաւ, որոյ զօրանիստ քաղաքը Մշակին անունովը ըսուեցաւ Մաժաք որ ետքը կեսարիա կոչեցաւ: Եւ Ասրամ կեսարիայէն ինչուան իր բուն սահմանը երեք մաս բաժնեց, և կոչեց Առաջին, Երկրորդ և Երրորդ Հայք: Բայց ասկէ այս կողմը շատ տեղ բնակչօք լեցուց. և հրաման տուաւ որ ամէնքն ալ հայերէն սովրին ու խօսին:

Հիւսիսային կողմը կուր գետէն անդին անցաւ, և Վրացիներն ու Աղուանքը հնազանդեցուց և հարկատու ըրաւ, որոնք կ'ըսեն թէ Ասրամէն առաջ ալ Հայոց հպատակ էին:

46. Երկրորդ աշխարհակալը ովկ եղաւ:

Երկրորդ աշխարհակալը եղաւ մեծն Տիգրան, որոյ համար Խորենացին կ'ըսէ թէ Հայաստանը ընդարձակելով հասցուց իրբուն սահմանին: Վասն զի Ասրամ նահապետին Հայաստանէն դուրս տիրած երկիրներուն շատը իրեն յաջորդներուն ատենը կորսուեցան Հայոց ձեռքէն, և Հայու սահմաններուն ուրիշները կը տիրէին. զատնք

ամէնքն ալ հալածեց Տիգրան, և զուրիշ նեերը իրեն հարկատու ըրաւ, այսինքն Կապադովկացիները, Վիրքն ու Աղուանքը, և այլն. և Աժդահակին յաղթելով ու զինքն ալ սպաննելով՝ տիրեց Մարաց աշխարհին ալ, և շատ ընդարձակեց իր տէրութիւնը:

47. Վաղարշակայ վրայ ինչ գիտելիք կան:

Մեծն Արշակ Պարթևը շատ երկիրներու տիրելով և ուզելով իր տէրութիւնը հաստատ պահել, իր եղբայրը Վաղարշակը Հայաստանի վրայ թագաւոր դրաւ՝ իրեն թագաւորութեան կէսը անոր յանձնելով, այսինքն Ասրուց երկրին արևմտեան կողմը, և Կղեսուրը որ է ստորին Ասորիք, Պաղեստինը, բոլոր Փոքր Ասիա, Պոնտոս ծովէն ինչուան Կասպից ծովը եղած Սկիւթացւոց երկիրը, այսինքն Վրաց, Աղուանից, Եգերացւոց և բոլոր Կովկասային ազգերուն երկիրը և Ասրպատականի աշխարհը*, և իրեն թագաւորանիստ քա-

* Խորենացի գիրք Ա գլ. Ը. "Քանզի թագաւորեե տայ (Արշակ) նմա (Վաղարշակայ) զմծբին, և սահման հաստանէ նմա զման ինչ յարևմտեան Ասրուց և զՊաղեստին և զԱխիա և զամենայն Մեջերկրեայս, և զԹիսալիա, ի ծովէն Պոնտոսի մինչև ի տեղին ուր կովկաս յարևմտեան յանգի ծով և զԱրտպատական,,: Մէջերկրեայ ըսելով կ'իմանայ բոլոր Փոքր Ասիա, որ կ'ընդի Պոնտոսի և Մեջերկրական ծովուն մէջ. Թիպոչիա ըսելով կ'իմանա Սկիւթիա. նաև արևմտեան ծովէն կասպից

*պաք տուաւ Մծբինը։ Խորենացին կ'ըսէ թէ այս սահմաններուն վրայ Վաղարշակ իր քաջութեամբը ուրիշ ալ աւելցուց, մանաւանդ երբոր Մորփիւղիկէսը սպաննեց, և իրեն հպատակ ըրաւ Պոնտացիները, Կապադովկացիքը ու Եպերացիները, որոցմով դուխ քաշեր էր Մորփիւղիկէս։*

*48. Զորրորդ աշխարհակալ և ընդարձակող թագաւորը ոմն եղաւ։*

*Արտաշէս Ա. որ ամէն իր նախորդներէն աւելի ընդարձակեց տէրութիւնը, պահելով բոլոր Վաղարշակին սահմանները։ Ինքը առջինը եղաւ որ տիեզերակալութեան եանէ եղաւ. վասն զի Արամ, Տիգրան, Վաղարշակ ընդարձակեցին իրենց տէրութիւնը՝ թշնամիները հալածելու պատճառաւ որ իրենց երկիրը կոխեր էին. իսկ Արտաշէս միայն տիեզերակալութեան համար տիրեց Պարսկաստանի՝ նախապահութեան պատիւը անոնցմէ ինքն առնելով։ Եւ զմեծն Միհրդատը, իր փեսան, Պոնտոսի վրայ թագաւոր դնելէն, և Իւղացւոց Կրեաոս թագաւորը սպաննելէն և բոլոր Փոքր Ասիայի տիրելէն ետև, անցաւ շատ զօրքով և նաւով Թրակիա, և տիրեց Յունաստանի, Լակեդեմոնի, Թեբէի, Փովկիացւոց և ուրիշ կողմերու. բայց և ոչ մէկը*

*ծովը որ Պարթևաց երկրին արևմտեան կողմը կ'ընդնի, ուր մեծն Աղշակ կը թագաւորէր Բահլ քաղքին մէջ։*

կրցաւ պահել. վասն զի զօրքին մէջ խառնուածութիւն եղելով ապականեցին գինքը *:

49. Մեծն Միհրդատայ վրայ ինչ ըսուելիք կան:

Մեծն Միհրդատ թէպէտ և մեր թագաւորներուն կարգը չէր, բայց մինչեւ Տիգրանայ քեռայրն ըլլալով, և անոր հօրը Սրատաչէսին ձեռքով Պոնտոսի թագաւոր նստելով, իրեն ըրած քաջութիւններն ալ մեր ազգին պարծանք կրնանք սեպել: Եւ դարձեալ ամէն յաղթութիւններուն որ ըրաւ Փոքր Ասիայի այլևայլ ազգերուն վրայ, այսինքն Բիւթանացւոց, Կարիացւոց, Կապադովկացւոց, Փռիւգացւոց, Կողքիսացւոց երկիրներուն ան-

* Արտաքին պատմիչներուն, այսինքն Յունաց և Լատինացւոց մէջ՝ բոլորովին անծանօթ է մեր Արտաշէս Ան անունը և իրեն ըրած քաջութիւններն. անոր համար օտարազգի մատենագիրներէն ոմանք, ինչպէս նաև Սէն-Մարթէն, կը տարակուսին և չեն հաւատար Արտաշէսին ըրած քաջութիւններուն, այսինքն Լիւդացւոց կրեաց թագաւորը սպաննելուն, ծովով Թրակիա անցնելուն ու Յունաստանի սիրելուն, և այլն. որոնք թէպէտ և հին պատուած Յոյն ու Լատին հին մատենագրաց մէկն ալ չպատմէ ալ՝ բայց մեզի աւելի հաւանական կ'երևի Խորենացիին պատմածը, որ ազգային գիւտաններէ և ուրիշ Յոյն մատենագիրներէ առած է, որոնք կորսուած են հիմա, թէպէտ և պատմածնուն մէջ քիչ մ'ալ չափազանցութիւն ըլլայ:

*բելով, նաև Հռոմայեցւոց և Յունաց դէմ ըրած յաղթութիւններուն, որ ինչուան Յունաստան, Թրակիա, Մակեդոնիա ու Կիմմերեան Տաւրիա, որ է Քերսոնեսոն, իր յաղթական բանակը տարաւ, այս ամէն յաղթութեանց կ'ըսեմ՝ ձեռնտու էր զօրքով մեր Միջին Տիգրանը, և նեղութեան առեն իրեն ամուր ապաւէն. ինչուան բաղդին փոփոխելովը Միհրդատ իր կեանքին հետ բոլոր իր աէրութիւնն ալ կորսնցուց, որ իրմէ վերջը Հռոմայեցւոց հարկատու եղաւ:*

**50. Միջին Տիգրան որչափ ընդարձակեց Հայաստանի սահմանը:**

*Միջին Տիգրան իր հօրը Ա.րտաշէսին Ա.սիոյ մէջ տիրած երկիրները որչափ կըրցաւ ձեռքը պահեց, ու տիրեց նաև Հրէաստանի, ուսկից որ չատ հրեայ գերի բերաւ: Բայց երբոր Պոմպէոսէն յաղթեցաւ, Հայաստանէն դուրս եղած երկիրներուն մեծ մասը ձեռքէն գնաց, այսինքն Հրէաստան ու Փոքր Ա.սիայի մէջ եղած երկիրները: Ա.յս Տիգրանը Հռոմայեցւոց պատմիչներուն մէջ մեծ անուն ունի, իրենց հետ չատ վերաբերութիւն ունենալուն համար, և Հայոց թագաւորներուն մէջ ամենէն վեր կը դնեն, ուր ընդ հակառակն մեր պատմիչներուն մէջ այնչափ մեծ չեն պատիւը, և չհաւասարիր Ա.րամին, Ս. Տիգրանին, Վաղարշակին, ու Ս. Ա.րտաշէսին, և այլն:*

**51. Միջին Տիգրանայ մահուընէն եաև ինչ եղաւ Հայաստանի վիճակը:**

Մինչեւ Տիգրանայ մահուընէն եւս Հայաստանէն դուրս եղած երկիրները աւելի սկըսան թօթափիլ Հայոց ձեռքէն. բայց ինչուան մեծին Խոսրովու և Տրդատայ աւեն դեռ հիւսիսային կողմի Հայաստանի մօտիկ երկիրներուն կը տիրէին, այսինքն Աղուանից, Վրաց ու Ալանաց վրայ, նաև փոքր Հայոց ու կապադովկիային՝ զոր Պոմպէոս աւեր էր Հայոց ձեռքէն: Մեծն Խոսրով գնաց յարձակմամբ Պարսկաստան և հալածեց Սասանեան Արտաշիրը, և հասաւ ինչուան Հնդկաստան. տիրեց նաև Ասորեստանին, և հոն չինեց Դավրեժ քաղաքը, ու մէջը պահապան զօրք թողլով դարձաւ եկաւ Հայաստան: Իրմէ եւս երեսել եղաւ Տրդատ որ Պարսկաստանի և Ասորեստանի այլևայլ կողմերուն տիրեց:

52. Տրդատայ մահուանէն եւս Հայաստանի վիճակը ինչպէս եղաւ:

Տրդատայ մահուանէն եւս սկսան Հայաստանէն դուրս եղած երկիրները քոլորովին ելլել մեր թագաւորներուն ձեռքէն, որ են փոքր Հայք, Միջագետք, Ասորեստան, Վիրք, Աղուանք. բայց ասկէց նաև Հայաստանի այլևայլ մասերը, ինչպէս Փայտակարան, Արցախ, Ուտի, Աղձնիք, Կորճայք, Գուգարք, Տմորիք, Կորդուք, Պարսկահայք, Զորրորդ Հայք ըսած մասին, և այլն: Եւ ասով Հայաստանի սահմանը շատ ամփոփեցաւ, ինչուան որ վերջացաւ Արշակունեաց տէրութիւնը և սկսաւ Մարզ-

պանաց իշխանութիւնը, և անկէց ետև Բագրատունեաց տէրութիւնը, որոց ժամանակ Հայաստան խիստ քիչ տեղ կը բռնէ վանդակէր:

57. Բագրատունեաց մէջ որոնք աշխարհակալ թագաւոր կրնան ըսուիլ:

Բագրատունեաց մէջ երեւելի եղան Ա. Հռոմ Ա., Սմբատ Ա., որոնք Հայաստանի այլեւայլ կողմերը որ թշնամեաց ձեռքը անցեր էին՝ ազատեցին, և հիւսիսային կողմէն իրենց սահմանը ինչուան Կովկասային լեռները ընդարձակեցին, և Վիրքն ու Վրաստանը նուաճեցին, և պետերայիները հարկատու ըրին:

54. Ռուբինեանց մէջ որոնք աշխարհակալ թագաւոր կրնան ըսուիլ:

Կիլիկեցւոց մէջ առաջին աշխարհակալ կրնանք համարիլ նոյն իսկ Ռուբէնը, որոյ անունով տէրութիւնն ալ Ռուբինեանց տէրութիւն ըսուած է, որ Բագրատունեաց Գագիկ վերջի թագաւորին ազգականն էր, և երթալով Կիլիկիա և հոն տեղի Հայերը իրեն կողմը ձգելով, տիրեց չատ բերդերու և Տօրոս լերան, հալածելով պետոնները որոց ձեռքն էր այն կողմերը: — Երկրորդ, անուանի եղաւ Թորոս Ա., որ իր տէրութիւնը ինչուան Միջերկրական ծովն ընդարձակեց, տիրելով Կիլիկիայի մեծ մասին: — Երրորդ՝ Լեւոն Ա., որ թէպէտ խիստ քաջ մարդ էր և իր տէրութիւնը չատ ընդարձակեց, տիրելով նաև Խաւրիոյ,

բայց վերջը երբոր անթիւ բազմութեամբ Յունաց Պերիերուժէն կայսրը Կիլիկիոյ վրայ վազեց, Լևոն զերի բռնուեցաւ, և աշխարհն ալ Յունաց ձեռքը անցաւ. թէպէտ և քիչ ատենէն Լևոնի որդին՝ Թորոս Բ զօրանալով նորէն տիրեց բոլոր Կիլիկիային ու Խաւարիային, և շատ քաղաքներ ըրաւ Յունաց դէմ։ — Բայց Ռուբինեանց մէջ քան զամէնը վերադաս կրնայ համարուիլ Լևոն Բ. քաղաքեան և առաքինի գործոց կողմանէ, որով արժանի եղաւ 1198ին թագաւոր օծուելու, Գերմանացւոց Հենրիկոս Զ կայսեր կողմանէ թագ ընդունելով. ու եաթը նոյնպէս թագ ընդունեցաւ Յունաց Ալեքս կայսրէն, և պատուեցաւ Հազարապետութեամբ ամիրապետէն։

## ԳԼՈՒԽ Ե.

### Աշխարհ որ ազգերը յարձակեցան ու եր աշխարհը, և Հայաստան որոց հարկատու եղած է։

55. Հայկազունեաց առեն Հայաստան որոց հարկատու եղած է։

Հայկազունեաց առեն Ասային մահուընէն եաև Շամիրամ Ասորեստանեայց թագուհին տիրեց Հայաստանի վրայ, ու իրմէ եաքն ալ Հայերը առեն առեն Ասորեստանեայց հարկատու եղած են (§. 71)։

56. Հայաստան երբ Յունաց ձեռքն ան-

Վահէ հայկազունեաց վերջի թագաւորը երբոր մեծին Ա.ղեքսանդրի հետ պատերազմելով մեռաւ, մեծն Ա.ղեքսանդր տիրեց բոլոր Հայաստանին, և իրեն մահտեսանէն եաև կը կառավարուէր Հայաստան, Սենեկացւոց կուսակալներուն ձեռքովը որ 180 տարիի չափ տևեց ինչուան Վաղարշակայ տեն։

57. Հայաստան երբ Հռոմայեցւոց ձեռքը անցաւ։

Հայաստան Հռոմայեցւոց ձեռքն անցաւ Ա.րշամայ տեն որ Ա.զարու հայրն էր, և Հայք հարկ կու տային Հռոմայեցւոց ինչուան եոքը։ Նախ Հռոմ կը խաւրէին հարկը, բայց կայսրութիւնը արևելք անցնելէն եաև կոստանդնուպոլիս կը խաւրէին. որով անկէց եոքը սկսաւ նուազիլ Հռոմայեցւոց իշխանութիւնը Հայոց վրայէն և սկսան ցոյները իշխել, կամ թէ լսենք կոստանդնուպոլսի կայսրները։ Վարազդատին մահուընէն եաև չորրորդ դարուն վերջերը, ցունաց Ա.րկադէոս կայսեր և Պարսից Շապուհ թագաւորին տեն Հայաստան երկու բաժնուեցաւ. Փոքր Հայք, Բարձր Հայք և Չորրորդ հայք ցունաց ձեռքը անցաւ. իսկ Մեծ Հայք և Միւսացած մէկալ գաւառները Պարսից։ Ա.յն տեն ցունաց բաժնին մէջ եղած Հայերը ցունաց հարկ կու տային, իսկ Պարսից բաժնին մէջ եղածները՝ Պարսից։ Եւ անկէ եոքը սովորութիւն եղաւ ցունաց ձեռքը եղած

Հայաստանի մասը Արևմտեան կոչել կամ
քաժին Յոռևաց, իսկ Պարսից Ձեռքինը՝ Արև-
ելեան կամ աշխարհ Հայոց, Աւրտարատ Թա-
գաւորանիստ նահանգը Պարսից մասին
մէջ ըլլալուն, և Պարսից մասը Յունաց
մասէն շատ մեծ ըլլալուն համար: Իսկ
Յոյնք բոլոր Պարսից մասին Պարսկահայք
կ'ըսէին, զոր պէտք չէ շփոթել Պարսկա-
հայ նահանգին հետ:

58. Հայք Յոյներէն ինչ նեղութիւն քա-
շած են:

Հայերը Յոյներէն այնչափ նեղութիւն
չեն քաշած՝ որչափ որ քաշած են ուրիշ
շրջակայ ազգերէն. Թէպէտ և Յոյներն
ալ ատեն ատեն զանազան յարձակում-
ներ ըրած են Հայաստանի վրայ ու շատ
ջնաններ հասուցած: Ետքերը Հայոց և Յու-
նաց մէջ հաւատոյ վէճեր մտնելով, և Անի
Բագրատունեաց մայրաքաղաքը մեծ կո-
տորածով Յունաց ձեռքն անցնելով, մաս-
նաւոր ատելութիւն մը մտաւ, որով պատ-
ճառաւ այլևայլ ատեն Հայերը Յոյներէն
շատ հալածանք և նեղութիւն կրեցին:

59. Հայերը հիւսիսային ազգերէն ինչ
նեղութիւն քաշած են:

Հիւսիսային ազգերը, այսինքն Սարմա-
տացիները, Խազիրք, Բասիլք, Հունք և
կամ Գուշանք աստատակութեամբ միայն
վազած են Հայաստանի վրայ, և աւար
առնելով դարձած իրենց երկիրը: Ուստի
Հայերը հիւսիսային ազգերէն շատ նեղու-

թիւն չեն քաշած, և պրեթէ միշտ յաղթող եղած են։ Ինչպէս մեծն Խոսրով իր հօրը վաղարշին վրէժը առնելոյ համար, որ խա. զրաց և Բասլաց դէմ մեծամեծ յաղթութիւն. ներ ընելէն եաև մեռեր էր հոն, Խոսրով անոնց չարաչար յաղթելէն եաև, իրենց մե. ծամեծներէն հարիւրին մէկ պատանդ ա. ռաւ ու դարձաւ։ Նոյնպէս Տրդատ չարա. չար յաղթեց Բասլաց ու իրենց Գեղուեհոն թագաւորն ալ գերի բռնեց։ Ասանկ ուրիշ անգամներ ալ Հայերը յաղթող եղած են հիւ. սիսային ազգերու դէմ։ Իսկ վերջը և Ա. ղուանք որ հիւսիսային ազգերու կարգ կըր. նան սեպուիլ, առջի թերան մեր տէրու. թեան տակն էին ու հարկատու. բայց երբ. որ սկսան Հայերը տկարանալ ու անոնք զօրացան, այն ատեն Հայաստանէ հիւսի. սային կողմի այլևայլ գաւառները, որ են Գուգարք, Ուտի, Աղուանից, և այլն, իրենց ձեռքն անցաւ, ու իրենք կը տիրէին հին. գերորդ դարէն սկսեալ ինչուան ԺՌ, ԺԳ դարերը, թէպէտ և ատեն ատեն Նորէն Հայոց ձեռքը անցան։ Բայց ասկէ ԺԳ դա. րուն ատեն մէկ երկու անգամ յարձակ. մունք ըրին Հայաստանի վրայ, ու տիրեցին Անի քաղքին, որ թշնամեաց ձեռքը աւար եղեր էր։

ԿՕ. Պարսիկները երբ սկսան Հայաստա. նի վրայ յարձակիլ։

Պարսիկները մեծին Խոսրովու մահուը. նէն եաև, սկսան ատեն ատեն վազել Հայաս.

ատանի վրայ. բայց աւելի յաճախեցին երբոր մեր նախարարները լրենց Ս.րտաշէս թագաւորը իր դէշ և անատակ վարքին համար Պարսից Վռամ թագաւորին մատնեցին, ուզեցին անոր հնազանդիլ Պարսից եւ լրենց վրայ մարզպան դնել տալով: Ս.ամ Պարսից թագաւորը լրենց տէր ըլլալով, սկսաւ լրեն մատին մէջ եղած հայերը նեղել, և լրեն կրօնքը զարձընելու համար չարաչար հալածանք հանել և սաստիկ տուրք առնուլ, ինչուան լրենք ալ կը զարմանային թէ Հայաստանէն այնչափ զանձ ելլելէն ետև, ինչպէս դեռ չէն կը կենայ աշխարհը: Հայերը բայց'ի տուրքէն կու տային Պարսից ամէն տարի այսչափ թուով այրուձի, ու պատերազմի ատեն հեծեալ զօրք. և Հայոց զօրքին քաջութեամբն էր որ շատ անգամ կը յաղթէին Պարսիկք թըշնամեաց:

61. Ի՞նչ պատճառաւ Պարսից և Հայոց մէջ ատելութիւն մեր էր:

Քանի որ Պարթևաց ցեղը կը թագաւորէր Պարսկաստանի մէջ՝ մեծն Ս.րշակ Պարթևէն եւս որ տիրեց Պարսկաստանի ալ, Հայոց թագաւորները միշտ բարեկամ և ընտանի էին Պարսից հետ՝ նոյն ցեղէն ըլլալուն համար. և Պարսից թագաւորունը երկրորդը կը համարուէին: Բայց երբոր Պարսից թագաւորութիւնը Պարթևաց ցեղէն Սասանեանց ցեղին անցաւ, ինչուան եօթը անգադար պատերազմ էր: Պատե-

բազմը նախ Հայոց կողմէն սկսաւ. վասն
զի մեր մեծն Խոսրով թագաւորը ուզելով
Պարսից թագաւորութիւնը նորէն ապր-
ելական ցեղին անցընել, պատերազմով
Աբտաշիր սասանեանը ինչուան Հնդկա-
ստան հալածեց, ու երբոր յաղթող դարձաւ
ու նորէն կը պատրաստուէր երկրորդ տա-
րին պատերազմ բանալ Պարսից դէմ, Ա-
նակ Պարթևը դաւաճանութեամբ զինք
սպաննեց, որով Պարսիկները զօրացան
անկէ ետքը:

62. Խոսրովայ մահուանէն ետև Հայերը
ինչ նեղութիւն քաշեցին Պարսիկներէն:

Աբտաշիր Պարսից թագաւորը երբոր
լսեց Խոսրովայ մահը, մէկէն վազեց Հայ-
աստանի վրայ, և շատ ահերմանքով նը-
ւաճեց բոլոր Հայաստան: Անկէ ետքը 28
տարի առանց թագաւորի մնաց Հայաստան
ու Պարսից զորձակալներով կը կառավա-
րուէր, ինչուան որ Տրդատ թագաւորը զօ-
րանալով հալածեց Պարսիկները Հայա-
ստանէն, ու յարձակեցաւ ինչուան իրենց
Տիզբոն մայրաքաղաքէն անդին: Բայց երբ-
որ ինքը մեռաւ, Հայերը սկսան նորէն
շատ նեղութիւններ կրել, և մանաւանդ
Բ Շապուհին ու Բ Ցազկերտին առենները,
որ տակն ու վրայ ըրին Հայոց երկիրը,
շատ հալածուելով, կոտորածներ ընելով:
Բ Ցազկերտին առեն կ'իյնայ Վարդանանց
պատերազմն ու նահատակութիւնը:

63. Հայերը Աբաքացոցմէ ինչ նեղու-
թիւն քաշեցին:

Աբրաքացիք՝ որ կ'ըսուին նաև Հազարա-
ցիք, Իսմայելացիք Տաճիկք և Սարակի-
նոսք, է զարէն սկսեալ ինչուան Ժ.Ա.
դարը շատ անգամ յարձակմունք ընելով
անհնարին վիշտեր հասուցին Հայաստա-
նի, ուրիշ թշնամիներէն աւելի, ու շատ
աւերմունք, կոտորած և գերութիւն ը-
րին, մանաւանդ իններորդ դարուն մէջ
Բուղայի առեն, և տասներորդ դարուն
Յուսիայ ատիկանին առեն, և անհնարին
հարկահանութեամբ կը նեղէին զժողովուր-
դը, եկեղեցիները կը կողոպտէին, առած
քաղաքնին կ'այրէին և կը կործանէին, և
մէջի բնակիչները թրէ կ'անցընէին կամ գե-
րի կը տանէին: Ետքերը հնարք մտածելով
որպէս զի դիւրաւ կարենան տիրել Հայա-
ստանի, վէրի ամիրապետին առեն ուրե-
րորդ դարուն՝ կամ արաբացի հրամանա-
տարը կանչեց խաղաղութեամբ ամէն նա-
խարարները Նախջուան քաղաքը իրենց
զօրքերովը մէկտեղ, իբրև թէ կ'ուզէ աշ-
խարհագիր ընել: Երբոր ատոնք միասու-
թեամբ եկան, հոն զօրքը երկու եկեղեցւոյ
մէջ դրաւեց, և եկեղեցիով մէկտեղ այրեց
զիրենք. իսկ զնախարարները սկսաւ տան-
ջել իրենցմէ ստակ պահանջելով, և ետքը
զանոնք ալ սպաննեց: Ասով Հայաստան
շատ խեղճութեան մէջ ընկաւ, և մնա-
ցած իշխանազուն մարդերէն շատերն ալ
Հայաստանէն դուրս օտար երկիրներ փա-
խան. և շատերն ալ որ այս կոտորածէն

*դուրս Ծնացեր էին, Բուզա և Յուսուֆ ախկաններըը սուտ երդմնքով ձեռք ձգելէն ետև, զամանս ապաննելէն և զամանս քշելէն Ա.տրեատանի կողմերը, և ատով Հայաստան տղրմելի և արտաուաց արժանի տեսարան մը եղաւ, զրկուելով իր իշխաններէն ու նախարարներէն. և երկիրն ալ ոռնակոխ ըլլալով ու արեամբ ներկուելով: Ա.յս միջոցն էր Բագրատունեաց տէրութեան ժամանակը:*

64. *Ա.րաբացոց յարձակմանց ժամանակը Հայոց ձեռքը ո՛րչափ երկիր Ծնացեր էր:*

*Ութերորդ դարէն սկսեալ Հայաստանի մեծ մասին Ա.րաբացիք տիրած էին. ուստի տասներորդ դարուն մէջ Հայոց ձեռքը մնացեր էր Ա.յրարատ նահանգը՝ ուր Բագրատունիք կը թագաւորէին, Վասպուրական՝ ուր Ա.րծրունիք կը թագաւորէին: Ա.յլ ազգիներուն ձեռքն էր Փայտակարան, Կորճայք և Պարսկահայք նահանգներըը և Սիւնեաց Գողթն գաւառը. իսկ Մոկք և Աղձնիք նահանգներուն կէսը այլազգեաց կէսն ալ Հայոց ձեռքն էր: Գուգարք, Տայք նահանգներըը Վրաց ձեռքը. Ուտի և Ա.ղուանից ձեռքը. Բարձր Հայք, Զորրորդ Հայք ու Տուրուբերանին մէկ մասը՝ այսինքն Տարօն* և Հարք գաւառներըը Յունաց ձեռքը:*

* *Տարօն գաւառը ինն երորդ դարուն մէջ առանձին այլազգի ամիրայի մը ձեռք էր:*

65. Մեսրոպեան դարուն ինչ փոփոխութիւն եղաւ Հայաստանի սահմանները։

Մեսրոպեան դարուն Սենեքերիմ Վասպուրականի թագաւորը թշնամեաց ձեռքէն ազատելու համար, գնաց ինքնակամ իր տէրութիւնը ու աշխարհը Յունաց կայսեր տուաւ, որոյ մէջ 4,000 գեղ, 72 բերդ ու 12 քաղաք կար, ու անոնց տեղը Սեբաստիա քաղաքն առաւ իր շրջակայ սահմանովը ու հոն գնաց բնակեցաւ իր 14,000 զօրքովը և տնով տեղովը գրեթէ 40,000 հոգի։ Իրեն օրինակին ուրիշներն ալ հետևեցան ու գնացին իրենց երկիրները Յունաց կայսեր տուին, ինչպէս նաև Յովհաննէս Բագրատունի թագաւորը Անի մայրաքաղաքը իր Շիրակ գաւառովը մէկտեղ, Կարուց թագաւորը Կարս քաղաքը Վանանդ գաւառովը մէկտեղ, Գրիգոր Մագիստրոս՝ Կայեան, Կայծոն և Բջնի ամրոցները տուաւ, որոց տեղ առաւ Միջագետքի մէջ այլևայլ քաղաքներ ու գեղեր, Միջագետաց մէկ մասին վրայ դուքս ըլլալով։ Ասով երկոտասաներորդ դարուն մէջ բոլոր Հայաստան օտար ազգաց ձեռքն էր։

66. Տուղրիլեանց վրայ ինչ պիտելիք կան։

Տուղրիլ Սելճուգեան և իր որդին Ալփասլան, որ թէպէտ և թուրք էին ազգաւ, բայց Պարսից վրայ թագաւոր եղան, երկուքն ալ անհնարին չարիք հասուցին

Հայաստանի վրայ և շատ աւերմունք ըրին մեսոպատամիերտրդ դարուն մէջ Ադրաբացոցմէ եաև։ Մեր մատենագիրները զատնք և իրենց յաջորդները կ՚անուանեն երբեմն թուրք, երբեմն պարսիկ, և երբեմն ալ հին անուամբ սկիւթացիք։

67. Թաթարները երբ սկսան Հայաստանի վրայ վազել։

Երեքտասաներորդ դարուն սկիզբները Մոդոլ թաթարները սկսան վազել Հայաստանի վրայ, որ կ՚ըսուին նաև մեր մատենագրաց մէջ Ազգ ևևտղաց՝ որ ճինգկիզխանին ցեղէն էին, և տիրեցին Հայաստանի մեծ մասին, բայց շատոնց մեծ կոտորած և արիւնհեղութիւն ընելու, և հարկատու ըրին Հայաստանը։ Ասոնցմէ եաև չորեքտասաներորդ դարուն վերջերը յարձակեցաւ կատաղի Լէնկթիմուրը, որ շատ աւերմունք և կոտորածներ ըրաւ, և երկիրը արեամբ ներկեց. վասն զի չկար մէկը որ կարենար դէմ դնել ոսկալի զազանին. Լէնկթիմուրի ատեն Հայաստանի ուժի շընորհքն և ուժը բոլորովին զացեր էր, և զրեթէ աւերակ եղեր էր Ադրաբացւոց և Տուղրիլեանց յարձակմունքէն, և նախարարները Հայաստանէն դուրս ատիս անդին ցրուեր, և Հայոց թագաւորութիւնը Կիլիկիայէն ալ վերցուեր էր։

68. Եգիպտացիք ինչ յարձակմունք ըրած են Հայաստանի վրայ։

Եգիպտացիք Ռուբինեանց տէրութեան

ժամանակ, այլ նայլ անգամ յարձակեցան Կիլիկիայի վրայ և շատ աւերմունք ըրին: Ասոնց մէջ ամէնէն զառն յարձակումնքը եղան Հեթում Ա.ին, Լևոն Ե.ին և Լևոն Զ.ին ատեն եղածները, որով Կիլիկիա բոլոր աւեր և անապատ դարձաւ, ու Լևոն վեցերորդ ալ բռնուելով Եգիպտացի սուլտանէն գերի եղաւ, որով և վերջացաւ իրմով Կիլիկիայի տէրութիւնը 1375ին:

## ԳԼՈՒԽ Զ.

### Քաղաքական կառավարութեան վրայ.

69. Հայերը քանի տեսակ կառավարութիւն ունեցան:

Հայաստանի կառավարութիւնը երեք տեսակ կը բաժնուի, Տանուտէրական, Միապետական և Իշխանական:

70. Ո՞րն է Տանուտէրական իշխանութիւնը:

Տանուտէրական իշխանութիւնը կամ կառավարութիւնը նահապետաց ատենն էր որ իւրաքանչիւր մարդ խաղաղութեամբ իրեն կալուածներուն և անոր մէջի մարդկանց կ'իշխէր, և կը կոչուէր Տանուտէր:

71. Ո՞րն է Միապետական իշխանութիւնը, և երբ սկսաւ Հայոց մէջ:

Միապետական կ'ըսուի այն իշխանութիւնը՝ ուր թագաւորը կամ իշխանը՝ առանց իրեն հպատակներէն կախումն ունենալու

ինքնիշխան կը կառավարէ զիրենք: Մխա-
պետական իշխանութիւնը սկսաւ Հայոց մէջ
Ա.րամայ առեն, որ պատերազմով թըշ-
նամիները Հայաստանէն հալածելով հաս-
տատեց միապետական իշխանութիւնը, հը-
նազանդելով Նինոսի Ասորեստանեայց
ինքնակալին, ուսկից մարզպետ վարուա-
կալ ընծայ առաւ և իրեն երկրորդը համա-
րուեցաւ: Նոյնպէս կը հպատակէին իրեն
յաջորդները Ասորեստանեայց ինքնակալ-
ներուն, որոցմէ իբրև զործակալ, կողմնա-
կալ և վերակացու կը դրուէին, և կը կա-
ռավարէին Հայաստանը առանց թագաւոր
կոչուելու, ինչուան Պարոյր նահապետին
առեն որ առջի թագաւորը եղաւ: Վասն
զի Վարբակէս Մար իշխանը միաբանելով
Պարոյրին հետ յաղթեց Սարդանապաղին
և սիրեց Նինուէի, և Պարոյրը Հայաստա-
նի թագաւոր անուանեց, ինքն ալ Մարաց
թագաւոր եղաւ:

72. Մեր թագաւորական կառավարու-
թիւնը քանի՞ ճիւղ կը բաժնուի:

Մեր թագաւորական կառավարութիւնը
չորս ճիւղ կը բաժնուի. Հայկազանց, Ա.ր-
շակունեաց, Բագրատունեաց և Ռուբի-
նեանց:

73. Ո՞րչափ առեն տևեց Հայկազանց
տէրութիւնը:

Հայկազունեաց տէրութիւնը՝ Հայկէն
սկսեալ որ Բէլը սպաննելէն ետև տիրեց
Հայաստանին Քրիստոսէ 2346 տարի ա-

ռաջ, տևեց 2000 տարիէն աւելի ըստ եօ֊
թանասնից հաշուին, ու Քրիստոսէ 328
տարի առաջ վերջացաւ Վահէին մահուամ֊
բը. և անկէ ետքը Սելևկացիք տիրեցին
Հայաստանին 179 տարի, որ մեծին Աղեք֊
սանդրի յաջորդներէն էին: Ինչուան որ
Արշակ Պարթևը եկաւ տիրեց Հայաստանին
և իր վաղարշակ եղբայրը հոն թագաւոր
դրաւ՝ Քրիստոսէ 149 տարի առաջ, որով
սկսաւ Արշակունեաց թագաւորութիւնը՝ որ
տևեց 577 տարի*:

74. Արշակունեաց թագաւորութիւնը
միշտ նոյն ցեղին վրայ մնաց:

Արշակունեաց թագաւորութիւնը ին֊
չուան Արբար թագաւոր, վաղարշակ Պար֊
թևին ցեղէն էր, և անոր համար ալ կար֊
ծեմ թէ ինչուան այն առեն եղած թագաւոր֊
ները աւելի քալ էին: Բայց անկէ ետքը
ուղիղ յաջորդութիւնը դադրեցաւ. վասն զի
Անանուն Արբարու որդին առանց զաւկի
մեռաւ, և Սանատրուկ որ Արբարէն ետքը
թագաւորեց, անոր քեռորդին էր: Այս
Արշակունեաց ցեղը Արտաշէս երկրորդին

* Թուիմա արձրուն կը դնէ թէ 415 տարի քը֊
շեց Արշակունեաց տէրութիւնը, ու Յազկերտ Բին
երկրորդ տարին վերջացաւ. իսկ Ասողիկ կը դնէ
559 տարի, ինչուան վոքր Թէոդոսին Թագաւո֊
րութեան 24դ տարին. և կիրակոս պատմիչը 568
տարի: Հոս գրածը մեր բազմադէտ Շամչեան վար֊
դապետին հետևութեամբ է:

*առեն խառնուեցաւ Ա.լանաց ցեղին հետ։ Ա.լանաց թագաւորին Սաթինիկ աղջիկը կին առնլով, ուսկից ծնան Ա.րտաւազդ, Տիրան և Տիգրան՝ որ Ա.րտաշէսին յաջորդեցին։*

75. *Ա.րշակունի թագաւորները բնութեամբ ինչպէս էին։*

*Ա.րշակունի թագաւորներուն առջիններըը ընդհանրապէս թէ քաջ էին բնութեամբ և թէ աշխարհաշէն ու բարեկարգող մարդիկ. մինչեւ ներուն մէջ սկսաւ կամաց կամաց պետութեան արուեստը վար ըլլել, և աշխարհաշէն գործերը դադրիլ. իսկ վերջի թագաւորներուն առեն տիրեց գինուորութեան մէջ բոլորովին թուլութիւն, վարուց ապականութիւն, ինքնագլխութիւն, և տաստիկ երկպառակութիւն, որով նախարարները իրենց Ա.րտաշէս Գ. կամ Ա.րտաշիր թագաւորին զեղծ և ցուի վարուց համար գնացին մատնեցին գինքը Պարսից Վռամ թագաւորին ու իրենց վրայ Պարսիկ մարզպան մը ուզեցին։ Ա.յսպիսի անխորհուրդ մատնութեամբ վերջացաւ Ա.րշակունեաց թագաւորութիւնը՝ Քրիստոսի 428 թուականին։*

76. *Ե՛րբ սկսաւ Մարզպանաց իշխանութիւնը։*

*Ա.րշակունեաց թագաւորութիւնը դադարելէն ետև սկսաւ մարզպանաց իշխանութիւնը, որ տևեց 201 տարի։ Վերջը 60 տարիի չափ Հայաստան կը կառավարուէր Հայ իշխաններով կամ կոչնապետներով*

պարոնք Յոյները կը գնէին, ինչուան որ Ա-
բրահամը տիրեցին Հայաստանի, և դրին
անոր վրայ հազարապետ ոստիկաններ, որոց
իշխանութիւնը տևեց 156 տարի: Անկէց
ետքը հաստատուեցաւ Բագրատունեաց
թագաւորութիւնը *:

77. Ե՛րբ սկսաւ Բագրատունեաց տէ-
րութիւնը:

Բագրատունեաց տէրութիւնը սկսաւ
Քրիստոսի 885 թուականին, որոյ առջի
թագաւորը եղև Աշոտ Ա., խելացի, աշ-
խարհաչէն և քաջ թագաւորը, որ Ա.րա-
բացւոց ամիրապետէն պատկուեցաւ. նոյն-
պէս և իրեն յաջորդներուն շատը թէ՛ ամի-
րապետէն կը պատկուէին և թէ Յունաց
կայսերէն, երկուքին ալ հպատակելուն
պատճառաւ: Ա.յս տոհմութիւնը զարգե-
ցուցին վերջի թագաւորները:

78. Բագրատունեաց թագաւորները ինչ-
պէս էին:

Բագրատունեաց մէջ բացի՛ Աշոտ Ա.էն
եղան ուրիշ քաղաքապէտ և քաջ թագա-
ւորներ ալ առջի բերան. բայց վերջերը նա-
խարարաց մէջ զարճեալ տիրեց երկպա-
ռակութիւնը, և տէրութիւնն ալ այլևայլ
թագաւորութիւն բաժնուելով շատ տկա-

* Սամուէլ պատմիչը Արշակունեաց տէրու-
թիւնը վերցուելէն ինչուան Բագրատունեաց տէ-
րութիւնը հաստատուելուն միջոցը կը գնէ 434
տարի:

բացաւ, ինչպէս են Աւրծրունեաց կամ Վասպուրականի թագաւորութիւն. Թագաւորութիւն Կարուց կամ Վանանդայ. Թագաւորութիւն Սիւնեաց կամ Սիսականի. Թագաւորութիւն Բագրատունեան Աշոտեանց կամ Կորիկեան, և այլն:

79. Ե՞րբ սկսաւ Ռուբինեանց տէրութիւնը:

Ռուբինեանց տէրութիւնը սկսաւ Ռուբէն Հայ իշխանէն 1080ին: Աւելի բերան որ ուց որդի կ'իշխէին Պարոն անուամբ, ինչուան որ Լեւոն Բ 1198ին թագաւոր օծուեցաւ: Ռուբինեանց առեն բոլոր Հայաստան օտար ազգերու տակ գերի ընկեր էր, և Հայերը Կիլիկիոյ իրենց սրտին ու քաջութեամբը տիրապետեցին, որ մեր նախնեաց ժամանակ ամենևին Հայոց ձեռքը եղած չէր. անոր համար Ռուբինեանց տէրութիւնը կ'ըսուի նաև Կիլիկեցւոց տէրութիւն, որ ինչուան Լեւոն Չին Եգիպտացւոց սուլթանէն գերի երթալը տևեց 295 տարի, և ասով բոլորովին վերջացաւ Հայոց տէրութիւնը 1375ին: Կիլիկեցւոց պետիկ տէրութեան առեն թէպէտ և առջի բերան աղէկ ու կորիճ պարոններ և թագաւորներ ունեցանք, բայց որովհետև թշնամեաց յարձակմունքը պակաս չեղան նաև Կիլիկիոյ վրայէն, որ էին Յոյները, Սկիւթացիք, պանապան այլազգի ամիրաներ և Եգիպտացիք, անոր համար վիշտերն ու նեղութիւննները անպակաս էին Հայոց գլխէն:

80. Իշխանական կառավարութիւնը երբ սկսաւ:

Երբոր Ալշակունեաց ցեղէն թագաւորութիւնը ե դարուն սկիզբը վերցուեցաւ, սկսան իշխանները կառավարել զՀայաստան, զորոնք Պարսիկք կը դնէին և քիչ անգամ Յոյնք, և կ'ըսուէին մարզպան: Բայց երբոր է դարուն Ալբաբացւոց տէրութիւնը եկաւ, այնատեն իշխանները Յունաց կամ Ալբաբացւոց կողմէն կը դրուէին. Յունաց կողմէն դրուածները կ'ըսուէին կուրապաղատ, Ալբաբացւոցը ոստիկան:

81. Ալշակունեաց տէրութիւնը վերցնելէն ետև Հայոց ազգէն դրուած իշխանները ինչ կը կոչուէին:

Կը կոչուէին իշխան աշխարհին, իշխան Հայոց, և քիչ անգամ պարզ իշխան, որոնք Հայաստանը կառավարելէն զատ՝ տուրք կը ժողվէին և կը խաւրէին Պարսից կամ Յունաց, ուր կողմէն որ իրենք իշխան կը դրուէին: Կը կոչուէին նաև իշխանաց իշխան իբրև ամէն իշխաններու պետ: Այս անունը նաև Բագրատունեաց ժամանակ կը գործածուէր. բայց Բագրատունեաց ատեն մանաւանդ կերպով իշխանաց իշխան ըսելով կ'իմացուէր Թագաւորին երկրորդը, որ Ալշակունեաց Թագաւորութեան ատեն կ'ըսուէր երկրորդ արքայի կամ մարզպետ կամ հայր իշխան: Բայց մարզպետը և Հայր իշխանը նոյն նշանակութեամբ Ալշակունեաց վերջի Թագաւորաց ատեն միայն կը գործածուէր:

82. Իշխանաց իշխան անունը ուրիշ ո՛րուն կը տրուէր:

Ստեփանոս Օռպելեան՝ Սիւնեաց նախարարը կը կոչէ նաև իշխանաց իշխան. իսկ Թովմա Ս.րծրունի և Ստոփիկ Ս.րծրունեաց թագաւորութեան առեն նոյն անուամբ կը կոչեն Ս.րծրունեաց թագաւորին երկրորդը, կամ զանիկա՝ որ նոյն տէրութեան մէջ եղած իշխաններէն ամենէն աւելի պատուաւոր էր:

83. Հրամանատար և Հազարապետ անունը որո՞ն կը տրուէր:

Ս.րշակունեաց տէրութիւնը վերցուելէն եաև այն որ իշխանաց իշխան կը կոչուէր, կ'ըսուէր նաև հրամանատար՝ բոլոր Հայաստանի ինքը հրամայելուն համար. անոր համար Յովհան կաթուղիկոս երբեմն երկու անուն ալ մէկտեղ կու տայ մի և նոյն անձին, այսինքն իշխանաց իշխան և հրամանատար կը կոչէ:

Իսկ հազարապետ անունը, որ Ս.րշակունեաց ժամանակն ալ կը գործածուէր, բազրատունեաց առեն կը տրուէր անոր՝ որ Պարսից կողմանէ կը դրուէր Հայոց աշխարհը կառավարելու և հոգալու համար, որուն կը նոյնանայ հրամանատարին հետ:

84. Որո՞նք մարզպան կ'անուանէին:

Պարսիկք մարզպան կ'անուանէին, որ ըսել է կայսերապահ, այն իշխանը, որ երբեմն և կամ երբեմն Հայոց ազգէն կը դնէին Հայաստանի վրայ. և նոյն է իշխան, իշխա-

*նաց իշխան, հրամանատար և հազարապետ ըսուած անձին հետ. Բազրատունեաց թագաւորութեան ատենն ալ այս մարզպան անունը կը գործածուէր հազարապետ և հարկահան ըսելու տեղ:*

85. *Մարզպանները ինչ իշխանութիւն ունէին:*

*Մարզպանները իրենք գլխաւոր իշխանութիւն ունէին. մէյմը որ ամէն իշխաններէն վեր էին և թագաւորին երեսփոխանը կը համարուէին ու աշխարհը կը կառավարէին: Բ. Հայաստանի ամէն իշխաններէն անկախ էին, գերագոյն իշխանութիւնը իրենք ունենալով: Գ. Ինչ որ կ'ուզէին՝ կըրնային ինքնիշխան ընել, հրամայել, ինչուան նաև մահուան դատապարտել ամանց թագաւորին հարցընելու, և կառավարել դնել, փոխել, և այլն: Բայց չէին կրնար նախարարութեանց ցեղերը փոխել ու անոնց յաւուրք եղած երկիրը յափշտակել, և սովորաբար բաց 'ի մէկ քանի թիկնապահներէն ուրիշ զարմիկ պինուր չէին ունենար՝ թէ որ մարզպանը զարմիկ ըլլար, հապա միշտ Հայոց զօրքերը կը գործածէին. իսկ թէ որ պատերազմի համար հարկաւոր ըլլար, այն ատեն մասնաւոր զարմիկ պինուր բերել կու տար: Մարզպանները Դուին քաղքին մէջ կը նստէին, ու ամէն տարի Հայաստանի տուրքը ժողվելով թագաւորին կը խրկէին:*

86. *Ասոնցմէ զատ Ա. Մխիթարեան վրայ ինչ պիտելիք կան:*

Ա.րաբացիք երբոր տիրեցին Հայաստանի վրայ, անոնց ամիրապետը որ կը նստէր Բաբելոն կամ Պաղտատ ու երբեմն Դամասկոս, ինչպէս իրեն տէրութեան ուրիշ սահմանները՝ ատանկ ալ Հայաստան իշխան կը խրկէր, զոր մեր մատենագիրները երբեմն Հայու բառով ոստիկան կ'անուանեն և երբեմն ամիրայ, որ իբրև գործակալ և վերակացու կը կառավարէր Հայաստանը, և ամէն տարի տուրք կը ժողվէր և կը խրկէր ամիրապետին: Ա.յս ամիրաներուն կամ ոստիկանաց գլխաւորը Ա.տրպատական կը նստէր, և ինքը Հայաստանի այլևայլ գաւառներուն վրայ ամիրաներ կը դնէր, ինչպէս Գողթն գաւառը, Խլաթ, Նփրկերտ, Տփխիս, Ա.պահունիք, Գանձակ, և այլն: Ա.ռնց մէջ ամենէն երևելին էր Դուին քաղաքը նստած ամիրան, որ երբեմն Նախջուան քաղաքն ալ նստած է. ասիկայ ամբարի զօրքերով Հայաստանը թշնամիներէն կը պահէր: Եւ սովորաբար Հայաստանի մէջ դրուած երկրորդական ամիրաները առանց անոր հրամանին գլխաւոր բան մը չէին կրնար ընել: Ա.ստ յայտնի կը տեսնուի թէ ամիրապետը Ա.տրպատականի ամիրային ձեռքով Հայաստանի վրայ մէկ ամիրայ չէր դներ, հապա այլևայլ. որոնք թէպէտ և Ա.տրպատականի ամիրային ձեռքին տակն էին, բայց իրենք ալ կըրնային ինքնագլուխ հրաման ընել, և ինչուան մահուան վճիռ տալ:

87. Հայոց տէրութեանը կառավարութեան կերպը ինչպէս էր:

Հայոց տէրութեան կառավարութիւնը, ինչպէս ուրիշ արևելեան ազգերուն, այսինքն Ասորեստանեայց, Մարաց, Պարսից, և այլն, բացարձակ միապետական էր. ինչ որ կ'ուզէր թագաւորը՝ ինք իր կամքը կրնար ընել, թէպէտ և անպատշաճ բան ըլլայ, և ուրիշ իշխանաց կամքին հակառակ: Այս բանս յայտնի կ'երևի մեր վերջի Արշակունեաց թագաւորներուն առեն, որ են Տիրան, Արշակ, Պապ, որոնք նախարարաց կամքին հակառակ բաներ կ'ընէին:

88. Մեր թագաւորները Հայկազունեաց և Արշակունեաց առեն ինչ վերաբերութիւն ունէին մէկալ տէրութեանց հետ:

Մեր նահապետները Հայկէն եաև ինչուան որ թագաւոր ունեցանք, նոյնպէս նաև թագաւոր ունենալէն եաև, միշտ քո՛վի զօրաւոր ազգերէն երկրորդական պատիւը կ'ունենային և անոնց կը հնազանդէին. ինչպէս Հայկազունեաց առեն Ասորեստանեայց, և Արշակունեաց առեն Պարսից, ինչուան Արշակունեաց թագաւորութեան վերջումը. միայն Արտաշէս Ա. եղաւ որ յաղթելով Պարսից՝ ինքը առաջին պատիւն առաւ և Պարսից թագաւորը երկրորդ պատիւը. բայց Բ Տիգրանին առեն, որ իրեն յաջորդեց, նորէն նախագահութիւնը Պարսից անցաւ:

89. Հայերը Հռոմայեցւոց հետ ինչ վերաբերութիւն ունէին:

Հայոց տէրութիւնը հին աւեն պրեթէ անձանօթ էր Հռոմայեցւոց, անոր համար ալ Հռոմայեցւոց հին պատմիչները տեղեկութեամբ չեն խօսիր Հայոց տէրութեան վրայ. և մեր հին թագաւորներուն մէջ ամենէն աւելի ծանօթ է իրենց Ք. Տիգրանը՝ Միհրդատայ պատերազմներուն պատճառաւ, որուն Հռոմայեցիք յաղթելէնետև՝ եկան տիրեցին Հայաստանի ալ, Ղուկուղոսին և Պոմպէոսին ձեռքով, և Հայաստանը իրենց հարկատու ըրին: Անկէց ետքը հարկատուութեան մէջ մնացին Հայերը Հռոմայեցւոց, ինչպէս որ յայտնի կը տեսնուի Օգոստոս կայսեր աւեն Ս. բզաւրու դիպուածներէն, Ներոն կայսեր ժամանակը Տրդատ դիպուածներէն՝ որ վերին Հայոց վրայ թագաւոր եղաւ: Բայց այս հարկատուութիւնը երբեմն դադրեցուցին հետագայ թագաւորները: Երբոր Տրդատ Դիոկղետիանոսի ձեռքով թագաւոր եղած դարձաւ Հայաստան ու վանեց: Պարսից Շապուհ թագաւորը, որ Հայաստանի տիրեր էր, նորէն բարեկամութիւնը աւելցուցին Հայերը Հռոմայեցւոց հետ. այս բանիս մեծ պատճառ եղաւ Հայոց քրիստոնեական հաւատքն ընդունիլը Ս. Գրիգոր Լուսաւորչին ձեռքովը, որուն հետ մէկտեղ Տրդատ թագաւորը Հռոմ գնաց Կոստանդիանոսի ուրախակից ըլլալու համար, որ

նոր զարճեր քրիստոնեայ եղեր էր. և Հոն Տրդատ թագաւորը Կոստանդիանոսի հետ անլուծանելի խաղաղութեան դաշինքը դըրաւ: Ա.յս դաշինքը եաքերն ալ միշտ կը յիշէին մեր մատենագիրները, և թագաւորները ատենը կը նորոգէին: Երբոր կայսերութիւնը Կոստանդիանոսի ձեռքով Կոստանդնուպոլիս փոխադրեցաւ և քիչ ատենէն վերցուեցաւ Հռոմայ կայսերութիւնը, Հայերը անկէց եաքը սկսան Յունաց հետ վերաբերութիւն ունենալ:

90. Հայերը Յունաց հետ ինչպէս կը վարուէին:

Ա.ռջի բերանը բարեկամութեամբ էին, բայց Ա.րշակունեաց վերջի թագաւորնեըրուն ատեն՝ այսինքն Բ Ա.րշակին և Պապին ժամանակները թշնամացան Յունաց հետ, և Պապ Թոդուց յայտնապէս Յոյները և միաբանեցաւ Պարսից հետ, և անոնց հետ խաղաղութեան դաշինք դրաւ: Պապէն եաև երբոր Հայոց տէրութիւնը երկու բաժնուեցաւ, այն մասը որ Պարսից ընկաւ, անոնց կը հնազանդէր, իսկ մէկալ մասը Յունաց: Բազրատունեաց առջի թագաւորներուն ժամանակը նոյնպէս մեծ սէր ունէին Յունաց հետ. իսկ վերջերը Ա.նի քաղքին մատնութեանը պատճառաւ չափաչար ատելութիւն մտաւ Հայոց և Յունաց մէջ, որ շատ վնասակար եղաւ և գրեթէ մեր կործանմանը պատճառ:

Սոյնպէս Ռուբինեանց ատենն ալ Հայե-

*լը՝ Յոյներուն հետ շատ ատելութեամբ էին, պատճառաւ որ Կիլիկիան Յունաց ձեռքէն յափշտակեր էին, և մէջերնին ալ հաւատոյ վէճեր մտեր էր: Ընդ հակառակն նոյն ատեն Լատինացւոց հետ շատ բարեկամութեամբ էին, և ատկէ ատկէ թղթակցութիւն կ'ընէին մեր կաթուղիկոսներն ու թագաւորները սրբազան Պապից հետ, ո՛րոյ միջնորդութեամբը քանի մը անգամ օգնութիւն ունեցան Քշնամեաց դէմ Եւրոպայի տէրութիւններէն:*

*91. Հայերը հիւսիսային ազգերուն հետ ինչ ընտանութիւն ունէին:*

*Հայերը Ալանաց հետ ու Աբտաչէսին ատեն դաշինք դրին և բարեկամութիւն հաստատեցին, Աբտաչէս Ալանաց Թագաւորին Սաթինիկ աղջիկը կին առնուլ: Հոնաց հետ մանաւոր դաշինք դրին Հայերը Վարդանանց ատեն, բայց անկէց առաջ ալ կ'երևի թէ կար այս դաշինքը, որով պատերազմի համար հարկաւոր եղած ատեն Հոնքն ալ օգնութիւն կը կանչէին:*

*92. Եգերացւոց ու Վրաց հետ ինչ ընտանութիւն ունէին Հայերը:*

*Եգերացւոց Թագաւորները, որ մեր առջի աշխարհակալ Թագաւորներուն տակն էին՝ Բագրատունեաց Թագաւորներուն հետ մանաւոր ուխտ ըրած կը յիշուին: Իսկ Վրաց և Աղուանից հետ միշտ բարեկամութեամբ կ'երթային Հայերը, որովհետև երկայն ատեն մեր տէրութեան հպատակ ե-*

ղած են. և այս վրաց հետ ունեցած բա-
րեկամութիւնը Բագրատունեաց ատեն ա-
ւելի շատցաւ:

## ԳԼՈՒԽ Է.

### Նախարարութենէ վրայ.

93. Նախարար անունը ուսկից ելած կը կարծուի:

Նախարար անունը ելած է նախ և առաջ բառերէն, որ կը ցուցընէ ամէն գործոյ մէջ առաջին ըլլալը, կամ ուրիշներէն վեր իշխանութիւն ունենալը:

94. Նախարարութիւններուն անուններ-
ը ինչպէս կոչուած են:

Նախարարութիւններէն ոմանք կոչուած են իրենց պաշտօնէն առնուով, ինչպէս են Հանունիք, Սպանդունիք, և այլն, ոմանք գաւառներուն անունովը, ուր որ կ'իշխէին նախարարք. ինչպէս են Ռշտունեաց նախարար, Աղձոյ նախարար, և այլն. և շատերը ցեղին անունովը. ինչպէս Վասպուրական աշխարհին նախարարը կը կոչուէր Արծրունեաց նախարար, Ուտի աշխարհինը՝ Սևորդեաց նախարար. բայց ասոնցմէ են Բագրատունեաց, Մամիկոնեանց, Մանդակունեաց, Կամսարականաց նախարարութիւնները, և այլն:

95. Նախարարաց ուրիշ ինչ անուն կը տրուի:

Մեր հեղինակներէն չատերը, ինչպէս են Խորենացի, Փարպեցի, Թովմա Արծրունի, նախարարները կը կոչեն նաև ազատ եղական առնելով. իսկ յոգնակի առնելով կ'ըսուէր ազատորևար, ազատռաևի և անոնց որդիքը ազատորդիք, և նախարարութիւնը ազատութիւն: Կը կոչեն դարձեալ նախարարը տէր և տանուտէր, ինչպէս տէր կամ տանուտէր Մամիկոնէից, Սիւնեաց, և այլն, և նախարարութիւնը Տանուտէրութիւն և տանուտէրական պատիւ: Կը կոչուի երբեմն պարզաբար նախարարի տեղ իշխան, և իշխանական պետութիւն նախարարութեան տեղ, թէպէտ այս տեսակը քիչ գործածուած կայ, և աւելի Փարպեցին կը գործածէ: Դարձեալ, ինչպէս իւրաքանչիւր նախարարական ցեղին գլխաւորը կը կոչուէր Տանուտէր, ասանկ ալ կ'ըսուէր նաև Նահապետ. ինչպէս կ'ըսէ Բուզանդ «Տանուտէրն նահապետան Մամիկոնեան տոհմին», և Խորենացին «Արտամ նահապետ Մուրացանայ», իսկ նախարարութեան կ'ըսուէր նահապետութիւն: Բուզանդ երբեմն տանուտէր և նահապետ, տանուտէրութիւն և նահապետութիւն երկուքն ալ մէկտեղ կը գործածէ:

96. Սեպուհ անունը ո՞րոց կը տրուի:

Սեպուհ կը կոչուին ամէն նախարարութեանց իշխանաւոր մարդիկը՝ պաշտօնական ցեղէ ըլլալնուն համար: Ոստի լաւ պէտք է զանազանել սեպուհը՝ տանուտէրէն կամ

նախարարէն՝ որ ցեղին կամ երկրին պլուխըն էր, ինչպէս որ յայտնի կ'երևի փարպեցւոյն այս հետագայ օրինակներէն. «Սրպ եկեալ հասանէին տանուտեարքն հանդերձ սեպհօքն». «Հանդերձ ամենայն տանուտերամբք և ասպ սեպհօք», և այլն:

97. Ե՞րբ սկսան նախարարութիւնները:

Նախարարութեանց չատին սկիզբը Հայկազանց ժամանակէն է, որոյմէ մէկ քանին կը յիշէ Խորենացին, ինչպէս են Մանուազեան, Բզնունեան, Խոռխոռունի, Սիսական, Սլկունի նախարարութիւնները, և այլն: Բայց վերջէն ալ զանազան տուեն ինչպէս Վաղարշակայ, Գ. Տիգրանայ, Բ. Սրապետի և Տրդատայ տուեն ալ այլևայլ նախարարութիւններ հաստատուեցան:

98. Ո՞վ գրել տուած է նախարարութեանց պատմութիւնը:

Գլխաւորն են Վաղարշակ Թագաւորը և Սահակ Բագրատունին, որոց խնդրոյովը գրուեցան երկու երեսելի պատմութիւնները, այսինքն Մարիբասայ և Խորենացւոյն: Վասն զի Վաղարշակ երբոր Հայաստան եկաւ, տեսաւ որ այլևայլ նախարարներ երկիրը իրենց մէջ բաժներ ու խաղաղութեամբ կ'իշխէին, ուզեց իմանալ թէ ատոնց սկիզբը ուսկից է, և ինչպէս իրենց ձեռքը անցեր է, վասն զի կը կարծէր թէ պատերազմաւ տիրեր են այլևայլ երկիրներուն: Եւ որովհետև Հայաստանի մէջ կատարեալ յիշատակութիւն մը չկար այս բա-

ներուս վրայ, վասպուրշակ Մարիբասս աստ-
ին Նինուէ խրկեց, որ գնաց Թագաւորա-
կան պիտանէն հանեց Հայոց պատմութիւ-
նը, և անով դուրս ելաւ նախարարութեանց
պատմութիւնը: Իսկ Մովսէս Խորենացին
գրեց իր պատմութիւնը Մարիբասէն և իր
ժամանակը եղած պատմագիրներէն և ա-
նդութիւններէն առնլով: Ունինք նաև
Գապիկ Ա.րծրունիին խնդիրքովը գրած
Թովմա Ա.րծրունիին Ա.րծրունեաց ցեղին
պատմութիւնը, Ստեփանոս Ո.ւռպելեանին
գրած Սիւնեաց ցեղին պատմութիւնը: Ու-
նինք նաև Բագրատունեաց ցեղին պատ-
մութիւնը՝ որ Շապուհ Բագրատունին գրած
է, Մամիկոնեանց ցեղին պատմութիւնը,
որոնք երկուքն ալ կորսուած են, և մնայն
յիշատակութեամբ գիտենք: Կան նաև ու-
րիշ նախարարութեանց վրայ ալ գրուած-
ներ, բայց ամէնքն ալ կորսուած են:

99. Նախարարները ինչ իշխանութիւն
ունէին:

Իւրաքանչիւր նախարար կը կառավա-
րէր իր երկիրը որդւոց որդի իբրև իրեն
սեպհական եղած, և կը տիրէր անոր մէջ
եղած բնակչաց վրայ, և դատաստանին
ինքը կը կտրէր, նաև ինչուան մահուան
դատաստանն ալ: Թագաւորը չէր խառ-
նուեր նախարարներուն երկրին, և իրենց
բռնած կառավարութեան կերպին, անոր
համար նախարարները ազատ կ'ըսուէին.
վասն զի Թագաւորը չունէր անոնց վրայ

այն իշխանութիւնը՝ ինչ որ իր ժողովըրդեան վրան ունէր:

100. Նախարարք ինչ պարտքեր ունէին: Նախարարները պարտական էին նախ պատերազմի առեն զօրք տալ թագաւորին՝ իրենց երկրին բազմամարդութեանը համեմատ, բայց իւրաքանչիւր նախարար իր երկրին պահպանութեանը վրայ աւելի հոգ կը տանէր՝ քան թէ բոլոր աշխարհին, մանաւանդ բազրատունեաց առեն. անոր համար նախարարք իրենց զօրաց մեծ մասը իրենց երկրին մէջ կը պահէին. որով քիչ անգամ հարիւր հազար զօրքէն աւելի բանակ եւած է բաց ՚ի Ս. Գրոտաշեսի առեներէն, որուն զօրքը անթիւ էր, և իր որդւոյն Տիգրանին Խոսրովու և Տրդատայ բանակներէն:

Երկրորդ, իւրաքանչիւր նախարար հարկ կու տար թագաւորին, և թէ որ մէկը չտար՝ ապստամբութեան նշան էր: Ս.յս երկու գլխաւոր պարտականութեանց համար նախարարները թագաւորին հպատակ կը սեպուէին:

101. Նախարարաց ամենուն իշխանութիւնը հաւասար էր:

Չէ. ոմանք աւագ նախարար կը կոչուէին, որոց որ մեծ էր իշխանութիւնը կամ երկիրը. ոմանք կրտսեր, որոց որ պզտիկ էր պաշտօնը կամ երկիրը: Նախարարաց մէջ նախապատուութեան կարգ դնող եղան Վաղարշակ և Տիգրան Գ., մեծն Խոսրով և

Տրդատ. բայց ամէնն ալ չգիտցուիր թէ ո՛րը առաջ էր և ո՛րը ետքը նախապատուութեան կոչմանէ. թէպէտ և կը տեսանենք որ նախարարները աստիկ վրէժխնդրութեամբ ու նախանձով կը պաշտպանէին իրենց կարգը. անանկ որ անգամ մը Պարսից Շապուհ թագաւորը սեղանի վրայ Սիւնեաց Անդոկ իշխանին Հայոց նախարարներուն մէջ տանըչորրորդ կարգը տալուն համար, որ ըստ Ագաթանգեղոսի տանըմէկերորդ, և Ստեփանոս Ուռպելեանին նայելով եօթներորդ զահը ունէր, այն աստիճան կիրք ելաւ, որ Պարսիցմէ ապստամբելով իր երկրին աւերմանը պատճառ եղաւ:

102. Ո՞րչափ էր նախարարաց թիւը:

Ստեփանոս Օռպելեան նախարարաց թիւը 400 կը դնէ Տրդատայ ժամանակը, նոյնպէս Մեսրոպ պատմիչ ԲԱրշակին աւեն 400 կը դնէ, իսկ Բուզանդ նոյն Արշակայ աւեն 900 կը դնէ *: Այսչափ նախարարաց թիւէն յայտնի կ'երևի որ՝ չէ թէ միայն նահանգները, հապա նաև այլևայլ գաւառներ ունէին իրենց սեպհական նախարարներ: Բայց նախարարաց թիւը աւեն աւեն պակսեցաւ կոտորածով. ինչպէս Տիրանայ, Արշակայ և Պապայ Արշակունի թագաւորաց աւեն, որոնք այլևայլ նախարարաց ցեղերը ջնջեցին: Բայց շատ

* Պլինիոս Մեծ Հայոց մէջ 120 նախարարութիւն կը դնէ:

աւելի պահանջաւ Ը դարուն, երբոր Հա-
զարացիք նախարարները Նախջուան քաղ-
քին մէջ այրեցին (§. 63)։ Եղան նախա-
րարութիւններ, որոց ցեղը Հաւանելով վեր-
ցուեցան, ոմանք ալ վերջի ժամանակի թը-
շուառութեանց աւեն ընկնելու համ կոր-
ուսեցան։ Այս պատճառաւ է որ Բագրա-
տունեաց, մանաւանդ անոնց վերջի թա-
գաւորաց աւենը՝ միայն գլխաւոր և երեսի
նախարարութիւնները կը յիշուին։ Իսկ այն
նախարարութիւնները, որոնք Զորրորդ
Հայոց մէջն էին, ինչպէս Անգեղտան,
Մարդպետական, և այլն, չեն յիշուիր՝ ո-
րովհետև շատոնց ցունաց ձեռքին տակը
ըլլալով՝ կորսուեցան։

## ԳԼՈՒԽ Ը.

### Բաժանումն նախարարութեանց.

Այսչափ ընդհանուր տեղեկութիւննե-
րէն ետև գոն գոն իւրաքանչիւր նախա-
րարաց վրայ ալ ուզելով խօսիլ՝ երեք յօ-
դուած կը բաժնենք այս գլուխը.

ա. Թագական նախարարութիւնք, այս-
ինքն անոնք՝ որ Թագաւորի անուն ունեցան
և յաջորդաբար Թագաւորեցին։

բ. Պաշտօնական նախարարութիւնք, այս-
ինքն անոնք՝ որ տէրութեան մէջ մասնա-
ւոր պաշտօն մը ունէին իրենց ցեղին սեպ-
հական։

գ. Ա.ևտրաշուռի նախադրութիւնքը, այս ինքն անունք՝ որ տէրութեան մէջ մատուցուր պաշտօն մը չունէին։

## ՅՕԴՈՒՄԱԾ Ա.

### Թագաւոր նախադրութիւնք.

### Ա. Բագրատունիք։

103. Բագրատունեաց նախարարութիւնը ուսկից եւ լած է։

Բագրատունեաց ցեղին առաջին նահապետն է Շամբատ անունով ազնուական հրեայ մը, որ մեր Հրաչեայ Հայկազուն Թագաւորը Նաբուզոդոնոսորայ Հրէից մէջէն բերած գերիներուն մէջէն խնդրելով առաւ ու բնակեցուց Հայաստանի մէջ, ուսկից եւ լաւ Բագրատունեաց ցեղը։

104. Բագրատունի անունը ուսկից եւ լած է։

Շամբատին ցեղէն Բագարատ անունով քաջ ու խելացի մարդ մը երբոր Վաղարշակայ առեն ամենէն առաջ հնազանդեցաւ անոր, Վաղարշակ ալ այս բանիս վրայէն զինքը որդւոց որդի Ա.րշակունի Թագաւորաց Թագադիր ըրաւ, և իրեն պատուանուն դրաւ բագրակրաց կամ բագրադիր ասպետ. որով որդւոց որդի ասպետ կը կոչուէր այն ցեղին գլխաւորը՝ Թագաւորին

զլուխը թաց կապելուն համար. և իր իշխանութիւնը ըստեցաւ բազակաց սպասաւորիչ. և նախարարութիւնը Բագարատին անունով անկէց եաև կոչուեցաւ Բագրատունի:

105. Բագրատունիք թագակապութեան պաշտօնին համար իննչ պատիւ ունէին:

Բագրատունեաց ցեղը թագակապութեան պաշտօնին համար նախարարութեանց մէջ ամենէն պատուաւորն և առաջինը եղաւ, և առանց այս ցեղին թագադրութեանը Ա.րշակունեաց առեն գրեթէ ապօրինաւոր կը սեպուէր մէկու մը թագաւորելը: Միայն երուանդ Բ, ինչպէս կը պատմէ Խորենացի, առանց Բագրատունեաց ցեղէն թագ առնլոյ թագաւորեց:

106. Վաղարշակ Բագրատունեաց ցեղին ուրիշ իննչ պաշտօն տուաւ:

Վաղարշակ Բագարատը բաց ՚ի թագադիր ընելէն՝ ըրաւ նաև կողմնակալ իշխան Հայաստանի հիւսիսային կողմին, և հոն եղած զօրքերուն զօրավար: Ա.յս իշխանութիւնը միչին Տիգրան առաւ Բագրատունեաց ցեղէն, բայց Ա.րտաշէս Բ նորէն զարձուց իրենց:

107. Բագրատունեաց բնակութեան տեղը ո՞ր էր:

Ա.ռջի բերան Բագրատունիք կը բնակէին Սպեր գաւառին մէջ, զոր Վաղարշակ տուած էր իրենց, երբոր Բագարատը անմահեան կողմին կուտակել զրաւ: Իսկ

Աբշամ թագաւորը, որ Աբգարու հայրն էր, Ենանոս Բագրատունի թագակապ առաւ զնա բնակեցուց անով տեղով Աբգարատ նահանգին կոզովիտ գաւառին մէջ, ուր եղբը չատցան, և Սմբատ Բագրատունի Բ Աբուաշէսին սպարապետը չինեց Հոն Բագարան քաղաքը: Բայց եղբէն Մասակեր ըսուած Աշոտ Բագրատունին՝ իր արքունիքը փոխեց Աբշարունեաց երկիրը, կամ սարականաց ցեղէն սուրկով գնելով զանիկա, և այն եղաւ իրենց բուն բնակութեան տեղը. և ինչպէս կ'երևի, աւաւ նաև Շիրակ գաւառը Անի քաղքին հետ մէկտեղ, վասն զի անկէ եղբը Բագրատունեաց ձեռքն էր: Ուստի Բագրատունեաց աոջի բնակութեան տեղը եղաւ Սպեր գաւառը՝ Բարձր Հայոց մէջ, եղբը Աբրարատ նահանգին կոզովիտ, Աբշարունիք, Շիրակ գաւառները, նաև միջոց մը Տուրուբերանի Տարօն գաւառն ալ՝ Բագրատունեաց տէրութեանը ատեն:

108. Բագրատունեաց գլխաւոր քաղաքը որն էր:

Բագրատունեաց ցեղին գլխաւոր քաղաքը եղաւ նախ Դարոյնք կամ Դարօնք կոզովիտ գաւառին մէջ, եղբը երազգաւորք քաղաքը, ուր էր Ա. Սմբատին թագաւորական պալատը: Բայց երբոր Աշոտ Գ Ողորմած ընդարձակեց Շիրակ գաւառին Անի քաղաքը, այն եղաւ անկէ եղբը թագաւորական վերցուիլը:

109. Ո՞ւր էր Բագրատունեաց գերեզմանատեղին:

Բագրատունիք ուր որ կը փոխէին իրենց բնակութեան տեղը, հոն ալ կը թաղուէին. ուստի նախ Դարոյնք կամ Դաթօն քաղաքին մէջ, ետքը Բագարան, ետքէն Անի քաղաքին մէջ եղաւ իրենց գերեզմանատեղին:

110. Բագրատունիք ինչ հաւատք ունէին:

Բագրատունիք իրենց Շամբատ նախահօրը առեննէն սկսեալ՝ ինչուան ետքը միշտ հրէութեան մէջ մնացին. մինչև Վաղարշակայ առեն ամենևին այլայլութիւն չեղաւ իրենց հաւատքին մէջ. իսկ Վաղարշակ յորդորեց Բագարատը որ հրէութիւնը թողու և կուռք պաշտէ. բայց երբոր յանձն չառաւ, իր կամքին թողուց: Սակայն Սուրշակ թագաւորը, որ Վաղարշակին յաջորդեց, սկսաւ դիրենք նեղել որ հրէութիւնը թողուն, և մէկ քանին ալ սպաննեց. բայց անով ալ չկրցաւ իրենց կուռք պաշտել տալ, հապա միայն յանձն առին շաբաթ օր պօսանաց և որսի երթալ, և իրենց տղաքը չթլփատել. բայց ետքերը Տիգրանին առեն նորէն սկսան հալածանք քաշել, որ իրենցմէ արևմտեան կողմի զօրապետութեան պաշտօնը առաւ. բայց երբոր յանձն առին զոհած ու խոզի միս ուտել, ազատ թողուց դիրենք: Երրորդ անգամ հալածանք կրեցին Սուրշամ թագաւորին առեն,

որով նոյն ատենի Ենանոս թագադիր ապետը տնով տեղով Թոզուց հրէութիւնը ու կռապաշտ եղաւ: Ասով հրէական անունները սկսան փոփոխիլ, Ասուզը՝ Աշոտ, Վազարիան՝ Վարազ, Շամբատը՝ Սմբատ Բագադիան՝ Բագարատ, և այլն: Բայց եղան ոմանք ալ որ չուրացան Աբշամայ ատեն իրենց հրէութիւնը, և Քրիստոսի համբառնալէն ետքը երբոր Թադէոս առաքեալ եկաւ Եդեսիա քաղաքը, ամենէն առաջ իրենք քրիստոնեայ եղան:

111. Բագրատունեաց ցեղէն որո՞նք անուանի եղան:

Բագրատունեաց ցեղը միշտ երևելի եղաւ խելքի և քաջութեան կողմանէ, և անպակաս էին իրենց մէջ քաջ զօրավարներ և խելացի մարդիկ թէ՛ Աբշակունեաց ատեն և թէ Աբշակունեաց տէրութիւնը վերցուելէն ետև: Բաց ասկէ, երկրորդ անգամ Հայու թագաւորութիւնը այս ցեղէն հաստատուեցաւ, զոր Սուրբն Մովսէս Խորենացի մարգարէութեամբ գուշակեր էր իր Սահակ Աբծրունւոյն գրած թղթին մէջ:

112. Բագրատունեաց թագաւորներուն ժամանակ Հայերը ո՞րչափ տեղ կ'իշխէին:

Բագրատունեաց թագաւորները առջի բերան Հայաստանի մեծ մասին տիրելէն զատ, կը տիրէին նաև Վրաց և Աղուանից վրայ, և Սմբատ Ա՝ Աւրներսեհ Վրաց կուրապաղատը, որ իրեն հետ մեծ սէր և բարեկամութիւն ունէր, թագաւոր ըրաւ:

*Բայց Սմբատէն վերջի թագաւորները չէ թէ միայն օտար երկիրներու վրայ չէին խըլեր, հապա և ոչ Հայաստանի ամբողջ տահմաններուն.* (§§. 53. 54):

113: *Բագրատունեաց թագաւորին ուրիշ ինչ անուն կը տրուէր:*

*Բագրատունեաց թագաւորը կը կոչուէր թագաւոր Աշոց կամ Զորոգետոյ՝ Զորոգետ գաւառին անունովը, ուր չինած էր Անի քաղաքը. և կ'իշխէր աւելի քեռան գրեթէ բոլոր Հայաստանի, բաց 'ի այլևայլ ամրաններուն ձեռքը եղած կոզմերէն: Բայց երբոր Հաւատան այլևայլ մանր թագաւորութիւններ բաժնուեցաւ* (§. 78), *ինքը կ'իշխէր Անւոյ, Շիրակ գաւառին և անոր մօտ տեղերուն, թէպէտ և եղան ոմանք, որ աւելի ընդարձակեցին այս տահմանը: Ամիրաները Անւոյ թագաւորին շահնշահ կ'ըսէին, այս ինքն արքայից արքայ, Հայաստանի մէջ եղած մէկալ մանր թագաւորներէն որոշելու համար. վասն զի ինքը մէկալ թագաւորներէն մեծ էր, և ինքը կ'ըսուէր բուն Հայաստանի թագաւոր. իսկ մէկալնոնք առանձին գաւառներու վրայ կը թագաւորէին:*

114. *Բագրատունեաց թագաւորութեան առեն Հայաստանի վիճակը ինչպէս էր:*

*Բագրատունի թագաւորաց առեն Հայաստանի վիճակը խիստ խեղճ էր. վասն զի անդադար էրս կոզմէն թշնամիք յարձակելով կ'աւերէին կ'աւերըշակէին երկիրը. ինչ-*

պէս եղան Աբրահամի Աւրհէն, Յուսուփ, Բուզա ասոնցմէ Աւրհէն. և Տուղրիլեանք կամ Թուղքերը: Բայց ասկէ՝ նախարարաց մէջ ասելութիւն և իշխանասիրութիւն մը տեսնելով փոխանակ թագաւորին հետ միասնալու և թշնամեաց հետ պատերազմելու, իրարու հետ կը պատերազմէին և մէկզմէկ կը ջարդէին և մէկմէկու երկիրները կ'աւերէին: Այս ամէն նեղութիւնը տեսնելով Յովհաննէս վերջնթեր Բագրատունի թագաւորը, անխորհրդաբար Անի թագաւորական քաղաքը կտակաւ Յունաց կայսեր Թոդոս, որով Յոյնք երկրորդ Վասպուրականեն, որ Յովհաննէսին յաջորդն էր, տիրեցին Անւոյ. ասով վերջացաւ Բագրատունեաց թագաւորութիւնը Քրիստոսի 1045 թուականին 160 տարի տևելէն ետև:

115. Բագրատունեաց ցեղը որչափ ընդարձակեցաւ:

Երբոր իրենց թագաւորելու ժամանակ Հայաստան այլևայլ թագաւորութիւն բաժնուեցաւ, անոնցմէ ելաւ Վանանդայ կամ Կարուց թագաւորութեան ցեղը: Դարձեալ Հայաստանի հիւսիսային կողմի Աղուանից ըսուած թագաւորութիւնը Բագրատունեաց ցեղէն էր. նոյնպէս նոյն տանէն Վրաց թագաւորները Բագրատունեաց ցեղէն էին: Այս Բագրատունեաց ցեղէն եղաւ նաև Ախլաթայ վրայ թագաւոր. և այս ցեղը Արծրունեաց և ուրիշ նախարարութեանց և Յունաց կայսերներուն հետ խնամութիւն

ունեննալով, Հայաստանի ուրիշ ամէն նահանգապետութիւններէն աւելի ընդարձակեցաւ, ուսկից հաստատուեցաւ նաև Ռուբինեաց իշխանութիւնը Կիլիկիոյ մէջ, վասն զի Ռուբէն առաջին Կիլիկեցւոց թագաւորութիւնը հաստատողը՝ Բագրատունեաց Գագիկ վերջին թագաւորին ազգականն էր։

## Բ. Աբծրունիք.

116. Ե՞րբ սկսաւ Աբծրունեաց նախապարտութիւնը։

Աղրամելէք և Սանասար կամ Սարասար, Սենեքերիմ Աստբեատանեայց թագաւորին որդիքը, երբոր իրենց հայրն ըսպանեցին ու Հայաստան փախան մեր Սկայորդի նահապետին ժամանակը որ Պարոյրին հայրն էր, Սկայորդի զիրենք բնակեցուց Աղձնիք նահանգին այլևայլ կողմերը Աստբեատանի մօտիկ։ Աղրամելէքէն, որուն խորենացին Աբգամոզան ալ կ'ըսէ, ելան Աբծրունիք և Գնունիք ցեղերը։

117. Վ աստպուրականը երբ Աբծրունեաց ձեռքն անցաւ։

Ինչպէս որ ըսինք՝ Սկայորդին Աղրամելէքն ու Սանասարը բնակեցուց Աղձնեաց մէջ. առջինը արևմտեան հարաւային կողմը, և երկրորդը արևելեան հարաւային կողմը. և եթէ այս Աղձնեաց նահանգը պրեթէ ամբողջ մեծն Տիգրան անոնց սեռունդներուն յանձնեց։ Աստեն անցնելէն

վերջը երբոր վաղարշակ Սանեսարեան ցեղը նախարարութեանց կարգն անցուց, Սիմ լեռը ու Ասրգն կամ Ասձն գաւառը իրենց չրջակայ սահմաններովը անոնց տըւաւ, ասանկ ալ Ասծրունեաց նախարարութիւնը հաստատելու առեն Աղձնեաց երկրին մէկ մասին հետ մէկտեղ տուած պիտի ըլլայ վասպուրականի մէկ մասն ալ. և եղբը Ասծրունեաց նախարարութիւնը բազմանալով ու զօրանալով տիրեց ամբողջ վասպուրական աշխարհին, որ իրեն բուն սեպհական երկիրը եղաւ, ասանկ որ չատ անգամ վասպուրականի տեղ Ասծրունեաց աշխարհ կ'ըսուէր:

118. Ի՞նչ պաշտօն ունէր Ասծրունեաց ցեղը:

Ասծրունիք թագաւորին դիմացէն արծիւ կը բռնէին, և այս պաշտօնը վաղարշակ տուաւ՝ կամ նորէն հաստատեց. վասն զի կ'երևի թէ վաղարշակէն առաջ ալ ունէին, որովհետև Խորենացին կը պատմէ թէ վաղարշակ չէ թէ նոր դրաւ այս անունը, հապա անունին յարմարութենէն տուաւ իրենց արծիւ կրելու պաշտօնը: Ասով կրնայ ըլլալ թէ վաղարշակէն առաջ երբոր թագաւորները կամ իշխանները որսի կ'երթային, ատոնք դիմացէն արծիւ կը բռնէին, և վաղարշակ նոյն պաշտօնին մէջ նորէն հաստատած ըլլայ:

119. Ուսկից եղած է Ասծրունեաց ցեղին անունը:

Խորենացիին խօսքէն կ'երևի թէ ասծիւ ուղիղ բառերէն ելած է ցեղին անունը: Իսկ Թովմա Արծրունի կ'ըսէ թէ վաղարշակ Արծրունիք կոչեց այն ցեղը Արծրուղիք գաշտին մէջ բնակած ըլլալուն համար, կամ ասծոյ ուղիղ ըլլալնուն, և կամ Արդամելէք և Սանասար Արզն գաւառին մէջ բնակելնուն համար, որ կ'ինքն Արղճնիք նահանգին մէջ. ուստի իբր թէ սկզբան Արզրուղիք ըսուեր են, ետքը Արծրուղիք փոխուեր է:

120. Արծրունեաց ցեղը երբ ընկուեցաւ:

Այս ցեղը Ռշտունեաց ցեղին հետ մէկ տեղ չորրորդ դարուն Տիրան երկրորդին ատեն պրեթէ բոլորովին ընկուեցաւ Հայր մարդպետին քսութեամբը, որ ժանտ մարդ մ'էր, և զնաց յորդորեց Տիրանը որ ընկէ այս երկու հարուստ, երևելի ու կարճ ցեղերը: Այս կատարածէն Արտաւազդ ու Վասակ Մամիկոնեան զօրավարները ազատեցին Ռշտունեաց ցեղէն Մեհենդակին որդին Տաճատը, և Արծրունեաց ցեղէն Վաչէին որդին Շաւասպը, և փախան Տայոց աշխարհին բերդերը, և հոն շատ տարի պիրենք մեծցընելէն ետև, իրենց աղջիկները անոնց կնութեան տուին. ասով քիչ ատենէն եաքը նորէն սկսան բազմանալ այս ցեղերը:

121. Ի՞նչ մեծութիւն ունէին Արծրունիք:

Արծրունեաց ցեղը Հայաստանի մեծամեծ ցեղերէն մէկն էր, բայց յիշատակուած չկայ թէ ինչ գործ ունէին կառավարու-

թեան մէջ։ Գիտենք որ արծուեկիր էին Վաղարշակայ առեն որսի կամ պատերազմի երթալու ժամանակ, և որևիցէ քաղաքական հանդէսի մէջ. բայց թէ անկէ ետքն ալ նոյն պաշտօնը կը կատարէին, ամենևին չգիտցուիր։ Ուստի այս ցեղին այսչափ մեծ ըլլալուն պատճառը կ'երևի թէ իրեն երկրին ընդարձակութիւնը և մէջի բերդերուն շատութիւնն էր. վասն զի Վաղարշապատի նահանգը մեծին Հայոց ամենէն մեծ նահանգն է։ Այս նահանգին մէջն էին նաև Ռշտունեաց և Անձևացեաց նախարարութիւնները, որոց երկիրը Արծրունեաց ձեռքը ընկաւ իրենց թագաւորութեանը ժամանակ։ Կըյիշուի մեր մատենագրաց մէջ Անձևացեաց թագաւորութիւն, բայց ոչ երբէք Անձևացիք զատ թագաւորութիւն ունէին, հապա Արծրունեաց թագաւորութեան տղաքը անոնց վրայ իշխելուն համար, երբեմն մեր մատենագիրները անոնց թագաւորի անուն կու տան։

122. Ե՞րբ սկսաւ Արծրունեաց թագաւորութիւնը։

Յուսուի ատիկանը որպէս զի Հայաստանի մէջ խռովութիւն ձգէ, և Սմբատ Հայոց Բագրատունի թագաւորին իշխանութիւնը պզտիկցընէ, տասներորդ դարուն գագիկ Արծրունին, որ Սմբատայ քեռորդին էր, և անոր հետ արդէն թշնամացեր էր՝ նախկուան քաղաքը իրեն չտալուն համար, Վաղարշապատի թագաւոր դրաւ, ո-

րոյ առաջնորդութեամբը Յուսուփ անթիւ
չարիք հասցուց Հայաստանի։

Վասպուրականի մէջ որդւոց որդի վեց թագաւոր նստան 100 տարիէն աւելի. այս ինքն Գագիկ, Դերենիկ Աշոտ, Աբուսահլ Համազասպ, Աշոտ Սահակ, Գուրգէն Խաչիկ, և Սենեքերիմ Յովհաննէս, որ իր Վասպուրական աշխարհը Յունաց Վասիլ կայսեր տուաւ մեռաւանելորդ զարուն սկիզբը, և իր ժողովրդովը բնակեցաւ կայսեր տուած Սեբաստիա քաղքին և անոր շրջակայ տահմանին մէջ. ուր վեց տարի թագաւորելէն ետև, յաջորդեց իրեն իր որդին Դաւիթ, անկէ ետքը Աւտոմ, որ եղաւ Աբծրունեաց ցեղին վերջի թագաւորը, և 1080ին Յոյնք վերցուցին այս թագաւորութիւնը Սեբաստիայէն։

123. Որո՞նք էին Աբծրունեաց գլխաւոր քաղաքները, և ո՞ր իրենց գերեզմանատեղին։

Աբծրունեաց գլխաւոր քաղաքներն են Հաղամակերտ և Նախջուան Վասպուրականի մէջ, և թագաւորական ձմերոցն էր Մառական ամանը։ Իսկ իրենց սովորական գերեզմանատեղին էր Աղբակ գաւառին սուրբ խաչին վանքը որ կ'իյնի Օսի գեղին մէջ։ Եղբերը կը թաղուէին նաև Աղթամարայ սուրբ խաչին եկեղեցւոյն մէջ։

## Գ. Սիւնիք կամ Սիսական.

124. Ե՞րբ եղաւ Սիւնեաց ցեղին սկզբնաւորութիւնը:

Սիւնեաց ցեղը սկսաւ Սիսակէն, որ Գեղամայ Հայկազն նահապետին որդին էր. և իր բնակութեան տեղը իր անունովը Սիւնիք կամ ըստ պարսից Սիսական կոչուեցաւ: Սիւնեաց ցեղէն ելած է Աղուանից ցեղը:

125. Սիւնեաց ցեղը վաղարշակէն առաջ ինչ պատիւ ունէր:

Սիւնեաց ցեղը Հայաստանի քաջ ու ելեւէջ ցեղերէն մէկն ըլլալով, մեր Հայկազանց, Պարսից և Յունաց թագաւորներէն շատ պատիւ տեր էր, ու հրաման ունէր նաև արծըթէ դահ, մարգարտէ վարսակալ, վարազագիր մատնի, կարմիր կօշիկ ու ոսկի գաւազան գործածել վրան ցեղին անունը զրած, ինչպէս որ կը յիշէ Ստեփանոս Օռպելեան:

126. Ի՞նչ պաշտօն ունեցաւ Սիւնեաց ցեղը վաղարշակայ առեն:

Վաղարշակ Սիւնեաց ցեղը մեծ նախարարութեանց կարգը անցընելէն զատ, Հայաստանի արեւելեան կողմին կողմնակալ դրաւ Կասպեան ցեղին հետ մէկտեղ, ու հոն տեղի զօրաց պլուխ, Հոնաց յարձակմունքէն Հայաստանը պահելու համար: Այս կողմնակալութեան պաշտօնը չէ թէ

վաղարշակ նոր տուաւ Սիսական և կապ-
մեան ցեղերուն, հապա Արամ նահապե-
տը տուեր էր, և վաղարշակ նոյն պաշտօ-
նին մէջ նորէն հաստատեց։ Տրդատ թա-
գաւորը Սիւնեաց նախարարը իր կողմնա-
կալութեան պաշտօնին մէջ հաստատելէն
զատ, իր աշխարհին ու գօրքերուն չորս
հրամանատարներէն մէկը ըրաւ 21 իշխան-
ներով։ Բայց ասկէ ութը գահազլուխ իշ-
խաններէն մէկը ըրաւ, որ են Գուգարաց,
Աղձնեաց, Անգեղտան, Կորդուաց, Բա-
գրատունեաց, Արծրունեաց, Սիւնեաց և
Մամիկոնէից, որոնք սեղանի վրայ չորս
հարիւր իշխաններէն վեր կը նստէին իբրև
գահազլուխ։

127. Սիւնեաց ցեղը քանի՞ ճիւղ կը բաժ-
նուի։

Մաամենագրաց խօսքէն կ՚երևի թէ եր-
կու ճիւղ կը բաժնուէր. մէկը պզտիկ՝ որ
կը բնակէր Գեղարքունի գաւառին մէջ, որ
կ՚ըսուէր հայկազն իշխան և կամ սեպուհ, և
մէկալը մեծ՝ որ վաղարշակայ սաեն կող-
մնակալ եղաւ ու ետքէն թագաւորութիւն
ունեցաւ, որ կը բնակէր Բաղք, Ջորք,
Ծղուկք գաւառներուն և անոր չրջակայ
սահմաններուն մէջ։

128. Ե՞րբ ջնջուեցաւ Սիւնեաց ցեղը։

Շապուհ երկրորդ Պարսից թագաւորը
չորրորդ դարուն վերջերը պրեթէ բոլոր-
վին ջնջել տուաւ Արծրուկ նախարարին
պատճառաւ, որ սաստիկ թշնամացեր էր

Յապուհին հետ, իրեն սեղանի վրայ Հայոց նախարարաց կարգին մէջ տանըջտրտրդ գահը տալուն համար: Ուստի 1700 զօրքով գնաց Տիզբոն իբրև Շապուհը տեսանելու համար. և հետևեալ օրը առաւուն կանուխ վազեց բոլոր գարան մնած զօրքերով քաղքին մէջ, ու թագաւորին պալատը կողոպտելով և ուրիշ շատ աւար առնելով դարձաւ իր երկիրը: Շապուհ այս բանիս վրայ սաստիկ կատղած՝ շատ զօրքով գնաց Սիւնեաց երկիրը, և հրաման տուաւ որ բոլոր աշխն աւրըշտրկեն երկիրը և մէջի բնակչները թրէ անցընեն: Բայց Անդովկ Բաղաբերդ բերդին մէջ քաշուելով, հոնկէ իրեք անգամ պատերազմ ըրաւ Շապուհին հետ ու յաղթեց, և ետքը ելաւ բերդէն ու գնաց Ցունաց երկիրը, ուր Թէոդոս կայսրէն մեծ ընդունելութիւն գտնելով Պատրիկաց պատրիկ եղաւ և հոն վախճանեցաւ: Իսկ Պարսիկք Սիւնեաց երկրին մէջ շատ աւերմունք ընելով ու Սիւնեաց ցեղը գրեթէ բոլորովին ջնջելով ու շատ գերի առնելով դարձան իրենց երկիրը:

129. Ա.յս կոտորածէն ետև Սիւնեաց ցեղը ինչպէս նորէն բազմացաւ ու ծաղկեցաւ:

Բաբիկ Անդովկայ որդին ելաւ գնաց Շապուհին քով, առանց իմացընելու թէ որուն որդին է. ու այլևայլ պատերազմներու մէջ Պարսից կողմէն շատ քաջութիւններ ընելէն զատ, անգամ մ'ալ պատերազմի մէջ

զՇապուհը մահուանէ ազատեց: Ասյս բա-
նիս վրայէն՝ հարցուց Շապուհ իրեն թէ
ինչ որ կ'ուզէ ըսէ: Ասյն ատեն Բաբիկ
յայտնեց ինք զինքը, ու իր հայրենի գա-
ւառը ուզեց: Շապուհ հաւանեցաւ խնդիր-
քին ու մեծ պատուով խաւրեց զինքը Սի-
ւնեաց երկիրը: Երբոր Բաբիկ դարձաւ իր
հայրենիքը, տեսաւ որ տակնու վրայ ե-
ղած էր աշխարհը քանուհինգ տարիէն՝ ի
վեր, և սկսաւ նորոգել, և իրմով նորէն
սկսաւ աճել Սիւնեաց ցեղը:

130. Բաբիկին ոմվ յաջորդեց:

Բաբիկին իշխանութիւնը յաջորդեցին
Սամ գնթունի, Վաղինակ, ուրացեալն
Վասակ, Գրիգոր՝ որ շատ քաջ մարդ էր,
և Պարսից Խոսրով Թագաւորին աղջիկը
կնութեան առաւ, որով կ'իմացուի թէ որ-
չափ պատուաւոր էր Սիւնեաց նախարա-
րութիւնը: Կ'երևի թէ այս Սիւնեաց իշ-
խանները Պարսից Թագաւորը կը դնէր:

131. Ե՞րբ սկսաւ Սիւնեաց Թագաւորու-
թիւնը:

Սիւնեաց մեծ և անուանի ցեղը Բագրա-
տունեաց Թագաւորական ցեղին հետ խնա-
մութեամբ կապուելէն եաև, ծ. դարուն
մէջ զատ Թագաւորութիւն ունեցաւ, որոյ
առջինը եղաւ Սմբատ քաջ և բարեպաշտ
իշխանը: Իրմէ ետքը Թագաւորեցին նաև
չորս Թագաւոր ինչուան Սենեքերիմ որ
Տաճկաց Մելիք Շահին ձեռքովը Թագաւո-
րեց ու շատ ընդարձակեց Սիւնեաց տէրու-

թիւնը, որոյ այլևայլ կողմերու ամիրաներ տիրեր էին։ Բայց քիչ ատենէն վերջը փատլուն Պարտաւայ և Գանձակայ ամիրան յարձակելով Սիւնեաց վրայ, Սեննեքերիմը՝ որ բերդի մը մէջ ամրացեր էր, առտերդմամբ վար իջեցընելէն ետև սպաննեց, որոյ մարմինը իր ազգականները մեծ ողբով թաղեցին Վահանու վանքը։

132. Սեննեքերիմին ոմվ յաջորդեց։

Սեննեքերիմ իրեք զաւակ ունեցաւ, Գրիգոր, Սմբատ և Սևադա, նաև աղջիկ մը. ատոնցմէ Գրիգորը յաջորդեց իրեն, որ առանց զաւկի մեռնելով՝ վերջացաւ Սիւնեաց թագաւորութիւնը՝ 1066ին, 190 կամ 196 տարի քշելէն ետև, ուր վեց թագաւոր եւէէ ետև նստան։ Երբոր Գրիգոր անորդի մեռաւ, իրեն երկիրը փատլուն Գանձակայ ամիրան, ու Գագիկ Ա.րծրունեաց թագաւորը մէջերնին բաժնեցին, ու իրենք սկսան տիրել Սիւնեաց սահմաններուն։

133. Սիւնեաց թագաւորութիւնը ուրիշ ինչ անուամբ կը յիշուի։

Սխտական կամ Սիւնեաց ցեղին թագաւորութիւնը կը կոչուէր նաև թագաւորութիւն Բաղաց և կապանի, նոյն երկրին Բաղք և կապան թագաւորանիստ քաղաքներուն անուամբը. կը կոչուէր նաև փառիասոյ, Սիւնեաց երկրին փառիսոս պզտիկ զաւառին անունովը։

134. Ա.յս ցեղէն որոնք անուանի եղան։

Սիւնեաց ցեղէն շատ երևելի մարդիկ ե-

*ղան թէ քաջութեան, խելքի և զիտութեան, և թէ աշխարհաշինութեան կողմանէ. իսկ չարութեան կողմանէ անուանի եղաւ ուրացեալն Վասակ և իր փեսային Վարազվաղան, որոց պատճառաւ շատ աւերմունք եղան Հայաստանի մէջ մարզպանաց ժամանակ: Ինչուան ծդ դար կը յիշուին եբեւելի Սիւնեաց իշխանները. անկէ ետև ալ գրեթէ ինչուան աս դարս՝ Գարապաղու Մէլիքներէն չատը՝ Սիւնեաց տերունդներն են:*

135. *Սիւնեաց գեղին մայրաքաղաքը որն էր:*

*Սիւնեաց աշխարհին գլխաւոր տեղն էր Ծղուկք գաւառը, ուր էր Սիւնեաց իշխանաց տերուն և հայրապետներուն աթոռը. իսկ մայրաքաղաքն Ծղկաց գաւառին՝ էր Շաղատ գիւղաքաղաքը, ուր էր մետրապօլտին աթոռը. և անոր մէջի փառաւոր և զմբեթաշէն եկեղեցին՝ բոլոր Սիւնեաց աշխարհին մայր եկեղեցին կը համարուէր:*

136. *Ո՞ւր էր Սիւնեաց թագաւորներուն գերեզմանատեղին:*

*Սիւնեաց թագաւորները նոյն աշխարհին Վահանու ոստին մէջ կը թաղուէին. Ամբատ թագաւորը Յովհաննու վանքին մէջ ժամուն դրան առջև թաղուած է:*

## Դ. Վանանդեցիք.

137. Ե՞րբ սկսաւ Վանանդեցւոց ցեղը:

Վանանդեցիք ելած են Վընդէն՝ որ Բուլղարաց երկրէն ուրիշ շատ Բուլղարներով գաղթական եկաւ Հայաստան մեր Ս. Լուսաւորչին ատեն, իրեն երկիրը խռովութիւն ըլլնելուն պատճառաւ. և իր անունովը իր բնակութեան տեղը Վանանդ կոչեց, որ առաջ անիրայտ և վերին Բասեան կ'ըսուէր, որ կ'ըլնի Ս. Լրտարատ նահանգին մէջ Եկեղեաց գաւառին մօտիկ:

138. Վանանդեցիք ինչ բնութիւն ունէին:

Այս ցեղը կովկասային ազգերէն առաջ եկած ըլլալուն համար, աւազակաբարոյ մարդիկ էին, որ Ս. Լուսաւորչի Գին և խոտորով Գին ժամանակ ապստամբեցան, ու Հայաստանի այլևայլ սահմաններու վրայ սկսան յարձակիլ աւազակելու համար:

139. Վանանդեցիք երբ նախարարու-թեանց կարգն անցան:

Ամենևին յիշատակութիւն չկայ թէ երբ նախարարութեան պատուոյն հասան այս ցեղը. բայց մեր պատմիչները Վանանդեցիները յիշելու ատեն միշտ նախարարու-թեանց կարգը կը դնեն: Ասկէց կ'երևի թէ նախարար կոչուեցաւ այս ցեղին գլխաւորը՝ երկրի տէր ըլլալուն և տանուտէրական պատիւ ունենալուն համար:

140. Վանանդեցիք երբ թագաւորութիւն ունեցան:

Ա. յս ցեղը Բագրատունեաց թագաւորութեան վերջի ժամանակները թագաւոր ունեցաւ 961ին. բայց այս թագաւորութենանց ցեղը Բագրատունեաց ցեղէն էր, որ կը նստէր Կարս քաղքին մէջ և կը կոչուէր կարոյց թագաւոր, և կը տիրէր բոլոր Վանանդ գաւառին: Եւնէ եաև իրեք թագաւոր նստան. Մուշեղ՝ Բագրատունեաց Ա. շոտ Ողորմածին եղբայրը, Աբաս և Գագիկ, որոյմէ վերջինը Գագիկ Աբասեան 1064ին իր ամբողջ տէրութիւնը ու Կարս քաղաքը Յունաց Տուկիծ կայսեր տուաւ, Թուրքներուն ասպատակութենէն ազատելու համար, և անոր տեղն առաւ Ծամընդաւ բերդը, Ամասիա, Կոմանա ու Լրիսա քաղաքները և ուրիշ գեղեր:

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### Պաշտօնական Նախադրութիւններ.

### Ա. Բնեչխութիւն Անձնաց.

141. Ե՞րբ սկսաւ Անձնաց բնեչխութիւնը:

Սենեքերիմ Ասորեստանցոց թագաւորին երկու որդիքը Ադրամելէք և Սանասար երբոր Հայաստան փախան, մեր Սկայորդի նահապետը Սանասարը բնակեցուց Ան-

ձնիք նահանգին մէջ Աստրեասեանի մօտիկ։ Ա.յս Սանասարին ցեղը եոքը բազմանալով լեցուց բոլոր Սիմ լեռը, ու միշտ մեր թագաւորներուն հետ բարեկամութեամբ երթալուն ու անոնց համար շատ աշխատելուն, վաղարշակ իրենց արդեանցը փոխարէն նոյն Սանասարին ցեղէն Շարաշեան անունով մէկը մեծ բդեշխ և Հայաստանի արեւմտեան Հարաւային կողմին կուսակալ դրաւ, և պարգեւեց իրեն Աղձն կամ Աղձն գաւառը, Սիմ լեռը, Կղեսուր և ուրիշ երկիրներ։

142. Տրդատ ուրիշ ինչ պատիւ տուաւ այս ցեղին։

Տրդատ այս ցեղին առաջնորդը իր տէրութեան ութը գլխաւոր իշխաններուն մէկը ըրաւ, որոնք 400 իշխաններուն մէջ գահակալուխ էին։ Աղձնեաց իշխանը կը կոչուէր բդեշխ, կուսակալ, սահմանակալ և Գահերէց կամ բարձերէց արքունի ուսաձարին (այսինքն խորհրդարանին)։ Եւ ինչպէս այս բդեշխը նոյնպէս նաև մէկալ իրեքը թագաւորին խորհրդական էին, և խորհուրդ ընելու տեղը նախապահ կը նստէին, և կուսակալ էին Հայաստանի այլևայլ կողմերուն։

143. Աղձնեաց բդեշխութիւնը երբ ապաստամբեցաւ Հայոցմէ։

Տրդատայ մահուընէն ետև չորրորդ պապուն Խոսրով երկրորդին ատեն, Աղձնեաց բդեշխը տեսնելով որ Սանատրուկ

իշխանը փայտակարանի մէջ թագաւորեց՝ ինքն ալ ապաստամբեցաւ Հայոց թագաւորութենէն և պարսից Որմիզդ թագաւորին կողմն անցաւ: Խոսրով երկրորդ թէպէտ և շատ զօրք խաւրեց իրեն վրայ, և շատ մարդ ջարդել տուաւ անոր ցեղէն և բակուրն ալ սպաննեց, բայց չկրցաւ բոլորովին Ս. ղճնիք նահանգը նուաճել: Ա.սով Խոսրովի աւուենէն բաժնուեցաւ այս նահանգը Հայոց տէրութենէն, և իբրև զատ երկիր կը սեպուէր. թէպէտ և եղան թագաւորներ որ նուաճեցին զիրենք, ինչպէս Տիրան Ե., Ա.րշակ Ե., բայց քիչ աւեն տևեց: Ա.յս ապստամբութեան պատճառաւ Ս. ղճնիք նահանգը ազգային և օտարազգի մատենագիրներէն ոմանք Հայաստանէն զատ կը դնեն իբրև օտար աշխարհ մը:

144. Ս. ղճնիք նահանգը ուրիշ ինչ կերպով կ'ըսուի:

Ս. ղճնիք նահանգը կը կոչուի տեղ տեղ նաև կողմն Ա.տրպատականի, Ա.տրպատականի մօտ ըլլալուն պատճառաւ, և կամ Սանասարին հետ Ա.տրպատականէն եկած մարդկանց համար, որոնք կրնայ ըլլալ որ իրենց լեզուն ու սովորութիւններն ալ կը պահէին: Ա.յս բդեշխութիւնը Հայաստանի մէջ ամէնէն պատուաւոր ցեղերէն մէկն էր, և մէկալ իրեք բդեշխութեանց առաջինը:

## Բ. Բովհիտորիւն Գուգարաց կամ Գուգարացոց.

145. Ուսկից ելած են Գուգարացիք:

Գուգարացւոց ազգը ելած է Պարսից վերջին Դարեհ թագաւորին Միհրդատ նախարարէն, զոր մեծն Աղեքսանդր Դարեհի յաղթելէն ետև կուսակալ խաւրեց այն կողմերուն, վրաց ազգէն ըրած գերիներն ալ հոն բնակեցընելով:

146. Ե՞րբ սկսաւ Գուգարաց բդեշխութիւնը:

Գուգարաց բդեշխութիւնը սկսաւ Վաղարշակէն՝ որ Գուգարք նահանգին մէջ մեծ բդեշխութիւն հաստատեց, Հայաստանը հիւսիսային կողմի Կովկասային ասպատակող ազգերուն ճեռքէն պաշտպանելու համար, և դրաւ գինքը Հայաստանի հիւսիսային կողմին կուսակալ*: Գուգարացւոց բդեշխը կ'իշխէր նաև վրաց աշխարհին մէկ մասին, այս պատճառաւ օտարազգի մատենագիրները Գուգարացւոց երկիրը վրաստանի սահմաններուն հետ կը շփոթեն, և ոմանք Կովկասային ազգաց հետ կը խառնեն:

* Ագաթանգեղոսի մէջ Գուգարացւոց բդեշխին տեղ սխալմամբ սպրդած կ'երևայ Գաւգաւդ, որ զատ նախարարութիւն էր:

147. Ե՞րբ ապստամբեցաւ Գուգարացւոց բդեշխը ահրութենէն։

Սակայ երկրորդին առեն Գուգարացւոց բդեշխը ապստամբեցաւ Հայոցմէ և վիրացաւ Վրաց հետ։ Բայց Մուշեղ Պապայ սպարապետը, Բուզանդին բաժին նայելով գնաց յաղթեց Գուգարաց բդեշխին ու սպաննեց զինքը, և բոլոր մանչ տղաքը թրէ անցուց ու երկիրն ալ հնազանդեցուց։ Բայց եաքը նորէն բոլորովին միացաւ Վրաստանի հետ. վասն զի Խորենացւոյն առեն Վիրք կը տիրէին բոլոր Գուգարաց երկրին. և միայն Սմբատ Աւագին Բագրատունեաց թագաւորին համար կ'ըսէ Յովհաննէս կաթուղիկոս, թէ Գուգարաց երկիրը նուաճեց, բայց յայտնի է թէ բոլորը չէ, այն ալ քիչ մը առեն։

## Գ. Բդեշխութիւն Նոր Շիրուանայ.

148. Ո՞ւր կ'ըսկսի Նոր Շիրական նախարարութիւնը։

Այս նախարարութիւնը որ մեծամեծ նախարարութիւններէն մէկն էր, մեր պատմիչները որոշ չեն գներ թէ ո՞ւր կ'ըսկսի, և թէ ո՞ւր է Նոր Շիրական երկիրը։ Բայց Ագաթանգեղոսին և Բուզանդին խօսքերէն կ'երևի թէ Աստղոց երկրին կողմերը կ'ըսկսի, որով յայտնի է թէ Նոր Շիրական ըսուած երկիրը բուն Հայաստանի մէջ չէր, հապա Հայաստանէն դուրս մեր սէրութեան ձեռ-



Bayerische
Staatsbibliothek
MÜNCHEN

*քը եղած երկիրներուն մէկուն մէջ, որ վաղարշակայ ատեն կղևտոր կ'ըսուէր յն. Գելխիդրիա որ նոյն է Սիրիա անուանն հետ, և հայերէն Ասորիք, որ Տրդատայ ատեն Շիրակաւ փոխուած է, վրան նոր բառն ալ աւելցընելով: Ասով հասանական կ'երևի թէ Տրդատ կղեսուրին ուրիշ սահմանները ալ տիրեց, որ վաղարշակ տիրած չէր, անոր համար նոր Շիրակաւ կոչեց:*

*149. Նոր Շիրակաւ երկրին նախարարը ինչ պատիւ ունէր:*

*Նոր Շիրակաւ երկրին իշխանը, որ ըստուած կայ նաև Նոշիրականի կամ Նուշիրականի, մեր մատենագիրները մեծամեծ նախարարութեանց հետ մէկտեղ կը յիշեն, որ գինուորութեան կարգին մէջ առաջինները մէկն էր, ու Հայաստանի չորս բդեշխներէն ու թագաւորին չորս գահերէցներէն մէկը. և էր Ասորոց կողմին կուսակալ: Այս նախարարութիւնը Տրդատ հաստատեց. անոր համար Մարիբաս և Խորենացի չեն յիշեր:*

*Ասոր նախարարը Արշակ երկրորդին աթեն ապստամբեցաւ, ինչպէս որ կ'ըսէ Բուզանդ, բայց ետքը նորէն Պապայ աթեն հնազանդեցաւ Մուշեղ սպարապետին ձեռքովը:*

## Դ. Բովշխուրխան կորդուաց.

150. Կորդուաց նախարարութիւնը երբ սկսաւ:

Կորդուաց նախարարութիւնը վաղարշակ հաստատեց, որ կորճայք նահանգին մէկ գաւառն է, բայց շատ անգամ կորդուք անունով ամբողջ կորճայք նահանգը կը հասկըցուի, որոյ մէջ բաց ՚ի այս նախարարութենէն ուրիշ նախարարութիւն չկայուիր, որով յայտնի կ՚երևի թէ այս նախարարը բոլոր նահանգին կ՚իշխէր: Կորդուաց իշխանը Տրդատայ ատեն 400 նախարարներուն մէջ 8 գահազլուխ իշխաններէն ու թագաւորութեան 4 հրամանատարներէն ու բդեշխներէն մէկը եղաւ, ու արևմտեան կողմին կուսակալ ուրիշ 21 իշխաններով:

151. Կորդուաց նախարարութիւնը Տրդատէն առաջ ինչ պատիւ ունէր:

Այս նախարարութիւնը Տրդատէն առաջ ալ մեծ նախարարութիւններէն մէկն էր, որոյ գլխաւորին՝ Պլուտարքոս թագաւորի անուն կու տայ: Կորդուաց բնակիչները քաջ և անուանի էին նեռաճգութեան և աղեղնաւորութեան կողմանէ, ինչպէս որ կը վկայեն Քսենոփոն, Դիոդոր սիկիլիացի և Ստրաբոն, որ եռքերը Մարաց հետ միանալով կամ Մարք ասոնց հետ, կորդուք անունէն ինչպէս որ հաւանական

*կ՚ելնի, ինչպէս անունը ելած է, որ հին Մարաց ազգին կը տրուի* *:

## Ա. Մոդրագան.

152. Մուրացան ցեղը ուսկից ելած է: Ա.յս ցեղը Մարաց ազգէն էր, և սկսաւ մեծին Տիգրանայ առեն. վասն զի մեծն Տիգրան երբոր Ա.ժդահակին յաղթեց, ա-

* Մեր մատենագրաց մէջ ջոր բռնչխուԹիւն. նեբուն անուններըը որոշ ու բացայայտ դրուած չեն. ԱգաԹանգեղոս կը դնէ այսպէս. "Ի զինուորական կոչմանէ զջորեանին գահերէցս իւրոյ տաճարին որ բդեաշխքն կոչին, զԱռաջին տահմանակալն՝ ի Նոր Շէրաին կոչմանէն, երկրորդ տահմանակալն Այոբէսպանէայց (Այղձնեաց) կոչմանէն, երրորդն Այրատատան (՚ի կորդուաց՝ որ մօտ էր Այրատատան կամ Այսրեատան) կոչմանէն, Չորրորդ՚ի Մոպէայ (՚ի Գուգարաց) կոչմանէն ,,: ԱգաԹ. ուրիշ տեղ բդեշխուԹեանց երկուքը որոշ կը յիշէ, մէկալ երկուքը զանց առնլով. "Առաջին իշխանն Անգեղտան. Երկրորդ իշխանն Աղձնեաց, որ Բդեաշխն մեծ... ուԹերորդ իշխանն Գուգարաց-ոց աշխարհին՝ որ միւս անուանեալ բդեաշխն ,,:

Սբէոս Ռոդենսն. "Իսկ զջորացն և աշխարհին ջոր միայն կացուցանէ (Տրդատ) իւրոյ ԹագաւորուԹեան երկրորդ հրամանատար՚ի վերայ առնելոյն. Արևելեան կոմսին իշխանն Սիւնեաց ԻՆ իշխանաւք, հիւսիսային կոմսին բդեշխն Գուգարացւոց ԻՒ իշխանաւք. արևմտեան կոմսն կորդուացին ԻՆ իշխանաւք. հարաւային կոմսին իշխանն Անգեղտանն ԻՒ իշխանաւք ,,:

նոր կին ու տղաքը և ուրիշ 10,000 ալ պե՛ր բերաւ Հայաստան, ու բնակեցուց Մա՛ սիս լերան արևելեան կողմը ինչուան գողթն գաւառը:

153. Մուրացան ցեղը ինչ պաշտօն ունէր տէրութեան մէջ:

Վաղարշակ Ա. Ժգահակին ցեղը՝ որ կ'ըսուի մեր մէջը նաև Վիշապազն*, իրեն յատկացուցած էր գահը անոր տալով: Մինչև Տիգրան այս իշխանութիւնը տուաւ Մուրացան ցեղէն և տուաւ մեծին Միհրդատայ իր քեռայրին, որոյ մահուընէն ետև մէկու մը չէր տրուեր այս պաշտօնը, ինչուան որ Երուանդ Բ նորէն զարձուց Մուրացան ցեղին, տալով Ա. Րդամին: Բայց շատ չանցաւ Ա. Րտաշէս Բին տղան Ա. Րտաւազդ յափըշտակեց Ա. Րդամին ձեռքէն երկրորդութեան պաշտօնը, զոր Տիրան Ա. որ Ա. Րտաւազդին յաջորդեց՝ տուաւ Երախնաւոր անունով մէկուն Ա. Նձևացեաց ցեղէն՝ զինքը սիրելուն համար: Բայց այս իշխանութիւնը միայն Տիրանայ ատեն Ա. Նձևացեաց ձեռքը անցաւ:

Ա. Րշակունեաց վերջի թագաւորներուն ատեն թագաւորութեան երկրորդ կամ երկրորդական գահ պատուանունները չեն յիշուիր. բայց կ'երևի թէ նոյն ատեն մարդպետ և.

* Ա. Ժգահակ Մարայ լեզուով կը նշանակէ Վիշապ (տճ. Աժդէր):

հայր իշխան կ'ըսուէր, և բազբատուեցաւ ժամանակ իշխանաց իշխան։

154. Մուրացան կամ Մարացւոյն ցեղը ևրբ ընկնուեցաւ։

Աբտաւազդ՝ Աբտաշէս երկրորդին որդին քանի որ դեռ թագաւոր չէր եղած, իր հօրը կենդանութեան ատեն թշնամութիւն ունենալով Արտային հետ, վրան ամբաստանութիւն ընելով նոյն ցեղէն շատ հոգի սպաննել տուաւ, և նախճատան քաղաքը և ուրիշ գեղեր առաւ անոր ձեռքէն։ Երբոր Արտաւան իրեն հետ պատերազմելով յաղթուեցաւ, այն ատեն Աբտաւազդ բոլոր Արտային ցեղը ընկճեց, ամէն երևելի մարդիկը թրէ անցընելով. և այս ահագին կոտորածէն մէկ քանի աննշան մարդիկ խալըսեցան։ Եւ ինքը Աբտաւազդ տիրեց Մուրացան ցեղին երկիրներուն, և անոնց իշխանութիւնն ալ իրեն սեպհականեց *։

Բ. Ագաթռուռն.

155. Անգեղտուն ըսուած ցեղը ուսկից ելած է։

Անգեղտուն ցեղը ելած է Տորքէն որ

* Այս ցեղը Թէոփէս և ուրիշ նախնարարքս. Թեանց կարգը յիշուած չկայ մեր մատենագրաց մէջ. բայց մենք ուզեցինք անոնց կարգը դնել, որովհետև Հայաստանի մեծամեծ ցեղերէն մէկն էր, և ոտքէն որդի Թագաւորին երկորդը ըլլալնէ ալ իրեն սեպհականեց։

Պաւքամին որդին Հայկակին թոռն էր, և կ'ըսուէր նաև Ա.նգեղեայ, մարմնով կոպտատարած ու չափազանց ուժեղ, ու հասակաւ և ուժով վիթխարի մարդ մը ըլլալուն համար, և իր Ա.նգեղեայ մականունէն ցեղին անունը ըսուեցաւ Ա.նգեղտուռն:

156. Ա.նգեղտան ցեղին ուրիշ ինչ անուն կը տրուի:

Ա.յս ցեղը կ'երևի թէ Տիգրանուհիէն եած Ոտան կամ Ոտանիկ ցեղին հետ խառնուած ըլլալով, և կամ թէ նոյն իսկ Տիգրանուհւոյն ցեղէն առաջ եկած ըլլալով, ինքն ալ կ'ըսուէր Ոտան, ու հայերէն բառով երբեմն ըսուած է նաև Ա.րքունի: Իրեն բնակութեան տեղն էր Զորրորդ Հայոց Ծովիք գաւառը, որ ցեղին անունովը կ'ըսուէր նաև Ա.նգեղտուռն, որ Տիգրանակերտին մօտերը կ'ըլլի:

157. Ա.նգեղտան ցեղը երբ նախարարութեանց կարգն անցաւ, և ինչ պաշտօն ունէր տէրութեան մէջ:

Վաղարշակ Տրդքը Հայաստանի արևմտեան Հարաւային կողմին կուսակալ դրաւ, և իրեն ցեղը Հայաստանի մեծ ու պատուաւոր նախարարութիւններէն մէկը ըրաւ, որով երբեմն ինչուան նաև բզեչիններէն վեր կը դնեն մեր մատենագիրները, և ուրիշ ամէն իշխաններէն առաջ կը յիշեն: Ա.րշակունեաց առեն շատ անգամ այս ցեղէն կը նաէր մարդպետը, որ Հայաստանի մեծամեծ պաշտօնատէրներէն մէկն էր:

158. Ե՞րբ վերցուեցաւ Ա.Նգեղտան նահ-
խարարութիւնը:

Ա.Նգեղտան ցեղին վերցուելուն վրայ ո-
րոշ յիշատակութիւն մը չկայ: Ա.րշակու-
նեաց տէրութեան վերցուելէն ետև թէպէտ
և Ա.Նգեղտան ցեղին անունը չյիշուիր, ինչ-
պէս նաև մարզպետին, բայց կ'երևի թէ
եղիշէին, փարպեցւոյն և ուրիշներուն ա-
ռանկաց առեն և ասոնցմէ մարդիկ ըստուածը
նոյն Ա.Նգեղտան ցեղին յաջորդներն են:

## Գ. Ոստանիկ.

159. Ոստանիկ ցեղը ուսկից եկած է:

Ոստանիկ ցեղը եկած է Տիգրանուհիէն, զոր Տիգրան խաւրեց իր վինած Տիգրա-
նակերտ քաղաքը, բոլոր անոր շրջակայ
սահմանները իրեն կալուած տալով: Տի-
գրան խաւրեց Տիգրանուհւոյն հետ նաև
ուրիշ Հայկազն թագաւորական ցեղեր,
շատ բազմութեամբ ու պահապան զօրքով,
որ Տիգրանուհւոյն արքունիքը պահպանեն,
և իրեն իբրև թագուհւոյ ամէն խնամքը ը-
նեն: Եւ որովհետև Տիգրանուհւոյն ցեղը
թագաւորական ցեղ էր, անոր համար իրեն
բնակութեան տեղը Պարսից ղրկած էն
ուէն առնով ըսուեցաւ ոստան, որ արքունիք
ըսել է, կ'ըսուէր նաև ոստան արքունի, ո-
ստանիկաց տուն, արքունի տուն, և ամէն բնա-
կիչներն ոստանիկք: Ոստանիկ անունը ա-

*ռանձին կերպով կը տրուէր Տիգրանուհոյն պահապան գնդին։*

160. *Վաղարշակ այս ցեղին ինչ պաշտօն տուաւ։*

*Վաղարշակ այս ցեղէն՝ որ միացեր էր ուրիշ Թագաւորական Հայկազն ցեղերուն հետ, չորս գունդ զօրք ընտրեց իրեն պալատին պահպանութեանը համար, և առաւ ուզեց նորոգել մեծին Տիգրանայ սահմանած կարգը։ Այս չորս գունդերն ալ ռանձիկք կոչուելոյն Թագաւորին ատենին կամ արքունեացը պահապան ըլլալնուն համար։ Եւ անկէց ետքը սովորութիւն եղաւ ցեղին անունը ռանձիկ կոչել, և իրենց բնակութեան տեղը ռանձան, ուր հին ատենն նաև ցեղին անունը ռանձան կ'ըսուէր։ Ռանձիկ մեր մատենագրաց մէջ գտած ռանձիկ գունդը Վաղարշակին հաստատածն է, որ ինչպէս Յովհաննէս կաթուղիկոսին ատենը կար։*

161. *Ինչո՞ւ մեր մատենագրաց մէջ ռանձան կամ ռանձիկ Թագաւորական ցեղը մեծամեծ նախարարութեանց կարգը հաստատած չէ։*

*Մեր մատենագիրները փոխանակ ռանձիկ ցեղը մեծամեծ նախարարութեանց կարգը դնելու, անոր տեղը կը յիշեն Անդեղտան նախարարութիւնը, որով յայտնի կը ցուցուի թէ Անդեղտան ցեղին պէսպէսը կ'ուխտեր նաև բոլոր ռանձիկաց վրայ։ Եւ դարձեալ ռանձիկաց նախարարին տեղ*

*չատ անգամ կը յիշուի մարդպետը, որ կամ Անգեղտան ցեղէն և կամ ուրիշ Հայկազն հին ցեղերէն կ'ըլլար, որոնք Տիգրանու հետ Տիգրանակերտին կողմերը գացեր էին։*

## Դ. Կադմեանք.

162. Կադմեանց ցեղը ուսկից եւած է։

Կադմեանց ցեղը եւած է Կադմոսէն որ Արմենակին որդին էր, և կը բնակէր, ինչպէս որ Հաւանական կ'երեւի, Մոկաց և Կորդուաց երկրին մէջ Ասորեստանի մօտ։ Վասն զի Հայկ երբոր Բելայ քովէն վտախաւ, հոս նախ իրեն բնակութեան տեղ ու կալուածներ չինեց լերան մը ոտքը, և այս եղաւ իրեն առաջին շէնքը, որ ետքէն կադմոսին ժառանգութիւն թողուով, ինքը եւաւ արեւմտեան հիւսիսային կողմը գնաց Հարք գաւառը։

163. Կադմեանց ցեղը ինչ պաշտօն ունէր։

Մեր Արամ նահապետը երբոր տիրեց Մարաց ու Ասորեստանի կողմերուն՝ այսինքն Պարսկահայոց, Կորդուաց, Մոկաց և ուրիշ Ասորեստանի մասերուն, Հայաստանի արեւելեան կողմին կուսակալ դրաւ Սիսական և Կադմեան ցեղերը, Կադմեան ցեղը արեւելեան Հարաւային կողմին, այսինքն Ասորեստանի կողմերուն։ Այս երկու Սիսական և Կադմեան ցեղերը եա-

## քէն վաղարշակ նորէն հաստատեց իրենց կողմնակալութեան պաշտօնին մէջ։

### Ե. Մամիկոնեան.

164. Մամիկոնեան ցեղը ուսկից ելած է։ Մամիկոնեան ցեղը սկսաւ Մամգունէն որ Ճենաց աշխարհին մէջ թագաւորական ցեղէ երևելի նախարար էր, որոյ վրայ հոն տեղի Ս.րբոյ թագաւորը չարախօսութիւն ըսելով կ'ուզէր սպաննել։ Մամգուն իմանալով՝ փախաւ տնով տեղով Ս.րտաշիր Պարթից թագաւորին քով։ Ս.րբոյ խնդրեց զինքը Ս.րտաշրէն, բայց որովհետև Ս.րտաշիր մեռեր էր, և իրեն յաջորդեր էր Շապուհ Ս., ասիկա Մամգունը տնով տեղով Հայաստան խրկեց իր զորձակալնեբուն քով, և գրեց Ճենաց թագաւորին թէ Մամգունը իր սահմանէն դուրս աքսորեց մահաբեր երկիր մը։ Ան միջոցին Տրդատ Հայաստան դարձած ըլլալով, սիրով ընդունեցաւ Մամգունը, և իրեն ռոճիկ ու բնակութեան տեղ տուաւ։

165. Մամգունը Հայաստանի մէջ ո՞ւր կը բնակէր։

Առջի բերան Մամգուն իր բնակութիւնը մէկ տեղէն մէկալը կը փոխէր, իրեն սեպհական երկիր մը չունենալով. բայց երբոր Սկևռնեաց Սղուկ նահապետը սպաննեց՝ որ ապստամբեր էր Տրդատէն, տիրեց ա-
նոր երկրին ինչպէս որ Տրդատ խոստացեր

էր իրեն: Եւ որովհետև Տարօն Սկիւռնեաց երկիր էր, Մամփոն իրեն ցեղովը մէկտեղ տէր եղաւ այն երկրին, և իրեն անուամբը կոչեցաւ Տարօն գաւառը նաև Մամգոռևեան կամ Մամիկոնեան տուն: Բայց ի Տարօնէ՝ Բուզանդ Տայք նահանգն ալ Մամիկոնեանց սեպհական երկիր կը դնէ:

166. Մամիկոնեանք ինչ պատիւ և իշխանութիւն ունէին:

Սպարապետութիւնը իրենց սեպհական իշխանութիւնն էր, ինչպէս Մամիկոնեան ցեղը կը կոչուէր նաև սպարապետական ազգ. վասն զի գրեթէ միշտ այս ցեղէն կ'ելլար սպարապետը: Միայն Խոսրով Երրորդին առեն եղաւ Սահակ սպարետը: Բայց Սահակ սպարետին մահուանէն ետև Սուրբն Սահակ խնդրեց Պարսից Վռամշապուհ թագաւորէն որ իր փեսան Համազասպը, որ Մամիկոնեան ցեղէն էր, սպարապետ ընէ: Վռամշապուհ կատարեց Սրբոյն Սահակայ խնդիրը, և Մամիկոնեանց ցեղը նախարարութեանց մէջ հինգերորդ կարգը անցուց: Կ'երևի թէ այս ցեղէն կ'ելլար թագաւորին դինակիրը, որ թիկնապահին պաշտօնէն զատ էր:

167. Ուրիշ ինչ պաշտօն ունեցած է Մամիկոնեան ցեղը:

Այս ցեղէն եղաւ Վրկայ երկրորդին սենեկապետը կամ դայեակը. բայց այս դայեկութեան պաշտօնը մանաւանդ ցեղի մը տուած էր, հապա այլեայլ ցեղերէ կ'ել-

լային. ինչպէս Սանատրուկին զայեակը Բագրատունեաց և Աբծրունեաց ցեղէն էր, Վարազդատինը Սահառունեաց ցեղէն, և այլն:

168. Մամիկոնեան ցեղէն ինչ երևելի մարդիկ եղան:

Մամիկոնեան ցեղը խելքի, իմաստութեան ևս առաւել քաջութեան կողմանէ շատ անուանի եղաւ ակզբանէ հետէ. այնանակ որ զրեթէ առանց այս ցեղին եղբերը քաջութեան գործ մը չէր կատարուեր. թագաւորին միշտ հաւատարիմ էին, և այնոր սիրոյն համար պատերազմի մէջ առէն վտանգ յանձն կ'առնուին, և իրենց անձը կը նուիրէին. մէկ խօսքով Հայոց պղպին պարծանք եղան: Շատ անուանի և քաջ զօրավարներ եղան այս ցեղէն Աշխունեաց տուն, ինչպէս վաչէ՝ որը խոտրովու տուն, Մուշեղ՝ Պապ թագաւորին ժամանակ, Մանուէլ՝ Վարդատոյ ու Բ Աշակայ տուն, որ մեծամեծ քաջութիւններ ըրաւ Պարսից դէմ: Նոյնպէս Մարզպանաց տուն անուանի եղան մեծն Վարդան, Վահան՝ որ Պարսից Վաղարշ թագաւորին տուն մարզպան եղաւ. Վարդան Բ, Համազասպ, և Գրիգոր մամիկոնեան, որոնք Հայաստանի հրամանատար եղան:

169. Ո՞րչափ տուն ունեց Մամիկոնեանց ցեղին իշխանութիւնը:

Այս ցեղին իշխանութիւնը ունեց սկսեալ Տրդատայ ժամանակէն ինչուան Թ. դարը.

և վերջին նախարարն եղաւ Բուզայի աստեն Գրիգոր Մամիկոնեան։ Իսկ ցեղը ինչուան ԺԳ դար և անկէց ետքն ալ կը յիշուի։

170. Ո՞րն է Մամիկոնեանց ցեղին գլխաւոր քաղաքը, և ո՞ւր իրենց գերեզմանատեղին։

Մամիկոնեանց գլխաւոր քաղաքը Ողական բերդն էր, և իրենց գերեզմանատեղին Գլակայ վանքը։

## Զ. Կամսարականք*.

171. Կամսարականաց ցեղը ուսկից եւ ճած է։

Կամսարականաց ցեղը, որ կը կոչուի նաև Աւշարուհիք կամ Պահլաւուհիք, Պարթևաց ազգէն էր. վասն զի Աբգար երբոր Պարսկաստան գնաց՝ Պարսից թագաւորին տղաքը խաղաղելու, որ յաջորդութեան համար կը կռուէին, օրէնք դրաւ որ Աւտաշէս անդրանիկը որդւոց որդի թագաւորէ, և թէ որ իրեն ցեղը հատնի՝ մէկալ երկու եղբարց ցեղերուն անցնի, որոց մէջ

* Պաշտօնական նախարարութեանց կարգը կը դնենք նաև կամսարական, Ամատունիք և Ռշտունիք նախարարութիւններն ալ, որոնք թէպէտ և աէրութեան մէջ որդւոց որդի պաշտօն մը չունէին, բայց երեսել ցեղեր ըլլալնուն՝ իրենք ալ շատ անգամ աէրութեան մէջ երեսել պաշտօններու հասած են։

*կուն անունն էր կարէն, մէկալինը Սուրէն. և որոչեց որ ասոնց ցեղերը տէրութեան մէջ ամէն նախարարներէն վեր ապուին, և կոչեց իրենց ցեղը կարնեցի Պահլաւ. Սուրենեան Պահլաւէն եւս Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ, իսկ կարենեան Պահլաւէն կամսարականաց ցեղը:*

*172. Երբ սկսաւ կամսարականաց ցեղը:*

*Կարնան կամ կարենեան Պահլաւին ցեղը ուզելով պարսկաստանէն Հայաստան փախչիլ մեր մեծին Խոսրովու թագաւորին քովը, Աւրտաշիր Սասանեան պարսից թագաւորը զաւորը զօրքով վրան եւս, ու ճամբան վրայ հասնելով բոլոր նոյն ցեղին արու մարդիկը ու տղաքը թրէ անցընել տուաւ. միայն Բուրզ անունով մէկը, որ կարենեան Պահլաւին տանը շատ բարեկամ էր, նոյն ցեղէն տղայ մը առաւ ու փախաւ Քուշանաց երկիրը, որ եղբը Պերոզամատ կոչեցաւ: Այս Պերոզամատը եղաւ կամսարականաց ցեղին սկիզբը:*

*173. Կամսարականաց ցեղը երբ Հայաստան եկաւ:*

*Կամսար Պերոզամատին առաջին որդին Տրդատայ առեն բոլոր ընտանիքովն Հայաստան եկաւ, որ հօրը կենդանութեան ժամանակ թշնամեաց դէմ պատերազմելու առեն շատ քաջութիւններ ընելով յանկարծ թշնամւոյն կողմէն մէկը սակրով անոր գլխուն սակրին կէսը կտրեց ու թըռ-*

ցուց : Թէպէտ և եաքէն դեղով բժշկուեցաւ վէրքը, բայց պատաթը ամբողջ չըլլալուն համար՝ կամարար կոչուեցաւ, որ է ըսել կէս գլուխ :

174. Կամար երբոր Հայաստան եկաւ՝ Տրդատ ո՞ր բնակեցուց զինքը :

Տրդատ կամարը սիրով ընդունեցաւ իր ցեղէն ըլլալուն համար, և Դրասխանակերտ մեծ աւանն ու Շիրակ գաւառը անոր տըւաւ : Բայց քիչ աւեններէն կամար մեռնելով՝ Տրդատ անոր Աբշաւիր որդին իր տեղը դրաւ, և իրեն ցեղը նախարարութեանց կարգն անցընելով, Երուանդաշատ քաղաքն ալ պարգև տուաւ՝ Երասխաձոր գաւառովը մէկտեղ որ կ'ըլլի Արարատ նահանգին մէջ : Աբշաւիր Երասխաձոր գաւառը իր անունովն Աբշարունիք կոչեց, և անկէց ցեղն ըսուեցաւ նաև Աբշարունի :

175. Ե՞րբ ջնջուեցաւ կամարականաց համ Աբշարունեաց ցեղը :

Աբշակ Բ ուղելով անոնց ձեռքէն Արտաշեսեան տոհմը և Երուանդաշատ քաղաքն առնուլ՝ հրաման տուաւ որ թրէ անցընեն Աբշարունեաց ցեղը : Այս կոտորածէն խալըսեցաւ միայն Սպանդարատ Աբշարի որդին իրեն Շաւարշ և Գայեան տղոցմով մէկտեղ, և անով տեղով Յունաց բաժինն ապաւինեցաւ :

176. Կամարականք ե՞րբ նորէն Հայաստան :

Պապայ թագաւորութիւնը Հայաստանեայց

Համար Զիրաւ դաշտին Պարսից դէմ տրուած պատերազմին մէջ Սպանդարատ չաս քաջութիւններ ընելով և Վեհաց թագաւորը սպաննելով, իր հաւատարմութեանը վոխարէն՝ Պապ նորէն դարձուց ինչ որ իր հայրը Արշակ Բ. յափշտակեր էր Կամսարականց ցեղէն, այսինքն Եիրակ գաւառը ու Արշարունեաց երկիրը:

177. Ի՞նչ պիտելիք կայ Գաղաւոն ու Եաւարշ Կամսարականին վրայ:

Երբոր մեր խոսրով Գ. թագաւորը սպրդամեցաւ Պարսից սէրութենէն, Եապուհ Պարսից թագաւորը խաւրեց իր Արտաշիր որդին խոսրովու վրայ, որ եկաւ բռնեց զինքը ու շղթայով կապած Պարսկաստան տարաւ Անյուշ ըսուած բերդը դնելու համար: Խոսրովին հետ տարաւ նաև Գաղաւոն Կամսարականը՝ վախնալով անոր քաջութենէն, ու իշխանութիւն ալ սէրութեան գրաւեց: Եաւարշ ու Պարգև Արմաւունեաց 700 կտրիճներով Արտաշրի բանակին վրայ վազեցին որպէս զի ազատեն խոսրովը, բայց չկրցան երկաթէ շղթաները փրցընել, և Եաւարշ ու Պարգևայ որդին Մանուէլ, շատ զօրքով ընկան մեռան: Բայց քիչ ատենէն Արտաշիր երբոր Հօրը յաջորդեց, Ս. Սահակայ խնդիրքովը նորէն Կամսարականաց և Արմաւունեաց երկիրները իրենց դարձուց, բայց իրենց պատիւը նախատրութեանց մէջ շատ վար իջեցուց: Երբոր Արտաշիր մեռաւ, Վռամշապ

աաեն Ս. Սահակ նորէն ապաչեց որ այս եր-
կու ցեղերը նորէն իրենց առջի պատուոյն
հասցընէ. և վճամ կատարեց իրեն խընդ-
իրքը:

178. Այս մեծ ու պատուաւոր ցեղէն
ինչ երեելի մարդիկ եղան:

Թէ կառավարութեան և թէ քաջութեան
կողմանէ շատ համբաւաւոր նախարարներ
ունեցաւ, ինչպէս են Արշաւիր, Սպանդա-
րատ, Գազաւոն, և այլն: Կամսարականաց
ցեղը պատերազմներու մէջ Մամիկոնեանց
երկրորդն էր, և թէպէտ ընդհանուր ապա-
րանքի Սպարապետութեան պաշտօնը Մամիկոնեան
ցեղին էր, բայց իրենցմէ առանձին զուն-
դերու զօրապետ ըլլալով մեծամեծ յաղթու-
թիւններ ըրած են թշնամեաց դէմ: Արշա-
կունեաց տէրութիւնը վերցուելէն ետև ալ
Մամիկոնեան ու Կամսարական ցեղերն
էին որ իբրև հրամանատար կը կառավա-
րէին զՀայաստանը:

Վարդանանց ժամանակն ալ Արշաւիր
խոստովանող նախարարը թէ Պարսից և
թէ Հայոց առջև մեծ ազդեցութիւն ունէր
իր խնաստուն քաջութեամբը: Նոյնպէս ա-
նուանի եղան Հրահատ ու Ներսէհ իր որ-
դիքն ալ որ մեծամեծ կտրճութիւններ ըրին
մեծին Վահանայ հետ:

## Խ. Ամատունիք.

179. Ամատունեաց ցեղը ուսկից ելած է:

Ամատունեաց նախահայրն է Մանուէ կամ Մանովէ անունով Հրեայ մը, զոր մեծն Արշակ Պարթևը Արեաց աշխարհը տարաւ ու բնակեցուց Համատանի քովերը, ուր բազմանալով իշխանութեան և պատուոյ հասան: Այս Մանովէին ցեղը մեր Արտաշէս Բին առեն Հայաստան եկաւ, բայց թէ ինչ պատճառաւ՝ յայտնի չգիտցուիր, որոց Արտաշէս բնակութեան տեղ տուաւ, և պարսիկ բառով կոչեցան Ամատունիք, այսինքն օտարականք կամ եկք. զորոնք Պարսիկները Մանուռանք կը կոչէին իրենց Մանուէ նահապետին անունովը:

180. Ո՞ր է Ամատունեաց ցեղին երկիրը:

Ամրատաց Արտազծոան գաւառին մէջ, որ մեծ նախարարութեանց մէկն էր. բայց երբոր Պարզև Ամատունի նախարարը տիրասիրութեան ոգով վառուած միաբանեցաւ Շաւարշ կամսարականին հետ, որպէս զի խոտրով Գը զերութեան չղթաներէն ազատէ, բռնուեցաւ. Արտաշիր ողջ ողջ մորթել տուաւ զինքը, ու մորթը տիկի պէս ուռեցընել հրամայելով խոտրովին առջևը դնել տուաւ, որով և Ամատունեաց երկրին ալ յարքունիս գրաւեց:

181. Ա.մատունիք ըրբ նորէն իրենց երկրին տիրեցին:

Պարսից Ա.րտաշիր թագաւորը քիչ ատենէն Ս. Սահակայ աղաչանքովը Ա.մատունեաց երկիրը նորէն իրենց դարձուց, սակայն ազգի նախարարութենանց կարգը անցուց: Բայց Վռամ թագաւորին ատեն նորէն իրենց առջի պատուոյն հասան սրբոյն Սահակայ խնդրուածքովը ինչպէս կամաբարականաց ալ ըրեր էր:

182. Ա.մատունեաց ցեղէն որոնք երևելի եղան:

Ա.մատունիք պէտուր անունի նախարարութիւններէն մէկն էին, ուսկից երևելի եղաւ Վահան Ա.մատունին փոքր Խոսրովու ատեն, որ Կովկասային ազգաց դէմ Օշական գեղին քով մեծամեծ յաղթութիւններ ըրաւ, անոր համար Խոսրով այս գեղը իրեն տուաւ, ու ետքը բոլոր աէրութեան հազարապետ, այս ինքն հոզաբարձու ըրաւ զինքը: Իրմէ առաջ երևելի է նաև Օտա նախարարը որ Մեծին Խոսրովու թագաւորական դանձը Ա.րտաշիր Սասանեանին ձեռքէն քաջութեամբ պահպանեց ու Տրդատայ քոյրը պ'Խոսրովիդուխտը դաստիարակեց, Տրդատ ալ զինքը աէրութեան հազարապետ ըրաւ:

## Ը. Ռշտունիք.

183. Ո՞վ հաստատեց Ռշտունեաց նախարարութիւնը:

Ռշտունեաց կամ Ըռշտունեաց նախարարութիւնը վաղարշակ դրաւ, որոնք Սասանական ցեղէն զաղթական եկած են Ռաշամ անունով իշխանէ մը, որով և նախարարութիւնն ալ Ռշտունիք կոչեցաւ, իրենց երկիրը Վասպուրականի մէջ Բզնունեաց ծովուն մօտ կ'ըլլի, որ առջի բերան Ծրունեաց նախարարութենէն զատ էր, բայց ետքը անոր հետ միացաւ:

184. Ռշտունեաց ցեղէն ո՞րոնք երևելի եղան:

Ռշտունեաց ցեղէն՝ որ մեր ազգին երևելի նախարարութիւններէն մէկն էր, անունի եղաւ Բարդափրան անունով մէկը որ Տիգրան Երկրորդին առեն սպարապետ ըլլալով, պատերազմով Հրէաստանի վրայ գնաց, ու Հրէից Հիւրկանոս քահանայապետը ուրիշ շատ գերիներով Հայաստան բերաւ, և հոն Անտիգոնոսը քահանայապետ դրաւ: Նոյնպէս նաև մեծ անուն հանեցին Մանաճիհր խոտրով Բին, և Զօրայ՝ Տիրան Բին առեններըը, որ Հայաստանի հարաւային կողմի զօրքին սպարապետ եղան: Դարձեալ է դարուն մէջ անուանի եղաւ Թէոդորոս Ռշտունին որ քէ զօրա-

վար և թէ հրամանատար էր Հայոց ազգին վրայ Ա.րաբացւոց առեն։

185. Ե՛րբ ընկնեցաւ Ռշտունեաց ցեղը։

Երբոր Յուլիանոս կայսրը Պարսից վրայ պատերազմի կ՚երթար, Տիրան իր Զօրայ Ռշտունի զօրավարը զօրքով անոր օգնութիւն խաւրեց. բայց Զօրայ չուզելով ուրացեալ մարդու օգնել, առանց Տիրանայ հրամանին գնաց ամրացաւ Տմօրեաց երկիրը։ Ա.յս բանս երբոր լսեց Յուլիանոս կատղեցաւ, ու թուղթ գրեց Հայոց թագաւորին հրամայելով որ ազգովին ընկէ Զօրայի ցեղը։ Տիրան վախնալով Յուլիանոսէն, Հայր մարդպետին ձեռքովը, որ շատ քաւթիանները ըրեր էր Զօրայի վրայ, կանչել տուաւ երդմունքով, ու զինքը բոլոր իր ցեղովը մէկտեղ ընկել տուաւ. միայն Զօրայի եղբօրը Մեհենդակին Տաճատ որդին խաւրեցաւ, ուսկից նորէն սկսաւ և բազմացաւ Ռշտունեաց ցեղը։

## Թ. Խոռխոռունիք և Մաղխազունիք.

186. Խոռխոռունեաց ցեղը ուսկից եւ լաճ է։

Խոռ. նահապետէն որ Ա.րմենակայ եղբայրն էր ու Հայկայ որդին։ Խոռխոռունեաց ցեղը բոլոր քաջ և զօրաւոր մարդիկ էին, որոց բնակութեան տեղն էր Տուրուբերանի Խոռխոռունիք գաւառը, որ իրենց անունովը կոչուած է։ Վաղարշակ Խոռ-

խոռունեաց կարիճ նախարարութենէն ի-
րեն թիկնապահներ ըրաւ, որոց գլուխ
դրաւ նոյն ցեղէն Մաղխազ անունով մէ-
կը, և ցեղին անունը չփոխեց. բայց նոյն
ցեղը Մաղխազին անունովը ըսուեցաւ նաև
Մաղխազուհիք, որ երբեմն խոռխոռունեաց
ցեղէն զատ իբրև նոր ցեղ մ'ալ յիշուած
է: Վաղարշակ Մաղխազունեաց նոր եր-
կիր չտուաւ, հապա նոյն խոռխոռունեաց
երկիրն էր:

187. Մաղխազ անուան վրայ ինչ գի-
տելիք կան:

Մեր մատենագիրները Մաղխազ անունը
շատ անգամ թիկնապահ բառին տեղ կը
գործածեն, և կու տան այս անունը թագա-
ւորին թիկնապահներուն գլխաւորին, և
թիկնապահութեան պաշտօնն ալ կ'անուա-
նեն Մաղխազուրիւն. զոր օրինակ կ'ըսեն
վրիւ վաղխազ, գարջոյլ վաղխազ, փոխա-
նակ ըսելու վրիւ թիկնապահ. գարջոյլ
թիկնապահ: Այս գարջոյլ Մաղխազը որ
խոռխոռունեաց նահապետն էր, փոքր
խոսրով արևելեան կողմին զօրագլուխ ըր-
րաւ, վրաց թագաւորին Միհրանայ մա-
հուանէն ետքը: Նոյն գարջոյլ Մաղխազը
բուզանդ ուրիշ տեղ կ'անուանէ նաև գար-
ջոյլ խոռխոռունի. որով յայտնի կը ցուցուի
թէ խոռխոռունիք և Մաղխազունիք մի և
նոյն ցեղ են, և Մաղխազունիք անունը
պաշտօնէն առնուած է:

## Ժ. Վահևառնիք.

188. Վահևունիք կամ Վահնունիք ցեղը ոսկից եկած է:

Վահնունիք կամ Վահևունիք ցեղը եկած է Վահագնէ որ մեծին Տիգրանայ որդին էր: Վաղարշակ այս ցեղը պատուաւորնախարարութեանց կարգն անցուց, և քրմութեան պաշտօնը իրենց տուաւ, ինչպէս որ խնդրեր էին:

189. Ո՞ւր էր Վահևունեաց ցեղին բնակութիւնը:

Կ'երևի թէ Վահևունիք սեպհական երկիր մը չունէին, հապա քրմութեան ու քրմապետութեան պաշտօնը ունենալուն, աղին անդին այլևայլ քաղաքներու մէջ ցրուած կը բնակէին, որոցմէ գլխաւորն էր Տարօնոյ Աշտիշատ քաղաքը, որ իրենց սեպհական եղած էր, ու մեհեաններով զարդարած:

190. Վահևունիք ինչուան եօթը իրենց պաշտօնին մէջ հաստատ մնացին:

Չէ, վասն զի Աբրահէս երբոր փոքր Ասիայէն բերել տուաւ Հայաստան Աբրահամեայ և Ասղոնի ոսկեզօծ պղնձէ արձանները, ու հրամեց որ Աբրամեր քաղքին մէջ դրուին, Վահևունեաց ցեղին քրմապետները կարծելով թէ Հերակլեայ արձանը իրենց բուն նախահօրը Վահագնի արձանն է, Աբրահէսին մահուանէն ետև

տարին իրենց Աշտիշատ գեղին մէջ կանգնեցին: Այս բանիս վրայ նեղանալով Տիգրան Ե որ Արտաշէսի յաջորդեց, ճգեց զիրենք քրմութեան պաշտօնէն, ու իրենց Աշտիշատ գեղն ալ տէրութեան սեպհականեց: Անկէց ետքը ամենևին յիշատակութիւն չկայ այս ցեղին պաշտօնին վրայ թէ որո՛ւ անցաւ. կամ թէ նորէն իրենց դարձաւ թէ ոչ, յայտնի չգիտցուիր:

## ԺԱ. Վարուժնուհիք.

191. Ե՛րբ սկսաւ Վարուժնունեաց ցեղը:

Այս ցեղին սկզբնաւորութիւնը Գեղամայ պզտիկ որդւոյն Գառնիկէն է, որուն Դատ որդին Վաղարշակ Թագաւորական որաերու վերակացու դրաւ: Այս Դատին որդին Վարաժ կամ Վարժ որ խիստ յաջողակ էր որսի մէջ և նետ նետելու խիստ վարպետ, մեծն Արտաշէս իրեն որսապետ ըրաւ, և Այրարատ նահանգին մէջ զատ երկիր տուաւ անոր Հրազդան գետոյն քով, որ իր անունովը կոչեցաւ Վարաժնուհիք, և իրմէ սկսաւ վարաժնունեաց ցեղը, որուն իշխանութիւնը ինչուան ԺԱ. դար կը յիշուի:

192. Վարաժնունիք գաւառին վրայ ինչ պիտելիք կան:

Կան Տուրուբերանի և Վասպուրականի մէջ Վարաժնուհիք անունով այլևայլ գաւառներ, բայց յայտնի չգիտցուիր թէ նոյն Այ-

բարատայ մէջ եղած վարաժնուներաց ցեղէն էին, թէ տարբեր ցեղ։ Վասն զի Թովմա Աւրծրունիին խօսքէն կ'երևի թէ վասպուրականի մէջ եղած վարաժնուն ի գաւառին բնակիչքը Աւրծրուներաց ցեղէն էին, ուսկից Ռոստոմ անունով մէկը վասպուրականի տանուտէր եղաւ։

## ԺԲ. Սիկոռնիք.

193. Սիկոռնեաց կամ Սղկոռնեաց ցեղը ուսկից ելած է։

Սյս ցեղը ելած է Սլաքէն, զոր վաղարշակ որսոց վերակացու դրաւ, վայրի այծեր որսալու համար, ու նախարարութեանց կարգն անցուց։ Սլաքին ցեղը խոտան հին է, և թերևս Հայկէն առաջ, ինչպէս խոռենացին կը յիշէ. Տրդատայ ատեն գրեթէ բոլորովին ջնջեցան Սիկոռնիք բաց 'ի մէկ քանի հոգիէն, իրենց Սղոռկ նահապետին ապստամբութեանը պատճառաւ, որ Տըրդատէն գլուխ քաշելով միաբաններ էր Պարսից Շապուհ թագաւորին հետ, ու խոտորվիղատոյ գայեակը Օտա նախարարը սպաններ էր։ Սիկոռնեաց ցեղին երկիրն էր Տարօն գաւառը, զոր ետքը Մամիկոնեանք ժառանգեցին (§. 165)։

## ԺԳ. Մանդակուհիք.

194. Ե՞րբ սկսաւ Մանդակունեաց ցեղը։ Վաղարշակ Արսակեան պաշտօնը տուաւ նաև Մխանդակ անունով մէկուն, ուսկից եկաւ Մանդակունեաց ցեղը։ Այս ցեղէն էր Արտաւազդ Մանդակունի որ գՏրդատը Պարսից Արտաշիր թագաւորին կատարածէն ազատելով, փախուց Յունաց սահմանը։

195. Ե՞րբ ընկեցաւ Մանդակունեաց ցեղը։

Արտաշիր երբոր լսեց Արտաւազդ Մանդակունւոյն ըրածը, բարկանալով հրաման տուաւ որ բոլոր Մանդակունեաց ցեղը թրէ անցընեն։ Այս կատարածէն միայն կոյս աղջիկ մը ազատեցաւ Արտաւազդայ քոյրերէն, զոր Աշոցան ցեղէն Տաճատ անունով մէկը փախուց կեսարիա, և անոր հետ կարգուելով, անկէց նորէն բազմացաւ այս ցեղը։ Տրդատ երբոր թագաւորեց՝ Արտաւազդայ ըրածին փոխարէն՝ զինքը բոլոր զօրաց վրայ սպարապետ դրաւ։ Բայց սպարապետութեան պաշտօնը այս ցեղէն միայն Արտաւազդ ունեցաւ։

Մանդակունեաց բնակութեան տեղը կ'ենթի թէ Հարք ու Տարօն գաւառներուն կողմերն էր։

## ԺԴ. Հաւևուռնիք.

196. Հաւնունիք կամ Հաւենունիք նախարարութիւնը ե՞րբ սկսաւ:

Ա.յս ցեղը հին ցեղ էր և վաղարշակ նախարարութեանց կարգն անցուց, և կոչեց Հաւևուռնիք կամ Հաւևնուռնիք, և ըրաւ զիրենք Բագեակիր և Բագեակալ, և կը կարծուի թէ երբոր թագաւորը որսի կ'երթար, դիմացէն բազէ կը տանէին: Յորենացին աշխարհագրութեանը մէջ Հաւունիք անուանով գաւառ մը կը յիշէ Ա.յրարատայ մէջ, որ կ'երևի թէ այս ցեղին բնակութեան տեղն էր, թէպէտ և Յորենացւոյն աշխարհագրութեան ուրիշ օրինակներուն մէջ այս գաւառին անունը վահուռնիք կամ վահնուռնիք ալ գրուած կայ:

## ԺԵ. Գնթունիք.

197. Գնթունեաց ցեղը ուսկից ելած է: Երբոր Յեսու Ա.ւետաց Հրամանատը Քանանիները Ա.ւետաց երկրէն կը ջնջէր, Քանանիտաս անունով երևելի իշխանին մէկը նոյն Քանանու ցեղէն Հայաստան փախաւ մեր Սուրբ նահապետին առեն, ուսկից ելան Գնթունիք: Համբրոնացին այս ցեղը Քանանիտասին անունով Քանանեցի կը կոչէ, և Յովհան Կաթողիկոս Քանանեիտ Գնթունի, երկու անունն ալ մէկտեղ դնե-

լով։ Իսկ Խորենացի իր պատմութեան մէջ տեղ տեղ պարզ քանանացի կը կոչէ։

198. Քանանիզատին ցեղը ևրբ նախաբարութեան կարգն անցաւ։

Այս ցեղը վաղարշակ նախարարութեանց կարգն անցուց, և ցեղին անունն ալ Գնթունիք կոչեց, և նոյն ցեղէն Ջեռէա անունով մէկը գինքը հպատակողաց դրաւ ու թագաւորին հանդերձապետ։

199. Ո՞ւր էր Գնթունեաց ցեղին բնակութեան տեղը։

Այս բանիս վրայ որոշ յիշատակութիւն մը չկայ, բայց կ՚երևի թէ Գնթունիք Գեղամայ ծովուն քովերը կը բնակէին Գուդարք նահանգին հարաւային կողմը։

200. Գնթունեաց ազգին բնաւորութիւնը ինչպէս էր։

Գնթունիք ընդհանրապէս քանանացւոց ազգին բնութիւնն ու սովորութիւնները ունէին, և իրենց մէջ շատ տեանուած է նենգութիւն, քաութիւն և ապստամբութիւն։

## Ժ.Զ. Գնուռնիք.

201. Ե՞րբ սկսաւ Գնունեաց ցեղը։

Այս ցեղը սկսաւ Ադրամելէքէն որ Ասորեստանցոց Սեններիմ թագաւորին որդին էր, և իր Սանասար եղբօրը հետ մէկտեղ իրենց հայրն սպաննելէն ետև Հայաստան փախեր էր մեր Սկայորդւոյն առեն (§. 116)։

202. Ո՛ւր էր Գնունեաց ցեղին բնակութեան տեղը:

Տուրուբերան նահանգին Ա.ղիովիտ գաւառը, որոյ գլխաւոր քաղաքն է Ա.րճէշ. բայց վերջը Գնէլ Գնունի որ Թագաւորին տակաւապետն էր, ժառանգութեամբ տիրապետեց Շահապիվան լերան ալ, որ Ա.յրարատ նահանգին մէջ կ'ըլնի:

203. Գնունեաց ցեղը երբ նախարարութեանց կարգն անցաւ, և ինչ պաշտօն ունէր:

Վաղարշակ այս ցեղէն գին անունով մէկը, որ սեղանի տուն Թագաւորին ըմպելիները կը պատրաստէր, նախարարութեանց կարգը անցուց, և իրեն անունով նախարարութիւնն ալ գնուելիք կոչեց, այսինքն գինի ուրիս, որ իր պաշտօնին խնամակէս յարմարեցաւ: Ա.յս ցեղը գլխաւոր նախարարութեանց մէկը եղաւ, և տէրութեան տակառապետը, որ Թագաւորին գինի կը պատրաստէր, և ամէն գինւոյ չուեմանբաններու վերակացու էր: Ուստի՝ տարբեր է իրեն պաշտօնը մատուսակէն, վասն զի մատուսակը միայն սեղանի տուն գինի կու տայ:

204. Ա.յս ցեղը ուրիշ ինչ պաշտօն ունեցաւ:

Ա.յս ցեղէն մէկը Ա.րշակ Բ.ին տուն հազարապետ եղաւ բոլոր տէրութեան, այսինքն քաղաքական բաներու վրայ հոգ տանող. վասն զի ինչպէս որ կ'ըսէ Բուզանդ, շատ աշխարհահռչակ էր այս ցեղը:

## ԺԱ. Աբելեան և Գաբելեան.

205. Ե՞րբ սկսան Աբեղէն և Գաբեղէն նախահարութիւնները:

Վաղարշակ՝ Աբել անունով մէկը ապաստարար և գահատոր դրաւ, այսինքն իրեն դիմացը կեցող պաշտօնեայ և թագաւորական աթոռին խնամակալ ու տանը կահ կարասիքը հոգացող: Նոյնպէս Գաբաղ անունով մէկն ալ դրաւ վերակացու ցորենի մթերներուն և համբարապետ, և իրենց անունովը ցեղերուն անունը կոչեց Աբելեան և Գաբելեան:

206. Ո՞ւր էր այս նախահարութեանց բնակութեան տեղը:

Վաղարշակ Աւրարատայ նահանգին մէջ իրենց բնակութեան տեղ տուաւ, որ իրենց անունովը Աբելեանք և Գաբելեանք կոչուեցան *:

* Խորենացի Գիրք Բ. Ի. "Եւ զԳաբաղ զսմին 'ի վերայ կոյտից,,. Կոյտ կ'ըսուին ցորենի և ուրիշ արմտեաց չուեմարանները, բայց կը նշանակէ նաև ձիոց եւրանականները, որոց վերակացութեան պաշտօնն էր Թագաւորական ձիերը դարմանել և դաշտերուս մէջ արածել:

## ԺԸ. Սպասնորհիք.

207. Սպանդանեաց նախարարութիւնն ոմ հաստատեց:

Ա՛յս նախարարական ցեղը վաղարշակ հաստատեց, որ սպանդանոցներու վրայ վերակացու էր, անոր համար կոչուեցաւ Սպանդուհիք: Բնակութեան տեղերնին յայտնի չէ:

## ԺԹ. Զիւնական.

208. Զիւնական ցեղը ինչ պաշտօն ունէր:

Թագաւորին ամարանոցներուն, այս ինքն ամառուան տուներուն ու պալատանեըրուն պահապան, և թագաւորին օշարակներ չինելու համար սառ կը պահէր, անոր համար ըսուեր էր Զիւնական: Ա՛յս ցեղը կամաց կամաց առաջ երթալով նախարարաց կարգն անցաւ:

# ՅՕԴՈՒԱԾ Գ.

## Ա.նպաշտօն Նախարարութիւններ*.

### Ա.կեացիք.

209. Ա.կէացւոց նախարարութիւնը ո՞վ հաստատեց:

Ա.կէացիք վ.ասպուրականի Ա.կե գաւառին մէջ կը բնակէին, և վ.աղարշակայ ա.ռեն նախարարութեանց կարգն անցան, որ կ'ըսուին նաև Ա.կեայք:

### Ա.ճձևացիք.

210. Ե՞րբ հաստատուեցաւ Ա.նձևացեաց նախարարութիւնը:

Ա.նձևացիք վ.աղարշակայ առեն նախարարութեանց կարգն անցան, և այսպէս կոչեցան վ.ասպուրականի Ա.ճձևացիք կամ Ա.ճձաւացիք գաւառին անունովը, ուր շատ անձաւներ, ձորեր կային, և երկիրն ալ իբրև ամուր բերդ մ'էր թշնամւոյն ձեռքէն ազատելու համար: — Ա.յս նախարարութիւնը Թոռնա Ա.րծրունւոյն ըսածին նայե-

*Ա.յս նախարարութիւններէն դիւրութեան համար այժմեան կարգաւ ուզեցինք դնել, առանց իրենց մեծութեան կարգը նայելու:

լով, Սմբատ Գին առեն Ա.րծրունեաց իշխանութեան տակը մտաւ. ու Ա.րծրունեաց ցեղէն մէկ քանի թագաւորազուն մարդիկ Անձևացեաց վրայ իշխելուն համար, տեղ տեղ կը յիշուի Անձևացեաց թագաւորութիւն: Ա.յս ցեղէն երևելի եղաւ Գնէլ նահապետը Պապ թագաւորին առեն, որ առաքևելեան զօրքին սպարապետն էր:

## Աշոցայ.

211. Ո՛վ հաստատեց Աշոցայ նախարարութիւնը:

Աշոցայ նախարարութիւնը վաղարշակ հաստատեց, որ հին ցեղ էր, և Գուգարայ Հայկազնէն ելած, որ Շարայի որդւոց մէկն էր: Ա.յս նախարարութիւնը Ա.յրարատայ Աշոց գաւառին անունովը այսպէս կոչեցաւ, ուր էր իր բնակութեան տեղը:

## Ապահունիք.

212. Ա.պահունիք նախարարութիւնը ո՞վ հաստատեց:

Ա.պահունեաց նախարարութիւնն ալ վաղարշակ հաստատեց, որ Հայկայ որդւոց մէկուն սերունդն էր: Ա.յս նախարարութիւնը անուանի էր քաջութեան կողմանէ, որոյ բնակութեան երկիրն էր Տուրուբերանի Ա.պահունիք գաւառը, որ Բզնունեաց ծովուն կողմերը կ'իջնայ:

## Աղաւնեղեանք.

213. Աղաւեղեան ցեղը ուակից եւած է։ Աղաւեղեան կամ Աղուեղեան նախարարութեան ցեղը Աղանց ազգէն Սաթինիկ թագուհւոյն ազգականներէն եւած էր, որոնք Աղրատաչէս Բին առեն Սաթինիկան հետ մէկտեղ Հայաստան եկան, ու Աղրատաչէս պիրենք նախարարութեանց կարգը անցուց։

## Աղաւնեանք.

214. Աղաւենեան ցեղը ուակից եւած է։ Աղաւենեան նախարարութիւնը եւած է Աղաւանէն որ հայկազն վահագնի որդին էր։ Այս նախարարութեան տեղն էր Աղուանից կամ Աղուանից ձորը Մոկք նահանգին մէջ, վասպուրականի Ռշտունեաց գաւառին սահմանակից։

## Բզնունիք.

215. Ուակից եւած է Բզնունեաց ցեղը։ Բզնունեաց ցեղը եւած է Բաղ նահապետէն, որ Մանաւազին որդին և Հայկայ թոռն էր, որոյ բնակութեան տեղը ազի ծովուն արեւմտեան հիւսիսային կողմը ելլալուն համար, ծովն ալ էր անունեալը Բզ-

*ևուհևաց ծով կոչեցաւ, երկիրն ալ Բզևուհեիք, որ կ'ըսնի Տուրուբերան նահանգին մէջ։*

*216։ Բզնունեաց ցեղը ոմ նախարարարու-թեան կարգը անցուց։*

*Վաղարշակ. բայց Տրդատայ մահուանէն ետև ջնջեցաւ Մանաւազեան և Որդունի նախարարութեանց հետ մէկտեղ։ Վասն զի Տրդատայ մահուանէն ետև անմիջապէս թագաւոր չըլլալով, այս իրեք ցեղերը իրարու վրայ ելան, ու մէկզմէկ ջնջեցին։ Բուզանդ կը պատմէ թէ խոսրով Գ Դաւթաբէն անունով Բզնունեաց նահապետը զօրքով Պարսից վրայ խրկեց, որ Պարսից հետ միաբանելով Հայոց զօրքը կոտրել տուաւ։ Երբոր խոսրով լսեց այս բանը՝ նոր բանակ հանեց, և Վաչէ Մամիկոնեան զօրավարին ձեռքովը յաղթեց Պարսից, և Դաւթաբէնն ալ բռնելով քարկոծել տուաւ իր առջևը, ու ցեղն ալ բոլոր թրէ անցուց ոչ արուի և ոչ իգի խնայելով, որով վերցուեցաւ այս նախարարութիւնը, և երկիրն ալ տէրութեան ձեռքը անցաւ։ Բայց այս մեծ կոտորածէն ետքն ալ դեռ յիշատակութիւն կ'ըլլայ այս ցեղին, որով յայտնի կը ցուցուի թէ բոլորովին չի'ջնջեցաւ։*

## Գարգարացիք.

*217. Գարգարացւոց ցեղը ուսկից եւ-լած է։*

*Գարգարացիք եւած են Ադան Սիսա-*

կեանքին զաւկէն, և իրենց բնակութեան տեղն էր Ուտի նահանգին Ոշոր տուռանձնակ ըսուած գաւառը. վասն զի Ուտի ա-ռանձնակին Պարտաւ քաղաքը մեր մատենագիրները Գարգարացւոց աշխարհին մէջ կը դնեն: Ստրաբոն Գարգարացւոց երկիրը սխալմամբ Աղուանից երկրին հետ-սային կտրմը կը դնէ Ամազունեաց ազգին մօտ, որոյ հետ շատ վերաբերութիւն ունէր կ'ըսէ:

## Գլուխ Ի.

218. Գարդմանացւոց ցեղը ուսկից եւ-լած է:

Գարդմանացւոց ցեղն ալ նոյնպէս Աւանին զաւկէն ելած է, և իրենց բնակու-թիւնը Ուտի նահանգին Գարդման գա-ւառն էր:

## Գողթնեցի.

219. Գողթնեցի ցեղը ուսկից ելած է:

Գողթնեցի ցեղը ելած է Սիսական կամ Սիւնեաց ցեղէն, որոյ երկիրն էր Վա-պուրականի Գողթն գաւառը Սիւնեաց մօ-տիկ, որ Ը դարուն Սիւնեաց աշխարհին գաւառ անպուեցաւ, և անոնց ձեռքն ան-ցաւ:

220. Գողթնեցիք երբ նախարարու-թեանց կարգն անցան:

վաղարշակ այս ցեղը նախարարութեանց կարգը անցուց, որոյ գլխաւոր իշխանը Սիւնեաց ցեղէն կ'ըլլար: Այս գաւառին բնակիչները ուսման կողմանէ շատ ծաղկած էին, և իրենց երկիրը Հայաստան մի մասաներուն այսինքն բանաստեղծից բնակարան սեպուած էր, որոնք նուագարաններով կ'երգէին մեր դիւցազանց քաջութիւնները: Բայց առաքելեաց հետևելով՝ շատերը քրիստոնէութիւնը չէին ընդունած կամ մոլորութեամբը խառնած են գարուն մէջ ալ. անոր համար Ս. Մեսրովպ գնաց հոն և քարոզեց և մոլորեալները դարձուց:

## Դիմաքանակ.

221. Ե՞րբ հաստատեցաւ Դիմաքսեան նախարարութիւնը:

Աբրահէս Բին առեն. վասն զի Աբրահէս երուանդ Բին հետ պատերազմելու առեն, գիտակ անունով մէկը ազատեց զԱբրահէսը մահուան վտանգէն, բայց ինքը մեռաւ գլխուն կէսը երեսովը մէկտեղ կըտրուելով: Այս բանիս փոխարէն՝ Աբրահէս գիտակին ներսէս որդին նախարարութեանց կարգը անցուց, և կոչեց Դիմաքսեան իբր դիմակիսեան: Այս ցեղին բնակութեան տեղը ըստ ումանց վանանդ գաւառին մէջը կ'ինար:

## Զառաւելեալք.

222. Զառաւելեան ցեղը երբ նախաթարութեան կարգը անցաւ:

Զառաւելեան ցեղը հին Հայկազն թագաւորաց ցեղերէն առաջ եկած է, զոր Վաղարշակ նախաթարութեանց կարգը անցուց:

## Զարեհաւանեանք.

223. Զարեհաւանեանք ուսկից եւած են:

Զարեհաւանեանց ցեղը եւած է Զարեհէն որ Ներսեհին որդին էր, և Ներսեհը մեծին Տիգրանայ թոռնորդին էր: Վաղարշակ այս ցեղը նախաթարութեանց կարգը անցուց, որոյ բնակութեան երկիրն էր Զարեհաւան գաւառը Պարսկահայոց մէջ:

## Ծովդեացիք.

224. Ծովդէից ազգը ուսկից եւած է:

Ծովդեացիք կամ Ծոդէք Աւան Սիսականին գաւակներէն եւած են, որոց բնակութեան տեղը թէպէտ և բուն Մեծին Հայոց սահմանէն դուրս է, այս ինքն Ուտի նահանգին արեւելեան կողմը կուր գետոյն քով, բայց Աղթանգեղոս Հայոց նախարարաց կարգին մէջ կը դնէ զնոսա:

## Ծուխեցիք*.

225. Ո՞վ հաստատեց Ծուխց նախարարութիւնը:

Ծուխց նախարարութիւնը որ կ'իյնէ Զորրորդ հայոց Ծուխք գաւառին մէջ, վաղարշակ հաստատեց Անգեղտան նախարարութենէ զատ: Բայց որովհետեւ Բուզանդ Անգեղտան ցեղին բնակութեան տեղը վեց Ծուխք գաւառը կը դնէ, ասկէ կը հետեւի որ կամ Ծուխց նախարարութիւնը ետքը միացեր է Անգեղտան նախարարութեան հետ, կամ պիտի ըսենք թէ վաղարշակին հաստատած այս մեծ նախարարութիւնը փոքր Ծուխց մէջն էր, որ կ'ըսուէր նաև վերին Ծուխք, ուր կը տիրէր Շահունուց ցեղը:

## Մանուազեանք.

226. Մանուազեան ցեղը ասկից եւ լաճ է.

Մանուազէն՝ որ Հայկայ որդին և Խոռայ եղբայրն էր, և իր անունովը քաղաք մը վինեց Տուրուբերանի Հալք գաւառին մէջ, որ ինքը ժառանգեր էր, և քաղքին

* Մեր ճառեղագրաց մէջ Ծոփէոյ անունը յիշուած չէ, իսկ Ծոփ անունը կու տան միայն աշխարհին, և բնակիչներուն համար կ'ըսեն Ծոփէք Ծոփաց աշխարհին, յաշխարհէն Ծոփաց, և այլն:

անունը դրաւ Մանուէմզակերտ, որ կրճատ-
մամբ ըսուեցաւ նաև Մանազկերտ կամ
Մանծկերտ:

227. Մանաւազեան ցեղը երբ նախա-
րարութեանց կարգը անցաւ:

Այս ցեղը վաղարշակ նախարարու-
թեանց կարգը անցուց Բզնունեաց և Որ-
դունին ըսուած ցեղերուն հետ մէկտեղ.
որոնք խոսրով Բին ժամանակը մէկզմէկ
պատերազմաւ ջնջեցին: Բայց Բուզանդ
կ'ըսէ թէ խոսրով ու Ս. Վրթանէս խաւ-
րեցին Աղբիանոս եպիսկոպոսը որ զիրենք
խաղաղէ, բայց անոնք մոխկ չընելով ա-
կսան թագաւորին երկիրներն ալ աւրել:
Այն ատեն խոսրով վաչէ զօրավարին հրա-
ման տուաւ որ երկու ցեղն ալ բոլոր ջնջէ,
և ոչ մէկ արու զաւակ թողլով (§. 216).
և Մանաւազեան ցեղին երկիրը, այսինքն
Մանաւազակերտ քաղաքը և իրեն չրջակայ
սահմանը՝ Աղբիանոս եպիսկոպոսին տը-
ւաւ, և Որդունեաց Որդորու ցեղն ալ՝ իրեն
սահմանովը մէկտեղ՝ Բասենոյ եպիսկոպո-
սին:

## Մոկացիք.

228. Ո՞վ հաստատեց Մոկաց նախարա-
րութիւնը:

Վաղարշակ հաստատեց Մոկաց նա-
խարարութիւնը, որ թէպէտ ամբողջ Մոկք
նահանգին կ'իշխէր, բայց իր ընդարձակ

իշխանութեանն համեմատութեամբ՝ շատ քիչ վրան յիշատակութիւն կայ։ Ասով կ'երևի թէ Մոկացիք իրենց սահմանակից Մարաց, Պարսից և մանաւանդ Ասորեստանեայց հետ՝ խառնուած էին հին ատենէն՝ի վեր։ Մոկաց նախարարութիւնը ծ. դարուն սկիզբները Սմբատ Ա. Բագրատունուն ատեն ժամանակ Աւրծրունեաց թագաւորութեան ձեռքը անցած էր Անձևացեաց նախարարութեան հետ միևտեղ։

## Որդուձիք.

229. **Որդունի ցեղը ուսկից ելած է։**

Որդունի ցեղը ելած է Հայկայ սերունդենէն, որոյ բնակութեան տեղն է Աւրբատայ Բասեան գաւառը։ Այս ցեղը վաղարշակ նախարարութեանց կարգը անցուց, ու եղբը խոսրով Բին ատեն բոլորովին ջնջեցաւ (§. 216)։

## Ոչոեացիք.

230. **Երբ հաստատեցաւ Ուէացւոց նախարարութիւնը։**

Ուէացւոց նախարարութիւնը վաղարշակ հաստատեց, որոյ սերունդը սկսած է Առանին զաւակէն որ Սիսակայ ցեղէն էր։ Ուտի նահանգը Աւրշակ Բին ատեն Աղուանից ձեռքը անցաւ, երբոր մեծին Հայոց ուրիշ կողմերը թագաւորէն կ'ապստամ-

բէին։ Բայց Մուշեղ Աբշամայ զօրավարը Աղուանից ձեռքէն պատերազմով առաւ Ոստի աշխարհը, սակայն եաքը նորէն Աղուանք տիրեցին, ինչպէս Խորենացւոյն առեն ալ անոնց ձեռքն էր, ինչուան որ Սմբատ Ա. Բագրատունեաց թագաւորը դարձեալ առաւ ձեռքերնէն։ Ասով այս նահանգը երբեմն Հայոց ձեռքը կ'անցնէր երբեմն Աղուանից, որուն դուցէ մեծ պատճառ մըն ալ բնակչացը բերրի ապստամբ բնաւորութիւնն էր, որ Սևորդիք կ'ըսուէին իրենց Ա և նահապետին անունովը (§. 13)։

## Գլուխք.

231. Ե՞րբ սկսաւ Պալունեաց ցեղը։

Թէպէտ և որոշ չգիտցուիր Պալունեաց ցեղին ու նախարարութեան սկզբնաւորութիւնը, բայց յայտնի կեցած է իրենց երկիրը, որ երկու տեղ կը յիշուի. մէկը Տուրուբերանի Տարօն գաւառին սահմանակից, ուր են Կուառս և Հառեան ափանները, միւսը Վասպուրականի 36 գաւառներուն մէկն էր Գլուխք ըսուած։

## Գահլաւիկք.

232. Գահլաւիկ ցեղը ուսկից ելած է։

Գահլաւիկ ցեղը ելած է Անակէն որ Ս. Գրիգոր Լուսաւորչին հայրն էր. ազգաւ Պարթև, Գահլաւ գաւառէն, ու Սուրեն

Պահլաւի, թագաւորական ցեղէն, որոյ վերջին կամաւորական ցեղին մէջ խօսեցանք. (§. 171)։ Բայց գիտնալու բան է որ խոբենացին մանաւոր կերպով պարթև կ'անուանէ թագաւորական ճիւղը, որ Վաղարշակին ցեղովը Հայաստան եկաւ. իսկ Անակին նախարարական ցեղը առաջուբար պահլաւիկ կը կոչէ։

233. Պարթևաց ազգին սկիզբը ուսկից է։

Պարթևաց ազգը ելած է Աբրահամ նահապետէն և Քետուրայ կնիկէն։ Այս ցեղէն Արշակ անունով մէկը Քրիստոսէ 250 տարի չափ առաջ ապստամբելով Մակեդոնացւոց սէրուքենէն թագաւորեց Հուշանաց երկրին վրայ։ Ասոր որդին Արշակ Ը որ մեծ կոչեցաւ իր մեծամեծ քաջութիւններուն համար, իր թագաւորական աթոռը Բահլ փոխեց, որ Հուշանաց երկրին մէջ կ'ըլլայ, ասով իրեն ցեղը նոյնպէս և իրեն բնակութեան տեղը Բահլ քաղքին անուանը Պահլաւ ըսուեցաւ։ Մեծն Արշակայ եղբայրը Վաղարշակ՝ թագաւորելով Հայաստանի վրայ, իրմէն սկսաւ Արշակունեաց տէրութիւնը։

## Ռոխսեաններ.

234. Ռոխսեան ցեղը ուսկից ելած է։

Ռոխսեան կամ Ռոխսոնեան ցեղը Հոր կոչմանէ վերջին Տիգրանէն կ'իջնայ, իսկ Հոր կոչմանէ Հռոմայեցի էր։ Վասն զի

Տիգրան երբոր Պարսից Պերոզ թագաւորին հետ Ասորոց երկիրը գնաց՝ որ Հռոմայեցոց ձեռքին տակն էր, ու հոն տեղտեղանքը կ'ասպատակէր, գերի բռնուեցաւ։ Բայց երբոր Ղուկիանոս կեսար այն կողմերը եկաւ, ազատեց Տիգրանը, ու իր մեծաւոր ազգականներէն Ռոմի աղջիկը իրեն կնութեան տուաւ։ Տիգրան երբոր Հայաստան դարձաւ, Թողուց զՌոմի ուսկից չորս տղայ ունեցեր էր, և որպէս զի անոնք Ասրշակունի չըսուին, անոնցմէ նոր ցեղ հաստատեց, որ իրենց Ռոմի մօրը անունէն Ռոխանան կոչեցաւ. և Տիգրան այս չորս տղոց անդրանիկը նոյն ցեղին նահապետ դրաւ, և մէկալ նախարարութեանց կարգը անցուց, որ կ'ըսուի նաև Ասրշունի։

## Տաշրացիք.

235. Տաշրացոց ազգը ուսկից ելած է։

Տաշրացիք ելած են Շարային որդւոյն Գուշար Հայկազնոյն զաւակներէն, որ վաղարշակայ աեն նախաթարութեանց կարգը անցան։ Իրենց երկիրն է Տաշիր գաւառը, որ կ'ըսնի Գուգարք նահանգին մէջ. և վերջերը գրեթէ բոլոր Գուգարք նահանգին վրայ իրենց իշխանութիւնը կը տարածէր։

### *Տրուանդ.*

**236. Տրուանդաց ցեղին վրայ ինչ պիտի՝ լիք կան:**

*Արտաշէս Բ Տուր նահապետին տանը՝ հինգ զաւակներէն մասնաւոր ցեղ մը Տրուանդ անունով, անոնց հօրը մեծ քաջութեանը վրայէն, որ Երուանդ թագաւորին տանը մարդիկներէն մէկը ըլլալով, ինչ որ կ'ըլլար արքունեաց մէջ, գաղտուկ կ'իմացընէր Սմբատ Բիւրատեանին, որ Արտաշէսին դայեակն ու սպարապետն էր, անոր համար Երուանդ սպանել տուած էր Տուրը:*

### *Քաղքերտունի.*

**237. Քաղքերտունեաց ցեղին վրայ ինչ պիտելիք կան:**

*Յայտնի է այս ցեղին սկզբնաւորութիւնը որ Դ և Ե դարերուն մէջ ալ կը յիշուի: Թովմա Մեծոփեցին ու Վարդան աշխարհագիրը Վասպուրականի Աղիովիտ գաւառին Արճէշ քաղաքը և անոր չրջակայ սահմանը Քաղքերտունեաց երկիր կ'անուանեն: Ասկէց կ'երևի թէ Քաղքերտունի ցեղը Արճէշու կողմերը կը բնակէր. ուր ընդ հակառակն ոմանք այն կողմերը Գնունեաց կը համարին: Ուստի պէտք է ըսել թէ առեն մը Գնունեաց ու առեն մ'ալ Քաղքերտունեաց*

## Ճեռքը անցաւ այս Սրճէշ քաղաքը իր սահմանները մէկտեղ։

### Օրբելեանք.

238. Ուսկից ելած է Օրբելեան կամ Ուրբելեան ցեղը։

Օրբելեան ցեղը ձենաց ազգէն է. վասն զի ձենբակուր ձենաց թագաւորին ատեն խռովութիւն ըլլալով, թագաւորին տղաքը սկսան իրարու հետ կռուիլ. այն ատեն մէկ կողմը անով տեղով Վրաստան փախաւ։ Վրացիք տեսնելով որ քաջ մարդիկ են, տուին անոնց Օրբէթ բերդը և ուրիշ շատ տեղեր բնակելու համար. այս Օրբէթ բերդին անունովը եղբերը Օրբէլք կամ Օրբուլք կոչեցան, այս ինքն Օրբէթացիք։ Այս ցեղը ինչպէս Վրաց հետ, այսպէս ալ Հայոց հետ խառնեցաւ, բազրատունի Կորիկեանց թագաւորներուն հետ խնամութիւն ընելով։

239. Օրբելեանք ինչ պատիւ և իշխանութիւն ունէին։

Օրբելեանք՝ Վրաց աշխարհին սպարապետան էին, և սէրութեան ամէն գործակալները ատոնց իշխանութեան տակն էին, և ունէին 12 սեպհական գրօշ, և իւրաքանչիւր գրօշին տակ 1000 զինուոր։ Եւ որովհետև թագաւորին նշանը կարմիր կ'ըլլար ճերմակի վրայ, անոր համար ատոնցը որպէս զի տարբեր ըլլայ, հրամայեցին որ ճերմակ ըլլայ նշանը կարմիրի վրայ։ Եւ

երբոր թագաւորին դիմացէն կ'երթային, ձեռքերնին առիւծապլուխ գաւազան կը բռնէին, և սեղանի վրայ ամէն նախարարներէն վեր կը նստէին. բայց այս պատիւ ներէն՝ վրաց թագաւորնեերուն թագադիր էին:

240. Ե՞րբ ՋՆՋեցաւ Օրբելեան ցեղը:

Երկոտասաներորդ դարուն մէջ վրաց Դաւիթ թագաւորը իր Դեմնա որդին պըզտիկ ըլլալով յանձնեց նախարարներուն ու իանէ սպարապետին՝ որ Օրբելեան ցեղէն էր, որպէս զի երբոր Դեմնա մեծնայ՝ թագաւորեցընեն զինքը: Երբոր մեծցաւ տղան ու իանէ կ'ուզէր թագաւորեցընել, Գէորգ պէ Դաւթին եղբայրը որ վրաց վրայ թագաւորեր էր, բռնեց իանէն ու Դեմնեան ու աչուըներն կուրցուց, ու հրաման տուաւ որ Օրբելեան ցեղը բոլոր ՋնՋեն, որոյ ճենաց աշխարհէն գալէն՝ի վեր հազար տարիէն աւելի եղեր էր: Այս ահագին կոտորածէն որ եղաւ 1177ին, ազատեցաւ միայն Լիպարիտ իանէի եղբայրը իր երկու Եւիկոսմ և իանէ զաւկըներովը մէկտեղ, որ Պարսկաստան զացեր էին. ատոնցմէ նորէն ակըսաւ աճիլ ու բազմանալ Օրբելեան ցեղը Թամար թագուհոյն ատեն, որ Գէորգէին յաջորդեց, ու իանէն որ գանձակայ ամիրային քով զացեր էր, ետ դարձընել տուաւ, ու զարձուց իրեն Օրբէթ բերդը:

241. Օրբէլեանց երկիրը ո՞ւր կ'ըլլի:

Օրբելեանք բնակեցան նախ Օրբէթ բեր-

*պը, որ նոյն է Շամխուլդէին հետ, ըսել է թէ իրենց առջի բնակութիւնը Հայաստանի Գուզարք նահանգին մէջ եղած է։ Եւթը իրենց բնակութիւնը եղաւ Լօռէ որ Գուզարաց Տաշիր գաւառին մէջն է. տէրեցին նաև Դմանիք, Խունան քաղքըներուն. և որովհետև Գուզարք նոյն ատեն Վրաց ձեռքն էր, անոր համար հոն շատ Վրացիք ալ կը գտնուէին։ Իսկ եւթերը ԺԱ և ԺԲ դարերուն մէջ Օրբէլեան ցեղը տարածեցաւ Սիւնեաց երկիրը, և հոն շատ երկիրներու տէր եղաւ, և Վայոց ձոր ըսուած գաւառը և ուրիշ շատ տեղեր իրեն սեպհականեց, և խնամութեամբ խառնուեցաւ և միացաւ Հայոց հետ։ Այս ցեղէն էր Ստեփանոս Օրբէլեան կամ Ուրբէլեան Տարսայիճ Ա-թաբէկին որդին, որ եւթը 1285ին Սիւնեաց եպիսկոպոս եղաւ, ու Օրբէլեանց և Սիւնեաց ցեղերուն պատմութիւնը գրեց։*

242. *Օրբէլեանք ո՛ւր կը թագուէին։*

*Վրաց երկրին մէջ եղած Օրբէլեանց գերեզմանատեղին էր Ռեթանիա վանքը. իսկ Սիւնեաց մէջ բնակող Օրբէլեանց գերեզմանատեղին էր Նորավանք ըսուած մենաստանը Վայոց ձոր գաւառին մէջ. քիչ անգամ թագուած են նաև Տաթևու մէջ։*

243. *Օրբէլեանց ցեղէն ինչ երևելի մարդիկ եղած են։*

*Այս ցեղը շատ քաջ և արիասիրտ էր, և ատեն ատեն շատ երևելի զօրավարներ ըն-*

ձայեց, որոնք վրաց աէրութիւնը և անոր հետ նաև Հայաստանի սահմանները ծ պաշրուն և անկէ ետքը, մեծ քաջութեամբ պահպանեցին Թաթարաց ու Պարսից յարձակումներէն:

244. Վերոյիշեալ նախարարութիւններէն զատ ուրիշ ինչ նախարարութիւններ կան Հայաստանի մէջ:

Կան նաև ուրիշ նախարարութիւններ և ցեղեր ալ, որոց սկիզբն ու երկիրը յայտնի չգիտցուելուն համար ասոնց կարգը չդրինք, թէ և կը յիշուին մեր այլևայլ պատմչացը մէջ. ինչպէս են Աղբերկացիք (Փարպ.), Բագևանք (Բուզ.), Ըճծայիանք (Եղիշէ և Փարպ.) Ընտրուհիք (Ագթց.), Խաղուհիք (Խոր.), Հաշտջուժևանք (Մեսրոպ), Մարզպետունիք (Յհ. կթ.), Սահառունիք (Փարպ. Բուզ.), Սրուանձտունայք (Եղշ. Փարպ.), Քօղևանք (Եղշ.), և այլն, և այլն:

245. Հայաստանի այսչափ բազմաթիւ նախարարութեանց մէջ որոնք են երևելիները:

Այս ամէն նախարարութեանց մէջ չորսը խիստ երևելի եղան, որոցմէ իրեքը օտար ազգի իշխաններէ առաջ եկած են, այս ինքն Բագրատունեացը, Մամիկոնեանց ու Ագծրունեացը. իսկ Սիւնեացը որ չորրորդն է՝ ակսած է Հայկայ զաւկընէրէն: Այս չորսին մէջ ալ Բագրատունիք և Մամիկոնեանք չատ երևելի եղան թէ քաջութեամբ և թէ աշխարհաշինութեամբ, ու

Հայոց տէրութեան ամուր յենարան և պարծանքն էին: Բայց այս երկու նահապետութեանց երկիրը պզտիկ էր, իսկ Ս.րծրունեաց և Սիւնեաց երկիրները ընդարձակ և բարեբեր: Բագրատունեաց ու Մամիկոնեաց ցեղէն շատ երևելի մարդիկ ելան պետութեան և քաղաքագիտութեան կողմանէ, իսկ վեհասակար մարդիկ քիչ. ընդհակառակն Ս.րծրունեաց և Սիւնեաց ցեղէն շատ անպիտան մարդիկ ելան, որ տէրութեան մեծամեծ վնասներ հասուցին:

246. Հայոց հին ցեղերէն որոնք մնացած են ինչուան հիմա:

Այս ցեղերէն ոմանց ինչուան հիմա մնացորդներ կան այլևայլ տէրութեանց մէջ, և իրենց հիմակուան նոր անուններըը սոսնք են.

Պակրատիւն — Բագրատունիք

(Վրաստանի և Ռուսաստանի մէջ)

Ուրպելիւն — Օրբէլեանք

(Վրաստանի և Ռուսաստանի մէջ)

Սասունք — Սանասունք

(Մշոյ երկիրը)

Մանըզցիք — Մամիկոնեանք

(Քիւրտիստանի մէջ)

Սիւանցիք — Սիւնիք

(Քիւրտիստանի մէջ)

Ռուիկըցիք Ռչտուններք
(Քիւթախտանի մէջ)

Մալախտովքի կամ Մաղխազուններք
Մալասատովքի
(Լեհաստանի մէջ)

Սաբեղայ Գաբեղեանք
(Լեհաստանի մէջ)

Եւ որովհետև այս նախարարութեանց չատը վաղարշակայ ատենէն սկսած է, ա֊նոր համար իրենց հնութիւնը 2000 տարին կ'անցնի, որով Եւրոպայի մէջ գտնուած ցեղերէն ամէնէն հինը կ'ըլլան. վասնզի Եւրոպայի ամէնէն հին ցեղերը մեծին Կա֊րոլոսի ժամանակը սկսած են, որ թագաւո֊րեց 800ին։

# ԳԼՈՒԽ Թ.

*Տէրութեան վէջ եղած պաշտօնեներուն վրայ.*

247. Տէրութեան մէջ եղած բոլոր պաշտօններու անուններ կը յիշուին մեր մատենագրաց մէջ:

Կոչական, կոդմնական կամ Սահմանակալ կայ կ'ըսուէր այն իշխանը որ Հայաստանի այլևայլ կողմերը թշնամեաց յարձակմունքէն կը պահէր:

Գաւառական կ'ըսուէր այն որ մանաւանդ գաւառի մը վրայ կ'իշխէր, բայց ոչ ինքնագլուխ, հապա իրմէ աւելի մեծէն կախումն ունենալով:

Հազարապետ՝ որ թագաւորին պալատը կը հոգար, գուցէ նաև բոլոր Հայաստանի պիտոյքը ինքը կը դարմանէր:

Զինակիր՝ որ թագաւորին զէնքն ու սուրը կը կրէր, և ատոր պաշտօնը թիկնապահին պաշտօնէն զատ էր, և կ'երևի թէ միշտ Մամիկոնեանց ցեղէն կ'ըլլար, սպարապետութեան պաշտօնը անոնց ըլլալուն համար:

Կարապետ՝ որ թագաւորը տեղ մը երթալու ատեն դիմացէն կ'երթար ու ամենուն կ'իմացընէր թագաւորին գալը:

Կային նաև թագաւորական Սևևկապետ, Խարտուղար, Դպիր, Դահձապետ, և այլն:

248. Ի՞նչ պաշտօն էր Մարդպետութիւնը։

Մարդպետութիւնը նոյն է Ներքինապետութեան հետ, զոր վաղարշակ հաստատեց, վասնզի իրմէ առաջ յիշատակութիւն մը չկայ, և սովորաբար կ'ըլլար Ս. Գեղեան ցեղէն, և կամ ուրիշ հայկազն հին ցեղերէն, որոցմէ կ'ըլլային նաև ներքինիները. ուստի մարդպետութեան պաշտօնը որդւոց որդի մէկ ցեղի վրայ չէր։ Մարդպետը այս ինքն ներքինապետը կը կոչէր նաև Հայր իշխանաց, և իրեն պաշտօնն էր Թագաւորին իբրև հայր ըլլալ, և վերակացու և հոգացող Թագաւորին պալատին և կանանց։

249. Մարդպետը ինչ կալուածներ ունէր։

Վաղարշակ մարդպետին իբրև կալուած տուաւ Աղբպատականէն ինչուան Ճուաշ և Նախճաւան։ Իսկ եռքերը Տիրան Բին առեն կ'իջնէր նաև Տարօն գաւառին այլևայլ գեղերուն վրայ ալ։

250. Նախկուան քաղքին վրայ ինչ պատմելիք կան։

Նախկուան քաղաքը մարդպետին ձեռքը ըլլալուն համար Ոստան ըսուեցաւ, իբր Թագաւորական քաղաք*, պատճառաւ որ

* Ակնց սովորութիւն մտած է նաև մեծամեծ նախարարաց գլխաւոր քաղաքը Ոստան կոչել, որ էր իրենց տէրունականը կամ գաւառականը.

մարդպետին ցեղին մարդիկը ոտանիկ կ'ըսուէին թագաւորական ցեղէ ըլլալնուն համար (§. 163)։ Ա.Հարհական իշխանութիւնը վերցուելէն ետքն ալ թոռմա Ա.րծրունի Նախջաւանի եպիսկոպոսը կը կոչէ մարդպետական եպիսկոպոս կամ Ոտանի եպիսկոպոս, որ ուրիշ ամէն եպիսկոպոսանէրէն վեր էր, և անմիջապէս կաթողիկոսէն վերջը կը յիշուէր, և երբեմն ինչուան մի՛ոտրապօխոս ալ կ'ըսուէր։

Բայց Ա.րշակունեաց հետ այս պաշտօնն ալ լմնցած է։

251. Եահապն ու Եահախոռապետը ինչ պաշտօններ ունէին։

Եահապին պաշտօնը յայտնի չգիտցուիր, բայց ինչպէս որ կ'երևի կամ վերակացու և պահապան էր թագաւորական տեղերու, և կամ իշխան թագաւորական եկամուտներու, թերևս նա և բոլոր տէրութեան եկա-

ինչպէս Երուանդաշատ քաղաքը կամարականաց ոստան կ'ըսուէր. Հադամակերտ՝ ոստան Արծրունեաց. Դարոյնք՝ ոստան Բագրատունեաց և այլն։ Նոյնպէս ոստան կը կոչուէին այն քաղաքները ուր էր ալքունիքը, ինչպէս էր Դուին քաղաքը։ — Ոստան բառը եկած է Պարսից ոստան բառէն, որ կը նշանակէ աթոռ պրան. ասկէց թագաւորական դաստատանութիւնը, կամ նոյն իսկ թագաւորին ալքունիքը ոստան՝ և մեր մէջը ոստան ըսուեցաւ։ Ինչպէս նաև Օամանցիք ասիանէ բառ կ'իմանան կոստանդնուպոլիս քաղաքը, ուր է թագաւորին ալքունիքը, որ բուն բառին նշանակութիւնը նայելով ըսել է Դուռն։

մուտներուն : Իսկ բառին բուն նշանակութեանը նայելով ըսել է քաղաքապետ :

Եահխուռապետին կամ շահոռապետին պաշտօնն էր թագաւորական ախոռին, այսինքն ձիոց և կառաց վերակացութիւնը : Կիլիկեցոց ժամանակ աստր կ'ըսէին Գռեղդաստպ, որ եւրոպական բառ է (§. 254) :

252. Որեար դրան, Դրան երէց որոնք կ'ըսուէին :

Որեար դրան կ'ըսուէին թագաւորին պալատին մէջ եղած մարդիկը : Դրան երէց կ'ըսուի թագաւորին պալատին մէջ եղած քահանայն : Դրան եպիսկոպոս կ'ըսուի թագաւորին պալատին և կաթողիկոսարանին մէջ եղած եպիսկոպոսը :

253. Սատրապ և Զորրորդապետ որոնց կ'ըսուէր :

Սատրապ յունական բառ է, և Բուզանդ և Մեսրոպ գործածած են գաւառակալի տեղ : Իսկ Յունաց և Լատինացոց մատենագիրները կը գործածեն նահապետի տեղ :

Զորրորդապետին պաշտօնը մեր մէջը ուրոշ չգիտցուէր. թերևս կը կոչուէր չորս աստանիկ գնդերուն պետաւորը. բայց բուն չորրորդապետ կ'ըսուի տէրութեան մը չորրորդ մասին մէկուն վրայ իշխեցողը. և սովորաբար գրոց մէջ այս նշանակութեամբ գործածուած է, որով և կը նոյնանայ գաւառակալ բառին հետ* :

* Հինաւուրան կարգի պաշտօնատեառց վրայ կը խօսինք գինուորութեան մէջ :

254. Ռուբինեանց առեն ինչ պաշտօնատեարց անուններ կը յիշուին:

Ռուբինեանց առեն որովհետև Հայերը շատ վերաբերութիւն ունէին Եւրոպացոց հետ, անոր համար իրենց իշխաններուն տուած պատուոյ անուններուն շատը զաղիարէն լեզուէ առնուած է: Ինչպէս

Պարոն[1], բարձրագոյն պատուոյ անուն էր զոր կու տային առջի բերան Կիլիկիոյ իշխողներուն, քանի որ թագաւոր չէին օծուած, ուստի և կ'ըսուէր Պարոն Ռուբէն, Պարոն Կոստանդին, և այլն: Պարոն անունը եաքէն սկսաւ տրուիլ թագաւորին որդուցը, և թագաւորին Հայրը կամ խնամակալը կ'անուանէր առաջ պարոն:

Պայլ[2], որ կը տրուէր իշխանաց իշխանին, այսինքն անոր որ ամէն իշխաններուն գլուխն էր:

Մարաջախտ[3], որ կը տրուէր թագաւորին տանը հոգաբարձուին, որ Ս. Լուսաւորչեաց առեն կ'ըսուէր հազարապետ ուսկից արդ-

[1] գլ. Baron. Հին ատենք մեր ազգին մէջ տաճկական պէս, տէրոյ, չէլէպի, պատուանունները մանելով, շատ հասարակ եղած է պարոն պատուանունին գործածութիւնը, ուր Եւրոպա ուրիշ շատ պատուոյ անուններէն վեր է:

[2] գլ. Baile. որուն տաճկերէն կ'ըսեն պալէօզ, որ կը տրուէր վենեակեցոց տէրութեան կողմանէ Կոստանդինուպոլիս գրուած դեսպանին:

[3] գլ. Maréchal.

քայի: Մարաջախտ անունը կը տրուէր երբեմն նաև զօրավարին:

Գռևնդտապլ[1], կը տրուէր զօրաց սպարապետին:

Ջամբռլայն[2], որ կու տային թագաւորին սենեկապետին:

Սենեսկալ կամ Սենեսջալ[3] մատակարարին:

Պօղլեր[4] մատուռակին:

Օտար ազգերէն Հայոց տրուած պատուոյ անուանները.

255. Կուրապաղատին պաշտօնը ինչ է: Կուրապաղատ անունը ելած է Լատին բառէ[5]: Այս անունը կու տային անոր որ թագաւորին պալատը կը հոգար, ինչպէս որ անունէն ալ յայտնի է, որուն մեր մատենագիրները հազարապետ ուսև արքայի կ'ըսեն: Յունաց մէջ կուրապաղատին պաշտօնը մեծ էր, և թագաւորին անմիջապէս քովէն կ'երթար, ձեռքը ոսկի գաւազան բռնած:

[1] Գղ. Connétable, որ կը նշանակէ ախոռապետ:
[2] Գղ. Chamberlan.
[3] Գղ. Sénéchal, որ կը տրուէր մինչև դարու մէջ թագաւորին ծառայներուն գլխաւորին:
[4] Գղ. Botleur.
[5] Լատիներէն կուրապաղատին կ'ըսեն Curator palatii (κουράτωρ βαλατίου) և Յոյները Κουροπαλάτης (κουροβαλάτης):

256. Ա.յս անունը ուրիշ որոց կը տրուէր։

Ա.յս անունը պատուոյ համար կու տային ուրիշ հեռու տեղ եղած մարդկանց ալ, որոնք չէին կրնար թագաւորին պալատին վրայ հոգ տանել։ Կու տային նաև կուսակալներուն, ինչպէս տուած են կայսերք նաև մեր իշխաններէն Սմբատ Բագրատունիին, որ Աբբասեանց աւարներէն շատ ընծաներ ու ձիեր պարգև խաւրեց կայսեր, և եղաւ Հայաստանի կուսակալ՝ կոչուպատիոսդատ անուամբ։ Նոյնպէս նաև վարազտիրոց և Համազասպ ունեցան այս պատիւը։ Բաց ասոնցմէ կան նաև ուրիշներ ալ Հայոց ազգէն, որոց անուննները աւելորդ է մէկիկ մէկիկ յիշելը, որոնք արժանի եղան այս պատուոյն իրենց արդեանցը կամ կայսեր սիրելի ըլլալնուն համար։

257. Պատրիկ անունը որմէն կը տրուէր։

Պատրիկ անունը որ եւած է Յունաց լեզուէն*, հին ատեն Հռոմայեցւոց այլևայլ անձանց պատուոյ համար կու տային. բայց Կոստանդիանոսի ատեն սկսաւ նաև զատապետի կամ կուսակալի տեղ գործածուիլ։ Ա.յս անունը Յունաց կայսերք մեր ազգէն ալ շատերուն տուած են, թէ իբրև հրամանատար աշխարհին, ինչպէս էր Ա.շոտ պատրիկը, և թէ պատուոյ համար, որոց մէջ ամենէն երեւելի եղաւ Ա.նդովիկ Սիւ-

* Պատրիկ անուան Յոյները πατρίκιος (բատրիկիոս) և Լատինացիք patricius (բատրիկիուս) կ'ըսեն։

նեաց իշխանը, զոր մեծն Թէոդոս պատրիկաց պատրիկ անուանեց։

258. Մագիստրոս անունը ուսկից եւ լաճ է։

Այս անունը Հռոմայեցոց մանաւանդ բառէն եւաճ է, եւ ով որ մագիստրոս կ'ըլլար Հռոմայեցոց մէջ, մեծ պատիւ եւ իշխանութիւն կ'ունենար թագաւորին պալատին մէջ, իբրեւ թագաւորին ներքին խորհրդական։ Այլ բերան մէկ հոգի միայն կ'ըլլար մագիստրոս, բայց վերջէն ինչուան տասնըչորս հատ կ'ըլլային. որոց պատիւը առաջ պատրիկներուն հաւասար էր, բայց ետքերը անոնցմէ ալ վեր անցաւ, սակայն կուրապաղատին պատուէն միշտ վար էր։ Մագիստրոսութեան պաշտօնը երկու տեսակ էր, մէյմը զինուորութեան մէջ, մէյմ'ալ թագաւորին պալատին մէջ։

Մագիստրոսութեան պատուոյն հասնելնիանք մեր ազգէն ալ տասներորդ դարուն մէջ. որոց մէջ անուանի եղաւ Գրիգոր մագիստրոս, որ մատենագրութեամբն ալ երեւելի եղաւ։

259. Դուքս կամ տուկ անունը որ լեզուէն եւաճ է։

Լատին տուքս բառէն՝ որ առաջնորդ ըսել է. եւ առջի բերան զօրաց առաջնորդը՝ կամ զօրապետը այն անուամբ կը կոչէին. բայց Չ դարէն ետքը սկսան նաեւ զաւառապետները այսպէս անուանել։ Դքսութեան իշխանութիւնը ունեցան նաեւ ոմանք Հայոց

ազգէն, որոց մէջ նշանաւոր են Գրիգոր Մագիստրոս և իրեն հայրը:

260. Կամ կամ կամէս անունը որմէ կը տրուէր:

Կամ բառը հռոմայեցւոց քով եւս բառէն ելած է, որ կը նշանակէ ոդևկից. բայց եաքերը իշխանութեանց կարգը անցաւ թագաւորին պալատին ու տէրութեան մէջ. և կը տրուէր աւելի գաւառապետներուն և քաղաքապետներուն. ուստի Դ. դարուն երբոր Հայաստան երկու բաժնուեցաւ, Յոյնք իրենց բաժնին մէջ գրած գաւառապետները և քաղաքապետները կոմս կամ կոմես կ'անուանէին: Այս անունը Յոյնք իրրև պատուանուն տուած են նաև ուրիշ Հայերուն:

261. Հիպատոս անունը որմէն կը տրուէր:

Հիպարտոս կամ Հիպատ բառը որ Յունաց մոտ ի՛պարտոս անունէն առնուած է, մեծ իշխանութեան անուն էր, զոր կայսերք տուած են նաև ոմանց մեր ազգէն իրրև պատուանուն:

262. Վեստ պատուանունը որմէն կու տային:

Այս անունը որ Յունարէնէ առնուած է, կուտային իշխաններու և պետականներու, ինչպէս ԺԱ. դարուն կը յիշուին նաև մեր ազգէն, որոց մէջ ամենէն հռչակաւորը եղաւ Վեստ Սարգիս, որ թէպէտ շատ հինութիւններ ըրաւ, բայց գաւառաճանու-

թեամբ Անի քաղաքը Յունաց կայսեր մատնելուն համար, իրաւամբք չարահամբաւեցաւ բոլոր ազգին մէջ։

263. Սևաստոս անունը ինչ լեզուէ եւ լած է։

Սևաստոս Յունարէն բառ է, Լատինեբէն՝ աւկուստոս կ'ըսեն և մենք Օգոստոս, որ պատուոյ և մեծարանաց անուններ են, և ԺԱ. ԺԲ դարուն ունեցան ոմանք մեր ազգէն ալ այս սևաստութեան պատիւը, մանաւանդ՝ ի Կիլիկիա։

## ԳԼՈՒԽ Ժ.

## ՉԻՆՈՒՈՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ։

### ՅՈԴՈՒԱԾ Ա.

### Զօրք, Զօրավարք, Զէնք։

264. Ո՞վ կարգաւորեց Հայոց պինուրութեան արհեստը։

Նախ մեծն Տիգրան, որ հետևակ, ձիաւոր, պարսաւոր, աղեղնաւոր և ուրիշ դասդաս զօրքերուն կարգ դրաւ։ Երկրորդ վաղարշակ, որ որպէս զի Հայաստանը թշնամիներէն ազատ պահէ՝ անոր այլևայլ կողմերուն զատ զատ գունդերով կողմնապահներ դրաւ, և անոնցմէ ոմանք մեծ իշխանութիւն ունենալնուն, և իրենց սահմանին մէջ թագաւորին իբրև փոխանորդ սեպուելուն համար, կը կոչուէին նաև թոհարաշխ, ինչպէս էր Աղձնեացը, Գուգարացը։

265. Վաղարշակ Հայաստանը քանի կուսակալութիւն բաժնեց:

Վաղարշակ Հայաստանը չորս կուսակալութիւն կամ ճշդիւ ըսելով եօթը կուսակալութիւն կամ կողմնակալութիւն բաժնեց. արեւելեան Հիւսիսային կողմին կուսակալ դրաւ Ասորւոյ գլուխ. արեւելեան կողմին Միջեւաց գլուխ, արեւելեան Հարաւային կողմին կարմեան գլուխ. արեւմտեան Հիւսիսային կողմը Բագրատունեաց գլուխ. արեւմտեան կողմը Անգեղտուն գլուխ. արեւմտեան Հարաւային կողմը Աղձնեաց չորեքհարիւրեան Տիգրիս գետոյն եզերքը Ասորեստանի սահմանակից: Իսկ Հիւսիսային կողմին կուսակալ դրաւ Գուգարաց գլուխ: Ասոնցմէ Միւնեաց և կապմեան գեղերուն կուսակալութիւնները Ասրամ նահապետէն՝ի վեր հաստատուած կային, իսկ մէկալնոնք Վաղարշակ Պարթևը հաստատեց: Իւրաքանչիւր կուսակալներ ունէին առանձին գունդեր զրեթէ տասնեակ հազար կամ աւելի, Հայաստանը թշնամեաց յարձակմունքէն պահելու համար: Ասոնց ցեղին կուսակալութիւնը շատ չյիշուիր մեր գրոց մէջ, և կ'երևի թէ պատճառը այս էր, որ Աղուանից աշխարհը՝ որոյ վրայ ինքը կուսակալ դրուած էր, միշտ Հայոց ձեռքը չմնաց: Յայտնի չէ թէ որչափ ատեն տևեց Վաղարշակին այս գեղեցիկ կարգաւորութիւնը. բայց կ'երևի թէ եօթը կուսակալութեանց թիւը եօթերը պահեցաւ:

266. Աբտաշէս Ե. ինչ փոփոխութիւն ըրաւ զինուորական կարգին մէջ։

Աբտաշէս Ե. իր որդուցը խառվութիւններն լսելու համար, զօրաց իշխանութիւնը չորս մաս բաժնեց. արեւելեան, արեւմտեան, հիւսիսային կողմի զօրքերուն զօրավար դրաւ իր իրեք որդիքը, և հարաւային կողմին իր Սմբատ դայեակը, և զանոնք իրրև կողմնակալ դրաւ այս չորս կողմերուն, որոնք պէտք եղած ատենը կը ժողվէին իրենց կողմնակալութեան սահմանին մէջ եղած զօրքը, ու միաբան թշնամւոյն դէմ կը պատերազմէին։

267. Տրդատ ինչ նորոգութիւններ ըրաւ զինուրական կարգին մէջ։

Տրդատայ ժամանակը Վաղարշակայ կարգաւորութիւնը վերջացեր էր, այս ինքն Հայաստանի այլևայլ կողմերը զատ զատ սպարապետ ու կողմնակալ ըլլալը, և մէկ զօրավար կ'իշխէր բոլոր զօրաց վրայ, որ էր Աբտաւազդ Մանդակունին։ Բայց երբոր Աբտաւազդ մեռաւ, Տրդատ նորէն հաստատեց առջի կարգը, և Մեհրանոս Օրբելեանին ընտծին նայելով, արեւելեան կողմին կուսակալ եղաւ Սիւնեաց ցեղէն 21 իշխաններով, արեւմտեան կողմին Անգեղտան ցեղէն 22 իշխաններով, հիւսիսային կողմին Գուզարաց ցեղէն 22 իշխաններով, և հարաւային կողմին Կորդուաց ցեղէն 21 իշխաններով*։

* Խորենացին Մեհրանոս Օրբելեանէն տարբեր

268. Տրդատայ ըրած կարգաւորութիւնը որչափ տևեց։

Տրդատայ ըրած կարգաւորութիւնը տևեց ինչուան Աղբակունեաց թագաւորութեան վերցուիլը, անկէց ետքը երբոր Պարսիկք սկսան Հայաստանի վրայ տիրել, ամենևին յիշատակութիւն չկայ այս չորս գունդերուն վրայ. և Հայոց պինդուրութիւնը Պարսից իշխանութեան տակն անցաւ, որ շատ անգամ Հայոց հետևակ զօրքերովը և ընտիր ձիաւորներովը կը պատերազմէր իր թշնամեացը հետ, և կը յաղթէր։

269. Պատերազմի ատեն Հայք զօրքերը ինչպէս կը չարէին, և բանակին պահպանութեանը համար ինչ զգուշութիւններ կ'ընէին։

Սովորաբար իրեք առաջք կը բաժնէին, որ կ'ըսուէր աջ և ահեակ կողմն կամ թև., և միջոց կողմն, միջոցի գունդ, միջին վայր։ Երբոր բանակը տեղ մը կեներ, չորս դին պատնէշով կը պատէին, զանազան կողմերէն դուռներ թողլով, բայց սակէ՝ բանակին չորս կողմը փոս ալ կը բանային աւելի ապահովութեան համար։

Շատ անգամ բանակին առջևը վահան-

կը զրուցէ, Թէ արևմտեան կողմին գնդին զօրավար դրաւ Բագարատ ապետը Բագրատունեաց ցեղէն, Հիւսիսային զօրքին Մհերանը պ[illegible] առաջ-

նորդ ու Գուգարաց բդեշխեան էր, արևելեան գնդին Մանաճիհր Ուշտունին։

ներով կը ծածկէին բերդի մը պէս, որ կ'ըսուէր վահանափակ. ու երբոր զօրքը նեղ կը մտնէր կ'երթար անոր տակը կ'ամրանար, իբրև ամուր բերդի մը մէջ: Այս կերպը ցոյներէն մտաւ: Իսկ զօրքը ճամբայ ընելու առեն կային առաջապահ, վերջապահ, կողմնապահ գնդեր, թշնամիէն բանակը ապահով պահելու համար:

270. Ի՞նչ զէնք կը գործածէին պատերազմի առեն:

Սովորական զէնքերն էին առջի հիւսայրի համ երկսայրի, այսինքն մէկ համ երկու բերնով սրած, թոշր, նրան, վաղր համ վաղակաւոր, որ առրին այլևայլ տեսակներն են: Կը գործածէին նաև գեղարդն, հիզակ, առին, աղեղն, վահան, սակր համ ասկոռ, ձիկռ, պարսաքար, և այլն*: Այս զէնքերը ունեցող զինուորները մասնաւոր անուամբ կը կոչէին առնելարուոր, վաղակաւոր համ վաղրաւորք, հիզակաւորք, առինաւ-

* Ներան այսինքն ալզուի առուր (փճ. խանչէր). վաղր համ վաղակաւոր մեծ առուր (էսխիլեան). սակր համ սակաւոր երկու կողմով տապար (պօլիաս). իսկ ճիկռ կ'երևի թէ մէկ կողմով տապար է, գլուխն ալ սրածայր երկաթ մը ունենալով: Սուին ձանկաւոր երկաթ ունէին ծայրը խոթած (ղըպղըն). գեղարդն որ կ'ըսուի նաև փեգ՝ է տրապիզաձև (ֆոգլաձեայ ձևով) երկաթէ սրածայր գործի, երկայն փայտէ կոթի վրայ անցուցած (նկարագ, պ-նկ-). գեղարդին ալզուի առեւակին կ'ըսուի նիզակ որ ձեռքով կը նետուի (կոշպա):

*ջորք կամ առևտրորք, ապեղևտրորք, վահռևտ-*
*ջորք, կամ վահռևտվտռք, ռակրտռորք:*

*Եատ անգամ նիզակները ու նետերը թոյնի մէջ կը խոթէին, ինչպէս գեռուննե-*
*րու, օձի ու վիշապի արեանը մէջ, որով կ'ըսուէր նիզակ վիշապառուխ, կամ արեամբ օձից վխնալ, և այլն:*

*Աղեղնաւորութեան ու նետաձգութեան կողմանէ խիստ երևելի էր մեր ազգը, ինչպէս կը գովեն նաև Երոդոտ ու Քսենոփոն:*

271. *Զինուորները ինչ գրահ կը հագնէին:*

*Զինուորաց գրահներն էին երկբթէ կամ պղընձէ ռաղռաւարտ, չանջռպահ, բազպան, զանկապան, և այլն: Հեծեալները գլխերնէն ինչուան ոտքերնին բոլոր գրահ կը հագնէին, նոյնպէս նաև իրենց ձիերը. և խիստ անուանի էին Հայոց հեծեալները: Իսկ աղեղնաւորները և որոնք որ հեռուանց կը պատերազմէին, աւելի թեթև կը հագնէին:*

272. *Զօրաց թիւը որչափ էր:*

*Սովորական կամ որոշուած զօրաց թիւն էր 120,000. բայց այլևայլ պատերազմի առեն պէտք եղածին չափ կը ժողվըւէր. Խոբենացին Ս.րամին համար կ'ըսէ թէ 30,000 ընտիր զօրք ժողվեց Նիւքարին դէմ երթալու համար. իսկ Ս.րտաշէս Ս.ին զօրքը այնչափ շատ էր, որ իրենց նետ նետելովը արևը կը մթագնէր, ինչպէս կ'ըսէ Խորե-*

նայի Եւագորաս Յոյն պատմըչէն առած։ Բուզանդ Ալշակ Բին առեն ինչուան 60 բիւր կը դնէ, որ կ'ընէ 600,000. բայց կ'երևի թէ չափազանցութեամբ ըսուած է, կամ թէ բիւր ըսելով ինքը տասը հազար չհասկընար։ Վարդանանց առեն 66,000. իսկ Բագրատունեաց ժամանակ ինչուան 80,000.—100,000 զօրքով բանակ կ'ելլէր։

273. Ի՞նչ մանաւոր անուն ունէին գունդերը։

Կային գունդեր որ մանաւոր անուն ունէին. ինչպէս են Ազատագունդ վաշտ որ ժողվըւած էր բոլոր նախարարաց տղոցմէ։

Ազրատական գունդ, որ Ազրատ նահանգէն կը ժողվըւէր։

Մառնիկ գունդ, որ Պարսից մառնան կամ անմահ ըսուած գունդին նման էր, և քաջութեան կոչմանէ անոնց պէս երևելի։

Մարդպետական գունդ, որ մարդպետին զօրքերն էին։

Մարզպետական գունդ, որ մարզպետութենէ ցեղէն կը ժողվըւէր։

Տանուտիրական գունդ, որ կը ժողվըւէր ոստանակաց աշխարհէն, որ է Ծուխք գաւառը Զորրորդ Հայոց մէջ։

Կ'երևի թէ ատոնցմէ զատ կային նաև ուրիշ գունդերու անուններ ալ նախարարութիւններէն կամ երկրին անունէն առնուած, ինչպէս են վերոյիշեալները, բայց մեր պատմիչները չեն յիշեր։

274. Զօրաց գլխաւորներուն մասնաւոր ինչ անուններ ունինք :

Զօրավար կամ զօրապետ կամ զօրագլուխ կ'ըսուէր այն որ բոլոր բանակին կ'իշխէր, զոր Խորենացի կը կոչէ նաև միապետ: Իսկ սպարապետ (այսինքն սպայապետ) անունը որ պարսից սիրահի բառէն եղած է, որ ըսել է զօրք կամ սպայ, թէպէտ և շատ անգամ զօրավարի տեղ ալ գործածուած է, բայց յատկապէս զօրավարին չէր տրուէր, հապա կ'ըսուէր սպարապետ արևելեան կամ արևմտեան, հիւսիսային կամ հարաւային զօրաց :

Սպասալար (այսինքն սպայից սալար կամ սաղար, որ ըսել է զօրաց առաջնորդ), մեր մէջը շատ գործածուած չէ, և կը գրուի զօրավարի տեղ :

Սաղար, որ հետևակ զօրաց զնդապետներու կը տրուէր, երբեմն նոյն իսկ հետևակ զօրաց տեղ ալ գրուած է :

Սորաւնդատ բառը Յունարէնէ առնուած է որ զօրավարի նշանակութիւն ունի, բայց մեր մէջը քիչ գործածուած է :

275. Ասյա անուններէն զատ ուրիշ ինչ զինուորական պատուոյ անուններ ունինք :

Ասյա անուններէն զատ ունինք բիւրաւոր որ 10,000 զօրքի կ'իշխէ. հազարապետ կամ հազարապետ. իսկ հարիւրապետ, չիլարապետ ու տասնապետ անունները իրաւ մեր ազգային պատմիչներու մէջ չկան, բայց հաւա-

նական կ'երևի թէ մեր զօրաց մէջն ալ կային ասոնք կամ ասոնց նման բաժանմունք, ինչպէս ուրիշ արևելեան ազգաց։

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### Գործիք քաղաք առնելոյ.

276. Քաղաք առնելոյ համար սովորաբար ինչ հնարք կը բանեցընէին։

Սովորական հնարքն էր երկայն ժամանակ քաղաքը պաշարել ու սովով առնուլ. կամ պարսպին հիմունքը քակել ու կործանել։ Հոս պիտնալու բան է որ մեր ազգը օտարաց վրայ շատ յարձակմունք չընելուն, քաղաք պաշարելու համար մասնաւոր գործիք չեն յիշուիր մեր մէջ, բայց՝ի քաջաձեռ, այն ալ եղքերը սկսան գործածել ուրիշ ազգերէն օրինակ առնլով։

277. Ի՞նչ տեսակ գործի է բաբանը։

Մեծ մեքենայ մի էր գերաններով չինած, և վրայէն չուանով խոշոր քար մը կախած, ծայրը սուր ու երկաթապատ, զոր մեքենային հեռացընելով կը թողուին գինուորները պարսպին վրայ, որ ահագին ուժով ատէպ զարնելով կը փլցընէր պարիսպը։ Անուանի է Մանազկերտ ու Բաղէշ քաղաքները առնլոյ համար Տուղրիլին գործածած ահագին բաբանը, որոյ քարը 400 հոգի կը քաշէին։ Այս ահագին բաբանը

Բաղէշ քաղքին պաշարման առեն վուանգ ազգէն մէկը նոր գիւտով մը այրեց ու քաղաքաէն խալըսեց։

278. Ո՞րն է Փիլիկուանը։

Փիլիկուանը բաբանի նման զորձիք մի է, թերևս անոր պզտիկը, որով Մանազկերտ քաղքին պաշարման առեն ճարտար Հայ քահանայ մը Թշնամոյն բաբանին զարնուածքը կը վճացընէր իր փիլիկուանին քարը ճիշդ անոր քարին դիմացն ուղղելով, որով քարը Թշնամոյն վրայ կ'ըլնէր։

279. Ո՞րն է Էշ ըսուած զորձին։

Էշ ըսուածը անուսուր զորձիք մի էր, զոր իրեք հոգի կը քաշէին, և պարսպին մօտեցընելով տակը կը մտնէին, ու կացինեներով մուրճերով պարսպին հիմունքը կը քակէին։ Ասով Շապուհ Պարսից Թագաւորը տիրեց Տիգրանակերտ քաղքին, մեծին Տիգրանայ հինած ամուր պարիսպները փլցնելով։

## ՅՕԴՈՒՄԱԾ Գ.

### Տէրտերական նշանին ու թագաւորին վերոտառնելուն վրայ.

280. Հայոց տէրութեան նշանը ինչ էր։ Արշակունեաց և Բագրատունեաց առեն տէրութեան նշանը արծիւ էր, իսկ Ռուբինեաց առենը առիւծ։ Պատերազմի առեն իւրաքանչիւր գունդ գատ գատ նը-

*չաններ ու դրօշներ կ'ունենար, բայց յայտնի չէ թէ այս նշանները ինչ տեսակ էին։ Աւրշակ Բին աւեն՝ որ զինուորութեան կարգը նորոգեց, կը յիշէ Բուզանդ, սպեղնապրօշք, արծուենշանք, և վարժևականշք. նոյնպէս և Մեսրոպ պատմիչը նոյն Աւրշակայ պատմութեան մէջ կը յիշէ արծուենշանք, սպեղնապրօշք։ Դաշանց թուղթին մէջ կը յիշուին դրօշք դաղատականք և վիշապագլուխք, զոր մեծն Կոստանդիանոս տուաւ Տրդատայ զօրաց։*

281. *Պատերազմի երթալու աւեն բանակին դիմացէն ինչ կը տարուէր։*

*Քրիստոնէութեան աւեն բանակին առջևէն խաչադրօշ կը տանէին, և սովորութիւն կար զօրաց հետ մէկտեղ նաև քահանայներ տանելու, որոնք բանակին մէջ պատարագ կ'ընէին։ Այս սովորութիւնը Բագրատունեաց վերջերը, երբոր Հայաստան Պարսից և Իսմայելացւոց ձեռքն անցաւ, վերցուած էր. բայց Ռուբինեաց աւեն նորէն հաստատուեցաւ Զաքարէ սպասալարին խնդիրքովը ԺԳ դարուն սկիզբը։*

282. *Թագաւորները ինչ վերաբերութիւն կամ տիտղոս կը բանեցընէին։*

*Մեր թագաւորները ուրիշ արևելեան ազգերուն պէս վեմ ու հպարտ վերտառութիւններ չէին գործածեր հապա պարզ կերպով իրենք զիրենք ազգի Հայոց կամ ազգի Հայոց մեծաց միայն կ'անուանէին. ինչպէս յայտնի կ'երևի Վաղարշակայ,*

Տրդատայ, Աբգարու և ուրիշ թագաւորնեըրուն թղթերուն մէջ: Իսկ Բագրատունեաց առեննը սկսան իրենք զիրենք շահան շահ կամ շահնշահ անուանել, այս ինքն արքայից արքայ, զոր տաճկի ատիկաննելրը զրին, Անոյ քաղքին թագաւորը մէկալ մանր թագաւորներէն որոշելու համար. բայց ետքէն սովորութիւն ըլլալով ամէն Բագրատունի թագաւորներն ալ իրենք զիրենք շահան շահ կ'անուանէին: Ռուբինեանք ալ թագաւոր Հայոց կամ թագաւոր ամենայն Հայոց կ'անուանէին. որոնց առաջին պատուար կոչումն էր Սպրդ թագաւոր:

283. Թագուհւոյն վերաբերութիւնն ինչ էր:

Պարզ կերպով ատիկին միայն կը կոչուէր, և իրեն իշխանութիւնը սահմանափակ: Թագուհի անունը խիստ քիչ գործածուած է. իսկ դպիոց և բամբիշ հազիւ երբէք տրուած են մեր տիկին բառին տեղ:

# ԳԼՈՒԽ ԺԱ.

## Ազգային զգեստուց և սովորութիւնք ևնգու վրայ.

284. Թագաւորները ինչ զգեստ կը հագնէին:

Մեր թագաւորները Պարսից, Մարաց ու Բաբելացւոց թագաւորներուն պէս լայն երկայն և ճոխ զգեստներ կը հագնէին, մէջքերնին ոսկի կամար՝ մարգարտով ու գոհարներով զարդարած, վրանին սաւառոյր, կուրծքերնին ապիզակ (պատուանշան), գլուխնին ոսկի թագ մարգարտով ծեփած, վրան ոսկիե ոչ սրծլրե սկաւակոշտ գարգ-ալանակ (չէլէնկ): Թագին վրայ կը դրուէր տէրութեան արծիւ նշանը, և թագին եռանկար Հանգոյց կամ կապ մը որ կ'ըսուէր աշխարհանգ հանգոյց, թերևս այս նշանակու-թեամբ, որ Հայաստան աշխարհը իբրև ա-ւանդ մը իր ձեռքը յանձնուած է: Քրիս-տոնէութեան առեն թագին վրայ խաչ ալ կը դնէին: Թագաւորը կը գործածէր նաև խոյր (քաւուք) որ թագէն զատ է, ու կ'երևի թէ տան մէջ առանձին եղած ժամա-նակ գլուխը կը դնէր, որ ոսկեթել բեհեզով կը շինուէր: Թագաւորները մօրուքնին ու մազերնին երկայն կը թողուին*, ու մազեր-

* կ'երևի թէ կիլիկեցւոց առեն մեր թագաւոր-

նին մարզարուե չինած վարուակալով (մագի կապ) մը կը կապէին ու կը զարդարէին : Ոտուընին նախարարներուն պէս կարմիր կօշիկ կը հագնէին . միայն թագաւորին կօշկին վրայ ասղնագործած կ'ըլլար արծիւ՝ կտուցով օձ մը բռնած : Երբոր թագաւորները պբօսանքի համար դուրս կ'ելլէին , կարմիր վրան (չաւըր) կը գործածէին , վրան արծիւներ բանած :

285. Թագաւորին տիկինը ինչ զգեաւ կը հագնէր :

Թագաւորին տիկինը թագաւորին պէս փառաւոր զգեաններ կը հագնէր . երկայն պատմուճան , գլուխը վարսակալ թագ և պատկ կը դնէր գոհարներով զարդարած , ձեռքը ապարանջան , ականջը օղ , և այլն: Նոյնպէս նաև իշխանաց կանայքն ալ գլուխնին թագ կը դնէին : Կ'երևի թէ տիկինը թագին վրայէն բանած վառ կամ չղաչատեռ (պիւրինճիւկ) մը կը ձգէր կըռնէին վար՝ ի կախ :

286. Ուրիշ մեծամեծ պաշտօնատէրները ինչ զգեաւ կը հագնէին :

Թագաւորին երկրորդը գլուխը յակինթներով զարդարած պատկ կը դնէր , երկու ականջը օղ , մէկ ոտքը կարմիր կօշիկ . ասկի գդալ և պատառաքաղ կը գործածէր , և

նեղը երեսց մօրուքնին կ'ածիլէին , անոր համար կը գանգատի Լամբրոնացին ըսելով , " Աչեցուցեք զհեր և զմօրուս զինչ ձեր հարքն ,, :

ոակի պատաթով կը խամէր : Ասով կ'երևի թէ ոակի դղալ և պատատւաքաղ գործածելը և ոակի պատաթով խաելը միայն թագաւորին ու թագաւորին երկրորդին տրուած էր, և ուրիշ իշխանները չէին կրնար գործածել :

287. Թագադիր սպեսը ինչ պատուոյ զգեստներ ունէր :

Թագադիր սպեսին համար կ'ըսէ Խորենացի, որ Վաղարշակ թոյլ տուաւ արքունեաց ու թագաւորին պալատին մէջ պտըտելու ատեն իրեք կարգ մարգրտով շարած վարսակալ դնել գլուխը՝ առանց ոակով և արծաթով զարդարելու : Բայց Արտաշէս ի իր Սմբատ զայեկին՝ որ նաև թագադիր սպեսը էր, ուզելով մէկ չնորհք մը ընել, հրաման տուաւ որ բայց՝ի ականջին երկու օղերէն և կարմիր կօշկէն ուրիշ ամէն բանը թագաւորին երկրորդին պէս գործածէ :

Ինչպէս որ թագաւորին համար ըսինք, նոյնպէս նաև ուրիշ ամէն մեծամեծները յատկ զգեստներ կը հագնէին, վրայէն պատմուճան՝ որ ինչուան ծունկերը կը հասնէր, տակէն վարտիք խորշ խորշ ծալլած, մէջքը գօտի ու վրայէն սուր կախած :

288. Նախարարները ինչ զգեստ կը հագնէին :

Նախարարներուն զգեստին վրայօք մասնաւոր տեղեկութիւն մը չունինք խորենացիէն. բայց Եղիշէ Վասակ Սիւնիին համար, որ մարզպանաց առեն Հայաստանը

կը կառավարէր, կ'ըսէ թէ վարսակալ կը գործածէր, գլուխը ոսկեթել խոյր. մէջքը ոսկիէ գօտի մարգրտաւ և գոհարներով զարդարած, ականջը օղ, վիզը գումարտակ (կերտանըզդ), կռնակը սամոյր:

289. Պրոկոպիոս Յոյն պատմիչը ինչպէս կը ստորագրէ Հայոց նախարարներուն զգեստը:

Պրոկոպիոս միտք Հայոց նախարարներուն զգեստները խիստ գովելով, կ'ըսէ թէ կը հագնէին բրդէ քղամիդ Ծիրանեգոյն ոսկեթել զգեստ, որոյ ծայրը ոսկիէ կոճակ ագամանդով զարդարած, ոսկիյ կախուած էր ոսկիէ շղթայով իրեք պատուական յակինթ քար: Պարեգօտնին՝ մետաքսէ ծալք ծալք չինուած ու ոսկւով բանած. և կարմիր առնապաններ (Թօզլուգ), որոնք միայն Ցունաց կայսրը և Պարսից Թագաւորը կը գործածէին:

290. Ուրիշ ինչ ազգային սովորութիւններ կը յիշուին մեր պատմիչներուն մէջ:

Ա. Երբոր մէկը իշխանութեան հասնէր, սովորութիւն կար որ վտառար մատնի կուտային:

Բ. Կը յիշուի Թագրը կամ հրովարտակը մատնիով կնքելը, որոյ վրայ փորած կ'ըլլար գրողին անունը, և կնիքը կ'ըսուէր վարազագրոշմն:

Գ. Խորենացին կը դնէ թէ Թագաւորին ծնեալոյ օրը, Թագաւորը պալատը մտնելու առեն սուակ կը սիրէին, իսկ Թա-

գուհտոյն հարանութեան սենեկին մէջ մարգարիտ կը ցանէին, և թագուհտոյն ծիրանի կը հագցընէին և գլուխը թագ կը դնէին: Թէպէտ և մանաւոր յիշատակութիւն չը կայ, բայց ասկէց յայտնի կ'երևի թէ նաև ժողովրդեան մէջ ալ սովորութիւն կար Հարանիքի օր սուակ սփռել, որ ինչուան հիմա Ճնացած է մեր ազգին մէջ:

Դ. Իբրև տխրութեան կամ սգոյ նշան, կար նաև մեր ազգին մէջ օձիքը և զգեստին պատռելու սովորութիւնը:

Ե. Պատանի սգոց գլուխը կը գերծէին և մխայն ցցունք (փէրչէմ) ու գէս կը թողուին. իսկ երբոր մեծնային երկայն մազ կը թողուին:

Զ. Եկեղեցականք ազատ էին տէրութեան ամէն տեսակ տուրքերէն, ու երբոր թագաւոր մը կամ իշխան մը բանութեամբ Հարկի տակ կը ձգէր, իրաւունք ունէին դէմ բողոքելու: Այս սովորութիւնը կար նաև կաթողիկոսութեան աեղը, որ քուրմերը և անոնց երկիրները ազատ էին տէրութեան Հարկէն:

291. Մեր ազգին մէջ գերի ծախելու սովորութիւնը կա՞ր թէ չէ:

Ոչ երբէք մեր մէջ մուած է հիւսիսային ազգաց այս վայրենի ու անգութ սովորութիւնը. մանաւանդ թէ պատերազմի մէջ ձեռք ընկած գերիներն ալ ազատաբար կ'ապրէին Հայաստանի մէջ, և կամաց կամաց իրենք ալ ազգային իրաւունք կը ժանգէին:

292. Ագպային ինչ հանդիսաւոր տօներ կային։

Կաթողիկութեան առեն տարեգլխին՝ թագաւորը բոլոր մեծամեծներովը ու խաւսն քաղմութեամբ ժողովրդեան մեծ հանդէսաւոր կ'երթար, ամանորեայ տօնը՝ նոր տարւոյն և նոր պատուհներուն համար՝ Քաղրևանդայ Բազուան պեղին մէջ կատարելու, ուր էր Մաժան քրմապետին վերջին Տիզրանայ եղբօրը պերեզմանը, որոյ վրայ շինուած էր Աբրահագայ վանատրի բագին մը, որոյ գոհերէն ամէն անցնող գարձողները կը վայելէին։ Ատոր համար էր որ վանատուր անունը կը տրուէր։

Ասյա տօնը վաղարշ թագաւորը հաստատեց, որ եռքը քրիստոնէութեան առեն ալ կը կատարուէր; և թագաւորը մեծամեծներով և ժողովրդով կ'երթար Աբրահագայ բագնին տեղ շինած Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին, Յովհաննու Կարապետի և Ս. Թանապինեայ տօնը կատարելու համար, որոց նշխարները հոն ամփոփած էին։

293. Բայց ասկէ ուրիշ ինչ հանդիսաւոր տօներ կային։

Բայց ասկէ թագաւորը տարին չաւանգամ մեծամեծներով ու ժողովրդով կ'երթար Աշտիշատ քաղքին Վահէվահեան մեհեանը։ Ասյա մեհեանը սուրբն Գրիգոր Լուսաւորիչ կործանեց, և անոր տեղ շինեց պզտիկ եկեղեցի կամ մատուռ մը, որ

*ըսուեցաւ Ա.Հոգիսարհամատուռն բոլոր Հայաստանի մէջ առաջին մատուռը ըլլալուն, որոյ մէջ դրաւ սրբոյն Յովհաննու և Ս.Թադեոսի նախնեաց նշխարքներէն: Եւ թագաւորը քրիստոնէութեան առեն նոյնպէս տարին եօթը անգամ մեծամեծներով, եպիսկոպոսներով, քահանաներով ու ժողովրդով կ'երթար այս եկեղեցին, և հոն կաթողիկոսը մեծահանդէս պատարագ կը մատուցանէր թագաւորին ու ժողովրդեան առաջնորդութեամբը:*

*Ա.յս եկեղեցւոյն յիշատակն է որ ինձ չուան հիմա կը կատարենք զատկէն երկու շաբաթ ետև Ա.Հոգիսարհատրաւն կիրակի առաւօտ ազգային տօնախմբութեամբ:*

294. *Թագաւորին թագադրութեան օրը ինչ հանդէս կ'ընէին:*

*Թէպէտ և մասնաւոր յիշատակութիւն մը չկայ թէ ինչ հանդէսներ կ'ընէին, բայց այս յայտնի է թէ մեծ ուրախութեան մէջ կ'ըլլար բոլոր Հայաստան: Իսկ քրիստոնէութեան առեն քառասուն յիսուն եպիսկոպոսի չափ կը ժողվէին ու մեծ հանդիսով և տօնախմբութեամբ կ'օծէին թագաւորը, և կը նստեցընէին գինքը թագաւորական անգին ու պատուական զահին վրայ, և կաթողիկոսն ու բոլոր իշխանները անոր առջևը հաւատարմութեան և միամիտ ծառայութեան համար երդում կ'ընէին: — Բազրատունեաց առեն մեր թագաւորը երբեմն թագը ձունաց կայսրէն և կամ ամի-*

բաղեաւէն կ'առնուր։ Երբոր մէկը թագաւոր նատէր մէկէն իրեն դէմքը կը նկարէին։

295. Թագաւորական թագը մուր կը պահէր։

Թագաւորական զանձին մէջ, և անով կը պահակէին թագաւորները։ Կը յիշէ Կիրակոս որ մեծին Յովհաննու փառաւոր և հրաշալի թագը՝ որոյ նման ուրիշ թագաւորներ չունէին, և անշուշտ անով կը պահակուէին օծման օրը իրմէ վերջի թագաւորները, Հայաստանի խեղճութեանը առեն վրաց երկիրը կը պահէր տեղոյն ամրութեանը համար, ուր ինչուան Կիրակոսին առեն կեցեր էր, և ընկեր էր վրաց թագաւորներուն։ Այս թագը որ կ'երևի թէ անգիտա և մեծամեծ գոհարներով զարդարած պիտի ըլլայ, ձգ. գարուն մէջ վրաց Ռուզուգան թագուհին ուրիշ պատուական ընծաներով Թաթարաց խանին տուաւ։

296. Թագաւորին մահուանը համար ինչ հանդէսներ կ'ընէին հեթանոսութեան առեն։

Խորենացին Աւրտաշէս Բին համար կը պատմէ թէ երբոր մեռաւ, իր սիրելի կանանցմէ, հարճերէն և մուերիմ ծառաներէն շատը իրենք զիրենք սպաննեցին։ Դրեր էին մարմինը ոսկիէ դագաղի մէջ, բեհեզէ անկողնի վրայ պառկեցուցած, ու երկայն ոսկեթել զգեստ մը հագցուցած, գլուխը թագ, և իրեն ոսկի գէնքը դագաղին աջին դրած, և դագաղին չորս կողմը

*իրեն որդիքը և ազգականները. անոնցմէ եաքը զինուորական կարգի պաշտօնեայք, վերջը նախարարները իրենց գունդերովը՝ բոլորն ալ զէնք հագած: Դադարին առջևէն պղնձէ փող կը զարնէին, և եաևէն սև զգեստ հագած լալկան աղջիկներ, անոնց եաևէն ալ անթիւ ժողովուրդ, և այսպիսի հանդէսով տարին ինչուան գերեզմանը, և հոն շատերը թագաւորին սիրոյն համար իրենք զիրենք սպաննեցին:*

297. *Քրիստոնէութեան ժամանակ երբոր Տրդատ թագաւորը մեռաւ, թագմանը ինչ հանդէս ըրին:*

*Երբոր Տրդատ մեռաւ, մարմինը արծաթապատ թագադի մէջ դրին, որուն լծուած էին ոսկի սանձով չորս ձորիներ, և դագաղը տեսակ տեսակ զգեստներով զարդարած. անոր քովէն թագաւորին որդիքը, ազգականները ու բարեկամները, և զինուորները բոլոր զէնք հագած երկու կարգ կ'երթային: Դագաղին առջևէն աստուածային երգեր ու խունկ կը ծխուէր, եաևէն փող ու տաւիղ և լալկան կիներ, անոնց եաևէն ալ անթիւ բազմութիւն: Ասանկ հանդիսով ինչուան Թորդան տարին, ու հոն կճեայ տապանի մէջ դրին և թաղեցին:*

*Ասով յայտնի կ'իմացուի թէ քրիստոնէութեան առեն այն ինքնակամ սպանումները չէին ըլլար, և թէ դագաղին առջևէն աստուածային երգեր, սաղմոսներ կ'ըլլէին և խունկեր կը ծխուէին, ու կաթուղի-*

կոան ալ ներկայ կ'ըլլար սպալի հանդէսին քոլոր իր պղերովը մէկտեղ։ Բայց սոնցմէ առվօրութիւն կար թագաւորներուն ու մեծամեծներուն հետ մէկտեղ ոսկի արծաթ և ուրիշ հարուստ բաներ թաղելու, ու զեբեզմանին վրայ մահարձաններ ու կոթողներ կանգնելու, ու վառաւոր կճեայ շիրիմներ չինելու։

298. Ս.ըշակունի թագաւորները ո՞ւր կը թաղուէին։

Ս.ըշակունի թագաւորները կը թաղուէին Բարձր Հայոց Դարանաղի գաւառին Անի կամ Կամախ ըսուած ամուր բերդին մէջ, ուր կը պահուէր նաև թագաւորական գանձը։ Ուստի նախատինք և անարգանք կը համարուէր երբոր թագաւոր մը հոս չթաղուէր. ինչպէս եղաւ Տիրան Ե. թագաւորին որ թաղուեցաւ Կուաշ։ Տապուհ Ե. երբոր տիրեց Կամախին, թալլեց մէջի գանձը, ու թագաւորներուն ոսկորներն ալ գեբեզմաններէն հանեց, Բայ'ի Սանատրուկ թագաւորին ոսկորներէն, որոյ գերեզմանը խիստ ահագին ու ամուր ըլլալուն համար չկրցաւ քակել։

299. Եկեղեցականները ինչ հանդէսով կը թաղուէին։

Եկեղեցականներուն թաղման մէջ մասնաւոր կերպով կը յիշուի կանթեղներ ու մոմեղէններ տանելը, բայ'ի մէկալ սովորական արարողութիւններէն, որ են մեռելին առջևէն խառնիկ ծխել, երգել, և այլն։

300. Մեր ազգին մէջ մեռելները զմլուելու սովորութիւն կայ թէ չէ։

Մեռելները զմռսելու սովորութիւնը կայ նաև մեր ազգին մէջ ալ, բայց Եգիպտացւոց պէս հասարակաց չէր, հապա միայն երբոր մեռելը հեռու տեղ տանել կ'ուզէին այն ատեն կը զմռսէին ու կը խնկէին, ինչպէս Հայկ Բելայ մարմինը երաւ ու խրկեց Հարք գաւառը։

301. Մեռելին վրայ մասնաւոր ինչ սուգ կ'ընէին։

Երբոր մէկը կը մեռնէր բոլոր ընտանեքը ու սիրելիները սև զգեստ կը հագնէին, և երկայն ատեն սուգի մէջ կը կենային, որ երբեմն ինչուան տարի մը կը քշէր։ Իսկ կռապաշտութեան ատեն նաև չարաչար իրենք զիրենք կը ծեծէին, մազերնին կը փետտէին, կը ճանկռտէին երեսնին, ճակատնին ու կուրծքերնին, և ուրիշ ատոնց նման յուսահատութեան գործեր կ'ընէին, որոնք մեծն Ներսէս բոլոր արգիլեց, քրիստոնէութեան դէմ գործեր ըլլալուն համար։

## Եկեղեցական սովորութիւններ.

302. Եկեղեցական ինչ սովորութիւն կայ մեր ազգին կաթողիկոսին վերաբերեալ։

Նախ Ս. Գրիգոր Լուսաւորչէն սկսեալ ինչուան մեծին Ներսէսի ատեն Հայոց կաթողիկոսները կեսարիա կ'օծուէին, որպէս

*դի Թադէոս առաքելոյն յաջորդութիւնը Ճնաց : Վասն դի Թադէոսի առաքելոյն Հայաստան գալէն ու քրիստոնէութիւնը քարոզելէն եաև Թէպէտ և ատիս անդին Հայաստանի մէջ կը գտնուէին քրիստոնեաներ ինչուան ազգին լուսաւորութեանը առեն, բայց կաթողիկոսութեան յաջորդութիւնը դարեր էր եպիսկոպոս չըլլալուն համար : Ուստի Ս. Գրիգոր Լուսաւորիչ և իրեն յաջորդները Թադէոս առաքելոյն յաջորդութիւնը պահելու համար կ'ետարրիա կ'երթային, ուր Թադէոս առաքեալ Հայաստան գալու առեն իր Թէոդիկոս աշկերտը եպիսկոպոս ձեռնադրեր էր ու հոն թողեր* : Մեծն Ներսէս եաքինը եղաւ որ կետարրիա օծուեցաւ, և իրմէ եաքը այս սովորութիւնը վերջացաւ :*

*Բ. Կաթողիկոսը պետքը քօղ կը ձգէր որով սովորութիւնը ինչուան ԺՍ. դարուն մէջ կը յիշուի. բայց յայտնի չգիտցուիր թէ արդեօք Ս. Լուսաւորչէն սկսած է թէ եաքէն. սակայն խիստ հին սովորութիւն է որ Ցոյներուն մէջ ալ կար : Բազրատունեաց վերջի ժամանակներն ալ կաթողիկոսաց պետքանին քօղ դնելը յայտնի է անկէց, որ երբոր ուզէին կաթողիկոս մը աթոռէն վար ձգել, կ'առնուին իրեն քօղն ու գաւազանը,*

* Թերևս այն Թէոդիկեան է որուն նկագրութիւնը գտած է Ղուկաս աւետարանիչ Աւետարանին ու գործք առաքելոցը :

և անոր հակառակ երբոր ուզէին մէկը կաթողիկոսութեան պատուոյն հասցընել, քօղ ու գաւազան կը խաւրէին. այս սովորութիւնը շատ տեղ կը յիշեն մեր վերջի մատենագիրները: Իսկ մեր ազգին մէջ մերթ (եպիսկոպոսական թագ) գործածելու սովորութիւնը ծ. դարուն մէջ Կիլիկեցւոց ատեն մտաւ Լատինացւոցմէ առնլով, և անկէց ետքը եղած մատենագիրներուն թագ և խոյր ըսածը կաթողիկոսին զգեստներուն մէջ մերթն է, զոր Հռոմայ Քահանայապետներ ալ երբեմն պալիոնմի* հետ ընծայեին մեր Կիլիկիա նստող կաթողիկոսներուն:

Գ. Կաթողիկոսը միշտ 12 եպիսկոպոս կ'ունենար իր քովը իրեն խորհրդական ու ձեռնտու. կ'ունենար նաև վարդապետներ ու քահանաներ. որոց թիւը կ'որոշէ Մատ-

* Պալիոնը (լ. Pallium) ազգի եմիփորան մի է զոր կը գործածեն լատինացիք, և կը կախուի վզէն դէպի առջևը ու ետևը: Սորա նիւթը կը հանեն երկու ոչխարի բուրդէն, զոր երկու սարկաւագք կը գարմանեն ինչուան իրենց բուրդերը խուզելու ատեն, և իրենց ձեռքովը կը խուզեն: Կարելէն ու անկէց պալիոմ չինելէն ետև կը գնեն սրբոյն Պետրոսի և Պօղոսի նախատօնակին իրիկուանը առնոց գերեզմանին վրայ, և բոլոր գիշերը հոն կը կենայ, ու երկրորդ օրը խորանին վրայ կ'օրհնեն: Պալիոնը արքեպիսկոպոսութեան նշան է, և մեծ պատիւ է երբոր Հռոմայ պապը մէկուն խաւրէ, և ըսել է թէ վինքը կը հաստատէ իր իրաւանցը մէջ:

թէոս պատմիչը, ըսելով թէ 12 եպիսկոպոս, և վարդապետ միշտ կը գտնուէր կաթողիկոսին քով, և 60 կրօնաւոր քահանայ և 500 աշխարհական, ուստի պի կաթողիկոսը պրեթէ թագաւորի պատիւ և իշխանութիւն ունէր, մանաւանդ անիշխանութեան ժամանակ՝ իբրև Ս.զգապետ:

Դ. Ոչ ոք կրնար նատել թէ՛ եկեղեցական ըլլայ թէ աշխարհական, կաթողիկոսին նստած տեղը ուր ալ որ երթար. և այս բանս կ'ընէին իրեն յարգութիւնը պահելու համար:

Ե. Կաթողիկոսը ուր որ երթար՝ մանդ հանդիսաւոր կերպով, միշտ դիմացը խաչ ու հայրապետական գաւազան կը տաբեր: Կաթողիկոսին քովը կը պահուէր միշտ Լուսաւորչին աջը:

Զ. Սովորութիւն կար ամէն կաթողիկոսներուն ձէռքը քաշելու, և կարգաւ եկեղեցւոյ պատին վրայ կախելու:

Է. Երբոր կաթողիկոսը հեռուկեկ ճամբորդութիւն ընէր, հետը հարիւրաւոր ձիաւորներ, եպիսկոպոսներ, քահանաներ կ'երթային, և միշտ ճերմակ Լուսոյ վրայ կը հեծնէր ոսկեզօծ թամբով զարդարած, և ոչ երբէք ձիոյ վրայ, ինչպէս եպիսկոպոսներն ալ:

303. Կաթողիկոսը որ գարմէն կ'ընտրէր: Կաթողիկոսը Ս.Էջմիածնայ առեն Ս. Գրիգոր Լուսաւորչին յետէն կ'ընտրէր. և այս սովորութիւնը տևեց ինչուան առքն Սա-

հակ, և անկէց եւթը վերջացաւ, ինչպէս ինքն ալ սուրբն Սահակ աստուածային յայտնութեամբ գուշակեր էր: Ա.նոր հաստատ ալ եկեղեցական բարեկարգութիւնները տակն ու վրայ եղան. և ինչպէս կ'ըսէ Մեսրոպ պատմիչ, Հայոց աշխարհին աւերմանը պատճառ եղաւ մէյմը Գրիգոր Լուսաւորչին ցեղէն կաթողիկոս չըլլալը, մէյմ'ալ Մամիկոնեան կործճ ու տիրապէր ազգէն զօրավար չըլլալը:

304. Ի՞նչպէս կ'ընտրէին կաթողիկոսը:

Կը ժողովէին արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, վանահայրներ, և վարդապետներ ու խորհրդով և քուէարկութեամբ կ'ընտրէին երկու կամ երեք հոգի, ու եւթը թագաւորին կ'առաջարկէին, որ ժողովքով անոնցմէ մէկը կ'ընտրէր, ու օծման օրը ծունկ դնելով հայրապետական մատանին նորընտիր կաթողիկոսին մատը կ'անցընէր, ու ձեռքը կը պագնէր:

305. Երկոտասաներորդ դարուն մէջ կաթողիկոսին ընտրութեանը համար ինչ օրէնք դրուեցաւ:

Երկոտասաներորդ դարուն մէջ Ս.ղթա. մարայ Դաւիթ կաթողիկոսին հերձուածէն ետև նոր կանոն մը սահման եցաւ, այսինքն թէ առանց հաւանութեան Բ.ջնոյ, Հաղբատու, Եւտաթէու կամ Տաթևու եպիսկոպոսաց վանքերուն, և Ս.րատոս եպիսկոպոսին հաւանութեանը կաթողիկոս չ'նստի:

306. Կաթողիկոսը որչափ տեղ կ'իշխէր։ Մեր կաթողիկոսը առջի բերան կ'իշխէր չէ թէ միայն Հայոց վրայ, հապա նաև Վրաց ու Աղուանից, և անոնց վրայ կը դնէր մէյմէկ արքեպիսկոպոս իր իշխանութեան տակ։ Վրթ վեցերորդ դարուն իրենց Կիւրիոն արքեպիսկոպոսին ձեռքովը զատուեցան Հայերէն Քաղկեդոնի տուրբ ժողովը ընդունելով։ Իսկ Աղուանք ինչուան տասներորդ դարը մեր կաթողիկոսաց իշխանութեան տակն էին, բայց անկէ ետքը առեն առեն իրենք ալ զատուեցան։ Սակայն ցոյնք միշտ Հայու կաթողիկոսին իշխանութեան տակ կը համարէին Վրթն ու Աղուանքը։

307. Ի՞նչ կալուածներ ունէր կաթողիկոսը։

Տրդատ երբոր քրիստոնեայ եղաւ շատ տեղեր ու գեղեր կաթողիկոսարանին կալուած թողուց։ Բուզանդ կը յիշէ մեծին Ներսէսի տաեն 15 զաւառ կաթողիկոսարանին կալուած, որոնցմէ գլխաւորներն էին Աբարատ, Դարանաղի, Եկեղեաց, Տարօն, Բգնունիք, Ծովիք։ Յովհան կաթողիկոս կը յիշէ Աբրաշատը, Կաւակերտը, Աբամօնք գեղը, և Հռոմոց մարզ ըսուածը։ Մատթէոս պատմիչ կը յիշէ 500 անուանի գեղ որ Հայոց թագաւորներէն տրուած էին կաթողիկոսարանին։

308. Ո՞ւր էր կաթողիկոսարանը։

Գրիգոր Լուսաւորչին տաեններէն սկսեալ մին-

*Յուան Ա. Քրիստոնեաց տէրութեան վերջը կաթողիկոսարանն էր Վաղարշապատ քաղքին մէջ։ Մարզպանաց ատեն եղաւ Դուին քաղաքը, ուսկից Դաւիթ առաջին կաթողիկոսին ատեն փոխադրեցաւ մինչև իր մահը Ա. բաժնա գեղին մէջ։ Պետրոս կաթողիկոսին ատեն Վաղարշապատին Զորոյ վանքը, եւ ետքը Սերաստիա քաղաքը. Բագրատունեաց ատեն Անի քաղաքը, իսկ Կիլիկեցւոց ատեն Ծովք գղեակը ու ետքը Հռոմկլայ և վերջը Սիս։*

309. *Կաթողիկոսական աթոռը քանի՛ ճիւղ բաժնուեցաւ։*

*Ս. Գրիգոր Լուսաւորչէն սկսեալ ինչուան Զ դարուն վերջերը միշտ մէկ կաթողիկոս կ՚իշխէր Հայաստանի վրայ։ Զ դարուն Յոյնք ուրիշ հակաաւակաթոռ կաթողիկոս մը դրին Թէոդոսուպօլիս կամ կարնոյ քաղքին մէջ։ Ժ.Ս. դարուն չորս բաժնուեցաւ կաթողիկոսական աթոռը, Եգիպտոս, Հոնի (որ Միջագետաց մէջ կ՚ըլնի), Անի և Մարաշ։ Ասոնք ամէնքն ալ եպիսկոպոսներ կը ձեռնադրէին, ու քահանայութեան աստիճանը կ՚օրհնէին։ Ինչ ատենէն վեց եղաւ կաթողիկոսներուն թիւը. Եգիպտոս երկու կաթողիկոս նստեցաւ, մէյմ՚ալ Թաւբլոսը։ Բայց շատ չանցաւ երբոր Տէր Բարսեղ կաթողիկոս նստաւ զամէնքն ալ նուաճեց, և ինքը եղաւ միապետ կաթողիկոս։ Եւ սակայն Ժ.Ս. դարուն վերջերը դարձեալ ի-*

*ետք ճիշդ բաժնուեցաւ, Սևաստ, Հռոմկլա և Սղթամար՝ ուր չատոնց սկսած էր. և ան- կէց ինչուան հիմա մնացած են իրեք կա- թողիկոսական աթոռներ. մէյմը Էջմիա- ծին որ բուն Ս. Գրիգոր Լուսաւորչի յա- ջորդութիւնն է, և մէկալնոնցմէ վեր է իր իշխանութիւնը, մէկալը Սիս Կիլիկիոյ մէջ, աս ալ յաջորդութիւն է Լուսաւորչայ, որ ժե դարուն մէջ երկու բաժնուեցաւ, մէկն Էջմիածին, մէկալն հոս. երրորդն է Սղ- թամար: Սակը իրենք ալ ամենևին իրար- մէ կախումն չունին, և ինքնագլուխ կը կա- ռավարեն:*

*310. Կաթողիկոսները ինչ կնիք կը դը- ծածէին:*

*Սովորականն էր մէջ տեղը Քրիստոսի դէմքը, վրան գրած Յիսուս Քրիստոս, ու չորս կողմը Շնորհիւ Տեառն կաթողիկոս ա- մենայն Հայոց: Սակայն է ըստ մեծի մասին ամէն կաթողիկոսներուն կնիքը, կամ քիչ տարբերութիւն ունին: Կաթողիկոսը նո- ր կ'երևի թէ միշտ կարմիր գրով կ'ընէր, ինչպէս որ յայտնի կը յիշէ Դ. Կոստանդին*

կաթողիկոսը իր թղթերուն մէկուն վերջը ըսելով « Ձեռնադրեցաք մերով առաքական կարմիր ձեռնադրուվս Թեի յունվարի ՝ի թուին ՊԻԳ. (1374), Կոստանդին Հնորհօքն Աստուծոյ կաթողիկոս ամենայն Հայոց » :

311. Կաթողիկոսը ինչ իրաւունք և անուններ ունի :

Կաթողիկոսը որ կ'ըսուէր նաև հայրապետ, պատրիարգ, եպիսկոպոսապետ, քահանայապետ, ամէն արքեպիսկոպոսներէն ու մետրապոլիտներէն վեր է, ուզած ատենը կրնայ արքեպիսկոպոս ու եպիսկոպոս ձեռնադրել, ու ինքնակամ օծման իւղը օրհնել : Իրեն սեպհական է հինգ կարգ եմիփորոն առնուլը :

312. Ո՞վ եղաւ մեր ազգին մէջ եկեղեցական բաներու կարգ կանոն դնողը :

Նախ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, որ Հայաստանը լուսաւորելէն ետև եկեղեցւոյ մէջ շատ բարեկարգութիւններ ըրաւ. 400էն աւելի եպիսկոպոս ձեռնադրեց Հայաստանի զանազան գաւառներուն ու քաղաքներուն համար, և կարգ դրաւ որ իրեն քովը 36 եպիսկոպոս կենան, 18 ալ կողմը, 18 ձախակողմը : Լուսաւորչէն ետև երեսելի եղաւ մեծն Ներսէս, որոյ ատեն շատ բարեկարգութիւն գոտաւ եկեղեցին. եպիսկոպոսներուն թիւը աւելի շատցուց, որ 500ը կ'անցնէր : Իսկ իրեն համար 12 եպիսկոպոս աթոռակից ու խոր-

հրդակից ընտրեց, որ կը կենայինն միշտ Հայրապետանոցին մէջ, և այս առաքութիւնը ինչուան հիմա կը տևէ: Բայց ասկէ յետև Ներսէս ցանկացաւ առնուազն եկեղեցական գործերը ցաս բաժնեց, ցաս զատ հրեշտակաց թուովը, այսինքն պատրիարգ, արքեպիսկոպոս, վարդապետ, եպիսկոպոս, քահանայ, սարկաւագ, կրաւսարկաւագ, վերծանօղ և սաղմոսերգու. այսպէս կը դնէ Յովհաննէս կաթողիկոս: Իսկ Վարդան՝ վերծանողին և սաղմոսերգուին տեղ կը դնէ դպիր, կրօնաւոր և ժողովուրդ, սկիզբն ալ արքեպիսկոպոսը դուրս կը թողու: Հայաստանի մէջ եղած հայրապետը կ'ըսուէր պատրիարգ, Վրաց և Աղուանից վրայ կը դրուէր արքեպիսկոպոս. Սիւնեաց աշխարհին, Մելիտինոյ, Մարտիրոսաց քաղքին ու Սեբաստիոյ մէջ վարդապետ. իսկ Հայաստանի զանազան սահմանները ուն մէջ եպիսկոպոսներ ու քորեպիսկոպոսներ:

313. Ի՞նչ իշխանութիւն ունի արքեպիսկոպոսը, և ինչ պատիւ կը հատնի:

Արքեպիսկոպոսը՝ որ քիչ կար Հայաստանի մէջ, իշխանութիւն ունի մետրապօլիտ ձեռնադրելու և դրոշմի իւղ օրհնելու, և իրեք արքեպիսկոպոս մէկտեղ կըրնան պատրիարգ մը ձեռնադրել: Իրենց եկեղեցական գործը ինչ որ կը յիշուի Մխիթար Գօշին գատաստանագրոց մէջ, է վիլոն, ու անոր վրայ եամխորոն չորս կարգ:

314. Մետրապոլիտները ինչ զգեստ կը հագնէին:

Մետրապոլիտը՝ որ կը նշանակէ Յունաց բառով մայրաքաղաքացի, վասն զի մայրաքաղաքներու եպիսկոպոսներու աթեմը կը հաստատէր. բայց եմիփորոնը իրեք կարգ է: Իրեն իշխանութիւնն է եպիսկոպոս ձեռնադրել, ու դրոշմի եղը օրհնել, և իրեք մետրապոլիտ կրնան իրենց արքեպիսկոպոս ձեռնադրել:

315. Եպիսկոպոսները ինչ իշխանութիւն ունէին և ինչ զգեստ կը հագնէին:

Եպիսկոպոսը՝ որ ըսել է այցելու, մետրապոլիտներուն աթեմը ունի, բայց եմիփորոնը երկու կարգ. իշխանութիւն ունի սեղան, աւազան ու օծման եղը օրհնելու և քահանայ ձեռնադրելու. և իրեք եպիսկոպոս կրնան մէկտեղ իրենց մետրապոլիտ ձեռնադրել:

Եպիսկոպոսներուն պարտքն էր տարին իրեք անգամ այցելութեան ելլել բոլոր իրենց թեմին մէջ, ինչպէս որ Ս. առաքեալք սահմանած էին, որպէս զի անկարգութիւնները վերցընեն ու բարեկարգութիւնը անխախտ պահեն: Ա.յս սովորութիւնը եաքերը դադրեր էր Հայաստանի խեղճ վիճակին պատճառաւ ու թշնամիներէն ստնակոխ ըլլալուն համար: Ա.նոր համար Կոստանդին կաթողիկոս Ժ.Գ. դարուն իր կանոնական թղթոյն մէջ զանգատ կ'ընէ այս բանիս վերցուելուն վրայ:

316. Քորեպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց վրայ ինչ պիտելիք կան:

Պատի վիճակներուն ու պեղերուն տեսուչը կ'ըսուի քորեպիսկոպոս, որոյ իշխանութենէն ներքեւ եպիսկոպոսներուն իշխանութենէն պզտիկ է: — Քահանային որոշիչ ըզգեստն է երկու ուսին վրայ ուրար կամ փակեղն դնելը, ուր սարկաւագը միայն ձախ ուսին վրայ կրնայ դնել: Քահանան կ'ըսուի նաև երէց, միայն այս է տարբերութիւնը, որ քահանան քաղքի մէջ կ'ըլլայ, իսկ երէցները գեղերու ու ագարակներու մէջ:

## ԳԼՈՒԽ ԺԲ.

## ԱԶԳԱՅԻՆ ՕՐԻՆԱՑ ՈՒ ԴՐԱՄՆԵՐՈՒ ՎՐԱՅ:

### ԺՕԳՈՒԱԾ Ա.

### Օրէնք.

317. Վաղարշակ ինչ օրէնքներ դրաւ: — Վաղարշակ բաց ՚ի այլևայլ օրէնքներէն ու բարեկարգութիւններէն որով Հայաստանը կարգի կանոնի դրաւ, հրամմեց որ քաղաքացիները միշտ գեղացիներէն վեր սեպուին. որոշեց խորհուրդ ընելու և զբօսանքի տեղները, և իրեն համար երկու

աղդարար դրաւ , որ մէկը միշտ արդարու-
թիւն և աղէկ բան տուն տայ , ու մէկալը
անիրաւութենէ և ուրիշ գէշ բաներէ զգու-
շացընէ : Բայց ատոնցմէ հաստատուն օրէնք
մ՚ալ դրաւ Թագաւորաց՝ որդւոց որդի յա-
ջորդութեանը համար , այսինքն թէ Թագա-
ւորին անդրանիկը միայն կենայ Թագաւո-
րին քով Ս.յրարատ նահանգը , իսկ մէկալ
մանչ ու աղջիկ զաւակները բոլոր Հայաս-
նից գաւառը բնակին՝ որ Տարօնի մօտ կ՚ըլ-
նի , և այն գաւառը իրենց ժառանգութիւն
տուաւ : Ս.յս սովորութիւնը ինչուան Ս.ր-
շակունեաց տէրութեան վերցուիլը տևեց ,
և Ս.րտաւազդ Բ Հայոցենից գաւառին
վրայ աւելցուց Ս.ղիովիտ ու Ս.ռբերանի
գաւառներն ալ : Բայց եաթէն այնչափ բազ-
մացան արքայորդիքը , որ Ս. Տիրանայ ա-
տենը խնդրեցին որ իրենց տեղը ընդարձա-
կէ , բայց չկատարեց :

318 . Յովհաննէս Թագաւորը իւնչ օրէնք-
ներ հաստատեց :

Յովհաննէս Թագաւորը Բագրատունեաց
տէրութեան ատենը մանաւոր օրինաց
գիրք մը չինեց , որով կը վարուէին Բագ-
րատունեաց ժամանակը . նոյն օրէնքները
Անի քաղքէն իւլով գացած գաղթական-
ները հետերնին տարին , ու անոնցմով կը
վարուէին , որոց մէջ կը պատուիրէ կի-
րակի օր գատաստան չընել , տուրք չառ-
նուլ , պարտապանէն գրաւ չպահանջել ,
և այլն :

319. Մխիթար Գոշի Դատաստանագիրքը ձրի՞ն է։

Բայց ի ցուվհաննէս թագաւորին Օրինաց գրքէն ունինք նաև Մխիթար Գոշին Դատաստանագիրքը, որոյ մէջ թագաւորաց վրայ խօսելու առեն կը դնէ, թէ երբոր թագաւորը մեռնի, անոր կը յաջորդէ իրեն եղբայրը և ոչ երէ անդրանիկ որդին. և թէ որ եղբայր չունենայ, այն առեն որդին կը յաջորդէ։ Թէ որ թագաւորին որդւոյն և աղջկանը որդի ըլայ, որդւոյն որդին պէտք է որ թագաւորէ և ոչ աղջկանը. բայց թէ որ ոչ եղբայր, ոչ որդի ունենայ, այն առեն թագը կ'առնու աղջիկը, ու կարգուելով կրնայ իր թագը էրկանը տալ թէ որ ուզէ. բայց աղջկան մահուընէն ետև օտար կը հաւատարուին իր զաւկընները։ Իսկ թէ որ թագաւորը ամենևին ժառանգ չունենայ, այն առեն կրնայ թագը տալ իր մօտիկ ազգականներէն մէկուն։ Ասով կ'երևի թէ Բագրատունեաց թագաւորները Աբշակունեաց պէս որդւոց որդի չէին թագաւորեր։ Բայց ասկէ դրած է Մխիթար Գոշին մէջ որ թագաւորը առանց կաթողիկոսին հրամանին կամ հաւանութեան չկարենայ թագաւորել։ Չկարենան մեծամեծ իշխանները նաև թագաւորին առջև, բայց եթէ իրեն հրամանովը. իսկ կաթողիկոսը կրնայ ինքնիշխան նաև։ Թագաւորին հետ չկրնար մէկը սեղան նստիլ բայց ի կաթողիկոսէն, իսկ թագաւորին հաւանու-

թեամբը կրնան ուրիշներն ալ նատիլ :

Կան նաև Մխիթար Գոշին մէջ ուրիշ կարգեր և օրէնքներ տէրտրեան նկատողութեան վրայ, և այլն, որոնք երկար կ'ըլլայ հոս յիշել :

## ՅՕԳՈՒԱԾ Բ.

### Դրամք.

320. Հայերը հին ատեն ինչ դրամներ կը գործածէին :

Թէպէտ և չենք կրնար այս բանիս վրայ ուղիղ դատաստան ընել խիստ հին դրամներ ձեռքնիս չունենալով, մանաւանդ Հայկազանց ատենէն մնացած, բայց չատ հաւանական կ'երևայ որ մեր թագաւորները թէ՛ Հայկազանց ատեն ըլլայ թէ Արշակունեաց և թէ Բագրատունեաց ժամանակի իրենց անունովը ստակ կը կոխէին. վասն զի այս սովորութիւնը ամէն տէրութեանց մէջ կայ, թէպէտ և պզտիկ ըլլայ : Ք. որ Արտաշէս Ա. Պարկաստանի մէջ իր սահմանէն դուրս իր անունովը ստակ կոխեց, ինչպէս որ որոշ կը յիշէ Խորենացին, ուրեմն ևս առաւել իր սահմանին մէջ : գ. որ Բագրատունեացմէ քիչ մը վերջը՝ դրամ կոխելու համար մասնաւոր օրէնքներ դրած է Մխիթար Գոշ, ուր իշխանաց կամ նախարարաց կ'արգիլէ ստակ կոխելը և միայն թագաւորին

*կու տայ այն իշխանութիւնը . ուրեմն ըսել է թէ դրամ կը կոխէին որ այն օրէնքները դրուած են : Բայց այս ալ յայտնի է որ Հայերը այն տէրութեանց հետ որ աւելի վերաբերութիւն ունէին կամ որոնց որ կը հպատակէին , անոնց դրամներն ալ իրենց երկրին մէջ համարձակ կը գործածէին , ինչպէս Յունաց ու Պարսից դրամները Արշակունեաց ժամանակ , Արաբացւոց դրամները Բագրատունեաց առեն :*

321. *Կիլիկեցւոց Լևոն Թագաւորին առնը գտնուած դրամին վրայ ինչ գիտենք :*

*Կ'ըսէ Վարդան թէ Կիլիկիոյ Լևոն Թագաւորին առնը դրամ մը գտնուեցաւ , որոյ վրայ գրած էր հայերէն գրերով Հայկազանց կռապաշտ Թագաւորի մը անունը . և ասով կը հաստատէ թէ կար արդէն Մեսրոպէն առաջ հայոց հին գիր :*

322. *Հիմա աւելի ուր Հայ Թագաւորաց դրամները կը գտնուին :*

*Հիմակուան գտնուած դրամներն են Արտաշէսի , Միջին Տիգրանայ , Արտաւազդայ . Արքարու արշակունի Թագաւորաց դրամներ , վրան Յունարէն գրած * . գըլ-*

* *Յունարէն գրով ու լեզուով գրած ըլլալուն պատճառը այն է . որ Հայերը Արշակունեաց տէրութեան սկիզբները մանաւանդ գիր չունէին , հապա Յունաց գիրը ու անոր հետ մէկտեղ նաև երբեմն լեզուն ալ կը գործածէին , Յունաց հետ շատ վերաբերութիւն ունենալով :*

*խարկնին Պարթևաց պէսպէս կերպարաներ։ Բազբատունեաց ատենի ամենեքին պրամ չկայ, իսկ Ռուբինեանց թագաւորներուն շատ դրամներ կը գտնուին վրան Հայերէն գրած. ինչպէս են Լևոն թագաւորներու դրամներ, Ա. և Բ Հեթում թագաւորներու, Կոստանդնի, Օշնի, և այլն։*

323. *Սպիտակ և կարմիր ըսուած դրամոց վրայ ինչ գիտելիք կան։*

*Երեքտասաներորդ դարէն սպիտակ անունով դրամ կը յիշուի, որ է արծաթ դրամ, ուսկից ելած կը կարծուի հիմակուան մեր աշխարհաբառին մէջ առած բառը։ Կար նաև կարմիր անունով դրամ մը որ ոսկի պէտք է որ ըլլայ, բայց յայտնի չէ թէ ինչ արժէք ունէին այս դրամները։*

324. *Ինչ պատճառաւ է որ հիմա ազգային դրամներ շատ չեն գտնուիր, մանաւանդ Բագրատունեաց, Արշակունեաց ու Հայկազանց թագաւորներու։*

Ա. *Շատոնց՝ի վեր մեր տէրութեան դադրելը, որով ազգային դրամները անգործ մնալով պակսեր են։ բ. Հայաստանի ոտնակոխ ըլլալը և այլևայլ ատեն քաշած թշուառութիւնները, և ուրիշ տէրութեանց հպատակ ըլլալը, և անոնց դրամները գործածելը։ գ. Օսմանեան տէրութեան սովրութիւնը որ Ասիոյ մէջի հին սահմանները ժողվել տալով, կը հալեցընէ ու իր սահմը կոխել կու տայ, որով անշուշտ շատ Հայու սահմաններ ալ փճացած են։*

# ԳԼՈՒԽ ԺԳ.

## ՀԱՅՈՑ ԿՐՕՆՔԻՆ Վ ՐԱՅ։

### ԾՕԳՈՒՄԱԾ Ա.

*Հայոց նախկին կրօնքը մինչև՝ ի քրիստոնեութիւն.*

325. *Չրհեղեղէն առաջ ինչ կրօնք էր Հայաստանի մէջ։*

*Որովհետև Նդամայ բնակութեան տեղը Հայաստանին մէջ էր՝ դրախտին տեղը հոն ըլլալով (§. 8), ուստի յայտնի կ'ե-րևի թէ երկայն աւանդութեամբ առաջնորդութիւնը տևած էր Հայաստանի մէջ. բայց թէ որչափ աւեն, և թէ ետքը ինչ կրօն կը պաշտէին Հայաստանի բնակիչները, յայտնի չէ. և սակայն հաւանական կ'երևի թէ ետքն կրապաշտութեան դարձան, ինչպէս բոլոր աշխարհ։*

326. *Չրհեղեղէն ետև ինչ կրօն կար Հայաստանի մէջ։*

*Չրհեղեղէն ետև նորէն Հայաստանի մէջ սկսաւ աստուածապաշտութիւնը, ուր որ նախ Նոյ նահապետը ճշմարիտ Աստուծոյ սեղանը չինեց։ Եւ Հայկ մեր նախահայրը չուզելով ընել հնազանդիլ՝ որ ինքզինքը Աստուծոյ կարգը դնելով կ'ուզէր ժողո-*

վըրդէն պաշտուիլ, երբոր Հայաստան պար-
ձաւ, ինչպէս որ իր կորանցուցած լեզուն
նորէն ստացաւ, սանկ ալ նաև աստուած-
պաշտութեան կրօնքին մէջը աւելի հաս-
տատեցաւ: Ուստի Հայկէն ինչուան Ա.նու-
շաւանին ատեն, որ Յակոբ նահապետին
ժամանակը կ'ըլլի, կ'երևի թէ կռապաշ-
տութիւն մտած չէր մեր ազգին մէջ. վասն
զի Խորենացին նախ Ա.նուշաւան նահապե-
տին համար կ'ըսէ թէ նուիրած էր Ա.րամա-
նեակին սօսի ծառերուն՝ որ Ա.րմաւիր քաղ-
քին մէջ տնկուած էին:

327. Ա.րևապաշտութիւնը երբ սկսած է:

Ա.րևը և ուրիշ լուսաւոր մարմինները
պաշտելը հեթանոսութեան ամէն տեսակ
պաշտամունքէն հին է, որ կը կոչուէր ե-
բրայական բառով սաբէոզիւմ, որ ելած է
սաբա բառէն, որ զօրք ըսել է, աստղնե-
րուն բազմութիւնը զօրաց բանակի նման-
ցընելով: Ա.րևապաշտութիւնը Պարսից
համ Քաղդէացւոց ազգէն մտած էր մեր
ազգին մէջ վաղարշակէն շատ առաջ. և
վաղարշակ չինեց Ա.րմաւիրի մէջ մեհեան
մը և մէջն ալ դրաւ արևու և լուսնի արձան-
ները: Հայոց արև պաշտելուն մէկ նշանն
ալ այս է, որ կար Հայաստանի մէջ մաս-
նաւոր ժողովուրդ մը որ կ'ըսուէր Ա.րևոր-
դիք՝ արև պաշտելնուն համար:

328. Ա.րևուն ինչ անուն կու տային այլ-
ևայլ ազգերը:

Եգիպտացիք Օսիրիս կ'ըսէին արևուն,

Պարսիկք Միհր. նոյնպէս նաև Որմիզդ՝ ուսկից եւած է մեր Աւրամազդ բառը, կը տրուէր Պարսից մէջ երբեմն նաև արեւուն: Ուստի Հայերն ալ Աւրամազդ անունը բաց՝ ի Դիտէն՝ որ ըստ Յունաց Կռոնոսին որդին էր, կու տային նաև արեւուն՝ զոր առջի բերան բացօթեայ տեղ կը պաշտէին, եաքերը մանաւոր տաճարներ ալ սկսան շինել: Սորբ գրքին մէջ յիշուած Բահագն ու Բէլ՝ զոր ամանք նոյն կը համարին Նեբրոթին հետ, և կը պաշտէին Փիւնիկեցիք և Մոաբացիք, Մոդոք կամ Մելքոմ զոր Ամմոնացիք և Քամոսդ զոր Մոաբացիք կը պաշտէին, արեւու զանազան անուններ են: Իսկ Յոյնք արեւուն Ապոլոն կ'ըսէին:

329. Ո՞րչափ աւեն տեւեց արեւապաշտութիւնը Հայաստանի մէջ:

Արեւապաշտութիւնը որ Վաղարշակէն առաջ անորոշ ժամանակէ՝ի վեր սկսած էր, տեւեց ինչուան Տրդատայ ժամանակը, որոյ աւեն քրիստոնէութեան պատճառաւ թէպէտ և վերցուեցաւ կուապաշտութեան հետ նաև արեւապաշտութիւնը, բայց դեռ Միջագետաց կողմերը տեղ տեղ ճնացեր էր արեւապաշտութիւնը ինչուան Մաքիտոսի ու Ներսէս Շնորհալիին աւենը:

330. Կրակապաշտութիւնը երբ սկսաւ:

Արեւապաշտութեան հետևանքն է կրակապաշտութիւնը, վասն զի մարդիկ տեսնելով որ կրակն ալ կերպով մը արեւու նման

նութիւնն ու զօրութիւնը ունի , սկսան կրակն ալ պաշտել . մանաւոր աստուածանները , այսինքն կրակի տուները շինելով : Կրակապաշտութիւնը Պարսից մեռաւ մեր ազգին մէջ , և թերևս նախ ծաւալեցաւ Մի. ջագետաց Ուրհա կամ Եդեսիա քաղաքը , որ նոյն է սուրբ գրքին մէջ յիշուած Ուր քաղքին հետ , որ հոչր բառէն եղած կը կարծուի : Այս Ուրհա քաղքէն կամաց կամաց տարածեցաւ Հայաստանի խորերն ալ , և այլևայլ տեղեր կրակատուներ շինեցան և մանաւանդ Բագրեւանդ ու Բասպարիճ քաղաքներուն մէջ , որ քուրմերու քաղաքներ էին , ուր կրակը բազինների վրայ մշտավառ կը պահուէր :

331 . Հայերը լուսին ալ կը պաշտէին :

Այն ազգերը որ արև կը պաշտէին , կը պաշտէին նաև լուսինը և ուրիշ երկնային մարմինները : Ուստի մեր ազգն ալ կը պաշտէր լուսինը Ագահիտ անուանելով , ըստ Յունաց Արտեմիս , ըստ լատինացւոց Տիանա , և ըստ սուրբ գրոց Աստարտ կամ Աստարտէս զոր Փիւնիկեցիք և Սիդոնացիք կը պաշտէին : Եւ ինչպէս որ տաճարները նուիրած էին բահպղին , որ բարձր տեղ պարսպով պատած կը շինէին , սաստկ ալ անտառները նուիրած էին Աստարտին , որոնք սովորաբար բահպղին տաճարին քովերը կը տնկուէին : Մեր լեզուին մէջ Ագահտայ տեղ՝ լուսին նշանակելու համար՝ կը գործածուի նաև Աստղիկ՝ որ Սեմայ

քոյրն էր, և կ'ելնի թէ մեր աստղ բառէն եւաժ է: Իակ Եգիպտացիք կը պաշտէին լուսինը իսիս անունով, և կը նկարէին գինքը կնիկ մը գլուխը մահիկ դրած, և կը նուիրէին իրեն արջառ:

332. Ի՞նչ է դիցապաշտութիւնը:

Դիցապաշտութիւն կ'ըսուի զմարդիկ աստուածացընելը ու Աստուծոյ պէս պաշտելը: Դիցապաշտութիւնը թէպէտ և արեւապաշտութենէ եառքը հնարուած է, բայց կը յիշուի նաև թէ հին աւեն մարդիկ Սաուանոսը՝ որ է Նոյ, կը պաշտէին Բահաղ անունով որ է արև, և կռնոս անունով որ է ժամանակ: կը պաշտէին Սեմը՝ որ է Զօրօաստր՝ Զրուան անունով: կը պաշտէին նաև Որսիր կամ Օսիրիսը Սաուանոսի որդին՝ որ երկրագործութիւն սովրեցուց, և Աստղիկը Նոյին աղջիկը՝ որ բժշկութիւն սովրեցուց: Եւ որովհետև Որսիր կամ Օսիրիս և Աստղիկ երկուքն ալ երևելի էին աստղաբաշխութեան և արևու ու լուսնի վարդապետութիւններուն մէջ, անոր համար առջինը ընդունեցաւ արեգակն, երկրորդը լուսին:

333. Դիցապաշտութիւնը երբ մտաւ Հայաստանի մէջ:

Թէպէտ և այս վերի յիշուած նահապետներուն բնակութիւնը Հայաստանի մէջ եղաւ (§. 28. 30), բայց իրենց մահուընէն եառքը պաշտուեցան երբոր եկան գնացին ուրիշ զանազան երկիրներ: Ուստի հաւանական կ'ելնի թէ Հայաստանի կռա-

պաշտութեան ժամանակը՝ Հայկազանց ա-
տեն ու Աբշակունեաց տէրութեան սկիզբը
երկնքի լուսաւորները, ու չորս տարերքը
միայն կը պաշտէին. իսկ դիցապաշտու-
թիւնը մոռաւ աւելի Աբրահէս Ա. ին ատենը
որ Յունաստան արշաւելով, բերաւ անկէց
Դիոսի, Աբեմիսի, Աթենասայ, Հեփես-
տոսի, Ափրոդիտեայ և ուրիշ աստուած-
ներու պեղեցկագոյն արձանները, և դնել
տուաւ Անիի կամ Կամախի մէջ. նոյնպէս
փոքր Ասիայէն բերաւ Աբեմիսի, Ապո-
ղոնի, Հերակղեայ պղնձէ ոսկեզօծ արձան-
ները ու Արմաւիր դնել տուաւ:

334. Անահտայ վրայ ինչ գիտելիք կայ:

Անահտայ կամ Սրտեմիսին պաշտօնը
խիստ յաճախած էր Հայաստանի մէջ, որոյ
համար Հայաստանի այլևայլ կողմերը շատ
կռատուններ հինուած էին, ինչպէս է Տա-
րօնոյ Աէտիշատ գեղին, և մանաւանդ Ե-
կեղեաց գաւառին մէջ որ կ'ըսուի նաև Ա-
նահտական գաւառ, ուր էր Անահտայ փա-
ռաւոր ու հարուստ մեհեանը իր ամբողջ
ոսկեձոյլ արձանովը երէց աւանին մէջ*:

* Այս արձանը Արտաշէս Յունաստանէն բե-
րաւ, իսկ մեհեանը շինեց իր որդին Տիգրան Ե:
Կայ ուրիշ Արտեմիդայ փառաւոր արձան մը որ
նոյնպէս Արտաշէս Ա փոքր Ասիայէն Հայաստան
բերաւ ու դրուեցաւ Արմաւիր քաղաքը: Այս
երէց աւանին մէջ եղած տաճարին վրայ մեծ գո-
վեստով կը խօսի Պլինիոս, և կ'ըսէ թէ տաճն ար-

Հոս եկաւ Տրդատ Հռոմէն դառնալէն եւս ու յորդորեց մեր Սուրբ Լուսաւորիչը որ պատկէ այս Անահտայ արձանը ու երկըրպագութիւն ընէ անոր : Անահտայ տաճարին մէջ կը վառուէր երբեմն նաեւ կրակ, ինչպէս որ կը յիշէ Ստրաբոն :

335. Բայց ասոնցմէ ուրիշ ինչ պիտեւնիք կան Անահտայ վրայ :

Անահիտ՝ Դիտոսի կամ Աբրամազդայ և Լատոնայի աղջիկը և Ապողոնի քոյրը, շատ անգամ լուսնի տեղ ալ գրուելով, կը նկատուի պահուն վրայ մահիկ մը գրած և կամ գլուխը աստղանիշ քօղով մը ծածկած : Անահտայ՝ որ զգաստութեան ու պարկեշտութեան աստուածուհի էր, մեր նախնիքը կու տային խնամակալուհ ու կեցուցիչ, նաև ոսկիածին, ոսկիամայր ու ոսկիահատ անուններըը, որոնք բոլոր կը յիշուին Ագաթանգեղոսին մէջ, և թերևս այս վերջի երեքը եկեղեց գաւառին մէջի ոսկիէ արձանին պատճառաւ, և կամ թէ Անահիտ ոսկիէ հանքերուն ալ պաշտպան ըլլալուն համար :

336. Աբրամազդայ վրայ ինչ պիտեւնիք կան :

Բայց 'ի այն Աբրամազդէն որ արևու տեղ կը գործածուէր, ինչպէս որ ըսինք վերը,

գերէն աւելի Հայերը կը պաշտեն Անահիտը, և շատ մեհեաններ չինած են այլ և այլ տեղ, և վառաւոր մեհեան մը եկեղեց գաւառին մէջ :

կար ուրիշ Աբրամապդ մ՚ալ որ է լսատ Յու-
նաց Դիոս կամ Զևս, ամէն աստուածնե-
րու պլուխ ու հայր, և երկնքի ու երկրիս
ստեղծող, որուն ինչպէս որ կ՚լսէ Յովհան
իմաստասէր, այլևայլ ազգեր զանազան ա-
նուններ կու տային. Փռուշացիք Նեբրովթ
կ՚լսէին, Բաբելացիք Բէլ, Փղշտացիք Բա-
հաղ, Հելլենացիք (այսինքն Յոյնք) Դիոս
կամ Զեւս, Պարսիկք Որմիզդ, Հայ.ք Ա-
բրամազդ: Ասոր պաշտօնը Յոյներէն մեռա
ծեր ազգին մէջ, որուն փառաւոր մեհեանը
կար Անի բերդին մէջ, որ չինեց Տիգրան
Բ, ուր կանգնուած էր Ոլոմպիական Դիո-
սի կամ Աբրամազդայ փառաւոր արձանը,
որ Աբրահէս Յունաստանէն բերաւ:

337. Բաց՝ի այս Աբրամազդէն ուրիշ Ա-
բրամազդներ ալ կան՞:

Կը համրուին իրեք չորս Աբրամազդներ
ալ, որոնցմէ մէկն էր այն Աբրամազդը որ
օտարատէր, հիւրընկալ, հիւրասէր և. վանա-
ւոյր մակդիրներով կը գործածուէր, որոյ
տօնը փառաւոր հանդէսով կը կատարուէր
Հայաստանի մէջ նաւասարդին առջի օրը,
և առանձին կերպով կը պաշտուէր Բա-
գրեւանին մէջ:

338. Վահագնի վրայ ինչ գիտեմք
կան:

Մեր նախնեաց մէջ երկու Վահագն կը
յիշուի, մէկը բուն մեր հայկազն Վահագ-
նը, որ իրեն մեծամեծ քաջութիւններուն
համար, Վիրք աստուածացուցին գինքը

ու սկսան պաշտել, որոյ պաշտօնը կ'երևի թէ եաքերը մտաւ մեր ազգին մէջն ալ, և սովորաբար կը պաշտէին անտառներու և անձաւներու մէջ, ու քաղաքներու և գեղերու պաշտպան ոգին կը համարուէր հրէշներու ու կատաղի գազաններու դէմ: Երկրորդն է Յունաց Հերակլէսը, որոյ քաջութիւնները մեր Վահագնին քաջութիւններուն նման ըլլալուն՝ մեր նախնիք իրեն Վահագն անուն տուին. որոյ պղնձէ սակեզօծ առնապատկերը այսինքն արձանը՝ Ս. Թադէոս Հէս փոքր Ասիոյէն Հայաստան բերաւ Ս. Մաւր քաղքին մէջ դնելու համար, բայց իր մահուընէն եաքը Տօրօնոյ Ս. Հռիփսիմէ աւանը փոխադրեցաւ:

339. Ո՞րն է Ս. Վրոյիտէն:

Ս. Վրոյիտէն որուն որ մենք Ս. Աստղիկ կ'ըսենք, տարբեր է մէկալ Ս. Աստղիկէն զոր լուանոյ տեղ կը պաշտէին: Ս. Վրոյիտէին համ Ս. Աստղիկան պաշտօնը, որուն Վահագնացիք վ նման կ'ըսեն այսինքն Ս. Թուանեակ, Յունացմէ մտաւ մեր ազգին մէջ, որոյ արձանը Ս. Թադէոս Յունաստանէն բերաւ, և եաքը Տիգրան Ս. Թադէոսին յաջորդը դրաւ Ս. Հռիփսիմէ աւանին մէջ Հերակլեայ համ Վահագնի արձանին քով: Ս. Աստղիկան համ Ս. Վրոյիտէին, որ անառակութեան ու ամէն գարշելի պղծութեան աստուածուհի է, նուիրած էր մրտենին ու ծաղիկներէն վարդը. անոր համար կ'երևի թէ մերոնք կուսապաշտութեան առեն աստր տօնը վար-

դավառ կ'անուանէին, նոյն օրը վարդերով իրենք զիրենք ու իրենց կուռքերը պսակելուն համար։ Ա. տոր տօնը փառաւոր հանդէսով կը տօնէին Վահեվահեան մեհենին մէջ։

340. Վահեվահեան մեհենին վրայ ինչ պիտեւնիք կան։

Վահեվահեան մեհեանը որ Տարօն գաւառին Աշտիշատ* աւանին մէջն էր, Հայաստանի ամենէն հարուստ մեհեաններէն մէկն էր, և թերևս առջինը, ուր շատ ոսկի արծըթէ գանձեր պահուած կային և թագաւորներու մեծամեծ ընծաներ։ Ա. յս ընդարձակ մեհեանը իրեք գաւ մեհեաններ կը բաժնուէր, և մէջը իրեք բազին կար գանազան կուռքերու։ Առջի մասը կ'ըսուէր Վահեվահեան, որոյ անունով նաև բոլոր մեհեանն ալ Վահեվահեան կ'անուանէր, ա. սոր մէջն էր Հերակլէսի պղնձէ ոսկեզօծ արձանը զոր Սկիւթիա ևԴիպինոս երկու կրե. տացի անուանի քանդակագործները չիներ էին։ Ա. յս արձանը, ինչպէս որ ըսինք վե. րը, Արտաշէս Ա. փոքր Ասիայի մէջ գտնելով բերաւ Հայաստան ու կ'ուզէր Արմաւիր քաղքին մէջ տնկել. բայց երբոր Արտաշէս մեռաւ, Վահունի ցեղին քրմապետանե. րը կարծելով որ այս Հերակլէսին արձանը

* Աշտիշատ աւանին անունը եւլած է յաշտ (զոհ) և շատ բառերէն, ւոնց քաղաք ըլլալուն համար, որոնց ամէն օր անթիւ զոհ կ'ըլլուէր։

իրենց վահան թագաւորին արձանն է, բերին Աշտիշատին մէջ տնկեցին, որ իրենց քաղաքն էր: Ան ալ մեր վահանին վրայ ալ կըպատմուի թէ վիշապի մը հետ կռուելով կտրեց անոր գլուխը; ինչպէս այս Հերակլէսին արձանն ալ նոյն բանը կը ձևացընէր, անոր համար կ'ըսուէր վիշապաքաղ: Այս արձանը Հայաստանի մէջ ութերորդ վահագնի արձանը եղաւ: — Երկրորդ մեհեանն էր ոսկիաձին, ոսկիամօր ըսուած Անահտայ, որոյ մէջ կար իրեն բագինը ու ոսկիէ վտառատր արձանը, որուն կը զոհէին արջառներ. և այն արջառները որ որոշուած էին Անահտայ զոհ ընելու, կրնային արձակ համարձակ պաշտերու մէջ պտըտիլ ու խոտ ուտել, և չէր կրնար մէկը անոնց դպչիլ ու վնասել, վասն զի Անահտայ նշանը իրենց ճակտին վրայ ունէին: Այս երկրորդ մեհեանն ու բագինը մէկալ երկուքէն աւելի հին էր, վասն զի Ս. Սրտաշէսէն առաջ կար: — Երրորդ մեհեանն էր Աստղկան կամ Աֆրոդիտէի մեհեանը. որոյ արձանը Սրտաշէս Ս. Յունաստանէն բերաւ, ու Տիգրան Բ Ս. Հռիփսիմեան մէջ Հերակլեայ արձանին քով կանգնեց:

341. Որո՞նք էին Դեմետր և Գիսանէ կուռքերը:

Դեմետր և Գիսանէ երկու եղբարք էին որ վաղարշակայ ատեն Հնդկաստանէն փախչելով Հայաստան եկան. և վաղարշակ սի-

*թով ընդունելով դիրենք, Տարօն գաւառին մէջ իրենց բնակութեան տեղ տուաւ, զոր որպէս որդի ժառանգեցին։ Երբոր իրենք մեռան, իրենց զաւկընները աստուածոց կարզը անցուցին դիրենք, ու բագիններ չինեցին և սկսան պաշտել, և Գիսանէին համար պղնձէ 30 կանգուն բարձրութեամբ արձանմը չինեցին, և Գեմեարէին 15 կանգուն։ Ա յս արձանները ու բագինները՝ որ դիւաց բնակարան եղեր էին, սուրբն Գրիգոր Լուսաւորիչ աստուածային զօրութեամբ կործանեց, և չինեց անոնց տեղը Մշու Սուրբ Կարապետ ըսուած եկեղեցին, որոյ թով չինուեցաւ եռքը Գլակայ վանքը։*

342. *Բարշամին կուռքին պաշտօնը ուսկից մաւ Հայոց մէջ։*

*Հայերը կը պաշտէին նաև Բարշամին անունով կուռք մը, որ ըստ ոմանց Բարշամ Ասորին է, զոր Ա.րամ նահապետը սպանեց. բայց եռքը Ասորիք իրեն քաջութիւնեներուն համար աստուածոց կարգը անցուցին ու սկսան պաշտել իբրև Ա.րեւու որդի. Տիգրան մինչև ասոր փղոսկրէ, բիւրեղէ և արծըթէ չինած արձանը Միջագետաց կողմէն Հայաստան բերելովանկէց Դարանաղեաց գաւառին Թորդան գեղին մէջ, մասնաւոր մեհեան մը չինելով. և անկէց եռքը Հայերն ալ սկսան պաշտել, որոյ արձանին ճերմկութեանը համար ապխտակարխուռ ածականը կու տային, ինչպէս կ'ըսէ Ա.գաթանգեղոս. «Էր՝ի գետն Թորդան մեհեան ա-*

նուանեալ սպիտակափառ դիյն Բարչի-
ճնիա » : Ա. յս հարուստ մեհեանը սուրբն
Գրիգոր Լուսաւորիչ կործանեց ու արճանն
ալ փշրեց :

343. Բաց ՚ի այս կուռքերէն ուրիշ ինչ
կուռքեր կը պաշտէին Հայերը :

Հայերը կը պաշտէին նաև Ա.րամազդայ
աղջիկը Նանէ , որոյ մեհեանը շինուած էր
Թիլ աւանին մէջ , զոր սուրբն Գրիգոր կոր-
ծանեց : Հեփեստոս կամ Եփեստոս Ա.րա-
մազդայ որդին՝ որոյ արճանը Ա.րտաշէս Ա.
Յունաստանէն բերաւ , և Տիգրան իրեն յա-
ջորդը դրաւ Բագաւինջ կամ Բագայարինճ
գեղին մէջ որ բագնայ * քաղաք էր , ուր
մանաւոր մեհեան մը չինեց որ Միհրականց
մեհեան ըսուեցաւ , վասն զի Հեփեստոս
կրակի աստուած է : Ա.յս մեհեանն ալ
Գրիգոր Լուսաւորիչ կործանեց ու մէջի
հարստութիւններն ալ աղքատաց բաժնեց :
— Ապողոն , որոյ պղնձէ ոսկեզօծ արճանը
Ա.րտաշէս Ա. Փոքր Ա.սիայէն Հայաստան

* Բագին ըսելով կը հասկըցուի այն սեղանը ո-
րոյ վրայ կրակապաշտութեան առեն մշտավառ
կրակ կը վառէին ու կը պաշտէին . և սովորաբար
բագնին դիմացը արևու պատկեր մը կ՚ընկար : Ա.յս
տեսակ տաճարները կ՚ըսուին պարսիկ բառով
պրօշան , որ ըսել է կրակատուն , վասն զի պր կրակ
ըսել է : Կրակատուն կամ պրօշան բառին
տեղ երբեմն մեր մէջը Խոյրպոշ ալ կ՚ըսուի :

*խաւրեց, որ դրուեցաւ Ա.րմաւիր Թագաւորանիստ քաղաքին մէջ* *:

344. Կուռքերու մարդագոհ ընելու սովորութիւն կար Հայոց մէջ թէ չէ :

Կ'երևի թէ ընդհանուր Հայոց մէջ սովորութիւն չկար մարդագոհ ընելը, ինչպէս որ Կարթեդոնացիք և ուրիշ ազգերէն ոմանք չատ կ'ընէին : Միայն տեղ մը յիշատակութիւն կայ դիւացեալ վիշապներու, որոց

* Հոս երկու իրարու հակառակ, բայց միանգամայն զարմանալի գիտելու բան կայ. Նախ Ա Արտաշէսի կուռքերը չաւցընելու ու կռապաշտութիւնը Հայաստանի մէջ խօթելու համար ուղեցած սաստիկ նախանձը, անանկ որ կարծես թէ իր ամէն քաջութիւններէն ու յաղթութիւններէն մեծ կը սեպէր կուռքի փառաւոր արձան մը ձեռք ձգելը : Այս իր նախանձին հետևողը եղաւ նաև իր որդին Տիգրան միջին, որոյ համար կ'ըսէ Խոր. (բ. ժդ) "Առաջին գործ զմեհեանն շինել կամեցաւ". վասն զի թագաւոր ըլլալուն պէս էն առջի գործը եղաւ հօրը բերած կուռքերը ապին անդին զետեղելը զատ զատ մեհեաններ շինելով: Երկրորդ գիտելու բանն է Գրիգոր Լուսաւորչի նոյնպիսի սաստիկ եռանդն ու նախանձը, որ այն կուռքերը բոլոր փշրեց, ու մեհեաններէն ոմանք կործանեց ոմանք ալ եկեղեցւոյ վերածեց : Սաանկով ինչպէս մէկ հոգւոյ ձեռքովը կռապաշտութիւնը մտաւ կամ հաստատեցաւ Հայաստանի մէջ, նոյնպէս ուրիշ հոգւոյ մը ձեռքովը վերցուեցաւ. երկուքն ալ նախանձաւոր իրենց հաւատքին վրայ, բայց մէկուն նախանձը սուտ ու սատանայական, մէկալինը Աստուածայական :

կոյս աղջիկ ու անմեղ տղաներ զոհ կ'ըն-
ծէին. ասով կ'երևի թէ Հայաստանի մէջ
թէպէտ և ըլլայ ալ մարդազոհ ընելու սո-
վորութիւնը, այն ալ խիստ քիչ, և մանա-
ւոր մէկ քանի տեղ կամ ատեն. ընդհանրա-
պէս կենդանիներ կը զոհէին, ու այլևայլ
հարուստ ընծաներով կը զարդարէին կուռ-
քերուն մեհեանները, որով շատ հարուստ
մեհեաններ կային Հայաստանի մէջ. որ
ատեն ատեն թշնամեաց աւար եղան, ու
անոնց հարստութեանը պատճառ:

345. Քանի՞ երեւելի մեհեաններ կային
Հայաստանի մէջ:

Հայաստանի մէջ այլևայլ տեղեր շատ
մեհեաններ կային, որոց մէջ եօթը աւելի
երեւելի էին, ինչպէս որ կը յիշէ Ա. Պաթա-
պեղոս, որոց մեծն խոսրով Պարսից Ա.ր-
տաշիր թագաւորին դէմ մեծամեծ յաղթու-
թիւններ ընելէն ետև, ուրախութեան հա-
մար խաւարեց շատ ճերմակ ցուլեր, նոխազ-
ներ, ձիեր, ջորիներ, ոսկիէ արծըթէ զար-
դեր և ուրիշ մեծամեծ պարգևներ:

346. Կառապաշտութենէն զատ ուրիշ ինչ
տեսակ աւելորդապաշտութիւններ կային
Հայոց մէջ:

Ինչպէս ուրիշ հին հեթանոս ազգերը,
ասանկ ալ նաև Հայերը այլևայլ աւելորդա-
պաշտութիւններ ունէին. կը հաւատային
կախարդութիւններու, հմայից, աստեղա-
գիտութեան, երազագիտութեան, ճիւաղ-
ներու, և ուրիշ մանր մունր աւելորդապաշ-

*տութիւններու : կը հաւտային նաև մեռելակոչութեան , որ ինչուան քրիստոնէութեան ատեն ալ ճնացած էր . վասն զի կ'ըսէ Բուզանդ քաջն Մուշեղին համար՝ զոր սպաննեց մեր Վարազդատ թագաւորը , թէ իր ընտանիքը անոր մարմինը տանէին վրայ դրած , կը յուսային որ քաջ մարդ ըլլալուն համար Աւռելիանոս զան ու լզելով կենդանացընեն . ու անանկ կեցաւ ինչուան որ հոտեցաւ մարմինը : Այս բանս կը պատմուի նաև մեր Աբրայ նահապետին վրայ ալ :*

## ԳՕԴՈՒԱԾ Բ .

### *Հայաստանի մէջ քրիստոնէութեան մտնելը վրայ .*

347 . *Քրիստոնէութիւնը երբ մտաւ Հայաստանի մէջ :*

*Ինչպէս որ լրհեղեղէն ետև աստուածպաշտութիւնը նախ Հայաստանի մէջ սկսաւ , ասանկ ալ նաև քրիստոնէութիւնը նախ Հայաստանի մէջ տարածեցաւ , հաւատալով՝ի Քրիստոս մեր Աբգար թագաւորը , որ Միջագետաց Եդեսիա քաղաքին մէջ կը թագաւորէր : Եւ ինչպէս որ հաւանական կ'երևի , լսելով նախ իրեք մոգերէն մեսիային գալուստը . հաւտացեր էր իրեն . և աւելի այս հաւատքին մէջ հաստատուեցաւ իրեն իրեք երևելի նախարարներուն խօսքովը , զորոնք խաւրեր էր Մարինոսին*

ընդհատուելու համար, որ Հռոմայեցւոց կայսեր կողմանէ նոր հազարապետ ղրուած էր Փիւնիկեցոց, Պաղեստինացոց, Ասորւոց ու Միջագետաց երկրին: Վասն զի այս նախարարները երբոր իրենց գործողութիւնը լմնցուցին, դառնալու ատեն Աստուծոյ նախախնամութեամբը հանդիպեցան Երուսաղէմ, Քրիստոսի հրաշքները տեսնելու համար, որոյ վրայ շատ բաներ լսեր էին. ու հոն լսածներնէն աւելի աչքով տեսնելով, երբոր զարձան իրենց տեղը, պատմեցին Ալբզարու տեսածնին. և Ալբզար ճշմարտապէս հաւատաց՝ի Քրիստոս, ըսելով թէ իրաւցընէ Աստուծոյ որդին է, վասն զի չկայ մէկը որ մեռեալ յարուցանէ բայց եթէ Աստուած:

348. Ալբզար՝ի Քրիստոս հաւատալէն վերջը ինչ ըրաւ:

Թուղթ մը զրեց Քրիստոսի որ գայ իր վիճակած քաղաքը ու զինքը բորոտութենէ սրբէ. և Քրիստոս Թովմաս առաքելոյն ձեռքով Բզղթին պատասխանը զրելով, խոստացաւ իրեն՝ համբառնալէն ետև իր աշակերտներէն մէկը խաւրելու որ զինքը բժշկէ: Երբոր Ալբզար Թադէոս առաքելոյն ձեռքովը մկըրտեցաւ ու իր հիւանդութենէն առողջացաւ, Թուղթ զրեց Պարսից Ներսէհ Թագաւորին ու Տիբերիոս Հռոմայեցւոց կայսեր որ հաւատան՝ի Քրիստոս, և ինքը Թադէոս առաքելոյն օգնութեամբը սկսաւ իր ժողովուրդը կռապաշտութենէ՝ի քրիստոնէութիւն զարձընել:

349. Հեղինէի Ա.բզարու տիկնոջը վրայ ինչ պիտեւիք կան:

Հեղինէ Ա.բզարու կինը՝ առջի հաւատացող թագուհին եղաւ, որ Ա.բզարու մահուընէն ետև երբոր Սանատրուկ թագաւորեց ու նորէն կռապաշտութիւն սկսաւ, ջուզեց բնակիլ կռապաշտներու մէջ, գնաց Երուսաղէմի տաճարը, և հոն ոսկիէ աստանակ մը ընծայ ըրաւ, ինչպէս որ կը յիշէ Յովսեպոս ալ. ու Ա.զարոս մարզարէին գուշակած սովին ատենը, իր ամէն ունեցածը ծախեց ու ցորեն գնելով կարօտեալներուն բաշխեց. ու ինքը հոն վախճանեցաւ, որուն փառաւոր յերեզման շինեցին Երուսաղէմի դրան առջև:

350. Թադէոսէն ետև ո՞ր առաքեալը եկաւ լուսաւորեց Հայաստանը:

Սուրբն Բարթողիմէոս առաքեալը, որ քարոզեց Հեր ու Չարևանդ գաւառները, Ա.նձևացեաց երկիրը՝ ուր Թողուց սուրբ Ա.ստուածածնի պատկերը կուսանաց քով Հոգեաց վանքին մէջ, որ ինքը շիներ էր: Քարոզեց նաև Սիւնեաց աշխարհին և անոր գողթն գաւառին մէջ, ու Հայաստանի ուրիշ կողմերը, և նահատակեցաւ Հայաստանի Ա.րեբանոս քաղաքը:

351. Ա.յս երկու առաքեալներուն մահուընէն ետև Հայաստանի վիճակը ինչ եղաւ:

Հայք քրիստոնէութիւնը թողուլ նորէն կռապաշտութեան դարձան. սակայն Տեա-

յին տեղտեղ քրիստոնեաներ ալ, ինչպէս Անձևացեաց աշխարհը ինչուան Հոխխաք-մեանց գալատեան ատեն, և Սիւնեաց երկիրը. բայց այս քրիստոնեաներն ալ երբեմն ալ ուրանալով քիչցան թագաւորաց հալածմունքէն, մանաւանդ Խոսրով թագաւորին Տրդատայ հօրը հանած հալածումէն, որ շատ մարտիրոս ըրաւ:

352. Հայաստանի երկրորդ անգամ լուսաւորութեանը պատճառ ալ եղաւ:

Նախ Հոխխամեան կուսանք, որոնք թէպէտ չքարոզեցին Հայաստանի մէջ քրիստոնեական հաւատքը, բայց իրենց մարտիրոսական մահուանը պատուղը եղաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչը, որ տասնուչորս տարի Խոր վիրապը կենալէն ետև, ելաւ մկրտեց Տրդատ թագաւորը, իշխանները ու ժողովուրդը, և այս երկրորդ լուսաւորութիւնը որ եղաւ չորրորդ դարուն սկիզբը, աւելինէն շատ աւելի մեծ էր, վասն զի գրեթէ բոլոր ազգը դարձաւ'ի Քրիստոս: Եւ սակայն դեռ տեղ տեղ մնաց կռապաշտութիւնը, ինչպէս Գողթն, Տաշիր, Գարդման գաւառներուն մէջ, ուսկից սուրբն Մեսրոպ վերցուց. նոյնպէս նաև Տարօնին մէջ, Ծոփաց գաւառին մէջ, և այլն: Մնացած էին ինչուան սրբոյն Մեսրոպայ ատենը Միջագետքի մէջ նաև Արևորդիք ըսուած արև պաշտող մարդիկ, որոնցմէ կը գտնուէին նաև ինչուան Շնորհալուոյն ատեններըը նոյն կողմերը ու Սամոսատա քաղաքը, ինչպէս որ վերը ըսինք:

353. Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնէութիւնը տարածելու համար ինչ ըրաւ։

Սկսաւ այրել կռապաշտական ու մեհենական պրուաժնները, կործանել կռոց մեհեանները, որոց մէջ անուանի էին Աւրտաշատու մէջ Անահտայ տաճարը, Թորդանին մէջ Բարշամինը, Անիի մէջ Աբրամազդինը, Երէզ ատանին մէջ Անահտայ, Աշտիշատ ատանին մէջ Վահէվահեան մեհեանը և այլն։ Ու ատոնց տեղը սկսաւ եկեղեցիներ շինել քաղաքներու գեղերու ու Հայաստանի ուրիշ ամէն կողմերը, և եկամուտ կը կապէր եկեղեցիներու, քահանաներու*, և այլն, և չորս հարիւրէն աւելի եպիսկոպոս ձեռնադրեց Հայաստանի այլևայլ գաւառներուն համար։ Ա. յս ամէն բարի գործողութեանց ձեռնտու էր Տրդատ թագաւորը թէ սրբկով, թէ բարի օրինակով, և թէ յորդորելով։

354. Միաբանական կենաց սկզբնաւորութիւնը Հայաստանի մէջ նախ որմէ ձեռքով եղաւ։

Նախ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ շինեց սպիտակ անդին այլևայլ վանքեր միաբանական կենաց համար, որոց մէջ անուանի

* Պապ թագաւորը Տրդատայ եկեղեցիս սրբած կալուածները բոլոր սերունդեան յաջորդակից, եօթներորդ մասին երկուքը միայն անոնց թողլով. և գեղերուն մէջ եղած քահանաներուն թիւն ալ պակասցուց իւրաքանչիւր գեղին մէկ քահանայ ու մէկ սարկաւագ դնելով։

է Տարօնոյ Գլակայ վանքը որ Ս. կարա-
պետի վանք ալ կ'ըսուի, ուր երբեմն 400
կրօնաւոր կային. նոյն ինքն Ս. Գրիգոր
իր կեանքը աստուածահաճոյ գործերով
պսակելէն ետև, քաշուեցաւ Սեպուհ լեռը
ճգնաւորական կեանք անցընելու, և ինքը
նախ եղաւ Հայաստանի մէջ անապատա-
ւոր կենաց առաջնորդ, որով մեր երկրին ա-
նապատներն ալ խաստակեաց ճգնաւորներով
զարդարեցան, որ զարմանալի ճգնութեամբ
ու սրբութեամբ նախանձաւոր եղան Եղիպ-
տոսի անապատներուն: Ա.յս անապատա-
կան կեանքը Տարօնոյ մէջ ծաղկեցուցին
Ս. Անտոն և Կրօնիդէս, զորոնք Ղուսաւո-
րիչ իր հետը կեսարիայէն բերեր էր:

355. Սուրբ Գրիգորէն ետքը որո՛նք վան-
քերը շատցուցին ու բարեկարգութիւն մը-
տուցին:

Զորրորդ դարուն մէջ Ս. Եպիփան՝ Դա-
նիէլ ծերունւոյն աշկերտը, որ Ծոփաց ու
Աղձնեաց աշխարհին մէջ շատ վանքեր շի-
նեց: Նոյն ատեն նաև Մեծն Ներսէս, որ
Հայաստանի մէջ շատ տեսակ բարեկար-
գութիւններ ըրաւ, և հինեց շատ վանքեր,
որոց թիւը 2000էն աւելի կը համրուի. ա-
ռանցմէ շատը Պապ թագաւորը Մեծն Ներ-
սէսը սպաննելէն ետև կործանեց: Նոյն-
պէս երևելի եղան նաև Ս. Սահակ, Մես-
րոպ, և ԺԱ. դարուն մէջ Գրիգոր Վկայա-
սէր, որ վանական կենաց մէջ շատ բարե-
կարգութիւններ մտուց:

356. Իշխաններուն մէջ որոնք եղան եկեղեցական բարեկարգութիւններուս ազատ.

Ճառ։

Իշխանաց ու թագաւորաց մէջէն անոնք եղան ե դարուն մէջ Վահան Մամիկոնեան մարզպանը որ կրօնաւորներուն թիւը շատցուց. Ա ու ԺԱ. դարերուն մէջ Գրիգոր Պահլաւունի, Վահրամ Պահլաւունի, և Գրիգոր Մագիստրոս իշխանները, և Կիլիկեցոց թագաւորներուն մէջ Լեւոն Ա։

357. Հայաստանի կրօնաւորները շատ խստակեաց էին, ինչպէս որ ինչուան հիմա ալ կ'երևի. շատերը բոլոր տարին միս չէին ուտեր, գինի բերաննին չէին առներ, ու միայն ընդեղէն ու կանաչեղէն ուտելով ու պարզ ջուր խմելով կ'անցընէին, միշտ աղօթքի հետ ըլլալով կային որ քրճապատ ու բոկ և լռակաց էին։ Խստակրօնութեան կողմանէ երևելի վանքերն էին, Թանահատի վանքը, Խոտակերից վանքը, Կամրջաձորոյ վանքը, Երիցավանք, Մաքենիս, Խլաձորի վանք, Սոսթե կամ Տաթև, Սևան, և այլն։ Սակայն կային մեծ նաստաններ ալ ուր ուսման եռանդ ալ կ'էր նային, ինչպէս Գլակայ վանքը, Սևանայ վանքը, Հաղբատայ, Սանահնի ու Նարեկայ վանքերը։ Հայաստանի մէջ եղած վանքերուն բազմութիւնը, որ Ժ.Ա. դարուն

միայն վ ասպուրական աշխարհին մէջ 900 կը համրուէին, որոնցմէ 115ը մեծամեծ վանքեր էին, ինչպէս կ'ըսէ Թովմա Ա.ր-ծրունի, կը ցուցընեն Հայոց կրօնասիրու-թիւնն ու աստուածսիրութիւնը:

358. Վանք բառին տեղ ուրիշ ինչ անուն կը տրուի:

Վանք բառին տեղ որ շատ գործածուած է, կ'ըսուէր երբեմն նաև վնևարան, վնևա-ստան, բայց աւելի սովորական էր ռէխտ բառը: Իսկ երևելի ու մեծամեծ վանքերը կ'ըսուէին վայրավանք կամ վայրաքաղաք, ինչպէս են Գլակայ, Հաղբատու, Սանահ-նի վանքերը:

359. Որոնք եղան Հայաստանի մէջ կուսաստաններ չինող:

Ա.ոջի կուսաստանը չինեց Բարդուղիմէոս առաքեալ ամէն միանձանց վանքերէն ա-ռաջ Անձևացեաց երկրին մէջ, և վանքին անունը դրաւ Հոգւոց կամ Հոգևաց վանք, ուր իր չինած Ս. Ա.ստուածածնի եկեղեցւոյն մէջ դրաւ ցուվհաննէս աւետարանչին կի-պարիս փայտէ չինած Ս. Ա.ստուածածնի պատկերը, և կուսաններ դրաւ այս պատ-կերին պահապան: Երկրորդ անուանի եղաւ Մեծն Ներսէս, որ շատ կուսաստաններ չինեց Հայաստանի այլևայլ կողմերը: Ին-չուան ձի դար կը յիշուին կուսաստաններ՝ բայց քիչ էին թուով. որոնցմէ ձի դարուն մէջ անուանի էր Գոբայր վանքը՝ ուր թա-զաւորազուն կանայք ալ կ'երթային կուսու-թեամբ կրօնաւորելու համար:

360. Քրիստոնէական հաւատոյ համար Հայք ինչ հալածանքներ քաշած են։

Աղջի հալածանքը ըրաւ Պարսից Շապուհ Բ թագաւորը Գ դարուն վերջերը, ու շատ մարդ մարտիրոս ըրաւ։ Այս հալածանքը աւելի աստկացուցին Մերուժան Արծրունի ու Վահան Մամիկոնեան, որոնք Պարսից թագաւորին հաճոյ ըլլալու համար հաւատքնին ուրացան, ու Պարսիկ զօրքերով վազեցին Հայաստան, եկեղեցիները կործանեցին, աւրուչաններ չինեցին ու կը ստիպէին զամէնքը որ Պարսից հաւատքն ընդունին, և աստվ իրենց պիղծ ձեռքը համբուրելու սուրբ արիւնովը շաղախեցին, և նահատակեցին զանոնք որ հաստատուն կեցան քրիստոսական հաւատքին մէջ։ Բայց եռքերը Շապուհ տեսնալով որ հալածմունքով աշխարհը կ'աւրուի, ու բնակիչներն ալ կը պակսին, ու Յունաց պատերազմն ալ վրան գալով դադրեցուց հալածմունքը, և Հայաստան խաղաղեցաւ։

361. Շապուհ Բ ին աւեն եղած հալածման պատճառը ինչ էր։

Վասակ Մամիկոնէին նախանձը. վասն զի կ'ըսէ Խուզանդ, թէ առաջ Պարսից Շապուհ թագաւորին ու մեր Արշակ թագաւորին մէջ մեծ սէր կար. բայց եռքէն Շապուհ վախնալով որ չըլլայ թէ Արշակ իրմէն բաժն ուի ու Յունաց կայսեր հետ միանայ, երդո մին ուզեց իրմէն։ Անոր համար Տիզբոն քաղքէն քահանաներ բերին ու անոնց առ-

ջևը Սրշակ երդուըննյաւ սուրբ Աւետարանէին վրայ, Պարսից հետ սէրը հաստատուն պահելու համար, և ասով արձըկուեցան։

Եւ որովհետև այս ամէն բաները վարդան Մամիկոնէին ձեռքով եղաւ, որով շատ սիրելի ալ եղաւ Շապուհին, վարդանին վասակ եղբայրը նախանձելով անոր վրան, փախաւ զնաց Յունաց կողմը, որպէս զի ասով աւելի ըլլայ իր վարդան եղբայրը Պարսից առջև։ Այս բանս երբոր լսեց Շապուհ, կարծելով թէ Սրշակայ հրամանովը եղած է, աստիկ բարկացաւ, ու միտքը դրաւ թէ Սրշակ իր երդմունքը ոտքի տակ առած է. անոր համար նախ Տիզբոն քաղքին քահանայքն ու սարկաւագները 70 հոգի սպաննել տուաւ, եորքը սկսաւ բոլոր իր տէրութեան մէջ այսինքն Հայաստան, Ատրեատան, Պաղեստին ու Միջագետք տասկալի հալածանք հանել, որով բիւրաւոր հոգիք մեռան, որոց թիւը ինչուան 200,000 կը համրուի, իսկ մեր բուզանդը 40,000 կը դնէ։

362. Երկրորդ հալածանքը ինչպէս սկսաւ։

Թէպէտ և Շապհոյ հալածանքը դադրեցաւ, բայց Պարսիկք մոքերնին դրին որ Հայերը իրենց հաւատքին դարձընեն. անոր համար ցաղկերտ Ա. իր Շապուհ որդին Հայոց թագաւոր դրաւ, որ Հայերը Պարսից կրօնը դարձընէ։ Այս չար խորհուրդը որ այն աւեն աւուր չկրցաւ երթալ, ցաղ-

կերտ ի ուղեց կատարել, ուստի հալածանք հանելով շատ հոգի մարտիրոս ըրաւ ու շատեր ալ Պարսից աղանդը դարձուց։

363. Յաղկերտ ի ին հալածմանն պատճառը ինչ էր։

Այս երկրորդ հալածանքին՝ որ առջինէն սաստիկ եղաւ Հայաստանի մէջ, պատճառն էր վարդվատան Սիւնւոյն ատելութիւնն ու վրէժխնդրութիւնը ընդդէմ վասակ Սիւնիին։ Ախկայ, ինչպէս կըսէ Ղազար Փարպեցի, առած էր վասակ Սիւնեաց իշխանին աղջիկը իրեն կնութեան, ու միշտ կը կուռէր իր կնոջը հետ, անոր համար կ'ուզէր վասակ զինքը սպաննել, բայց չկրնալով, վռնտեց զինքը Հայաստանէն, որ փախչելով գնաց ապաւինեցաւ Միհրներսեհ Պարսից հազարապետին, ու հոն իրեն հաճոյ ըլլալու համար, ուրացաւ հաւատքը, ու կը ջանար կամ բոլոր Հայոց աշխարհքը Պարսից աղանդին դարձընել՝ որով սիրելի ըլլայ Պարսից թագաւորին, և կամ սպաննել իր վասակ թշնամին։ Այս բանս իմանալով վասակ ինքն ալ գնաց ուրացաւ հաւատքը՝ վարդվատանին ճեռքէն ազատելու համար. ու եղբը Պարսից թագաւորին աչքը մռնալու համար, սկսաւ ջանալ որ Հայերը պարսիկ ընէ, որով Հայաստանը տակնուվրայ ըրաւ և շատերը քրիստոնէութենէ դարձուց Պարսից աղանդը։

Այս ատեն եղաւ վարդանայ անուանի հաւատոյ պատերազմը վասակին ու պար-

ակ զօրքերուն դէմ, որոյ մէջ ընկաւ մեռաւ Վարդան մարտիրոսական մահուամբ 1036 հոգւով։ Իսկ անօրէն Վասակ չէ թէ միայն իր վախճաքին չհասաւ, հապա նաև չարաչար մահուամբ մեռաւ քանտի մէջ։

365. Ի՞նչպէս դադրեցաւ այս աղետալի հալածումը։

Այս հալածումն տևեց ինչուան ե դարուն վերջերը Վաղարշ Բին ատեն։ Եւ հալածումը դադրելուն պատճառն էր նախ Պարսից Հեփթաղներէն չարաչար յաղթուիլը, որոյ մէջ Պերոզ Յազկերտին յաջորդը՝ մեռաւ. երկրորդ՝ Վահանայ Մամիկոնեններն քաջութիւններն ու յաղթութիւնները որ կ'ընէր Պարսից դէմ։ Ուստի Վաղարշ Բ Պերոզին յաջորդելուն պէս մէկէն հալածանքը դադրեցուց ու թոյլ տուաւ Մեծին Վահանայ որ Հայք քրիստոնէութիւնը համարձակ պաշտեն ու կրակատուններն երը կործանեն, և փինքն ալ Հայաստանի մարզպան դրաւ։

365. Վահանայ մարզպանութենէ ետև ինչ եղաւ Հայաստանի վիճակը։

Վահանայ մահուանէն ետև երբոր սկսան տիրել Հայաստանի Պարսիկ մարզպաններ, նորէն հալածմունքը անպակաս էր, թէպէտ և առջիններուն պէս աստիկ չէր. ինչուան որ Պարսից տէրութիւնը վերցուեցաւ 637ին ու Արաբացիք տիրեցին. և ասով Պարսից կողմէն հալածմունքը դադրեցաւ ու սկսաւ Արաբացոց կողմէն։

366. Ի՞նչ հալածումներ ըրին Արաբացիք:

Արաբացիք քաց անթիւ աւերմունքէն ու կոտորածներէն, առին առին Հաւատոյ հալածմուք ալ հանեցին, ինչպէս Զափր ամիրապետին ժամանակը և Բուղա ու Յուսուփ անօրէն ոստիկաններուն առեն, որոնք գերի ըրած իշխանները ու ժողովուրդը կը ստիպէին մահմետական հաւատքն ընդունելու՝ մահ սպառնալով, և առով շատերը զարճան ու շատերն ալ քաջութեամբ մարտիրոսացան:

367. Հայերը Յոյներէն ինչ նեղութիւն քաշեցին հաւատոյ համար:

Եօթներորդ դարէն սկսեալ ինչքան Ընորհալւոյն առենը Հայերը միշտ նեղութիւն կը կրէին Յոյներէն, որոնք կը ստիպէին պիրենք թողուլ իրենց ծէսերը ու յոյն ըլլալ. և այս բանս ինչուան տանջանքներով ալ կ'ընէին, և երբեմն թող չէին տար ալ որ Հայերը իրենց կաթողիկոս դնեն: Եղան ոմանք որ զարճան յոյն եղան, ինչպէս Սեւնեքերիմ Վասպուրականի թագաւորին հետ փոքր Ասիա զացող ժողովուրդէն մէկ մասը, որ ըսուեցան Հայհոռոմք. որոնցմէ ինչուան հիմա ալ կը գտուին այն կողմերը, և են դաւանութեամբ Յոյն և լեզուով և սովորութեամբք Հայ:

# ԳԼՈՒԽ ԺԴ.

## *Հայոց չեզոքին առաջնութեանը վրայ.*

368. Ո՞րն է աշխարհքիս ամէնէն առջի լեզուն։

*Ա.յս խնդրոյն վրայ շատ կարծիքներ ե֊ղած են, ոմանք Ա.տուերէնը, ոմանք Քաղ֊դէացին և Փիւնիկեցին, և շատերը Եբրայե֊ցերէնը կը դնեն, առանց լաւ քննելու թէ առջի լեզուն հոն ճնացած պիտի ըլլայ, ուր որ Նոյ նահապետը չրհեղեղէն ետքը բնակեցաւ, որ է Հայոց աշխարհքը. և ո֊րովհետև Նոյի լեզուն Ա.դամայ լեզուն էր, վասն զի կ'ըսէ սուրբ գիրքը թէ Բաբելոնի խառնակութենէն առաջ «Էր ամենայն եր֊կիր լեզու մի և բարբառ մի ամենեցուն. ուրեմն Հայոց լեզուն որ Նոյի առենէն յա֊ջորդաբար եկած է՝ Ա.դամայ լեզուն է, ուստի և աշխարհքիս առաջին լեզուն։ Բայց այս կարծիքը տեղն'ի տեղը ցուցընելէն ա֊ռաջ, չրենք նախ անոնց կարծիքը որ Ե֊բրայեցերէնը առաջին լեզու կը դնեն, ո֊րով կը ջրուի նաև Քաղդէարէնին առաջին լեզու ըլլալը, որ Եբրայեցերէնին մայրն է, ու֊ր ոմանք տգիտութեամբ անոր ներհակը կը դնեն, այսինքն Եբրայեցերէնը Քաղ֊դէացւոյն մայր։*

# ՅՕԳՈՒՄԱԾ Ա.

*Եբրայակաևին առաջին լեզու չէլլադոև վրայ*

369. Ի՞նչպէս կը ցուցընես թէ Հրէից լեզուն առջի լեզուն չէ։

Ա. Հրեայք ինչուան Աբրահամու ատեն պատ ազգ չէին ճևացած, հապա Աբրահամէն սկսաւ, որ կը բնակէր Քաղդէացւոց երկիրը, որ Նոյի տապանէն ելլելէն ետև բնակած տեղէն շատ հեռու էր, և Աբրահամու նախահայրները բոլոր Քաղդէացի ըլլալով, բնական է որ Աբրահամ նահապետն ալ անոնց լեզուն կը խօսէր։ Ասոր ինչպէս կ'ըսեն ամանք Եբրայեցւոց լեզուին առաջին գտնողը Աբրահամ նահապետը եղաւ, որ էր Քանանացւոց լեզուն, (որ կ'ըսուի նաև Փիւնիկեցւոց լեզու) որով կը խօսէին Աբրահամու յաջորդները. և այս լեզուն սկսաւ բանեցընել Աբրահամ երբոր Աստուծոյ հրամանովը Քաղդէացւոց երկրէն ելլելով գնաց Քանանացւոց երկիրը։ Այս լեզուն ալ՝ երբոր եաքեթը Հրեայք բաբելոն քշուեցան, Քաղդէացւոց լեզուին հետ խառնուելով, երրորդ լեզու մը դուրս եկաւ, որով կը խօսէր Քրիստոս ալ ու իրեն աշկերտները։

Բ. Առաջին լեզուն այն ազգին մէջ ճնաց, որ Յրհեղեղէն ետև աստուածպաշտութեան եռանդ էր, որ է Մասիս լեռան ստորոտը

բնական ազգը, վասն զի Նոյ տապանէն ելլելէն ետև հոն իջաւ։ Իսկ Աբրահամ նահապետին նախնեացը ու հօրը կռապաշտ ըլլալը յայտնի է սուրբ Գրքէն. ուստի ստոյգ չէ ըսելը թէ Նոյէն յաջորդութեամբ աստուածպաշտութիւնը անցեր է Եբերայ ցեղին, որ միշտ աստուածպաշտութեան մէջ մնալով և աշտարակաշինութեան գործոյն մէջ չգտնուելով, առջի լեզուն ալ իրենց մէջ մնացեր է։

Գ. Հրէից լեզուին մէջ չկայ յիշատակարան մը տեղւոյ կամ մարդու անուններու որ անմիջապէս Նոյի ատենէն ակսած ըլլայ. և այն տեղւոյ կամ մարդու յատուկ անուններըը որ կը յիշուին Ծննդոց գրքին մէջ և նշանակութիւն մը ունին, անիկայ ապացոյց մը չկրնար ըլլալ Հրէից լեզուին առաջնութեանը. վասն զի Մովսէս հնգամատեանը գրելու ատեն, նոյն բառերը թարգմանելով կը դնէր, ինչպէս որ կ'ըսեն երևելի պատմիչներէն ոմանք. և այս բանս կը տեսնուի նաև օտար թարգմանութեանց մէջ, ինչպէս նաև հայերէնի մէջ* ։ Բայց ասկէց կան շատ բառեր Հրէից լեզուին մէջ, որոնց ստուգաբանութիւնը ամենևին

* Զոր օրինակ կ'ըսէ սուրբ Գրոց մէջ (Ծն. իզ, 20) թէ Յահակ «կոչեաց զանուն Ըստրոյն Զբրկաւմն» այլ ոչ թէ Յահակ պէտք անուանեց Ըստրը, հապա այնպիսի բառով մը որ մեր մէջը թարգմանաբար պտուղն կը նշանակէ։

վերաբերութիւն մը չունի բառին հետ. ինչպէս Արարատ բառը Երեմեայեան լեռը պատով կը նշանակէ Աւետք առաւելական, որ մենք պիտենք ազգային պատմութենէ թէ Արային անունէն առնուած է:

370. Ի՞նչու համար սուրբ Հարց շատերը Հրէից լեռան առաջին լեռու կը դնեն:

Յոյն ու Լատին սուրբ Հարք, ինչպէս նաև մեր ազգէն Ս. Լուսաւորիչ, Վարդան վարդապետ և Երզնկացին, Հրէից լեռան առաջին լեռու կը դնեն, աւելի բարեպաշտութեան հոգւով քան թէ մասնաւոր քննութեամբ, հաւատալով Հրէից բաբուներուն պատճառներուն: Բայց ասկէց Իսրայէլացւոց աստուածընտիր ժողովուրդ ըլլալուն ու աստուածաշունչը անոնց լեզուով գրուած ըլլալուն համար, կարծեցին թէ առջի լեռուն ալ Եբրայեցերէնն է, որ անոնցմէ ամենեւին չհետեւիր: Ոստի այս բանասիրական խնդրոյն մէջ սուրբ Հարց վկայութիւնը պարզ կարծիք է: Նորերուն մէջ անուանի եղան Ոսոլդը, Կալմէթ և Ոօշար որ պաշտպան կեցան Հրէից լեռուին առաջնութեանը, որոց կարծիքը Հուետիոս և ուրիշները զօրաւոր պատճառներով կը ջրեն: — Դառնանք հիմա ցուցընենք թէ Հայոց լեռուն աշխարհիս առաջին լեռուն է, որ Հրէից լեռուին առաջին չըլլալուն չորրորդ ամենազօրաւոր պատճառը կ'ըլլայ:

# ՅՕԴՈՒԱԾ Բ.

## Հայոց լեզուին առաջնորդևանը վրայ

371. **Հայոց լեզուին վրայ ինչ պետքիք կան:**

Հայոց լեզուն հին մայրենի լեզու է, և ինչպէս որ պիտի ցուցընենք՝ ադամային լեզու, ուստի կը սեպուին մեծապէս անոնք որ մեր պատմութեանը և աշխարհագրութեանը տեղեկութիւն չունենալով, Հայոց լեզուն Ասորւոց կամ Մարաց կամ Ասրածոց և կամ Եբրայեցւոց լեզուէն ելած է կ'ըսեն, այն ազգերուն սահմանակից եղած Հայաստանի գաւառներուն մէջ անոնց սովորութիւններէն մէկ քանին, նաև անոնց բառերէն մեր լեզուին մէջ ալ գըտնուելով, որ ասիկայ ամէն սահմանակից գաւառներուն մէջ ալ կ'ըլլայ նաև ուրիշ տեղեր:

372. **Ինչպէ՞ն կը ցուցընես թէ Հայկայ խօսած լեզուն հիմակուան մեր խօսած լեզուն է:**

Հայկ որ Բաբելոնի աշտարակը չինող հակայից մէկն էր, երբոր հոն եղողներուն լեզուն խառնակեցաւ, դարձաւ ինքը իրենները առաւը Հայաստան եկաւ, և հոն տեղի բնակչաց լեզուն՝ զոր պատժուելով կորսընցուցեր էր, նորէն սովրեցաւ, և ինքը ինչ լեզու որ կը խօսէր այն աւեն, նոյն լեզուն

*Տնաց ինչուան հիմա : Եւ այս յայտնի է իրեն ու որդուցը դրած տեղւոյ ու մարդկան անուններուն նշանակութենէն որ նոյնպէս կը նշանակեն հիմա ալ . ինչպէս են , Հայկաշէն ( Հայկէն շինուած ) , Գերեզմանք՝ ուր որ Բէլ իրեններովը ընկաւ պատերազմի մէջ , Արագած ( Արմենակայ ազած , վասն զի հոն կը բնակէր ինքը ) , Արմաւիր ( իբր Արմայիսայ իր կամ երկիր ) , Գեղարդունի կամ Գեղարդունի ( Գեղամայ արքունի ) , Գեղամաշէն , Ցղուկ ( ցոլացեալ ակն ) , Արագած ( Արայի արտ՝ ուր որ ինքը մեռաւ ) , Գառնիկ , Փառնակ ( Փառացի ) , Պերճ , Բագուկ , Սկայորդի , Զարմայր ( զարմանալի այր ) , Հրաչեայ , Հրանտ ( հրաւանդ ) Վահան , Սանասարուկ ( տուրք Սանատայ՝ զայեկին անունովը տրուած ) , Սիրաք , ( ժանտ բնութիւն ունենալուն համար , և այլն :*

*Զի կրնար մէկը ըսել թէ Հայաստանի բնակիչները Հայկայ խառնակած լեզուն սովրած ըլլան և այն լեզուն ինչուան հիմա հնացած ըլլայ , վասն զի , Ա . ամենաբնական է որ քիչը շատին հետևի քան թէ շատը քիչին . ուստի Հայկ և ընկերները որ թուով քիչ էին , պէտք էր որ տեղացոց լեզուն սովրէին , որ իրենց առջի լեզուն ըլլալով , դիւրաւ ալ կրնար սովրիլ : Բ . Հայկ գիտէր որ լեզուաց խառնակութիւնը պատժոյ համար եղած էր . արդ ինչպէս կրնար թողուլ իր առջի նախնական լեզուն , որ կը խօսէին բոլոր իր պապերը ու իր*

Թորգոմ հայրը որ Հայաստանի մէջ հնաց եր էին, և ինչպէս կրնար ինքը քիչ հոգով իր խառնակած լեզուն տարածել Հայաստանի մէջ անոնց հակառակ. պիտենք ալ թէ երբոր Հայաստան գարձաւ առջի բնակութեան տեղը Հարք անուանեց իր նահանեացը ու հօրերուն յիշատակը պահելու համար, որ յայտնի ապացոյց է անոնց վրայ ունեցած սիրոյն:

373. Ինչէն կը ցուցընես թէ Նոյի խօսած լեզուն անփոփոխ մնաց Հայաստանի մէջ:

Նոյ, ինչպէս ուրիշ տեղ ըսինք, երբոր տապանէն ելաւ բնակեցաւ Հայաստանի մէջ, և իրեն սերունդը բազմացաւ, որոնց ամենուն լեզուն նոյն Նոյի խօսած լեզուն էր: Երբոր այնչափ շատցան՝ որ երկիրը բաւական չէր գիրենք կերակրելու, շատերը ելան Հայաստանէն ու գնացին Սենաար դաշտը, և ուզեցին ամբարտաւանութեան խորհուրդով այն բարձր աշտարակը շինել. որոյ վրայ Աստուած սաստիկ բարկանալով կործանեց աշտարակը ու լեզուին խառնեց, տարբերական կարծիքին նայելով եօթանասունհուերկու լեզու բաժնուեցաւ: Նաև Հայաստանի բնակչաց լեզուն անփոփոխ մնաց: Չենք կրնար ըսել թէ Նոյէն մնացած լեզուն վերցուած ու կորսուած ըլլայ Հայաստանէն. վասն զի թէ որ խառնակած լեզուները չվերցուեցան և ինչուան հիմա կան, ինչու համար վերցուի այն լե-

*զոն որ Ադամէն ինչուան Նոյ տևեց և անպատուհաս մնաց. և զարձեալ չվերցուեցաւ այն ազգը որ Հայաստանի մէջ բազմացաւ, ուրեմն և ոչ ալ իրենց լեզուն։ Եւ զարձեալ, չենք կրնար ալ ըսել թէ բոլորովին ուրիշ լեզուի փոխուեցաւ, վասն զի թէ որ մեկալ լեզուները չփոխուեցան, ինչու փոխուի այս լեզուն։ Այս բանս կ'ըսենք ընդհանրապէս, ոչ թէ պատահականն փոփոխմանց համար, որ ամէն լեզուներու մէջ ալ եղած են. ուստի և Հայոց լեզուին մէջ ալ եղած կրնան ըլլալ, զանազան տեղերէ Հայաստան եկած գաղթականներէն ու շրջակայ ազգերէն *։*

*744. Ինչէն կը ցուցընես թէ Նոյի լեզուն մեր հիմակուան խօսած լեզուն է։*

*Ա. Ասոր որ Հայաստանի մէջ նոյն բազմացած ազգը չփոխուեցաւ բոլորովին, հապա նոյն Հայոց ազգն է որ որդւոց որդի յա-*

* Մեր լեզուն եօթը գլխաւոր ճիւղ բաժնուած էր հին աեն, ինչպէս կը դնէ Յովհան Երզնկացին հին քերականութեան մէջ՝ Սահմանոակն առած, այսինքն կորճայէ, Տայէցի, Խոռնայէ, Զորդորդ Հայէի, Սպերայէ, Սէնէ, Աբդոխայէն. և այս լեզուները էպէրական կը կոչէ, իբրև թէ Հայաստանի ծայրը կամ սահմանագլուխները խօսուած լեզուներ։ Ամենէն մաքուրն էր միջնաշխարհին լեզուն այսինքն Աշտարատ նահանգին՝ ուր կը նստէր թագաւորը. և Ոստանէն միևնոյն լեզուն, որ Զորդորդ Հայոց մեկ կողմը կը բնակէին։

ջորդաբար եկած է պահելով Նոյին խօսած լեզուն, որ ինչուան իրմահը Հայաստանի մէջ բնակեցաւ։

Բ. Նոյ աւեներէն ճնացած տեղւոյ անուններըն՝ որոնք մէյմէկ անգիր ու հաստատուն յիշատակարաններ են, թէ Նոյ Հայաստան իջաւ և թէ ինչ լեզու որ կը խօսէր ինքը՝ նոյն լեզուն ճնացած է ինչուան հիմա. վասն զի տեղւոյ անուններըն ինչ որ կընչակէր նոյն աւեն հիմա ալ նոյնպէս կը նշանակեն. և այս մեծ ապացոյց է թէ Նոյի խօսած լեզուն՝ մեր գրաբառ լեզուն է։ Օրինակի համար հոս մէկ քանին յիշենք։

ա. Նախջուան, (նախ իջևան)* ուր Նոյ տապանէն ելլելուն պէս նախ իջաւ, և տեղւոյն անունը այսպէս անուանեցին Նոյ և իրեն որդիքը, և այս բանս հաստատուն աւանդութեամբ ինչուան մեզի հասած է։ Այս բանիս կը վկայէ նաև Յովսեպոս բանլով, թէ Հայք Նոյին իջած տեղը Ապողատիրոն կը կոչեն, որ Հայոց Նախիջևան բան ին յունարէն թարգմանութիւնն է։ Այլ ինչպէս որ Յովսեպոսէն ինչուան հիմա ճնացած է այս աւանդութիւնը, որ Քրիստոսէ քիչ մը ետք էր, նոյնպէս ալ Նոյէն ինչուան Յովսեպոս կրնար ճնալ։

բ. Ակոռի (արկ ուռի) ուր որ Նոյ նախ

* Նախջուան քաղքին ու գաւառին անունը կը գրուի նաև Նախճաւան, Նախջաւան, Նախիջևան,

այզի տնկեց, և կ'ըսէ անմիջապէս Մասիս լերան ոտքը, որոյ գինին շատ յարգի ու ազնիւ էր. և կը կարծուի թէ Նոյ այս տեղ գտաւ գինիէն խմելով գինովցեր է: Այս գեղը 1840ին Մասիս լեռնէն եղած հրաբխովը բոլորովին կործանեցաւ, բայց տեղը յայտնի կեցած է:

գ. Երևան (երևեցան) կը կարծուի թէ այս անուամբ կոչեցաւ այն տեղը որ ամենէն առաջ տապանին մէջէն տեսան, երբոր սկսեր էր ջուրը երթալով ցածնալ:

դ. Առնոյտան, (տուն առ Նոյ) ինչպէս որ յիշուած է այս կերպով (Թուխմ. Աբծր.) որ վաստրական աշխարհին գաւառներէն մէկն է, Նախջուանի և Ակոռի գեղին մօտ, որոց մէջտեղուանքը բնակեցաւ Նոյ: Ոմանք Առնոյտան գաւառին մէջ թաղուած է կ'ըսեն Նոյ, բայց Վարդան աշխարհագիրը Նախջուանի մէջ կը դնէ Նոյի գերեզմանը:

դ. Մարանդ (մայր անդ) որ կ'ըսէ Վաստրական աշխարհին մէջ, ուր թաղեցաւ Նոյեմզար Նոյի կինը, ինչպէս որ կ'ըսէ Վարդան աշխարհագիրը, և կ'ըսէ Նախջուանի մօտերը:

և. Ցրօնք, Ազաղնբերդ, որ Նոյի տեսէնէն դրուած են. վասն զի Ղևոնդիոդորոս հին աւանդութենէ առած կ'ըսէ, թէ Տարբան Սեմայ որդին իր անունովը կոչեց Տարբոն գաւառը. բայց ասկէց այն տեղը ուսկից իր որդիքը բաժնուեցան ու ցրուեցան կոչեց Ցրօնք: Իսկ Ազաղնբերդ կոչուեցաւ

Նոյ Ա.ատղիկ ազգկանը անունովը, և կ'ըլնի Տարօնի մէջ։

375. Նաւասարդ բառին վրայ ինչ պատեմք կան։

Ծննդոց գրքին մէջ կ'ըսէ թէ առջի ամսուն առջի օրը պակսեցաւ ջուրը երկրիս երեսէն, և Նոյ բացաւ տապանին ձեղունը և տեսաւ որ պակսեր էր։ Արդ յայտնի է որ մեծ ուրախութիւն ունեցան այն օրը տապանին մէջ եղած մարդիկը ջուրին ցածնալուն համար, և որպէս պի այն օրուան յիշատակը չկորսուի, կոչեցին Նաւասարդ երբր թէ (նաւաստ աւարտ կամ նաւ հասարդ)։ Այս մեծ ուրախութեան յիշատակը միշտ մնացած էր Հայաստանի մէջ. վասն պի կռապաշտութեան առեն ամէն տարի նաւասարդին առջի օրը, որ է ըստ Հայոց տարւոյն առջի օրը, ամէն կողմէն ժողվուած մեծ հանդէսով տօն կը կատարէին, որ կ'երևի թէ Նոյի առենէն սկսած էր, և կամ թէ նոյն իսկ Նոյի ջրհեղեղէն ազատելէն ետքը Ա.ստուծոյ ըրած շնորհակալութեան ողջակիզին յիշատակն էր, և ամէն տարի տարեդարձին օրը նոյն ուրախութիւնը կը կատարուէր Հայաստանի մէջ։ Բայց կռապաշտութեան առեն այս տօնը այլևայլ կուռքերուն անունովը կ'ըլլար Ա.ստիշատ աստին Վահէվահեան մեհենին մէջ, և կ'անուանէր Վարդավառ* նոյն օրը իրենց

* Այս Վարդավառ անունը Թէրևս Հայաստա-

*աստուածներուն արձաններուը ու իրենք զիրենք վարդերով պսակելուն համար : Այս մեծ աշխարհաժողով հանդէսը և ուրախութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնէութեան առեն Աղրակերպութեան տօնին փոխեց : Բայց ասկէց նաւասարդին մէջ այլակերպութեան տօնին օրը սովորութիւն կայ մեր ազգին մէջ որ մէկզմէկու վրայ ջուր կը ցանեն , որ հին առենէն մնացած է , և Աղրակերպութեան տօնին հետ ամենևին վերաբերութիւն մը չունի . ուստի յայտնի նշան է որ Լրհեղեղէն ազատելուն յիշատակը պահելու համար եղած է այս սովորութիւնը մեր ազգին մէջ , Նոյի ժամանակէն սկսեալ : Դարձեալ տեղ տեղ սովորութիւն կայ մեր ազգին մէջ որ ադաւնի կը թռցընեն նոյն օրը , որ է Նոյի տապանէն ադաւնի թռցընելուն յիշատակը :*

*Այսչափ ապացոյցներով բաւական կը նի մէջ կատարեալ համոզում մնալէն առաջ աստուածպաշտութեան առեն ալ կար . վասն զի Լրհեղեղին յիշատակը որ այսչափ մեծ հանդէսով կը կատարէին նաւասարդին առջի օրը , վարդեռան ծաղկած առենը ըլլալով , կ'երևի Թէ իրենց աստուածպաշտ սեղանները վարդերով կը պսակէին ու կը զարդարէին , անկէց տօնին անունը գրուած ըլլայ Վարդավառ , և ծնացած ըլլայ ինչուան կատարեալ առեն :*

*Վարդավառ անունը Խորենացին Վարդավառն ճառին մէջ , խորհրդաբար մեկնութեամբ մը Աստուած կը թարգմանէ . տես . 334–337 :*

ցուցուի թէ Նոյի խօսած լեզուն մեր հիմա-
կուան գրաբառ լեզուն է : Գանք հիմա ու-
րիշ ապացոյցներ ալ առաջ բերենք մեր լե-
զուին առաջնութեանը նպաստաւոր :

376. Կենդանեաց անուններուն առա-
ջաբանութենէն ինչպէս կը ցուցընես թէ
մեր լեզուն աշխարհիս առջի լեզուն է :

Կ'ըսէ Ննդոց գրքին մէջ թէ Աստուած
բոլոր կենդանիները ու թռչունները Ադա-
մայ առջև բերաւ որ անոնց անուն դնէ, և
ինչ անուն որ դրաւ անոնց նոյն անունները
մնացին : Աւրդ ինչպէս որ կ'ըսեն փիլոն,
Մովսէս քերթող, Յովհ. Եզնկացին, յայտ-
նի է որ Ադամ այն կենդանիներուն անուն-
ները իրենց բնութենէն կամ ձայնէն առ-
նելով դրած է, և որովհետև ասանկ նշանա-
կող կենդանեաց անուններ շատ կան մեր
լեզուին մէջ, ուրեմն մեր լեզուին աւելի կը
յարմարի Ադամայ խօսած լեզուն ըլլալը :
Օրինակի համար, դնենք հոս մէկ քանի
կենդանեաց անուններ, որոնք իրենց բնու-
թիւնը բացատրող իմաստներ ունին :

Ադաձի (ագռաւ ունի) ւասն զի հեզ է բնու-
թեամբ :

Աղիձ և արծիւ (առող և ծռող) ւասն զի
զիշատիչ կենդանիներ են :

Ադրոյտ. ւասն զի արտերու մէջ կը
բնակի :

Ադքաղաղ (այգուն ազաղակող) :

Եղջերու (եղջերաւոր) :

Երիվար. (յերի վարող) կռնակը բան
տանող :

Լորամարգի . վասն զի Լօռեբուս մէջ ու թաց տեղ կը բնակի :

Խոզ . (՚ի խուզողութենէ) վասն զի կըն. ճլթով դեռինը բան կը փնտռէ :

Կայտառ . կայտառելուն համար տրուած :

Կապիկ (կապող յինքն) վասն զի կ՚ուզէ միշտ ուրիշին նմանիլ :

Կաքաւ (կաքաւող) . վասն զի քալելու ատեն ցատկըտելով կ՚երթայ :

Նապատակ (ապաստանող) վասն զի բնութեամբ վախկոտ ըլլալով կ՚ուզէ միշտ տեղ մը ապաւինիլ :

Սիրամարգ (սիրող զմարդ) :

Դնենք քանի մը կենդանեաց անուններ ալ որոնց անունը իրենց ձայնէն առնլով գրած են . ինչպէս .

Ա.գռաւ , կռունկ , կաչաղակ , ձպոշտև , ձրնձղոյկ , ձանձ , ոմիխ , ծիծառն , ծիտ , կով , բուռ , ոջիւր , ցուլ , բզէզ , վիշապ , իժ , զեռուռն , սողուն , և այլն :

377 . Մեր լեզուին կազմութենէն ինչպէս կը ցուցուի իրեն առաջնութիւնը :

Ա.մէնքը կը գրուցեն թէ նախնական լեզուն կատարեալ և ճոխ պիտի ըլլայ հընչման կողմանէ : Ա.րդ մեր լեզուն ա . գրեթէ ամբողջ ամէն հնչմունք ունի , բայ ՚ի մէկ քանի յունական թլուատ հնչմունքներէն , որ լեզուի անկատարութիւն են քան թէ կատարելութիւն . և բայ ՚ի մէկ քանի արաբացի կոկորդային հնչումներէն . որով մաքուր հնչումն ունեցող Հայ մը

կրնայ ուրիշ ամէն ազգաց օտար հնչուածները արտասանել, և այս բանիս համար է որ Եւրոպացիք շատ կը զարմանան մեր վրայ:

բ. Շատ ճոխ է մեր լեզուն թէ բառերու շատութեան կողմանէ և թէ բարդութեանց կողմանէ, որով կրնայ համարձակ ամէն բան բացատրել. և թէպէտ պիտութեան բառեր պակաս են՝ լեզուն շատ մշակուած չըլլալուն համար, սակայն լեզուին գեղեցիկ կազմութեանը պատճառաւ դիւրաւ կրնան հնարուիլ:

գ. Արմատական ու հարկաւոր բառերը գրեթէ շատը մխալանկ են. ինչպէս հայր, մայր, քոյր, հուր, օդ, ջուր, հող, ծառ, խոտ, բոյս, առուկ, վրայտ, անդ, արտ, և այլն: Բաց ասկէց կան բառեր ալ որոնք մէկմէկէ եղլելուն կամ մէկմէկու վերաբերութիւն ունենալուն համար, կազմութիւնն ալ իրարու նման է. ինչպէս այր, հայր, մայր, եղբայր, քոյր (իբր քայր), ոչուր, դուշուր. ամ, ամիս, ժամ, ժամանակ կամ առանակ, գարուն, աշուն, ամառն, ձմեռն, հուր, ջուր. և այլն:

դ. Լեզուին մեծ պարզութեանը նշան է սեռ և յօդ չունենալը, ինչպէս ունին Արաբացւոց, Եբրայեցւոց և գրեթէ բոլոր Եւրոպացւոց լեզուները նաև Յոյնն ու Լատինը. նոյնպէս նաև երկական թիւ չունենալը, ինչպէս ունի Արաբացին:

378. Մեր լեզուին արմատական բառե-

րէն ուրիշ մայր լեզուներու մէջ ալ կը գըտ-
նուին թէ չէ :

Այսչափ մեծամեծ պատճառներով յայտ-
նի ցուցընելէն ետև թէ հայերէնը նախ-
նական լեզու է և մեկալ լեզուները բոլոր
Բաբելոնի խառնակութեանը ատեն զոյա-
ցած , այս բանիս ապացոյց կը բերենք նաև
նոյն լեզուներուն մէջ հայերէն բառեր գըտ-
նուիլը , ինչպէս օրինակի համար հաւ , վո-
կրն , անկիւն , արկղ , արտևտուր , տուշն , նոր ,
բառերուն լատիներէն կ'ըսեն ավիս , վոռս ,
անկոչոռս , արգս , արս , ռօմոռս , նովոռս ,
և այլն : Նոյնպէս կը գտնուին Սանսքրիթ
լեզուին մէջ որ շատ լեզուներու մայր կը
սեպուի , օրինակի համար դնենք մեկ քա-
նին :

| | | | |
|---|---|---|---|
| Քարիի . | Կապիկ . | Ձիա . | Աւծ . |
| Աքշի . | Աչք . | Տիռ . | Տիւ . |
| Քառլ . | Կամք . | Նաւ . | Նաւ * . |
| Տուռ . | Ծուռ . | Քարշանա , Քարշուանի : | |

* Նաւ բառը գրեթէ ամէն լեզուի մէջ նոյն է , և ասոյգ կ'երևի թէ հայոց լեզուէն ելած է , վասն զի նոյեան տապանը Հայաստանի Մասիս լեռան վրայ իջնելով , մարդիկ նաւու առջի գաղափարը անկէց ունեցան : Նաւ բառին պարսկերէն կ'ըսեն նաւ , յն . Νᾶυς ( նաւս ) լտ . Navis ( նաւիս ) :

# ԳԼՈՒԽ ԺԵ.

## *Գիտութեանց վրայ.*

### ՅՕԴՈՒԱԾ Ա.

379. *Չրհեղեղէն եւս նախ ո՛ր ազգին մէջ սկսաւ ծաղկիլ գրականութիւնը:*

*Չրհեղեղէն եւս հաւանական է թէ մեր ազգին մէջ ծաղկեցան գրականութիւնը ու արհեստները, վասն զի մարդիկ նախ Հայաստանի մէջ բնակեցան ու բազմացան: Բայց հոս ցուցընենք նախ համառօտ մը թէ Չրհեղեղէն առաջ որչափ առաջ գացած կ'ենթադրուին գիտութիւնները աշխարհիս վրայ:*

380. *Չրհեղեղէն առաջ որչափ ծաղկած էին գիտութիւններն ու արհեստները:*

Ոմանք կը սեպեն թէ ինչուան Չրհեղեղը որ 2242 տարուան միջոց է ըստ եօթանասնից, աշխարհս խիստ շատ ծաղկած էր. և ոմանք ընդ հակառակն թէ ամենևին ծաղկած չէր. բայց աւելի հաւանական է առ ջիններուն ըսածը թէպէտ և չափազանցութիւն ալ ըլլայ, վասն զի ինչպէս որ աշխարհիս սկզբան առեն մէկէն զտնուեցան երկրագործութեան, հովուութեան, ու զարբնութեան արհեստները և երաժշտութիւնը, ուրեմն հարկաւ կը հետևի թէ կամայ կամաց նաև ուրիշ շատ արհեստներ ալ զտնուեցան. մանաւանդ որ այն առեն մար-

դուս կեանքը երկայն ըլլալով, խելացի ու ճարտար մարդիկ ալ երկայն ապրելով, կըրնային զանազան գիւտեր գտնել ու գիտութիւնը ծաղկեցընել։

381. Չրհնդեղէն առաջ գիր գտնուած էր թէ չէ։

Ա. Մենաստոյգ կ'երևի թէ գիր գտնուած էր. վասն զի նախ, բնական է որ կ'ուզէ մարդ իր ատենի դիպուածները գրելով որդի եւեթիններուն աւանդել, և այս բանս նշաններ դնելով կամ գրով կ'ըլլայ։

Բ. Զկրնար ըլլալ որ աշխարհիս առեղծմանն պատմութիւնը, նահապետաց կեանքը, անուններն, տարիքնին և ուրիշ մանրմունր դիպուածները բերնէ բերան միայն աւանդութեամբ հասած ըլլան ինչպէս Մովսեսի առեն, որ գիր անցուց այս բաները։

Գ. Յովսէպոս Ա.դաքելոյն թուղթին մէջ, գրած է, թէ «Մարգարէացաւ վասն նոցա և եօթնեերորդն յԱդամայ ենովք», և այս մարգարէութիւնը ամենաստոյգ կ'երևի թէ գրաւոր էր, ինչպէս կ'ըսեն ոմանք, և մեր երկնակացին ալ, որ գիր գտնողը նոյն Ենովքը կը դնէ *։

* Ուոլդըն կը զրուցէ թէ աշխարհիս սկիզբէն՝ է վեր հաւանական կ'երևի թէ գանուած էր գիրը. պարձեալ կը կարծէ թէ Ադամ գտած է, անկէց անցեր է Սէթին, անկէց ալ նոյին ոե իր յաջորդներուն՝ առջի լեզուին հետ մէկտեղ. և այս գիրը

դ. Եւսեբիոս վկայութիւն կը բերէ Բազմավէպն Աղեքսանդրէն, թէ Լրհեղեղին համար նաւը չինողը հրամմեց «զամենայն զառաջինս և զմիջինս և զվերջինս մատենէից՝ փորել և դնել յԱրեգ քաղաքին Սիպարացւոց» (որ ըստ ոմանց է մեր Սպեր ը, ըստ սուրբ գրոց Սովփեր.) և թէ Լրհեղէն եաքը հրաման եկաւ «երթալ՝ի Սիպարացւոց քաղաքէն փորել հանել զմատեանն որ ծածկեալ կայցեն անդ, և տալ մարդկան, և եթէ տեղին յորում վայրի ելեալ կային՝ Հայոց աշխարհն է»:

և. Յովսեպոս կը գրէ թէ Լրհեղեղէն ետև երկու սիւն Ճնացեր էր, որոց վրայ Լրհեղեղէն առաջ եղած մարդիկը փորած էին երկնային մարմնոց վրայ տեղեկութիւններ, և աստղերուն շրջանները ու կարգերը, և այս սիւներուն մէկը նաև ինչուան իր առենը Ճնացեր է եղեր:

Այսչափ ապացոյցները բաւական ըլլան ցուցընելու համար, թէ Լրհեղեղէն առաջ գիր գտնուած էր:

382. Լրհեղեղէն ետև ոմն եղաւ պրակատնութեան առջի ծաղկեցընողը:

Նոյ՝ որ 600 տարի Լրհեղեղէն առաջ

Ճնաց կ'ըսէ ինչուան լեզուներուն խառնակութեան առենը, երբոր նոր լեզուներու հետ՝ առեն անցնելէն ետև նոր գիրեր ալ գտնուեցան. բայց առջի գիրը Ճնաց անուն քով, որ առջի լեզուն ունէին:

ապրելով, պիտէր անչուշտ նոյն ժամանակի պիտուքիւններէն չատը, որոնք իր ըղդմով մէկտեղ չրհեղեղէն եաև նորէն ծաղկեցուց, պրին գործածութիւն ալ մըտցընելով:

383. Ս.րտաքին պատմիչները Նոյին վրայ ինչ կը գրուցեն:

Ս.րաբացիք կ'ըսեն թէ Նոյ սուքրեցուց տաեղաց ընթացքը, ու գրուշեց տարին աբևան չրջանին նայելով, ու տասներկու ամիսները՝ ըստ լուսնի չրջանին: Հեթանոսները որ գՆոյ Սատռնոս կ'անուանէին, այնչափ իմաստուն մարդու տեղ գրած էին ու ամէն բան գիտցող ու ժամանակի իշխեցող, որ ինչուան ժամանակին անունովը գինքն ալ կռնոս անուանեցին:

384. Սեմ ինչ բան սուքրեցուց:

Սեմ որ ըստ արտաքին պատմիչներու կ'ըսուի Զօրոաստր կամ Զրադաշտ և կամ Զրուան, բնակեցաւ Հայաստանի Զարեւանդ գաւառը, որ իր անունովը կոչուած է (§. 28): Տաոերը կ'ըսեն թէ այս Զրադաշտը գաւս մոգոչիւնը, և մոգութիւն ըսելով հին տաեն, ինչպէս կ'ըսէ Պլինիոս, կ'իմացուէր կրօնքի վերաբերեալ գիտութիւններ, բժըշկութիւն և աստղաբաշխութիւն. ուստի այս գիտութիւններս նախ Հայաստանի Զարեւանդ գաւառին մէջ սկսան ծաղկիլ, որոնցմէ աստղաբաշխութիւնը՝ տաեն անցնելէն եաև գարձաւ աստղագիտութիւն, այսինքն աստղերուն գիրքն ու այլեայլ չար-

ժուռնեները պիտելով մէկուն ծննդեանը և բաղդին վրայ ուսումուտ դուշակութիւն ներ ընել։ Ասանկ ալ մոգութիւնը ժամանակաւ զարճաւ աղանդ մը, որ կը սովրեցընէր արևապաշտութիւն, աստեղապիտութիւն, և հմայութիւն։

385. Բակտրիացի Զրադաշտին վրայ ինչ պիտելիք կան։

Կը կարծուի թէ ասիկա Սեմայ թոռն էր Տարբանայ որդին, որ գնաց բնակելու Բակտրիոյ մէջ. և հոն իր Սեմ պապէն սովրած պիտութիւնները ծաւալելով, ինքն ալ անոր անունովը կոչուած ըլլայ Զրադաշտ։ Ասյս բակտրիացի Զրադաշտը չորս* երևելի Զրադաշտանեաւն մէկն է, որ կ'ըսուի նաև Պարսից Զրադաշտ, ուստի և կ'երևի թէ եաբէն

* Ասյս չորս Զրադաշտանեաւրէն մէկը հայ էր, որոյ համար կ'ըսէ Կիւրեղ Աղեքսանդրացի (Յաճախ. գ.լրք է) «Զայսոսիկ գրեաց Զրադաշտն հայկազուն, տղայ Պամփիլեացի». բայց ուրիշները հայկազունը Պամփիլեացիէն կը զատեն. նոյնպէս նաև Արնոբիոս որ չորս Զրադաշտանեան ալ յիշելու տեղն կը զուգէ թէ (եկեալ է) «և Արմենիոյ թոռն Ոստանայ, և Պամփիլեացին ընտանին կիւրոսի»։ Ակէց մեր Ինճիճեանը կը կարծէ թէ Ոստանը պիտի ըլլայ մեր վաստամ հայկազուն նահապետը, որուն յաջորդեց կար, և կը համարի թէ վաստամը մոգութեան եաւէթ ըլլալուն համար, եղաւ երբորդ Զրադաշտը։ Իսկ Պամփիլեացի Զրադաշտը ասկէց շատ եաւէթ է, և կ'ըսին կիւրոսի տեղն։

Բախտրիայէն Պարսկաստան անցեր է : Պարսիկները իրեն յաջորդներէն որոնք որ մոգութեան եաւէ եղան , կոչեցին Զրադաշտական : Ա.յս մոգութեան արհեստը շատ տարածեցաւ Պարսից մէջ , և առջի ուղիղ գիտութենէն մոլորելով բոլորովին սուտ աղանդ մը դարձաւ : Ուստի Զրադաշտի անունով գրուած խենդութեանց ու ծուռումուռ բանները , պէտք չէ խմանալ Սեմայ ու իր թոռանը վրայ , հապա ուրիշ Զրադաշտներուն վրայ :

386 . Մոգ անունը ուսկից ելած է :

Շատերը Մոգ անունը յատուկ անուն կը համարին , և թէ որ այսպէս է՝ կրնանք ըսել թէ Մոգ անունով հին նահապետ մը եղած ըլլայ Հայաստանի մէջ որուն անունով Մոկք նահանգ մ՚ալ կայ Զարևանդ գաւառին մօտիկ , հաւանական կ՚երևի որ այս Մոգը երկայն ատեն ուրիշներուն գիտութիւնը սովրեցընելուն համար , իր անունը ըսուեցաւ Մոգ , ու գիտութիւնն ալ Մոգութիւն : Ա.րդ ճշմարիտ մոգութեան արհեստը , ինչպէս որ վերը ըսինք , պատեն անցնելով աստեղագիտութիւն դարձաւ , և ով որ մոգութեան եաւէ կ՚ըլլար , մոգ կ՚ըսուէր իրենց գլխաւորին անունովը . և այս գիտութիւնը շատ առաջ գնաց Պարսից ու Քաղդէացոց մէջ այլևայլ ճիւղեր բաժնելով : Ոմանք նոյն իսկ առաջին Զրադաշտին համար կ՚ըսեն թէ Մոգ կ՚անուանէր , մոգը իբրև յատուկ անուն առնելով , և

անկէց սկսած կը Համարին մոգութիւնն ալ (§. 384):

387. Քրիստոսի ծննդեան ատեն եկած երեք մոգերը ուսկից էին:

Հաւանական կ'երևի ըսելը թէ մեր Մակաց աշխարհէն եկան, որ Հրէաստանի արևելեան հիւսիսային կողմը կ'ըլլէ, վասն զի պիտենք որ ուրիշ տեղ ալ աստրը Գիրք Սրբոց ըսելով կը հասկընայ մեր Հայաստան աշխարհը. և թէ որ Մակաց աշխարհն ալ չդնենք, կրնանք դնել անոնց սահմանակից երկիրը՝ որ է Միջագետք, ուր որ կը թագաւորէր այն ատեն մեր Սբգար Թագաւորը, որ ինչպէս հաւանական է, լսելով այն երեք մոգերէն Քրիստոսի սքանչելի ծնունդը, հաւատաց մէկէն Մեսիային գալստեանը, որոյ վրայօք հազաւոր մոգէն՝ի վեր՝ որ Միջագետքէն էր, միշտ գուշակութիւն կար մոգերու մէջ, թէ նորանշան աստղ մը երևնալու ատեն աշխարհիս փըրկիչ մը պիտի ծնանի: Ասոր ատոյգ չէ անանոնց կարծիքը որ կ'ըսեն թէ Սբրաբիայէն եկան այս երեք մոգերը, վասն զի ինչպէս որ Պետուխոս ալ կ'ըսէ, Սբրաբիան Հրէաստանի Հարաւային կողմը կ'ըլնի, չէ թէ արևելեան կողմը:

# ԳՕԴՈՒԱԾ Բ.

## Աչքի նահապետականէն ետև Հայաստանի գրականուրեան վիճակը.

388. Աւագին նահապետաց առեներէն ետքը Հայաստանի ուսման վիճակը ինչ պէս էր:

Թէպէտ և շատ գիտութիւնք, ինչպէս որ ըսինք, Հայաստան գտնուեցան, բայց ա նոնց զարգացընողը օտարազգիք եղան, և աոեն անցնելէն ետև Հայաստան խառար տգիտութեան մէջ մնաց ինչուան Վաղարշակայ աոեն, որ թէպէտ շատ տեսակ բարեկարգութիւններ ու հինութիւններ ըրաւ, որով աշխարհը իր խառնափնդոր վիճակէն հանեց, բայց ուսումը այնչափ չծաղկեցուց. հապա աոաջին ծաղկեցընողը եղաւ Աբտաշէս Բ, որ զանազան գպրոցներ ու մարզատուններ բանալով Հայաստանի մէջ արհեստներն ու գիտութիւնները աոաջ տարաւ:

389. Երկրորդ անգամ ինչպէս Նորոզեան Հայաստանի մէջ գիտութիւնները:

Աբտաշէս Բ էն ետև նորէն սկսաւ կամաց կամաց մարիլ ուսումնասիրութեան եռանդը, բայց ոչ ինչպէս որ Վաղարշակէն առաջ էր. ինչուան որ երկրորդ անգամ գիտութիւնները ծաղկեցան Վռամշապուհին աոենը, և պատճառն էր Հայ-

կական դրերուն գիւտը, որ եղաւ սրբոյն Մեսրոպայ ձեռքովը։

390. Մեսրոպեան նշանագիրներէն առաջ մեր ազգը ինչ գիր կը գործածէր։

Խիստ հին ժամանակ յայտնի չէ թէ ինչ գիր կը գործածէր մեր ազգը։ Ոմանց կարծիքն է թէ կը գործածէր սեպաձև կամ բևեռաձև ըսուած գիրերը, որ հատանական կ'երևի, տեսնելով որ երբոր Շամիրամ Հայաստան եկաւ, նոյն գրով շատ բան գրեց Վանայ բերդին վրայ, որ եթէ ժողովուրդը չկարենար կարդալ, նոյն գրով չէր գրեր։ Ոմանք ալ կ'ըսեն թէ հին Պարսից գաւառաց լեզուին գիրերը կը գործածէին։ Իսկ վերջի տեսնները կը գործածէր Պարսից գիրը ու երբեմն նաև լեզուն աշխարհական բաներու մէջ. իսկ յունարէնն ու ասորերէնը աւելի եկեղեցական բաներու մէջ։

391. Ինչո՞ւ համէ եղաւ սրբըն Մեսրոպ նոր գիր գտնելու։

Նախ որ օտար լեզուներուն գրերովը մեր լեզուին ամէն հնչմունքը չէր բացատրուեր. և երկրորդ՝ տեսնելով սրբըն Մեսրոպ որ Աստուածաշունչը ասորի լեզուաւ եկեղեցւոյն մէջ կարդալուն համար, ժողովուրդը շատ բան չէր հասկընար, և հարկ էր որ միշտ թարգմանիչ մը գտնուէր, որ իմաստը ժողովրդեան թարգմաներ. անոր համար աստուածախրատեան եռանդով մը վառուած, ուզեց սրբը գիրքը հայերէն թարգմանել. բայց որովհետև ազգային յա-

*տուկ գիր մը չունէինք , մտածեց նախ գիրը հնարել , և այս բանս իմացուց սրբոյն Սահակայ որ այն ատենուան Հայրապետն էր , և իրմէ՝ ալ աւելի յորդորուեցաւ :*

392. *Դանիէլեան նշանագիրները ինչպէս գտնուեցան :*

*Սուրբն Մեսրոպ վ. ռամշապուհին քով իր քարտուղարութեան պաշտօնը թողլէն ետև , երբոր անգամ մը վ. ռամշապուհ Մի-ջագետք կ'երթար , ու ատրի և յոյն լեզու գիտցող ընտիր թարգման մը չգտնելով , ինչպէս էր սուրբն Մեսրոպ , շատ նեղուելին կը քաշէր , Հաբէլ անունով կրօնաւոր քահանայ մը գիմացը ելաւ , ու խոստացաւ Հայու լեզուին նշանագիրներ ստեղծել Դանիէլ եպիսկոպոսին նշանագիրներովը , որ իրեն ազգական էր . ատով յայտնուեցաւ թէ կայ Դանիէլ եպիսկոպոսին քով Հայու նշանագիրներ :*

393. *Դանիէլեան նշանագիրներուն վրայ ինչ գիտելիք կան :*

*Դանիէլեան ըսուած նշանագիրները որ թուով քսաներկու հատ էին , Հայոց հին գիրերն էին . բայց որովհետև չէին կրնար լեզուին ամէն հնչմունքը բացատրել , և ձայնաւոր ալ չունէին՝ Ա.րաբացոց ու Ե-բրայեցոց լեզուներուն պէս , անոր համար մէկմէկ թողուած էին , և անոր տեղը սկսեր էին գործածել Պարսից , Ա.տորոց , Յունաց գիրերը . որով Հայու հին նշանագիրները բոլորովին անծանօթ եղեր էին , ու գրեթէ*

կորսուած. և նորը պահուելով Դանիէլ եւ պիտակոպոսին քով, անկէց նորէն գուրս ելան։

394. Վարդան պատմիչը Դանիէլեան նշանագիրներուն համար ինչ կը գրուցէ։

Վարդան յայտնի կը գրուցէ թէ Դանիէլեան նշանագիրները, Հայոց նշանագիրներ էին, հին աւենը հնարուած. և այս բանիս ապացոյց կը բերէ թէ Լևոն Բազաւորին աւեն գտնուեցաւ Կիլիկիոյ մէջ Հայկազանց կռապաշտ Բազաւորներու գրած մը Հայու գրով։ Թէ հին աւեն կային Հայու գիրեր սրբոյն Մեսրոպէն առաջ, կը վկայեն նաև Կորիւն, Խորենացի և Փարպեցի, թէպէտ և յայտնի ու բացայայտ կերպով չգրուցեն։ Ունինք այս բանիս վկայութիւն նաև օտար ազգերէն ալ. Փիլոստրատոս՝ որ Կարակալլա կայսեր աւենը կ'ըլլի Քրիստոսի 200 թուականին, կ'ըսէ թէ Պամֆիլիա երբեմն յովազ մը գտնուեցաւ վիզը ոսկի մանեակ, վրան Հայու գրով գրած, այսպէս. «Սրշակ Բազաւոր աստուածոյն Նիւսեայ»։

395. Սուրբն Մեսրոպ ինչ գիր գտաւ։

Վառաշապուհին ձեռքով Դանիէլեան նշանագիրները գտնուելէն ետև, երկու տարի չափ գպրոցներու մէջ սկսան տղոց այն գիրերը սովրեցընել. բայց տեսնելով որ անկարելի է այն նշանագիրներով մեր լեզուին բոլոր հնչումները հեղել, գնաց սուրբն Մեսրոպ՝ Գզաւոն, Եպիփան ու Հռու-

*վանոս ըսուած գիտուն մարդիկներուն քով օգնութիւն մը գտնելու համար . բայց երբ որ անոնցմէ յոյսը փուճը ելաւ , ապաւինեցաւ անձամբ Աստուած . և տպաւորեցաւ սիւքի մէջ իր սրտին վրայ հայերէն գիրերը և աղօթքէն ելլելէն ետև հնարեց Հայոց գիրը Սամոսատիա քաղքին մէջ Հռուփանոսի օգնութեամբը Քրիստոսի 406 թուականին : Աստղիկ կը կարծէ թէ եօթը ձայնաւոր գիրերը Ա , ե , է , ը , ի , ո , ու , ապա ցուց սուրբն Մեսրոպ գանիէլեան հին Հայոց գրերուն վրայ , որոց թիւը 29 հատ կը գնէ : Կ'երևի թէ Աստղիկէն մուած է խոբենացւոյն մէկ քանի օրինակներուն մէջ այս եօթը ձայնաւոր գրերուն անունները :*

*396. Մեսրոպեան տառերուն համար ինչ կ'ըսէ Վարդան պատմիչը :*

*Վարդան պատմիչ ամէնէն աւելի լաւ ու որոշ կը խօսի այս նիւթիս մէջ , և կ'ըսէ թէ Դանիէլեան քառնաւերկու գիրերուն վրայ տասնըչորս հատ գիր աւելցուց Մեսրոպ : Ան ալ ի ձայնաւոր գրերէն կան մեր լեզուին մէջ լծորդ տառեր , որոց հնչմանը գիր որոշելը աւելի դժար է՝ քան թէ ձայնաւորները գտնելը , որ գիւրաւ կրնար ոյնէն ալ առնուլ : Ոմանք ալ կը կարծեն թէ 36 գիրն ալ սուրբն Մեսրոպ գտաւ , ինչպէս կը կարծէ նաև Շնորհալին , բայց այս կարծիքը ստոյգ չէ :*

*Որ և իցէ կերպով սուրբն Մեսրոպ գտաւ գիրը կատարելագործելէն ետև , յու-*

նական ձևով Հռոմիանոսին օգնութեամբը կարգաւորեց զանոնք. և սրբոյն Սահակայ օգնութեամբը հնչումները որոշեց:

397. Սուրբն Մեսրոպ ո՞ր տեսակ գիրը հնարեց:

Սուրբն Մեսրոպ հնարեց երկաթագիր ըստուած գիրը, որով գրուած են հին մատենաթեայ ձեռագիրները, որ ատեն անցնելով տասներորդ դարուն ժամանակները դիւրութեան համար քիչ մը ձևը փոխուեցաւ հասակները կարճեցընելով: Մեսրոպեան երկաթագիր գիրերը մէկտեղ միացընելով գրելը, կ՚ըսուի փակագիր, որ համառօտութեան համար հնարուած է, և կը գործածուի ատենագիրներու և մատենիներու վրայ: Իսկ նշանագիրն է շուտութեան համար բառերը այլևայլ համառօտ նշաններով գրելը, որ կը գործածէին ատենի գրիչները, ինչպէս որ յիշատակութիւն կայ Սոփանզեղոսին մէջ:

399. Գիրը գտնուելէն ետև Հայաստանի մէջ ուսմունքը ո՞րչափ ծաղկեցաւ:

Սուրբն Մեսրոպ գիրը գտնելէն եւոքը սկսան մէկէն սրբոյն Սահակայ հետ Աստուածաշունչը թարգմանել : Նախ Աստուածայայտնութիւնքն կայ գիրքը ու նոր Կտակարանը իր երկու աշկերտներովը մէկտեղ թարգմանեց սուրբըն Մեսրոպ . հին Կտակարանը աւելի թարգմանեց սուրբն Սահակ : Եւ որպէս պիքիչ առենուան մէջ Հայաստան շատ առաջ երթայ , ատիս անդին աշկերտներ խաւրեցին , այսինքն Կեսարիա , Միջագետք , Կոստանդնուպօլիս , Աղեքսանդրիա , և Աթէնք , ուր որ առաջ ալ Հայք կ'երթային ուսմունք սուվրելու . և որոնց մէջ խիստ անուանի եղած էր Բրոյերեսիոս կամ Պաւրոյր Հայկազնը , որ հոն ճարտասանութեան դասատու էր և իր աշկերտներէն մէկն էր նաև Գրիգոր Աստուածաբանը , և մեծ անուանը համար Հռոմի արձան կանգնուեցաւ , այս արձանագրով : « Դիմոյ թագաւորի Հռոմ՝ թագաւորին Պերձախոսութեան : »

400 . Սրբոյն Մեսրոպայ վրայ ուրիշ ինչ պիտելիք կան :

Սուրբն Մեսրոպ բաց 'ի մեր լեզուին գրերէն , դուս նաև վրաց և Աղուանից լեզուին գրերը . և Սամոսատոյ , Վաղարշապատայ , Փայտակարան նահանգին , Սիւնեաց աշխարհին , Գողթըն գաւառին Տաշիր գաւառին , և մանաւանդ Աղբատայ մէջ , և ուրիշ այլևայլ տեղեր շատ գպրոցներ բանալով , նոր գտած Հայու գիրերը կը տրվեցընէր , և ուսմունքը ալբիւրի պէս

կը ծաւալէր Հայաստանի մէջ. որով քիչ առեն ան մէջ պիտութիւնը շատ առաջ գնաց, մանաւանդ Հայաստանէն դուրս գացող աշկերտներուն դառնալովը. որոնք բաց՝ի անթիւ թարգմանութիւններէն, ակըսան քովերնէն ալ գիրք շարադրել, որով Հայաստան պիտութեան դրախտ մը դարձաւ, և իրաւամբ այս է դարը մեր մատենագրութեան ոսկի դարն ըսուեցաւ:

401. Սուրբն Մեսրոպէն ու Սահակէն առաջ որո՞նք կը յիշուին մեր մատենագրաց մէջ, որ գպրոց բանալով ուսմունքը ծաղկեցուցած ըլլան:

Նախ կը յիշուի Ս. Գրիգոր Լուսաւորիչը որ մանուկ գպրոց բացաւ Թագաւորական ընտանիքը ու Ազիսկունեաց ցեղը կրթելու համար. բաց ասկէց, յորդորեց նաև Տրդատ թագաւորը, որ այլևայլ գաւառներու մէջ հաստատակաց գպրոցներ բանայ տղոց կրթութեան համար: Մանաւանդ նաւոր փոյթ ունեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ քրմաց տղաքը՝ի քրիստոնէութիւն կրթելու համար, աստերէն ու յունարէն սովրեցընելով, ու իրենց համար ոռճիկ սահմանելով: — Երկրորդ ծաղկեցընողը եղաւ մեծն Ներսէս որ բաց՝ի անթիւ բարեկարգութիւններէն, այլևայլ գպրոցներ ալ հաստատեց տղոց դաստիարակութեանը ու յունարէն և աստերէն սովրեցընելու համար:

402. Թագաւորաց ու իշխանաց մէջ ո-

*րո՞նք եղան անուանի ուսումնասիրութեան կոչմանէ։*

*Վաղարշակ Ա., որ Մարիբասայ Հայոց պատմութիւնը գրելուն պատճառ եղաւ։ Աբասիէս Բ., որ ուսմունքը շատ ծաղկեցուց գպրոցներ բանալով։ Տրդատ Թագաւորը, որ Գրիգոր Լուսաւորչին յորդորմամբը շատ գպրոցներ բացաւ։ Վռամշապուհ Թագաւոր, որ ձեռքէն եկածին չափ սրբոցն Սահակայ և Մեսրոպայ օգնեց, անոնց կամացը կամակատար ըլլալով։ Սահակ Պատպետ Բագրատունի իշխանը որ յորդորեց պնորենացին Հայոց պատմութիւնը գրելու համար, զոր եթէ չունենայինք՝ գոլորովին կորսուած կ'ըլլար Մարիբասայ պատմութիւնը։ Հինգերորդ դարուն վերջերը երևելի եղան Վահան Մամիկոնեան մեծին Վարդանայ եղբօրորդին զօրավար ու մարզպան Հայոց, որ Ղազար Փարպեցիին գրել տբուաւ իր ատենի պատմութիւնը։ Եօթներորդ դարուն մէջ Համազասպ Մամիկոնեան, Աշոտ պատրիկ, Վահան կամսարական՝ որոյ խնդիրքովը Գրիգորիս Աղբարունեաց քորեպիսկոպոսը չինեց ընթերցուածոց մեկնութիւնը. և անոր որդւոյն Ներսեհ կամսարականին խնդիրքովը՝ Փիլոն անունով մէկը յունարէնէն թարգմանեց Սոկրատայ պատմագրութիւնը։*

403. *Տասներորդ դարուն և անկէ ետքը որո՞նք եղան երևելի։*

*Տասներորդ դարուն մէջ երևելի եղան*

Գրիգոր Պահլաւունի և իրեն որդին Վահրամ Պահլաւունի՝ որ Գրիգոր Մագիստրոսին հօրեղբայրն էր։ Գագիկ Ա., Գագիկ Բ. բազրատունի թագաւորները, ու Գրիգոր Մագիստրոս որ շատ գրուածներ ալ ունի։ Երեքտասաներորդ դարուն մէջ Ռուբինեաց Լևոն թագաւորը որ շատ ընթերցասէր ըլլալուն համար այլևայլ դպրոցներ հաստատեց։ Հեթում Բ. որոյ վրայ շատ դուեստով կը խօսի Յովհաննէս Եղնկացի՝ գրաւոր և ուսումնասէր կոչելով։

404. Որո՞նք եղան կանանց մէջ երևելի ուսումնականութեան կողմանէ։

Ամէնէն անուանի եղաւ Սահակադուխտ Ստեփանոս Սիւնեաց արքեպիսկոպոսին քոյրը, որ ութերորդ դարուն մէջ երաժըշտութեան դպրոց հաստատեց, երաժշտութեան մէջ անուանի ըլլալով. ունքը վարդապետի եաին կեցած ուրիշներուն երգը դաս կու տար, ինչպէս որ կ'ըսէ Ստեփանոս Օրբելեան, և շատ երգեր ու մեղեդիներ չինեց, որոնցմէ մէկն է նաև Սրբոհիւ Մարիամը որոյ սկզբնատառերը իր անունը կը կազմեն։ Մարիամ՝ Աշոտ Ա. թագաւորին աղջիկը, որ Նանայ սարկաւագէն չինած Յովհաննու աւետարանին մեկնութիւնը ընտիր ոճով նորէն թարգմանել տուաւ Թ. դարուն մէջ, որ մեզմէ թարգմանուած էր Սըմբատ Խոստովանող իշխանին հրամանովը։ Դարձեալ և Շուշան Պահլաւունի տիկինը. և ուրիշ ուսումնական կանայք ալ եղած

են, որոնց վրայ մասնաւոր յիշատակութիւն մը չկայ մեր մատենագրաց մէջ, թեև նա խիստ երևելի չըլլալուն համար։

405. Հայաստանի մէջ քանի երևելի գրատուններ կային։

Հին ատենը կ'երևի թէ տէրութեան գրատունը վաղարշապատ Թագաւորանիստ քաղքին մէջն էր, ուսկից որ Թարգմանիչները սկսան դիտութիւնը ծաւալել Հայաստանի չորս դին, հոն տեղի դպրոցներուն մէջ տրված աշակերտները տղին անդին խաւրելով գուրիչները սովրեցընելու համար։ Անոնի պիտի ըլլայ Բագաւանի քաղքին գրատունն ալ զէթ մեհենական գրքերու կողմանէ, վասն զի քուրմերու քաղաք էր։ Երևելի էր Անի կամ Կամախ ըսուած բերդին գրատունը, ուր Բարդաձան ազգային մեհենական պատմութիւնը ու Թագաւորաց գործերը կարդալով, և իր ատենուան գործերն ալ վրան աւելցընելով, գրեց իր մեհենական պատմութիւնը աստղի լեզուով, որ եաքը յունարէն Թարգմանուեցաւ։ Բայց ատոնցմէ աւելի անուանի էր Մծբին քաղքին գրատունը, ուսկից Անբազար Թագաւորը բոլոր գրքերը տարաւ իր հինաձ Եդեսիա քաղաքը, իր կողմանէ ալ շատ գարդարելով. անուանի էր Եդեսիոյ Թագաւորական դիւանն ալ՝ ուր կը պահուէին տէրութեան վերաբերեալ գըրուածները, Թուղթերը, հրովարտակները, վճիռները, և այլն։ Այս Եդեսիա քաղքին

մեհենական * գրատունը ու դիւանը եղե-
ւին քաղաքը Հռոմայեցոց ձեռքը անց-
նելէն ետև, շատ աւելի զարդարուեցաւ,
ւան դի Պոնտոսի Սինոպ քաղաքին գրա-
տունը ու դիւանն ալ Հռոմայեցիք հոս փո-
խադրեցին:

406. Հայաստան ոտնակոխ ըլլալու ա-
տեն գիրքերը մուր կը պահուէին:

Վերջի ատեններըը գիրքերը ատիս ան-
դին եկեղեցեաց ու վանքերու մէջ կը պա-
հուէին, մանաւանդ ուր որ դիտութիւնը ա-
ւելի ծաղկած էր, ինչպէս Ստաբև. կամ Տա-
բև. վանքը Սիւնեաց մէջ, Յոհաննավանք Ա-
րարատ նահանգին մէջ, ուր շատ պատուա-
կան գրքեր ժողոված կային, որոնք ինչպէս
որ կ'ըսէ Ա. Ղազար պատմիչը աւազակները
յարձակելով յափշտակեցին ուրիշ բաներու
հետ մէկտեղ: Գեղիկ վանքը Գուգարաց
Զորափոր գաւառին մէջ, ուր Մխիթար
Գոշ վարդապետ եղած էր. Գլաձոր կամ
Գայլեձոր Սիւնեաց Վայոց ձոր գաւառին

* Մեհենական գրատուն ըսելով չհասկցուիլը
թէ գոյ վերաբերեալ գրքերը միայն կը պա-
հուէին մէջը, հապա որովհետև մեհեաններու
մէջ կը պահուէին ուրիշ որ և իցէ գիրքեր ալ՝
թէ պատմութիւն ըլլայ թէ յիշատակարաններ,
իբրև ապահով ու օրհնեալ տեղ մը, որոց քու-
րը աւանդապահ էին, անոր համար մեհենական
գրքեր կ'ըսուէին: Ասոր մեհենական պատմու-
թիւն ըսելով կը հասկցուի ան՝ որուն մէջ թէ քա-
ղաքական թէ դիցաբանական բաներ գրուած էն:

ՄԷՋ. Սակայն յետոյ Եփրատացոց երկրին ՄԷՋ, ուր շատ վանքեր կային, և գիտութիւնն ալ շատ ծաղկած էր. Մեծ քար ըսուած վանքը Կլևիկիոյ ՄԷՋ, զոր հինեց Հեթումին որդին Լևոն Թագաւորը:

407. Սիւնեաց աշխարհին ՄԷՋ ինչ երեւելի գրատուներ կային:

Մովսէս Խորենացի իր ատենէն կը յիշէ Գեղարքունի գաւառը. եւթի մատենագիրներու ՄԷՋ մանաւոր յիշատակութիւն մը չկայ, բայց բաւական է այն մեծամեծ գործուեաներըը ուսումնականութեան կողմանէ, որ կու տան մեր հեղինակները Սիւնեաց աշխարհին բնակչացը, մանաւանդ բանաստեղծութեան կողմանէ: Ակէց կրնանք հետեւցնել թէ կային Սիւնեաց աշխարհին այլևայլ քաղաքներուն ՄԷՋ երեւելի գրատուններ, վասն զի Սիւնեաց ՄԷՋ Ս. գրատէն եւս Հայաստանի ամէն կողմէն աւելի ծաղկած էր գիտութիւնը. իսկ վերջերը եօթներորդ ութերորդ դարերու ՄԷՋ Ս. գրատէն ալ աւելի. ուր տեղի վարդապետարանը կ'երթային, կ'ըսէ Ստեփաննոս Օրբելեան, ամէն կողմէն հմտանալու համար, վասն զի իմաստութեան աղբիւր սեպուած էր, կ'ըսէ, այն ատեն մեր ազգին ՄԷՋ, ու գլուխ ամէն Հայոց գիտուններուն. և ինչպէս Ս. թէնք մայր իմաստից համարուած էր Յունաց ու Հռոմայեցոց ՄԷՋ, ասանկ ալ Սիւնեաց աշխարհը Հայաստանի ՄԷՋ. վասն զի սուրբ Գիրքը թարգմանելու

ու մեկնելու պաշտօնն ալ՝ ատրքն Սահակ ու Մեսրոպ Սիւնեաց աթոռին տուած էին։ Սիւնեաց վարդապետարանէն եւս անոնց նի էր ինչուան Ծոզ գաւառ Աղբատենաց վարդապետարանն ալ, որ բացուեցաւ ի գաւառն մէջ, որ կ'ըսուէր նաև վարդիկ Հայր։

## ԳՕԳՈՒԱԾ Գ.

### Հայաստանի մէջ գրականութեան եւս. վնասուն պատճառները.

408. Ի՞նչ պատճառաւ գրականութիւնը միշտ ծաղկած չմնաց Հայաստանի մէջ։

Գլխաւոր պատճառն է անդադար պատերազմները, որ կ'ըլլային Պարսից, Աղբաց, դէտ Թաթարաց և ուրիշ ազգաց, մանաւանդ Բագրատունեաց և Ռուբինեաց առեն։ Բ, կրօնի համար եղած հալածումները որ կը քաշէր մեր ազգը Պարսիկներէն ու Աղբաբացիներէն։ Պարսիկք արգելք ալ դրած էին իրենց բաժնին մէջ եղած Հայերուն վրայ՝ յունարէն չսովրելու, որպէս զի յունաց հետ վերաբերութիւն մը չունենան։ Գ, մեր ազգին քիչ ուսումնասիրութիւնը, որոյ համար կ'ողբայ Խորենացին իր առենը ու իրմէ առաջ եղած Հայկազանց ժամանակը, անխնամատար բնութեան ձէր կոչելով այն առենուան մարդիկը։ Սակայն այսչափ պատճառներէն ետքն ալ, երեսէլի մատենագիրներ պակաս չեղան՝

թէպէտ և սակաւաթիւ ըլլան, հինգերորդ դարէն ետև ինչուան վերջի աստեններըը. և անշուշտ ալ աւելի կ'ելլային եթէ Հայաստանը ներքին և արտաքին թշնամիներէ ազատ ըլլար, ու խաղաղութիւնը տիրէր, որ ուսումնականութեան ծաղկելուն գլխաւոր պատճառներէն մէկն է,

409. Մեր ազգին մէջ որչափ գրքեր կորսուած են:

Խորենացին կը գրուցէ թէ իր ատենկային անքրաւ գրուցաց վատնանք պատահանական բաներու, վէճերու, դաշինքներու, և իւրաքանչիւր նախարարութեանց ցեղին վրայօք, յունական ու Պարսից գրերով գրուած, որոնք հիմա բոլոր կորսուած են: Նոյնպէս քրիստոնէութեան ատենէն ինչուան վերջի դարերը գրուածներէն, թէ՛ թարգմանութիւն ըլլայ և թէ բնագիր՝ շատ բան կորսուած են, որոնց ապացոյց է անծանօթ ձեռագրաց հետզհետէ գտնուիլն ինչուան հիմա:

410. Ի՞նչ պատճառաւ կորսուած են գրքերը:

Նախ Նինոս Ասորեստանցոց թագաւորը, ինչպէս կ'ըսէ Խորենացին Մարիբասէն առնլով, հրաման տուաւ որ բոլոր պատմական բաները և քաջերու համար եղած գրուածները այրեն, ու միայն իր ըրած քաջութիւնները գրեն. անոնց հետ այրած կը կարծէ Խորենացին մեր Ադամայ քաջութեան պատմութիւններն ալ:

Ք. պատճառն եղաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի բարեպաշտական դիտումը, որ որպէս զի նորադարձ Հայաստանի ժողովուրդը չըլայ թէ նորէն կռապաշտութեան դառնան, հրաման տուաւ բարի նախանձով բոլոր կռապաշտական զիրքերը այրելու, որոյ-մով լեցուն էին մեհեանները: Գ. պատճառ եղաւ ուրացեալն Մերուժան, որ Հայաստան մի տիրելու մտքով հաւատքը ուրանալէն ետքը, Պարսիկ զօրքերով Քրիստոսի 380 թուականին վազեց Հայաստան, ու այրել տուաւ բոլոր յունարէն գիրքերը, ու սաստիկ արգիլեց յունարէն լեզու սովրելը, որպէս զի Յունաց հետ վերաբերութիւն չունենալով ու Պարսից լեզուն սովրելով, դառնան Պարսիկ ըլլան. անոր համար սուրբն Սահակ ալ առջի բերան յունարէն գիրք չգտնելով, ստորերէնէ սկսաւ Աստուածաշունչը թարգմանել:

411. Ուրիշ՛ինչ պատճառներով վերջի ժամանակներն ալ շատ գիրքեր կորսուեցան:

Վերջի ատեններն ալ շատ գիրքեր կորսուեցան այլևայլ Թշնամեաց յարձակմունքէն ու աւերմունքէն. որոնց մէջ գլխաւորն է Անի թագաւորանիստ քաղքին այրիլն ու աւարհարութիւնը որ եղաւ 1064 ին. երկրորդն է Սելջուկներէն 1144 ին Եղեսիա քաղքին առնուիլը, ուր էր անուանի թագաւորական գիւանն ու գրատունը: Երրորդն է Հռոմկլայ բերդին աւերումը, ուր կը նատէին կաթուղիկոսները Կիլիկե-

ցոց առնելը : Զորրորդն է Սիւնեաց աշխարհին բաղաքերդ ամուր բերդաքաղաքին առումը , որոյ համար կ'ըսէ Ստեփանոս Որբելեան , թէ Սիւնեաց աշխարհին վանքերուն մէջ որչափ գիրք կար , Թշնամեաց յարձակմունքէն վախնալով բերին Հոն լեցուցին տեղւոյն ամրութեանը վրայ վատահացած , և միայն Կատարաններուն թիւը 10,000 էն աւելի էր , կ'ըսէ : Երբոր 1170ին Իամայելացիք տիրեցին խաբէութեամբ բաղաքերդին , մէջի գիրքերն ալ գերի տարին , որ ասդիս անդին ցիրուցան եղան ու վճացան :

Հայաստանի մէջ գիրքերու պահպանելուն գլխաւոր պատճառներէն մէկն ալ եղաւ Էննկթիմուրը որ 1400 ին Հայաստան տակնուվրայ ընելէն ետև , կ'ըսուի թէ բոլոր գիրքերը Սմրղանդ քաղաքը բերդի մը մէջ դրաւ , և թէ Հոն Ճնացած կը փտտին ինչուան հիմա , և ոչ ոք կրնայ մէջը մտնել : Պատճառներուն մէկն ալ է տգէտներուն աւելորդապաշտ կարծիքը , որ կ'առնուն հին ու չկարդացուելու գիրքերը գետինը կը թաղեն , կամ պատի մէջ կը հիւսեն , և կամ այրի մէջ կը դնեն Թշնամեաց ձեռքէն ազատելու համար , ուր որ թացութենէ կը փտտին կ'անպիտանանան , լաւ սեպելով ինքիրմէ վճանալը քան թէ ուրիշին ձեռքը անցնիլը :

Աստենօք Սանահնի մայրապանքին կրօնաւորները վախնալով որ չըլլայ թէ իրենց ձեռագիրները ապաստանները ձեռք ան-

*ցնի, վանքին դիմացը բարձր այրի մէջ գրին ամէն իրենց պատուական գրքերը: Եատ աստեն անցնելէն ետև Հաղբատայ առաջնորդը հիւանդութեամբ քարին վրայ ելաւ, ու այրին դուռը բանալով, տեսաւ որ շատ եր-կաթգիր ու բոլորգիր ձեռագիրներ կան մէջը, բոլորն ալ թացութենէ ապրած ու անպիտանացած, ու միայն Գրիգոր Նիւսացւոյն մէկ գիրքը անարատ մնացեր էր, որ գրուած էր Հայոց ՆԱ. (400) թուականին, որ է Քրիստոսի 952 թուականն:*

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

### *Հայաստանի մէջ ծաղկած գիտութիւններն ու վրայ.*

412. *Բժշկութեան գիտութիւնը ամէն գործածէ:*

*Ոմանք կ'ըսեն թէ բժշկութիւնը Հերմէս Տրիմեգիստոսը գտաւ, որ Հնախօսներուն ըսածին նայելով Քամայ որդին Քանանն է, որոց երկուքն ալ նախ Հայաստանի մէջ բնակեցան: Բայց Հաւարակ ու ամէնուն ընդունելի կարծիքն է Մանեթոնին ու Դիոդորոս Սիկիլիացւոյն կարծիքը, որ կ'ըսեն թէ Սատուռնոսի այսինքն Նոյի Խոս աղջիկը գտաւ բժշկութիւնը, ու շատ դեղեր հնարեց: Արդ այս Խոսը, ինչպէս որ վերը յուշեցինք, Նոյին Աստղիկ աղջիկն է, որ ինչպէս Եգիպտացիք կը պաշտէին Խոս*

անունով , ու հիւանդներուն պաշտպան կը համարէին , ասանկ ալ նաև մեր նախնիքը կը պաշտէին Աստղիկ անունով , ու անոր օգնութիւնը կը խնդրէին բժշկութեան համար : Իսկ Յոյնք Աստլղիկան որդին Ասկղոնը բժշկութեան աստուած կը համարին . ուստի յայտնի կ'երևի թէ Ասկղոն Աստղիկէն ստրվելով ու կատարելագործելով տարածեց Յունաց մէջ :

413 . Աստղիկ կամ Խիս Հայաստանէն եղեւէն ետև բժշկութեան գիտութիւնը իւնչ վիճակ ունեցաւ հոն :

Որովհետև այս գիտութիւնս մարդուս կեանքին շատ օգտակար է , անոր համար թէպէտ և Աստղիկ Հայաստանէն հեռացաւ , բայց գիտութիւնը երեսի վրայ չմնաց . մանաւանդ որ Հայաստանի զանազան ազգերուն ու ախտահալած խուռներն ու բանջարները այս գիտութիւնս ծաղկեցընելու կը յորդորեն . և Ղազար Փարպեցին շատ կը գովէ Արարատ նահանգին աւազջարար խուռերը , որոնմէ կ'ըսէ հմուտ ու վարպետ բժիշկներուն ձեռքովը զանազան դեղեր ու սպեղանիներ կը շինուէին : Այս բանիս ապացոյց է Արտաշէս Բին Աստղղական մեհենին մօտիկ տնկած պարտէզը որ բժշկութեան պաշտպան աստուածուհին էր , ուր բաց 'ի զանազան անուշահոտ ծաղիկներէն , կային նաև շատ բժշկական տունկեր ալ :

414 . Ո՞վ գտաւ թիւրակէսը :

Թիւրակէսը գաւ ժիջին Տիգրանայ քեռայրը մեծն Միհրդատ Պոնտոսի թագաւորը, այլևայլ բռնաց հիւթերու բաղադրութեամբ. և ինչպէս որ կ'ըսէ Պլինիոս, շատ բուսաբանական ու բժշկական գիրքեր ալ գրած ունէր, որոնք Պոմպէոս երբոր իրեն յաղթեց բոլոր թարգմանել տուաւ. ատոնց մէջն էր նաև Թիրիակէին վարդապետութիւնը: Ոմանք կ'ըսեն թէ Ներոնի բժիշկը Անդրոմաքոս կրեատացին գրաւ, բայց սխալ է. թերևս ինքը աւելի կատարելագործած ըլլայ մէջը իժի եղ ալ խառնելով: Թիրիակէն Միհրդատայ գիւտը ըլլալուն մէկ ապացոյցն ալ այս է, որ ինչուան հիմա Եւրոպացոց մէջ այս դեղին Միհրդատեան դեղրափ ալ կ'ըսուի: Միհրդատ թէպէտ և Հայ չըլլայ ազգաւ, սակայն իրեն գիւտը կրնանք մէկ կերպով մեզի ալ սեպհականել, ինչպէս նաև իր քաջութիւնները, ժիջին Տիգրանայ մեր թագաւորին քեռայրն ըլլալուն համար:

415. Ո՞վ գրաւ ծաղկի հիւանդութենէ ազատելու համար պատուաստելու գիւտը:

Ծաղկի պատուաստը (աշ) ազգային գիւտ է, ինչպէս որ Եւրոպացիք ալ կը վկայեն և Հայերը իրենց ձեռքովը մուծին այս գիւտը Եւրոպայի մէջ:

416. Որո՞նք եղած են ազգային երևելի բժիշկներ:

Թէպէտ և շատ բժիշկներ եղած ալիսի ըլլան Հայոց մէջ, բայց մեր մատենագիր-

*ներսեան մէջ յիշուածները սասնք են . Յովհաննէս լեզուապէտ բժիշկը Թ. դարուն մէջ, որոյ մէկ քանի թարգմանութիւնները կան միայն . Թէ դարուն վերջերը կը յիշուի Մխիթար լեզուապէտ բժիշկը Հերպաւատէն, անոր համար ալ Հերացի կ'ըսուի և Ընտրհաւլոյն ժամանակակից է , որ բժշկարան մը ունի չինած , որոյ մէջ լատ մեծի մասին ջերմին հիւանդութեանը վրայ կը խօսի :*

*Թէ դարուն մէջ երևելի եղաւ Ս. Մխրտոլվաթ բժիշկը , և ունի բժշկարան մը որ կ'ըսուի Ագիթոց անպետ , որոյ մէջ կը յիշէ քանի մը իրմէ առաջ եղած Հայ բժիշկներու անուններ , որ բժշկութեան վրայ բաներ ալ գրեր են , և են Ս. Հարոն , Ստեփանոս , Դեղին բժիշկ , Սիմէոն , Վահրամ , և այլն , իրմէ վերջն ալ Ս. սար ու Պունեաթ Սեբաստացիները , և այլն :*

*417 . Տօնարապիտութիւնը երբ ծագեցաւ մեր ազգին մէջ :*

*Աստղաբաշխութիւնը ամենէն առաջ Հայաստանի մէջ ծագելուն համար , ապէտք է որ տօնարապիտութիւնն ալ նախ հոն սկսած ըլլայ , վասնզի աստղաբաշխութեան հետևանքն է , որով տարին , ամիսը , օրը կը բաժնուի : Բայց Տօնարապիտութիւնը ինչպէս նաև ուրիշ գիտութիւնները ծաղկեցան աւելի Ս. րտաշէս Բ ին առեն :*

*418 . Մովսէս կաթողիկոս ինչ պատճառաւ տօնարը նորոգեց :*

*Ս. Նարէսս Բիւզանդացին , Բի 351 թը-*

ւին, Զատկին տօնը անխախտ պահելու համար՝ հնարեց երկհարիւրեակը, որ է 200 տարուան շրջան, որոյ կարգովը կը տօնէին Հայք իրենց տօնները։ Երբոր 551 ին այս երկհարիւրեակը լմնցաւ էր Աղեքսանդրացի իմաստասէրը ուրիշ իմաստուն ներու խորհրդովը հաստատեց հիւգհարիւրեակը որ 532 տարուան շրջան էր. այն աստեններըը Հայոց կաթողիկոսն էր Մովսէս Բ, որ Հայաստանի իմաստուն մարդիկները մէկտեղ ժողվելով, որոչեց Զատկի տօնը անխախտ պահելու շրջանը ընդունիլ. և այն ատեն հաստատուեցաւ նաև Հայու նոր թուականը՝ որ կը սկսի Քրիստոսի 552 թուականին։

419. Մովսէսի թուականին վրայ վերջէն փոփոխութիւն մը եղաւ։

Քրիստոսի 661 թուին Անաստաս կաթուղիկոս ուզեց աւելի կատարելագործել տումարը. որպէսզի ուրիշ ազգերուն պէս տօնները անխախտ տօնուին. անոր համար յանձնեց Անանիա Շիրակացւոյն որ այն ատեն խիստ երեւելի էր տօմարագիտութեան մէջ, որ իր խնդիրը կատարէ. անիկա ալ շատ աշխատանքով կատարեց։ Բայց երբոր Անաստաս կաթուղիկոսը կ'ուզէր ժողքով հաստատել, մահը վրան հասնելով անգործ մնաց, և իրմէ ետքը ոչ ոք հոգ տարաւ այս բանին։

420. Ազգային ինչ երեւելի տօմարագէտներ կան։

Մեր առաքելութեաց մէջ գլխաւորն է Անանիա Անեցի կամ Ներսիսեանին է պատմութիւն, Աբրահամայ Ներսէս գաւառին Անի քաղքէն. Պետրոս քերթող Սիւնեցի, Ներսէս Տարօնեցի, Յովհաննէս Սարկաւագ վարդապետ ԺԲ դարուն սկիզբը, որ շատ աշխատեցաւ առաքելոց Նորոգելու, և անշարժ կամ նահանջաւոր տարուց առաքելոց հաստատեց, որով կարգաւորած են Յայտնութեանց օրերը. և նոր Թուական մ'ալ սկսաւ 1084 ին, որ կ'ըսուի Փոքր կամ Սարկաւագայ Թուական:

421. Ուրիշ ինչ տեսակ պրակտիկութեան մէջ երեսի եղած է մեր ազգը:

Նախ փիլիսոփայութեան մէջ, որով մեծն Ներսէս կը պատանձեցընէր հերետիկոսները. որով սուրբն Սահակ կ'ապշեցընէր Պարսից թագաւորը, որով առուանի եղաւ Դաւիթ Անյաղթ, և ը դարուն մէջ Յովհան օձնեցին, որ մանաւանդ առուամբ կոչուեցաւ նաև իմաստասէր որ փիլիսոփայ ըսել է: Կան նաև ուրիշ ազգային մատենագիրներ ալ, որ փիլիսոփայի անուն ունեցած են, ինչպէս Անանիա Շիրակացին և Գրիգոր Մագիստրոս, և այլն:

Երեսի եղած է մեր ազգը նաև պատմութեան ու եկեղեցական դրուածոց կողմանէ:

422. Ի՞նչ երեսի պատմիչ մատենագիրներ եղած են Հայոց մէջ:

Թողով զանոնք որոց գրուածքը չունինք հիմա, գրուածներուն մէջ անուանի է քան

*զամէնը Ս. Մովսես խորենացին՝ որ կ'ըսուի Հայր պատմաբանից, մեր ազգին պատմութիւնը սկիզբէն ինչուան իր առենը ե զարն կէսը ճարտար ու հաւատարութեամբ համառօտելուն համար, ուսկից առած է Յովհան կաթողիկոս իր պատմութիւնը, աւելցընելով իր ժամանակի դիպուածներն ալ:*

*Ագաթանգեղոս որ Լուսաւորչի ու Տրդատայ վարքը գրեց, ոճին կողմանէ շատ ե գեղեցիկ է: Անուանի են նաև Զենոբ Գլակայ Տարօնոյ պատմութիւնը, Փաւստոս Բիւզանդացիին իր ժամանակակից պատմութիւնը. այս իրեքն ալ Դ դարուն մէջ էին:*

*Եղիշէի Վարդանանց պատմութիւնը, շարադրութեան ու կարգաբանութեան կողմանէ ամէն ազգային պատմիչներէ գերազանց: Երևելի է նաև Ղազար փարպեցւոյն Վահանանց պատմութիւնը: Մովսես Կաղանկատուացիին Աղուանից ցեղին պատմութիւնը, որ գրած է Է դարուն, և աւելցուցած են ինչուան Ը դար. Թովմա Արծրունիին Արծրունեաց ցեղին պատմութիւնը Ը դարուն. ԺԱ դարուն մէջ Արիստակես Լաստիվերտցիին իր ժամանակի պատմութիւնը: ԺԲ դարուն՝ Մատթէոս Ուռհայեցին. ԺԳ դարուն՝ Կիրակոս և Վարդան վարդապետք: Վերջի առեններուը անուանի եղած է Առաքել պատմիչը՝ որոյ թէպէտ և գրութեան ոճը հասարակ է, բայց պատմութեանը մէջ շատ գիտելիք կան:*

*423. Բանաստեղծութեան կողմանէ ինչպէս էր մեր ազգը:*

թէպէտ և հին ատեն բանաստեղծու-
թիւնը Հայաստանի ամէն կողմը ընդհա-
նուր ծաղկած չըլլայ, բայց տեղ տեղ շատ
առաջ գացած էր, ինչպէս Գողթն գաւա-
ռին ու Սիւնեաց աշխարհին մէջ. Թ.Ա. դա-
րուն մէջ, ինչպէս կ'ըսէ Մագիստրոս, մեր
ոտանաւորներուն ու երգերուն չափերը ու
ոտքերը նոր փոփոխութիւններ առին Աբա-
բացւոց կամ Իսմայելացւոց կանոններուն
հետևելով, որոնք շատ ծաղկած էին այն
ատեն երաժշտութեան, թուաբանութեան,
երկրաչափութեան, աստղաբաշխութեան
և ուրիշ գիտութիւններու մէջ:

424. Բանաստեղծութեանց մէջ մեր ազ-
գին մէջ որո՞նք եղան երևելի:

Հեթանոսութեան ատեն երևելի եղած-
ները յայտնի չեն. իսկ քրիստոնէութեան
ատեն՝ անունով կը յիշուին Մովսէս Խորե-
նացին որ Քերդողահայր կ'ըսուի, Սահակ
նոս Սիւնի, Պետրոս, Մաթուսաղա և Թէո-
դորոս իրեքն ալ Սիւնեաց աշխարհէն,
Գրիգոր Նարեկացի Մագիստրոս, Ներսէս
Շնորհալի՝ որ մեր տաղաչափութեան ճամբը
շատ կարգաւորեց, պարզելով ու նոր տե-
սակ կարգ մը մէջը խոթելով:

425. Եկեղեցական գրուածոց կողմանէ
ինչ երևելի մատենագիրներ ունինք:

Եկեղեցական մատենագիրներու կար-
գէն են բոլոր մեր հին թարգմանիչները,
ինչպէս են առաջն Սահակ, Մեսրոպ, Խո-
րենացի, Մամբրէ, Եզնիկ, Եղիշէ, և ու-

ըիշ սրբոյն Սահակայ և Մեսրոպայ աշ-
կերտներըը, որոց միայն անունը կըյիշուի
իբրև Թարգմանիչ: Անուանի է նաև Սահ-
ակ Սիւնեցին, Յովհան Իմաստասէր,
Խորով Անձևացեաց եպիսկոպոսը, Գրի-
գոր Նարեկացին, Իգնատիոս որ Ղուկա-
աս աւետարանին մեկնութիւնը գրած է,
Սարգիս՝ որ կաթուղիկեայ թղթոց մեկնու-
թիւնը գրած է. և Ներսիսեանք՝ Շնորհա-
լին ու Ամբրոնացին: ԺԲ ու ԺԳ դարերուն
մէջ Սարկաւագ վարդապետ, Մխիթար
Գօշ, Վանական վարդապետ, Վարդան,
և այլն:

426. Ճարտասանութեան մէջ որոնք ե-
գած են անուանի Հայոց մէջ:

Մովսէս Խորենացի մեր հին Հայկազանց
և Արշակունեաց մէջէն Անուշաւանը, Ա.
Տիգրանը և Վաղարշակը՝ պերճաբան և կո-
րովաբան և աղէկ խօսող կ'անուանէ: Ա-
թենք սաւրող Հայոց մէջ ամենէն անուանի
ճարտասանն Բրոյերեսիան էր՝ զոր վերը
յիշեցինք. իսկ Թարգմանչաց մէջ ճարտա-
սանութեամբ հռչակուեցան Մով. Խորե-
նացի, Եղիշէ, Մամբրէ, Թէոդորոս, Ղա-
զար, Եզրաս Անզեղացի, Խօսրով. և այլն.
Մաթուսալա և Պետրոս և Սեբէոսանոս
Սիւնեաց եպիսկոպոսքն, Յովհան Իմաս-
տասէր, Յովհան Սարկաւագ, Ներսի-
սեանք, Սարգիս վարդապետ, Գրիգոր
Տղայ, և այլն:

# ԳԼՈՒԽ ԺԶ.

## Ա. Յունաստանեայց վրայ.

427. Ո՞ր արուեստները նախ Հայաստանի մէջ ծաղկեցան:

Նախ երկրագործութիւնը գրեթէ Ա. Պատմայ հետ ծնաւ Հայաստանի մէջ, երկրորդ անգամ Նոյին հետ սկսաւ. այս ամէնօգտակար արհեստը աւելի ծաղկեցուց Վաղարշակ Հայաստանի մէջ, բայց ամենէն աւելի ծաղկեցնողը եղաւ Ա. Տրդատ Բ, որոյ ատենին համար կ'ըսէ Խորենացի (Բ. ԺԶ.) թէ անգործ երկիր մը չկար Հայոց աշխարհին մէջ: Նոյնպէս կ'ըսէ Յովհ. Կթ. Հայրապետենց Ա. Հռոմ թագաւորին համար, թէ շատ ծաղկեցուց երկրագործութիւնը:

428. Որսորդութեան վրայ ինչ գիտելիք կան:

Երէց և թռչուններու որսորդութիւնը հին ատենուան արհեստներէն մէկն է, որ ինչպէս ուրիշ արուեստներ ազգերու մէջ յառաջացած էր, սանկ ալ նաև մեր մէջ. թագաւորը ատեպ ատեպ որսի կ'ելլէր բազմութեամբ ու մեծ հանդէսով այլևայլ լեռներու վրայ, ուր որ վայրենի կենդանիք շատ կը գտնուէին, ինչպէս էր Շահապիվան լեռը, Կոզայովիտ գաւառը, Մասեաց ոտն, Ապահունիք. և այլն: Որ-

որդութեան արհեստը իշխանապունք ու թագաւորական մարդիկ չէ թէ միայն զբօսանաց համար կը գործածէին, հապա նաև իրենց մարմնոյն կրթութեանը համար, որով պատերազմի մէջ թշնամեաց այլևայլ հնարքներուն դէմը կարենան առնուլ, ու նետաձգութեան և դինաշարժութեան մէջ աւելի կրթուին: Երէց որսորդութեան համար երուանդ ու խոսրով Բ մանաւանդ անտատ տնկեցին ցանկով պատած, ուր երբեմն երբեմն հանդէսով որսի կ'ելլէին ուրիշ թագաւորական պաշտօնէներով ու իրենց որդիքներովը մէկտեղ:

429. Ա.րձանագործութիւնը մրջափ ծաղկած էր:

Ա.յս բանիս վրայ մանաւանդ յիշատակութիւն մը չկայ մեր մատենագիրներուն մէջ. բայց Ա. Ա.րտաշէսին ըրածը, որ Յունաստան արշաւելով անկէց գեղեցկագործ արձաններն ու կուռքերը ընտրեց Հայաստան բերաւ, բայց՝ի մեծին Ա.րտաշէսի ընտիր ախտրժակէն՝ կը ցուցընեն նաև որ թէպէտ և Ա.րտաշէսէն առաջ այնչափ ծաղկած ալ չըլլար արձանագործութիւնը, սակայն անկէց եառքը պէտք է որ շատ առաջ զացած ըլլայ, ունենալով իրենց աչքին առջևը գեղեցիկ արձաններու օրինակներ:

430. Ձարտարապետութիւնը մրջափ ծաղկած էր:

Ստրաբոն շատ կը գովէ Կորդուաց աշխարհին բնակիչները, թազաք առնելոյ հա-

մար չինած պատերազմական մեքենաներուն ու ճարտարապետութեան կտրմանէ։ Հայոց ճարտարապետութեան ճաշակ ինչուան հիմա ճնացած են հին եկեղեցիքը. ինչպէս էջմիածնի, Աղթամարայ, Անւոյ, Զորոյզեաի, Սաւոյ, և գանազան վանքերուն եկեղեցիները և ուրիշ հին շինուածները, որք թէպէտև չունին յունական և հռոմէական դեղեցիկ ճարտարապետութիւնը, բայց իրենք ալ ունին առանձնական գեղեցկութիւններ, մանաւանդ գառնի գեղին մէջ Տրդատայ շինած պալատին աւերակները, Անի Բագրատունեաց թագաւորաց նիստ քաղաքին աւերակները, պարիսպները, եկեղեցիները՝ որ հիմա տասնի չափ կը համրուին, և թագաւորական պալատը որոյ գեղեցկութեանը ու քանդակեալ զարդերուն վրայ ինչուան հիմա ճանապարհորդները կը զարմանան, և հիմակուան գեղեցիկ ճարտարապետական չէնքերուն համար կը դնեն։

431. Որո՞նք եղան ճարտարապետութեան կողմանէ երեւելի։

Կը յիշուի Տրդատ անունով ճարտարապետ մը, որ ծ դարուն մէջ մեծ անուն հանեց։ Ատոր աւենը կոստանդնուպոլսոյ սուրբ Սոփիա տաճարը երկրաշարժէ վասիլ կայսեր ժամանակը խախտելով ու ճեղքուելով, այս հայազգի Տրդատ ճարտարապետը որ յունաց մէջ ալ խիստ մեծ անուն ունէր, առջինէն աւելի ազուր չի-

նեց, ինչպէս որ կ'ըսէ Ս.տոդիկ: Երիներց նաև Հայաստանի Ս.նի քաղքին վրատուոր կաթուղիկէն Սմբատ Բին հրամանովը: Նոյն ժ. դարուն մէջ անուանի եղաւ Մա- նուէլ ճարտարապետն ալ որ չինեց Գագիկ Ս.րծրունի թագաւորին հրամանաւ Ս.ղ- թամարայ վրատուր եկեղեցին, որոյ մէջ Ս.բրահամէն ու Դաւթէն սկսեալ բոլոր նահապետաց, մարգարէից ու առաքելոց պատկերները վորել տուաւ վարպետ քան- դակագործ կրօնաւորի մը: Բաց 'ի ուրիշ այլևայլ արձաններէն և կենդանեաց թռչը- նոց վրուանցներէն, ժամուն մէջ էր նաև Գագիկին համար վրատուր գահ մը: Ս.յս չինուածներուն մեծ մասը գետ ինչուան հիմա կեցած է:

432. Զօրաւ քէօփրիւի ըսուած կամուր- ջին վրայ ի՞նչ գիտելիք կան:

Ս.յս եօթնականամար ու քարաշէն հոչա- կաւոր կամուրջը՝ ինչպէս կ'ասանդեն՝ չի- նեց Հայ հովիւ մը Հասանդալայու մօտ, Ե- րասխ գետոյն ուրիշ գետակի մը հետ միա- ցած տեղը դէպ 'ի քովընտի ձգելով. որ հին ատենէն 'ի վեր ինչուան հիմա խիստ անուանի է, վասն զի այս կամուրջը միայն կրցած է առանց կործանելու Երասխ գե- տոյն ջուրերուն սաստկութեանը դէմ դնել: և ուրիշ ամէն կամուրջները փլած են:

433. Երաժշտութիւնը մրջաւ ծաղկած էր մեր ազգին մէջ:

Երաժշտութեան արհեստը ամէնուն հա-

ճոյ ըլլալով, ու ամենայն խանճոյից, Հանդէսներու ու տօներու մէջ մտնելով, յայտնի է որ ամէնէն ազգի մէջ ալ կար, բայց՝ի Եգիպտացոցմէ որոնք մեզմէ աւելով ե. րաժշտութիւնը՝ կ՚ատէին։ Մեր ազգին մէջն անուանի էին Գողթն գաւառին մուսաններն ու բանաստեղծները՝ որ բամբիռներով կ՚երգէին մեր դիւցազուններուն քաջութիւննե. րը, ու նահապետաց պատմութիւնները։

434. Բայց՝ի Գողթն գաւառին երգիչնե. րէն, որո՞նք եղան անուանի քրիստոնէու. թեան առեն։

Սուրբն Սահակ, որ շատ հմուտ էր երա. ժըշտութեան, և գուսանութը ձայները։ Մով. սէս Խորենացին՝ որ շատ քաղցրանուագ չարականներ հինած է։ Ստեփանոս Սիւ. նեցին՝ որ աւագ օրհնութեանց ներդաշնա. կաւոր չարականները հինեց։ Ի գարուն մէջ երևելի էր Սամուէլ կամրջաձորեցին, և Թէոդորոս Աւլախօսիկ՝ որ անուանի երա. ժիշտ էր։ Ի՛ր գարուն մէջ Ս. Ներսէս Շնորհալի, որ նոր կենդանութիւն մը տը. ւաւ մեր երգարաններուն, ու ժամակարգու. թիւնը շատ ընտիր չարականներով ճոխա. ցուց։ Խաչատուր Տարօնեցին Հաղարծին վանքէն, որ չարականին արդէն հնարուած խազերը Հայոց մէջ տարածեց և ուրիշնե. րուն սովրեցուց։

# ԺՕԴՈՒԱԾ Բ.

## Վաճառականութեան.

435. Վաճառականութիւնը երբ սկըսաւ է:

Ինչպէս որ առաջին երկրագործները Հայերը եղան, սաանկ ալ առաջին վաճառականները իրենք եղան. վասն զի վաճառականութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ իր աշխարհին բերքերը առնուլ ուրիշ տեղ տանիլ, և անկէ իրեն հարկաւոր եղած բաները իր աշխարհը բերել: Վաճառականութիւնը առաջ մօտիկ ազգերու մէջ ըլլալուն համար, ցամաքային վաճառականութիւնը ծովայինէն հին է:

436. Ստրաբին մատենագիրներէն ոմկը վկայէ Հայոց վաճառականութեան վրայ:

Մեր ազգին վաճառականութիւնը կը գովեն հին ու նոր օտարազգի մատենագիրներէն չատերը. նոյնպէս գովեստով կը յիշուի տուրք Գրոց մէջ, ուր կ'ըսէ. Եւ՝ի տանէ Թորգոմայ ձիովք և հեծելովք և ջորւովք լցին զվաճառս քո, (այսինքն Տիւրացոց): Ոմանք սխալմամբ և չգիտնալով մեր ազգին պատմութիւնը՝ կարծեցին թէ՝ի տանէ Թորգոմայ ըսելով կը հասկըցուի Թուրքոմանիա ըսուած Թաթարստանի երկիրը, և ոմանք ալ իմացան Կապա-

պավկիա, Հոն տեղի ճիւերն ու ջրերը անուանի ըլլալուն համար :

437. Հայերը ծովով ինչպէս վաճառականութիւն կ'ընէին :

Հայաստան թէպէտ և ցամաք երկիր է, բայց կասպից ծովը, Սև ծովը, Միջերկրական ծովը և Պարսից ծոցը՝ որով Ովկիանոսին հետ հաղորդութիւն ունի, շատ հեռու չեն, և այսպէս ամէն կողմէն վաճառք կու գար Հայաստան, նոյնպէս ալ նոյն վաճառքը իրենց աշխարհին վաճառքներուն հետ մէկտեղ Հայերը ամէն կողմ թէ ցամաքով և թէ ծովով կը տարածէին : Ծովով վաճառականութիւն ընելու այս դիւրութիւնն ալ ունէին, որ մեծամեծ գետերով իրենց մօտիկ եղած ծովերուն հետ հաղորդակցութիւն ունէին. ինչպէս, Կուր և Երասխով կասպից ծովին, Ճորոխով Սև ծովին, ու Եփրատ և Տիգրիս գետերով Պարսից ծոցին հետ :

438. Հնդկաստանի վաճառականութիւնը ինչ ճամբով կ'ըլար :

Կը պրսցեն Ստրաբոն և Պլինիոս թէ Հնդկաստանէն վաճառքները եօթը օր ցամաքով կու գային նախ Բակտրիա, անկէց Իքարոս լսուած գետով որ Օքսոս գետոյն մէջ կը թափի, անկէց կասպից ծով, կասպից ծովէն կուր գետ, կուր գետէն ցամաքով կը հասնէր Փասիս կամ Ճորոխ գետը, անկէց Կողքիս, և Կողքիսէն ալ Սև ծովով կը տարածուէր բոլոր Յունաս-

ստան և Եւրոպա։ Ա.յս վաճառքները Հընդ-
կաստանէն բերողներուն շատը Հայերն
էին. ինչպէս կը վկայէ Հուետիոս ալ, թէ
Կասպից ու Պոնտոսի ծովը Հայոց ամէն
տեսակ վաճառքներ կը մատակարարէր,
զորոնք Հայերը Պարսկաստան և ուրիշ տե-
ղեր տանելով կը սիրէին։

439. Ա.ս ծովով նաւարկութիւնը երբ
սկսաւ։

Ա.ս ծովը վտանգաւոր ըլլալուն համար,
իրեն նաւարկութիւնն ալ Միջերկրական
ծովին նաւարկութենէն շատ ուշ սկսաւ. և
կ'երևի թէ նախ Ա.ս ծովուն մէջ նաւարկու-
թիւն ընողները Ա.րգոնաւորդները եղան
Քրիստոսէ 1200 տարի առաջ։ Սակայն
քանի որ Ա.ս ծովուն նաւարկութիւնը այն-
չափ յաճախած չէր, Հայերը իրենց վա-
ճառքները կը տանէին Յոնիա, Ա.տրուց
երկիրը և Կիլիկիա, որոց մէջ անուանի
վաճառատեղիներ կային, և Փիւնիկեցիք
ու Տիւրացիք կու գային այն տեղերէն կ'առ-
նուին վաճառքները ու ատոնք անդին կը
տարածէին։

440. Հայերը որ ճամբով դէպ 'ի Ովկիա-
նոս վաճառականութիւն կ'ընէին։

Տիգրիս ու Եփրատ գետերով կ'երթային
Պարսից ծոցը, անկէց ալ Ովկիանոս։ Ա.յս
գետերուն վրայ այլևայլ վաճառատեղիներ
հինուած էին, որոց մէջ անուանի է Բա-
բելոն. քաղաքը Եփրատին վրայ։ Երեսուս
մանր կը տատրակէ Հայոց վաճառականու-

թիւնը որ Եփրատ գետոյն մէջէն կ'ընէին. «Հայերը, կ'ըսէ, իրենց նաւուն կողերը տունկի ճիւղերէ կը չինէին, ու դրսէն կողմը բոլոր մորթով կը պատէին. և նաւուն ածաղքը եւսի կողմէն տարբերութիւն չունէր, վասն զի երկու կողմն ալ կլորկեկ կը չինէին. մէջը կը դնէին այլևայլ տեսակ վաճառքներ, մանաւանդ գինի: Այս նաւերուն մեծերը ինչուան 5,000 տաղանդ, այսինքն 725,000 լիտր ծանրութիւն կը տանէր, և ամենուն մէջն ալ էշեր կը դնէին: Երբոր Եփրատ գետոյն մէջէն Բաբելոն կը հասնէր նաւը՝ որոյ կառավարողները երկու հոգի էին միայն, մէկը առջևէն մէկալը ետևէն, կը պարպէին նաւը ու կը ծախէին ամէն վաճառքները նաև նաւուն տունկի կողերն ալ, ու նաւուն վրայ պատած կաշին առնլով կը բեռնաւորէին էշերուն վրայ. ու կը դառնային Հայաստան, ու ետքէն կը չինէին նոյն կերպով ուրիշ նաւեր՝ վասն զի Եփրատ գետէն դէպ'ի վեր նաւարկելը անկարելի է աստիկ սրընթացութեանը պատճառաւ»:

441. Հայաստանի սեպհական վաճառքները որո՞նք են:

Հայաստանի սեպհական վաճառքներն են ոսկի, արծաթ, ցորեն, գարի, աղ, վուշ, բամբակ, ոչխարի և այծի մորթ, արջառ, ոչխար, ձի, Լորի, որդան կարմիր, զորպէն՝ որ մանանայի նման բան մի է, ծառերու վրայ կ'իջնայ և մեղրի համ ու

նի. չորցուցած ձիրան, չամիչ, պինի, լաս-
չընդեղ, մեղր, տառեխ՝ որ ապխտած ձուկ
է, և կ՚ելլէ Բզնունեաց ծովէն, Հայկա-
ւակ, աղքար, և այլն:

442. Հայաստանի վաճառատեղինները
կամ շահատան քաղաքները որո՞նք են:

Յիշատակութիւն չկայ թէ հին առեն ո՛ր
քաղաքներն էին վաճառատեղի, բայց կ՚ե-
րևի թէ Ս.րմաւիր, Ս.րտաշատ թագաւո-
րանիստ քաղաքներն էին, որ գիրքերնին
ալ յարմար է վաճառականութեան երա-
խայ մօտիկ ըլլալուն համար: Վ եցերորդ
դարուն մէջ խիստ անուանի վաճառատե-
ղի էր Դուին քաղաքը, ուր Վ րաստանէն,
Պարսկաստանէն, Յունաց երկրէն, Հընդ-
կաստանէն և ուրիշ ամէն ազգերէն վա-
ճառք կու գար, ինչպէս որ կը վկայէ նաև
Պրոկոպիոս: Շատ կը գովէ Վ աստխլերա-
յին Ս.րծն ատանին վաճառականներն ու
վաճառականութիւնը որ կարինին մօտիկ
է, նոյնպէս կարս քաղքինը որ ԺԱ. դա-
րուն ծաղկեցաւ: Անուանի էր նաև Բա-
զէշ և կոմանա ու Մելիտինէ՝ փոքր Հայոց
մէջ: Հայաստանի շատ անուանի վաճառա-
տեղիներէն մէկն ալ էր Սպեր կամ Սու-
վեր, որոյ ոսկին խիստ ազնիւ և առատ
էր, որ սուրբ Գրքին մէջը ատեպ կը յիշուի:

443. Ինչ՞ն կը կարծուի թէ Սուվիները
նոյն է մեր Սպերին հետ:

Նախ Ծննդոց գրքին մէջ (ժ. 29) բայց
՚ի Եօթանասանից թարգմանութենէ ուրիշնե-

րը Սոփիներին տեզ Ոփիր կը դնեն , որ յայտնի է թէ Յեկտանայ որդւոյն Ուփիր նահապետին անունէն եղած էր , վասն զի տուրբ Գրքին մէջ ուրիշ տեղ կ'ըսէ , յիշելով Յեկտանայ զաւկիններուն անունները . ( Ծն . Ժ . 30 ) « Ամենեքին սոքա որդիք Յեկտանայ . և եղև բնակութիւն նոցա ՚ի Մասեայ մինչև ՚ի զալ ՚ի Սոփերա ( կամ Ոփիրա ) լեառն արևելեայց » . որով կ'երևայ թէ Յեկտանայ տասուերեք զաւկիներէն մէկն՝ Ուփիր , Սպեր լերան մօտ բնակեցաւ , և լերան անունն ալ կոչուեցաւ Ոփիր , ըստ սուրբ գրոց Սոփիր , Սեփարուիմ , Սոփրար . զոր օտարազգի մատենագիրները ինչպէս Դիոդոր Սիկիլիացի , Ստրաբոն և Երոդոտ քիչ մը ծռմռելով կ'անուանեն Սիաբիդիտիս , Սիդրար , Սաքիր կամ Սասքիր , և Հայաստանին մօտիկ կը դնեն Կողքիսի մէջ : Իսկ թէ մեր Սպերը նոյն է Սոփիներին հետ , կը ցուցընէ նախ , անունին մերձաւորութիւնը . ր , տեզւոյն գիրքը , վասնզի ինչպէս սուրբ Գիրքը և օտարազգի մատենագիրները Հայաստանի մօտիկ կը դնեն , ասանկ ալ Խորենացին մեր Սպեր գաւառը բարձր Հայոց մէջ կը դնէ , որ Կողքիսի սահմանակից է :

444 . Սողոմոնի և Քիրամայ նաւերը ինչ ճամբով Սոփիր կ'երթային :

Ասոնց նաւարկութիւնը , ինչպէս կ'ըսէ Կալմէթ , Ա և ծովով չէր , վասն զի Սողոմոնի տեն անծանօթ էր Ա և ծովուն

նաւարկութիւնը. Հապա Գաւխոնդաբերէն կ'ելլէին, որ Կարմիր ծովուն վրայ է, կ'երթային Պարսից ծոցը, անկէց կը մտնէին Տիգրիս ու Եփրատ գետերուն մէջ, ու կ'երթային անոնց վրայ չինուած վաճառատեղիները, և հոն կ'առնուին վաճառականներէն Սպեր կամ Սոփիեր լեռնէն բերած ոսկին, և ուրիշ վաճառքներ որ կու գային այն վաճառատեղիները՝ Հնդկաստանէն և ուրիշ երկիրներէն. ինչպէս են սիրամարգ, կապիկ, փղոսկր, և այլն, Եւ կամ թէ Սողոմոնի նաւերը՝ ի դարձին կը հանդիպէին Արաբիայի և Եթովպիայի նաւահանգիստներն ալ, ու հոնկէ կ'առնուին վրձոսկր, կապիկ, և ասոնց նման բերքեր, և այլն. ասոր համար է որ նաւարկութիւնն ալ երկայն ատեն կը քշէր:

445. Ուրիշները Սոփիերը ծուր կը դնեն:

Եղան ոմանք որ Սոփիերը զրին Սպանիա, հոն տեղի ոսկին առատութեանը համար, ոմանք Հնդկաստան և Սէյլան ու Սումատրա կղզիները, իբր թէ ինչ որ կ'ուսէր Սողոմոն, այս երկիրներուն մէջ կը գտնուէր. բայց Հնդկաց ծովուն մէջ Սողոմոնի ատեն դեռ նաւարկութիւնը առաջ զացած չէր: Եղան ոմանք որ ինչուան Աբերիկայի Բերու աշխարհքը զրին, իրեն ոսկին չատութեանը համար: Շատերն ալ Արաբիայի եզերքը կը դնեն այս երկիրը: Մեզի հաւանական կ'երևնայ վերի ըսածնիս, որ սուրբ Գրոց և արտաքին պատմիչներու ըսածին ալ կը յարմարի:

446. Հայաստանին մօտիկ ինչ երեւելի քահաստան քաղաքներ կային ուր մեր վաճառականներն ալ կը յաճախէին։

Բաբելոն քաղաքը Եփրատայ վրայ՝ Բաղդէացւոց երկրին մէջ, Անախոթ և Տապսակ Ասորւոց երկիրը Եփրատայ քով, Պալմիրա Փիւնիկեցւոց երկիրը. այս քաղքին հինութիւնը Յովսեպոս Սողոմոնին կու տայ։ Ոբիս Տիգրիսին մօտիկ, Պաղնա Միջագետքի մէջ, Դիոսկուրիաս Կողքիսի մէջ Սև ծովուն մօտիկ խիստ անուանի վաճառատեղի էր հին առեն. Տրապիզոն Սև ծովուն վրայ վերջի առեններըը անուանի վաճառատեղի եղաւ Յունաց կայսերութիւնը կոտանդնուպօլսէն դադրելէն ետև։

447. Թարշիշին վրայ ինչ պիտելիք կան։

Թարշիշ կամ Թարսիս հռչակաւոր վաճառատեղին էր ըստ ոմանց Կիլիկիոյ մէջ Միջերկրական ծովուն մօտիկ, և այսպէս կոչուած կ'երեւի Յաւան նահապետին Թարսիս կամ Թարշիշ (Ծն. Ժ. 27) որդւոյն անունը։ Ա. յս քաղքին օտար ազգերը Թարսուս կ'ըսեն և մեր լեզուով Տարսոն։ Ոմանք ալ կը կարծեն թէ Թարսիսը Սպանիոյ մէջ է. բայց սուրբ Գրոց խօսքերէն ալ կ'երեւի որ Թարշիշը Միջերկրական ծովուն վրայ էր և Հրէաստանէն շատ հեռու չէր։ Եւ դարձեալ, երբեմն Սողոմոնի նաւերը կ'երթային նախ Գաղիոնգաբեր՝ որ Կարմիր ծովուն մէջն է, անկէց Թարշիշ. իսկ արդ թէ որ Թարշիշը Սպանիա ըլար, պէտք էր

որ Սողոմոնի նաւերը պտըտէին բոլոր Աւրրիկէի չորս դին, և Բարեյուսոյ գլխէն անցնելով երթային Սպանիա, որ անկասրելի է, վասն զի գեռ այն ատենները ստորութիւն չկար այն ծովերուն մէջ ճամբայ ընելու:

448. Սողոմոնի նաւերը քանչ ճամբով Թարշիշ կ'երթային:

Սողոմոնի նաւերը երկու ճամբով կրնային Թարշիշ կամ Տարսոն երթալ. մէյմը Միջերկրական ծովուն մէջէն, մէյմ'ալ կարմիր ծովուն մէջէն Գասիոնգաբեր երթալէն ետև, կը մտնէին Պարսից ծոցը, անկէց Եփրատ գետը, և մօտիկ չինած այլևայլ վաճառատեղիները հանդիպելով՝ ուզած վաճառքնին կ'առնուին ու կ'երթային Թարշիշ՝ որ Եփրատ գետոյն մօտիկ էր:

449. Հայոց հիմակուան վաճառականութեանը վրայ քանչ պիտելիք կան:

Հայերը իրենց աշխատասէր եռանդուն ու տոկուն բնութեամբը ինչպէս հին ատեն, նոյնպէս նաև հիմակուան ատենս ալ երեւելի եղած են վաճառականութեան մէջ, որուն կը վկայեն օտար ազգերն ալ. վասն զի Եւրոպային մէջ վաճառականութիւնը ծաղկեցընողը ու սովրեցընողը Հայերը եղան: Ինչպէս Ռըշըլիէօ կարդինալը, որ Լուդովիկոս ԺԳ ին թագաւորահայրը կը համարուէր, վաճառականութիւնը գաղղիայ մէջ ծաղկեցընելու համար, շատ Հայեր կանչեց Գաղղիա, ու իրենց Մար-

*ակիա քաղաքը տպարան մը տուաւ Հայերէն գրքեր տպելու համար : Մեծն Պետրոս շատ Հայեր կանչեց Ռուսաստան վաճառականութիւնը ծաղկեցընելու համար : Երրորդ Ալեքսանդր Հայերուն ալ վաճառականութիւնը ծաղկեցընողը Հայերն են, ինչպէս Ղեհատան, Հոլանտա, Իտալիա՝ ուր Վենետիկ քաղաքը առաջուց շատ հարուստ վաճառականներ կային. իսկ Ասիոյ մէջ Պարսկաստան, Հնդկաստան վաճառականութիւնը ծաղկեցընողը նախ Հայերը եղան, ու Անգղիացիք Իրենց մէջ առնելով յաջողակեցին անոնց մէջ այս վաճառականութիւնը. բայց ինչուան հիմա ալ այն կողմերը շատ հարուստ վաճառականներ կը գտնուին Հայոց ազգէն : Վաճառականութեան սէրն է, որ Հայերը Իրենց Հայրենիքէն դուրս օտար երկիրներ բնակեցընել կու տայ : Եւ ասով կը ցուցուի թէ Հայերը ինչպէս հին ատեն Փիւնիկեցոց, Տիւրացոց ու Կարթեդոնացոց պէս վաճառականութեան եռանդ եղող ազգերէն մէկն էին, ասանկ ալ հիմա երևելի են վաճառականութեան մէջ Իրենց ճարտարութեամբը ու արթնութեամբը *

* Բազմաթիւ օտարազգեաց վկայութիւններէն, հոս միայն Մաւթինիէինը բերենք, որ կ'ըսէ իր աշխատասիրական բառգիրքին մէջ. "Հայերը շատ յարմար են վաճառականութեան, ու ամէն Ջանքով ու ուշադիր որ կրնան անոր եռանդը կ'ըլլան :

# ԳԼՈՒԽ ԺԷ.

## *Հայաստանի բնակչաց կառավարութիւնքն ու պատերազմունքը:*

## ԾՕԴՈՒԱԾ Ա.

### *Հայոց ազգին կառավարութիւնքը.*

450. Նոյէն ինչուան ազգաց բաժանումը ինչ մասնաւոր բնութեան տէր էին Հայաստանի բնակիչները:

Նոյէն ինչուան փաղեկայ աւուրը, որ 530 տարուան միջոց է, արտաքին պատմիչները Ոակի դար կ'անուանեն, և չեն կըշտանար այն միջոցին եղած Հայաստանի բնակչաց երջանկութիւնը ու աւաքինութիւնները պատմելու. վասն զի Նոյէն ինչուան փաղեկայ աւուրն մարդիկ Հայաստանի մէջ բազմացան: Ամէն բան հասարակաց էր այն աւուրն, չէր լսուեր իմս, քոյկո. Ջէ թէ միայն աէր էին վաճառականութեան արեւելքի մէջ, հապա նաև օգնական Եւրոպայի մեծամեծ քաղաքներուն". հոս երկայն բարակ Հայոց ազգին բնութիւնը, ու անոնց վաճառականութեան կերպը գովելէն եաև, կ'աւելցընէ. "Համառօտ ըսել, Հայերը որ առաջին երկրագործներն էին, անկէց եղան նաև առաջին վաճառականները. և այս վաճառականները աշխարհիս սկիզբէն՝ ի վեր շատ երևելի եղան":

ոչ յաւիշտակութիւն կար ուրիշին տա-
ցուածքին, ոչ ազահութիւն, ոչ վատա-
րութիւն և ոչ իշխանասիրութիւն: Բար-
քերնին անմեղ ու կիրթ. բնութեամբ միա-
բանաբեր, ընտանի ու պիտաճ, մէկ սիրտ,
մէկ լեզու: Պէտք չէ չափազանցութիւն
սեպել այս բաներս. վասն զի բնական է որ
չրհեղեղին մեծ պատիժը յիշելով, որ գե-
նոր եղած էր, զգուշանային մարդիկ ախ-
տերէն ու առաքինութեան ետևէ ըլլային,
որուն մեծ օրինակ ու յորդորող էր Նոյ
նահապետն ալ:

451. Մարդկանց Հայաստանէն ցրուե-
լէն ետև ինչ բնութիւն ունէին մնացած
Հայաստանի բնակիչները:

Հայկ երբոր աշտարակաշինութենէ ետև
Հայաստան դարձաւ, սկսաւ երկիրը կար-
գի կանոնի դնել իր որդւոցը ու թոռներով
մէկտեղ: Եւ Հայկայ մահուընէ ետև քանի
որ Հայաստանի մէջ օտար թշնամիներ չէին
յարձակած, խաղաղութիւն էր ամէն տեղ,
և չինութեան ետևէ կ'ըլլային. բայց այս
խաղաղութեան պատճառաւ կ'երևի թէ
Հայկայ յաջորդները մոռցեր էին իրենց նա-
խահօրը քաջութիւնը, որով թշնամիները
արձակ համարձակ տիրեցին Հայաստանի
զանազան կողմերուն. ինչուան որ եկաւ
մեծն Ա.րամ, որ բոլոր թշնամիները վանեց
ու աշխարհը կարգի կանոնի դրաւ: Բայց
իրմէ ետքը սկսաւ չինութեան ու բարեկար-
գութեան, անմեղութեան ու խաղաղու-

թեան ոգին պահել, ինչուան եւս մեծն Տիգրան որ այլևայլ բարեկարգութիւններով զարդարեց Հայաստան աշխարհը։ Տիգրանէն եւս նորէն իր ազգի խեղճ վիճակին դարձաւ, ինչուան վ. աղարշակ Գարթեւին ատեն, որ եկաւ Հայաստանի տիրեց, որով Հայկազանց տէրութիւնը վերցուեցաւ, սկսաւ Արշակունեաց տէրութիւնը։

452. Մարմնոյ ուժի ու քաջութեան կողմանէ որո՞նք անուանի եղան Հայոց մէջ։

Քաջութեան ու մարմնոյ ուժի կողմանէ խիստ երեւելի էր մեր ազգը, անանկ որ եթէ ամէնքն ալ միաբան ըլլային, թերևս օտար ազգ չկարենար իրեն յաղթել, թէ որ մարմնոյ կարճութեան հետ մէկտեղ նաև պատերազմական կրթութիւնն ալ ազէկ ունենար։ Անթիւ քաջերուն մէջէն գոնէ յիշենք հոս, Հայկ, Արամ, մեծն Տիգրան, Վահագն, Տրդատ, Արշակ Ա., Տրդատ, Բաբիկ՝ Սիւնեաց Անդովկ իշխանին որդին, Վարազդատ, քաջն Մուշեղ՝ Պապ թագաւորին ապարապետը, մեծն Վարդան, Վահան Մամիկոնեան, Սմբատ Բագրատունի, Աշոտ երկաթ, Ապլխարիպ, և ուրիշ շատ երևելի ու քաջ զօրավարներ։ Ուստի հաճատօտ կերպով կ'ըսենք թէ մեր ազգը՝ի սկզբանէ ինչուան հիմա մարմնական քաջութեան, ու զօրաւոր կազմուածք ունենալու կողմանէ անուանի եղած է։

453. Հայք ո՞ր բարոյական առաքինութեանց մէջ անուանի եղած են։

ՈՂՈՐՄԱԾՈՒԹԱՄԲ ՀԱՏԵՐԸ ԱՆՈՒԱՆԷ ԵՆ, ԹՈՂԼՈՎ ՈՐԻՇՆԵՐԸ, ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ, ԽԱՉ, ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ՝ ՊԱՏՊ ԹԱՌԻՆ ՔԱՂ ՍԱՐԱՊԱԿԱՏԸ, ԱՀՈՏ Գ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԹԱԳԱՒՈՐԸ ՈՐ ՄԻՉԱ ԻՐ ՍԵՂԱՆԸ ԱՂՔԱՏՆԵՐՈՎ ԿԸ ԶԱՐԴԱՐԷՐ, ԵՒ ԱՆՈՐ ՀԱՄԱՐ ԱՆՈՒԱՆԵԳԱՒ ՈՂՈՐԱԾ:

ԱՌԱՔԱՁԵՌՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԲՈԼՈՐ ՄԵՐ ԱԶԳԱՅՆՈՑ ՃԻՐՔՆ ԷՐ, ԻՆՉՊԷՍ ՈՐ ՅԱՅՏՆԻ Կ'ԵՐԵՒԻ ԱՍՈՂԻԿԻՆ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՅ ԽՕՔԷՆ, ՈՐ ԱՌԱՔԱՁԵՌՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ԿՈՒ ՏԱՆ, ԻՍԿ ՈՉՏՈՒԹԻՒՆԸ, ԱՅՍԻՆՔՆ ՃԵՌՔԸ ԳՈՑ ԸԱՒԸԼԸ՝ ՅՈՒՆԱՑ:

454. ԱՀԻԱՐՀԱՇԻՆՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ ՈՐՈՆՔ ԵՐԵԵԼԻ ԵՂԱՆ:

ԱՀԻԱՐՀԱՇԻՒՐՔԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԲՈԼՈՐ ՀԱՅԿԱԶԱՆՑ ԱՒԶԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԸ ԵՒՆԷ Կ'ԸԱՒԱՅԻՆ, ՈՐՈՑ ՄԷՋ ԱՄԵՆԷՆ ԱՆՈՒԱՆԻՆԵՐՆ ԵՆ ԱՐԱՄ ԵՒ ՏԻԳՐԱՆ. ԻՍԿ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ՄԷՋ ԵՐԵԵԼԻ ԵՂԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ, ՈՐ Ա, ՈՒԱՄՆՔԸ ՅԱՂԿԵՑՈՒՑ. Բ, ԶԻՆՈՒՈՐՈՒԹԵԱՆ, ԻՐ ՊԱՂԱՏԻՆ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՆ ՈՒ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ ԿԱՆՈՆ ԴՐԱՒ. Գ, ՅԱՂԱՒԱՐ ՕՐԷՆՔՆԵՐ ՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՒԱՏԱՒԵՑ. Դ, ԶԱՆԱԶԱՆ ՀԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՐԱՒ, ԵՒ ԵՂԱՒ ՄԵՐ ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒՆ ՊԱՐԾԱՆՔ ԵՒ ԱՄԵՆՈՒՆ ՕՐԻՆԱԿ: ԱՐՇԱԿ Ա., ԱՐԱՇԷՍ Ր, ՈՐ ԶԻՆՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՐՈՒԵՍՏՆԵՐԸ ՎԱՂԱՐՇԱԿԷՆ ՀԱՒ ԱՒԵԼԻ ՅԱՂԿԵՑՈՒՑ, ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՒՈՑՈՒՑ: ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՔԱՂ ՍԱՐԱՊԱԿԱՏՆ ՈՒ ՄԱՐԴՊԱՆԸ,

և Մամիկոնեան ցեղէն ուրիշ զօրավարներ, որոնք աշխարհաշինութեան կողմանէ շատ երեւելի եղան: Նոյնպէս Բագրատունեաց ցեղէն Աշոտ առաջին թագաւորը որ շատ բարեկարգութիւններ ու շինութիւններ ըրաւ իր տէրութեանը մէջ:

455. Մեծն Ներսէս ինչ շինութիւններ ըրաւ:

Մեծն Ներսէս գրեթէ մեր երեւելի թագաւորներուն հաւասար ու անոնցմէ ալ աւելի շինութիւններ ըրաւ Հայաստանի մէջ, որ են, աղբատանոցներ, հիւանդանոցներ, ուրկանոցներ, այրենոցներ, հիւրանոցներ, պանդոկներ, դպրոցներ, վանքեր, կուսաստուններ, և այլն. և այս ամէն տեղերուն առանձին կալուածներ, թոշակներ, ու վերակացուներ հաստատեց. ու եղաւ ճըշմարիտ ողորմած հայր բոլոր Հայոց. և բացի՛ ուրիշ բարեկարգութիւններէն, որոշեց նաև որ աղբատները չմուրան ճամբուն վրայ, հապա երթան աղբատանոցներուն մէջ բնակին. արգիլեց մերձաւոր ամուսնութիւնները, նոյնպէս արգիլեց որ մեռելոց վրայ հեթանոսաբար սաստիկ ողբ չըննեն: Բայց Պապ Աշակունի անարժան թագաւորը մեծն Ներսէսը թունաւորելով սպաննելէն ետև, հրաման տուաւ որ բոլոր մեծին Ներսէսի շինած հիւանդանոցները, այրենոցները, աղբատանոցները, կուսաստուններն, և այլն, աւրեն, ու անոնց եկամուտները տէրութեան գրաւեն, ու աղբատ-

*ներըը առջինին պէս մուրան , որով Հայաստան իր առջի խեղճ ու ողբալի վիճակը դարձաւ :*

*456 . Ուրիշ ինչ կատարելութիւններ ունին Հայք :*

*Հայերը բնութեամբ շատ աչքաբաց են , և իրենց բանը գործը գիտցող , որով խիստ ալ յարմար են վաճառականութեան ու առևտուրի : Դարձեալ խիստ յարմար են ուսման ու սրամիտ , որով երևելի մարդիկ շատ կրնային ելլել մէջերնէն , թէ որ ամէնքն ալ միակերպ ուսումնասիրութեան եաևէ ըլլային : Նոյնպէս ամէն տեղ մեծ յարմարութիւն ցըցուցած են արհեստներու , ու ձեռագործ ճարտարութեանց մէջ : Բաց աստնգմէ Հայոց ազգին կատարելութեանց մէկը կը սեպուի նաև այս , որ Հայոց ազգը հին Եգիպտացւոց պէս միայն իր երկիրը պաշտպանել կը Ջանար թշնամեաց ձեռքէն , և ոչ հինաբար ուրիշներուն երկիրները վազել ու յափշտակել արդարութեան և իրաւանց ազդաց դէմ : Միայն Ս.րտաչէս եղաւ որ փառասիրութեամբ պատերազմ բանալով տիրեց Պարսկաստանէն ինչուան Յունաստան , բայց իր զօրքերէն սպանուեցաւ :*

# ՅՕԳՈՒՄԱԾ Բ.

## Հայոց ազգին պատկառելիութիւնը.

457. Հայոց ազգին գլխաւոր պակասութիւնները որո՞նք են:

Շատ փափաքելի էր որ այս գլխոյս վրայօք բան մը չունենայինք գրուցելու. բայց մէկը՝ որ ազգային պատմութիւնը ուշի ուշով կարդայ ու տեսնայ այլևայլ ժամանակ, այլևայլ դէպքերու մէջ ազգին գլուխը եկած կերպ կերպ չարիքը ու թշուառութիւնները, անկարելի է որ չխոստովանի թէ ոչ միայն չրջակայ օտար ազգաց թշնամութիւնը ու անգթութիւնը, այլ շատ հեղ նաև ազգայնոց բարոյական պակասութիւնները պատճառ եղեր են ազգին խեղճութեանը: Այս պակասութիւններուն մէջ ամենէն աւելի և աչքի զարնողը Անհիւրասիրութիւն կամ երկպառակոտութիւնն է, որ շատ չարեաց պատճառ եղաւ Արշակունեաց, Բագրատունեաց, և մարզպանաց ժամանակը, և մանաւանդ Վարդանանց պատերազմին առեն. որոյ մէջ Վասակ Սիւնիին անմիաբանութեանը պատճառաւ Պարսիկք բոլոր Հայաստանը տակն ու վրայ ըրին: Նոյնպէս նաև շատ աւերմունք ու նեղութիւններ կրեց Հայաստան, Բուզայի ու Յուսիկ ոստիկաններուն առեն մեր իշխանաց անմիաբան ըլլալուն համար:

Անմիաբանութիւնն էր որ շատ անգամ հա-
մազգաց արիւնով դաշտերը կը ներկէր,
նախարար, իշխան մէկմէկու դէմ զրզռե-
լով։ Դարձեալ անմիաբանութեան պատճա-
ռաւ էր որ Բագրատունեաց տոհմը այլ-
եայլ մանր թագաւորութիւններ բաժնուե-
ցան չուզելով մէկմէկու հնազանդիլ. նոյն
պատճառաւ նաև կաթողիկոսական աթոռն
ալ զանազան ճիւղ բաժնուեցաւ։ Ասոր մեր
ազգին պատերազմներուն մէջ յաղթուե-
լուն պատճառը՝ ոչ եթէ իրեն վատութիւնը
կամ տկարութիւնն էր, հապա շատ ան-
դամ անմիաբանութիւն էր։ Իսկ երբոր
իշխանները ու զօրքերը թագաւորին հետ
միաբանած թշնամեաց դէմ կը պատերազ-
մէին, միշտ յաղթող կ'ելլային։ Ինչպէս
Աբշակ Բին տուն քանի որ նախարարներն
ու զօրքերը իրեն հետ միաբան էին, 30 տա-
րի անդադար պատերազմ ընելով միշտ
յաղթեց Պարսից, բայց երբոր զօրքերը ի-
րենց թագաւորը թողուցին և չուզեցին հնա-
զանդիլ, մէկէն յաղթուեցան։

458. Մեր ազգին ո՞րն է երկրորդ գլխա-
ւոր պակասութիւնը։

Երկրորդ պակասութիւնն է նախանձը որ
շատ անգամ անմիաբանութեան ալ պատ-
ճառ կ'ըլլար։ Վասն զի ուր որ հաւասար
պատուով և իշխանութեամբ անկիրթ նա-
խարարներ ու իշխաններ շատ գտնուին,
հոն նախանձն ալ աւելի կ'ըլլայ, որով մէ-
կը մէկալէն աւելի ուզելով մեծնալ ու պա-

տուիլ, անիրաւ քաւութիւններով ընկերին չարեացը ու մահուանն ալ պատճառ կ'ըլլայ. և երբեմն վատախորհուրդ մատնութեանց ալ:

459. Ուրիշ ինչ պակասութիւններ կը յիշուին մեր ազգին վրայօք:

Մեր ազգին պակասութիւններէն մէկն էր քնութեամբ անխորտակէտ ըլլալը. որով քանի մը եաև առաջը լաւ չմըտածած իրենք գիրենք կը կործանէին, և վնասէն եաքն ալ գարձեալ չէին զգաստանար: Ինչպէս, թէպէտ այնչափ անգամ փորձեր էին թէ Պարսիկք միշտ նեղեր են գիրենք, ու հատոյ կողմանէ ալ այլևայլ տեղն հալածանք հաներ են, և սակայն նախարարները միաբան գնացին խնդրեցին Պարսից թագաւորէն, որ իրենց քնիկ Արշակունի թագաւորը վերցընէ, ու Պարսիկ մարզպան դնէ. միաբերնին դնելով թէ օտար թագաւորը իրենց համարիւն թագաւորէն աղէկ է. որով անկէ եաքը նեղութիւն ու վիշտ չճնաց զոր Հայաստան չքաշէ թէ հատոյ և թէ տէրութեան կողմանէ: Նոյնպէս մեծ սըխալմունք էր բոլոր նախարարներուն միաբան ցարկերտին երթալը. ուր ինչպէս կ'ըսեն փարպեցի ու Եղիշէ, գիտէին թէ խաղաղութեան համար չիկանչեր գիրենք, հապա սպաննելու կամ հատաքնէն ուրացընելու համար: Նոյնպէս սխալմունք էր որ վարդանանց պատերազմին տեղն վասկը՝ որ այնչափ չարութիւններ ըրեր էր,

բռնելով նորէն Թոզուպին, թէպէտ՝ կ'ըսէ եղիշէ՝ պիտէին թէ երդմունքը պիտի չպահէ, ու նորէն պիտի թշնամանայ: Նոյնպէս սխալմունք էր գազիկ Բագրատունեաց վերջի թագաւորին ըրածը, որ վեհան Սարդիսը բռնելէն ետև նորէն արձըկեց, ու իրեն ներքին խորհրդական ըրաւ, ուր շատ անգամ փորձեր քններ էր անոր խորամանկութիւնը, չարութիւնը և անհաւատարմութիւնը: Նոյնպէս անխորհրդութիւն էր բոլոր նախարարներուն միաբան բռնելը. բայց ասկէց ալ աւելին այն է, որ երբոր բուղա մնացած նախարարներն ալ կանչեց, երդումներով ու այլևայլ պարգևներ խոստանալով, անոնք միամտութեամբ հաւատալով անոր խօսքին գնացին իրեն, թէպէտև պիտէին անոր ըրած չարութիւնները, և թէ առջի գացած նախարարները բոլոր բռնեց ու զամէնքը կապած ամիրապետին խաւրեց. ասով պրեթէ բոլոր նախարարները չնչուեցան Հայաստանի մէջէն, որ է իրենց անխորհրդութիւն ու պարզամիտ ըլլալուն պատուղը:

460. Մեր ազգին պակասութեանց պատճառը որն է:

Առաջին և գլխաւորապէս պատճառն է անկրթութիւնը. վասն զի՝ ի սկզբանէ հետէ շատ պակաս էր մեր ազգին մէջ դպրոցներ բանալու ջանքը և սովորութիւնը, ուր որ ազգիկուց սկսեալ տղոց բարքը յառաքինութեան կը շահուի: Ա. յս պատճառաւ նաև

ուամունքները եւ կը մնային, ինչպէս կ'ըսեն Մաղխատրոս, և Յոհան Եզնկացին։ Ոսատի մեծամեծներուն տղաքը իրենց տանը մէջ առանց կրթութեան փափուկ մեծնալով, շատը ըմբոստ, կամապաշտ, ինքնագլուխ մարդիկ կ'ըլլային։ Թէպէտև Ս.Ր. տաչէս Բին, Վռամշապհոյ և ուրիշ քաղաքագէտ թագաւորաց առեն այլևայլ ըմբռոցներ բացուեցան, բայց քիչ առեն տեւեցին, և յաջորդ թագաւորները անփոյթ եղան անոնց վրայ։

Երկրորդ պատճառն է նախարարներուն ազատ իշխանութիւնը, որ մէյմէկ պզտիկ թագաւորի պէս իրենց երկիրը կը կառավարէին որդւոց որդի յաջորդելով։ Ս.յս տեսակ կառավարութիւնը թէպէտև առելի փառաւոր է, բայց այնչափ առելի վնասակար կ'ըլլայ ազգի մը, որչափ որ այն ազգը դեռ անկիրթ է. որով տեսակ տեսակ մոլութեանց ու ախտից ենթակայ կ'ըլլայ։

Երրորդ պատճառն է ընտիր և առաքինի անձանց պաշտօնի չհանելը, և իրենց քաջութեանցը կամ արդեանցը վարձք չիտրուելը. և ընդ հակառակն շատ անգամ անպիտան և մոլի մարդկանց պաշտօնի հանելը. որով և քաղաքականութիւնը ազգերնուս մէջ շատ եաև մնացած էր Ս.Ր. չակունեաց վերջի թագաւորներուն ժամանակէն սկսեալ։ Եւ ար առքութեան և ազգի մէջ անյարմար անձինք շատ կը գտնուին պաշտօնի մէջ, այն առքութեան և ազգին չէ

թէ միայն յառաջադիմութեանը արգելք կ'ըլլան, հապա նաև անոր կործանմանը պատճառ։

461. Մեր ազգին պակասութեանցը ինչ դարման կրնայ ըլլալ։

Որովհետև մեր ազգին աղետից գլխաւոր պատճառը անկրթութիւնն է եղած, ուստի կրթութենէ աւելի զօրաւոր դարման մ'ալ չկրնար ըլլալ իրեն։ Վասն զի միայն դաստիարակութիւնն է որ մարդուս ճանչցընել կու տայ իրեն առ Աստուած առ անձն և առ բնկերս ունեցած պարտքերը։ Եւ ահա այս պարտքերուն ճանաչմանն որով և գործադրութեանը վրայ հաստատեալ է ազգի մը ճշմարիտ երջանկութիւնը. և զաստնք լաւ չճանչնալուն որով և՝ի գործ չդնելուն բնական հետևանքներն են այն ամենայն մոլութիւնք ու աղէտք, որոնք հետզհետէ, անապատ դարձուցին մեր ցանկալի հայրենիքը։ Արդ եթէ մեր տղաքը մոքերնին կրթելու ու զարգացընելու Լանան իրենց դաստիարակելու ժամանակը՝ այնուհետև ոչ միայն իրենք իրենցմէ կարող կ'ըլլան մեր ազգին դաստիարակութեան պակասութենէ կրած թէ՛ կրօնական և թէ քաղաքական աղետիցը խելամուտ ըլլալ, հապա նաև անոր դարմանին ալ իրենք իրենցմէ օգնական եղած կ'ըլլան, առած լաւ դաստիարակութեանը գործադրութեամբ։

Bayerische Staatsbibliothek MUNCHEN

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՆԱԽԱԳՈՏԵԼՈՒՔ


ԳԼ. Ա. Դրախտին տեղւոյն վրայ . . 2
ԳԼ. Բ. Նոյայ տապանին Հայաստան
իջնելուն վրայ . . . . 16
ԳԼ. Գ. Այլևայլ գիտելիք Նոյի ու իր
Սեմ, Քամ, Յաբեթ որդ-
ոցն և անոնց սերնդոցը վր. 21
ԳԼ. Դ. Հայկ, ու մեր ազգութեան
սկզբնաւորութիւնը, և տէ-
րութեան ընդարձակող թա-
գաւորները . . . . . 31
ԳԼ. Ե. Աբելի ճր ազգերը յարձակե-
ցան մեր աշխարհը, և Հայա-
ստան որոց հարկատու է-
ղաւ . . . . . 43
ԳԼ. Զ. Քաղաքական կառավարութե
վրայ . . . . . 53
ԳԼ. Է. Նախարարութեանց վրայ . . 67
ԳԼ. Ը. Բաժանմունք նախարարու-
թեանց . . . . . 73
ՅՕԴ. Ա. Թագակալ նախարարութիւնք 74
ՅՕԴ. Բ. Պաշտօնակալ նախարարու-
թիւններ . . . . . 93

ՅՕԳ. Գ. Անպաշտոն նախադրութեանց մասին . . . . . 129
ԳԼ. Թ. Տէրութեան մէջ եղած պաշտօնէութեան վրայ . . . . 149
ՅՕԳ. Բ. Օտար ազգերէն Հայոց մէջ բուած պատուոյ անուններ . . . . . 154
ԳԼ. Ժ. Հինութեան վրայ . . 158
ՅՕԳ. Ե. Հօրք, Հօրաւորք, Հէնք . — 
ՅՕԳ. Բ. Գործիք քաղաք առնելոյ . . 166
ՅՕԳ. Գ. Տէրութեան ու թագաւորին վերաբերութեանը վրայ . 167
ԳԼ. ԺԱ. Ազգային զգեստուց և սովորութեանց վրայ . . 170
ՅՕԳ. Բ. Եկեղեցական սովորութեանց մասին . . . . . 180
ԳԼ. ԺԲ. Ազգային օրինաց ու գրաճեռութեան վրայ . . . . . 191
ՅՕԳ. Ե. Օրէնք . . . . . —
ՅՕԳ. Բ. Դրամք . . . . . 194
ԳԼ. ԺԳ. Հայոց կրօնքին վրայ . . . 197
ՅՕԳ. Ե. Հայոց նախկին կրօնքը մինչև ի քրիստոնէութիւն . . . — 
ՅՕԳ. Բ. Հայաստանի մէջ քրիստոնէութեան մտնելուն վրայ . . 212
ԳԼ. ԺԴ. Հայոց լեզուին առաջնութեանը վրայ . . . . . 225
ՅՕԳ. Ե. Եբրայականին առաջին լեզու ըլլալուն վրայ . . . . 226
ՅՕԳ. Զ. Հայոց լեզուին առաջնութեանը վրայ . . . . . 229

ԳԼ. ԺԵ. Գիտութեանց վրայ . . . 241
ՅՕԴ. Ա. Նահապետաց ժամանակը . . —
ՅՕԴ. Բ. Առջի նահապետներէն եւս
Հայաստանի գրականութիւնը
վիճակը . . . . . 248
ՅՕԴ. Գ. Հայաստանի մէջ գրականու-
թեան եւս մնալուն պատ-
ճառները . . . . . 261
ՅՕԴ. Դ. Հայաստանի մէջ ծաղկած գի-
տութիւններուն վրայ . . 263
ԳԼ. ԺԶ. Արուեստներուս վրայ . . . 274
ՅՕԴ. Բ. Վաճառականութիւն . . . 279
ԳԼ. ԺԷ. Հայաստանի բնակչաց կատա-
րելութիւններն ու պակա-
սութիւնները . . . . 289
ՅՕԴ. Ա. Հայոց ազգին կատարելու-
թիւնները . . . . . —
ՅՕԴ. Բ. Հայոց ազգին պակասութիւն-
ներն ու գարմանը . . . 295

Schulz

BSB Bayerische StaatsBibliothek
MDZ Münchener DigitalisierungsZentrum Digitale Bibliothek

Caciuni, Manuel

Alte Geschichte von Armenien

Venedig 1855
A.or. 1996
urn:nbn:de:bvb:12-bsb10249947-4